

ՄԵՐՋԱԿԱՐ ԵՎ ՄԵՋԻ
ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՈՒԵՐ
ԵՎ
ՑՈՂՎԱՐԻՐԴԱՆԵՐ

XI

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СТРАНЫ И НАРОДЫ
БЛИЖНЕГО
И
СРЕДНЕГО
ВОСТОКА

XI

ИРАН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1982

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԱԿԱՆԱԳՐԱԿԱՆ ԽԱՍՏԱՏՈՒՄ

ՄԵՐԶԱՎՈՐԵԿՄԻՋԻ
ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ
ԺՈՂՈՎՈՒՐՄԱՆԵՐ

XI

ԻՐԱՆ

Խ Ե Ր Ա Գ Ր Ա Լ Ա Ծ Կ Ա Հ Ա Բ Գ Յ Ա

Գ. Խ. ԱՎԵՐՅԱՆ (նախարար), Հ. Գ. ԲԱՐՄԵՔԻ (նախ. սեռական), Հ. Ռ. ԱՎԵԼՅԱՆ,
Ե. Գ. ԱՎՐԱՄՅԱՆ, Ե. Հ. ՀՈՒԶԵՎԱՆՅԱՆ, Կ. Ռ. ԶԱՅՈՒՆ, Վ. Ռ. ԲԱՋԱՐՅԱՆ,
Լ. Հ. ԵՎԵԼՅԱՆ (գլուխաց)

Հայագի պատմականութեանը՝

Հ. Ռ. ԻՎԱՆՅԱՆ

Редакционная коллегия:

Գ. Խ. ՍԱՐԿԻՍՅԱՆ (председатель), Օ. Գ. ԻՆԴՋԻԿՅԱՆ (зам. председателя),
Գ. Մ. ԵՂԱՆՅԱՆ, Ե. Կ. ՍԱՐԿԻՍՅԱՆ, Ի. Օ. ՕԳԱՆԵՍՅԱՆ, Խ. Մ. ՉԱՏՕԵՎ, Վ. Ա.
ՎԱԼԵՎՈՐՏՅԱՆ, Լ. Գ. ՇԵԽՈՅԱՆ (учетный секретарь)

Ответственный редактор тома

Գ. Մ. ԵՂԱՆՅԱՆ

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST.
X1

IRAN

Publishing house of the Academy of sciences
of the Armenian SSR. Yerevan, 1982.

Ա 0504000008
Վ 24-79
703(03) -52

Հայական ԱԱՀ ԳԱ համարակարգ, 1982

ԳԱԼՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Գ. ԱՌԱՍՏԱԿՅԱՆ

ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆԱՍ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՐԱՆԻ ԱԶԴԱՑԻՆ
ԲՈՒՐՃՈՒԱԶԴԱՆՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ԺԱՄ
ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ (1951—1953 թթ.)

Աղքային բուրժուազիայի կառավարման ժամանակահատվածը (1951—1953 թթ.) ետպատճեազմյան տարիներին նյանում ժավայլած աղքային-աղատազրական շարժման կարևոր փուլերից է, որը բավական շատ է արժարժվել իրանագիտական գրականության մեջ:

Այդ շրջանը և, մասնավորաբար, աղքային բուրժուազիայի կառավարության գործունեության ու քաղաքականության հետ առնչվող շատ հարցեր հետաքրքրել են նաև բուրժուական առանձին հեղինակների, որոնց աշխատություններում, սակայն, որոշակի դիտավորություններով աղավաղվել, իսկ հաճախ ուղղակի նենգափոխվել է իրականությունը:

Բուրժուական պատմագրությունն է հեղինակը գրեթե ավանդական դարձած այն թյուր տեսակեախ, որը փորձում է ժխտել աղքային բուրժուազիայի կառավարության յուրահատկությունը և այն իր ընույթով բացարձակապես նույնացնել նախորդող և հաջորդող կառավարությունների հետո։ Այն հագասարապես հակված է պնդել նաև մեկ այլ ժայռահեղ տեսակեան, այն է՝ ընդգծել կառավարության քաղաքականության միանգամայն անկախ, ինքնուրուցին ընույթը, շրջանցելով կառավարության գործունեությունը սահմանափակող գործոնների անվիճնելի առկայությունը։

Բուրժուական պատմագրությունը սովորաբար անտեսում է աղքային բուրժուազիայի կառավարության քաղաքականության զարգացումը, այն աստիճանական և միանգամայն որոշակի տեղաշարժերը, առանց որոնց անհնար է տալ կառավարության քաղաքականության իրական նկարագիրը։

Իրանական բուրժուական պատմագրության որոշ հեղինակներ աղքային

բոլորուազիայի էությունն ու քաղաքականությունը մեծ մասամբ լուսաբանում են հետազիմական զիրքերից՝ բացահայտորեն կեղծելով պատմական իրողությունը:

Մուսագեղը ձրկրի համար տնանսական և քաղաքական անկախություն նվաճելու անհրաժեշտ նախապայման էր զիտում իրանի նախարարությունաբերության ազգայնացումը և մոլեկուլարորեն պայցարում էր նրա իրականացման համար։ Այսպիսի քաղաքականությունը, որի նպատակն էր, նախ և առաջ, ազատազրել երկիրը օտարերկոյա, մասնավորապես անզիմական, իմպերիալիզմի ազդեցությունից և երկրի համար ինքնուրույն գարգացման հետավորությունը, որը ամերիկյան հեղինակ և Բինդերի ընորդաշմամբ հանգում է հետեւյալին։ «...Իրանը պետք է համագործակցի այն երկրների հետ, որոնք իրենց օգնությունն են առաջարկում երան։ Իրանը շպետը է հետևի լիակատար շեղորդության այն գեպքում, երբ բախվում է կոմունիստական քայլայիշ ազատալիքի կում սովետական ազգայինացիի հետ։ Իրանը շպետը է ձեռնարկի սոցիալական այնպիսի համարձակ միջոցառումները, ինչպիսին կալվածատիրական հողերի բռնագրավումն է և մեծ ձեռնարկությունների արգայնացումը։ Առաջադիմությունը պետք է լինի պլանավորված, դանդաղ և հաստատում։ Առաջել ևս իրանը շպետը է փոխի կամ տեղաշարժի իրեն ժառանգված ինստիտուտները, որոնք ներկայացնում են այն ամենը, ինչ պազտիվ է և արժանի ազգային մշակույթինք¹։

Անսպասելի լէ, հետևաբար, որ ազգային բոլորուազիայի կառավարության նավթային քաղաքականությանն անդրադասի իրանցի շատ հեղինակներ գատապարտում են Մոսագեղի տնական և համար զիմառությունը նազմեցին հարցի վճռման իմպերիալիստական ծրագրերի իրականացման փորձերին։ Իրանական բոլորուական պատմագրության ներկայացուցիչներից մեկը՝ Շամիմն, օրինակ, առաջել նպատակահարմար համարելով հատկապես Միջազգային բանկի առաջարկը, անկեղծ ափսոսանք է հայտնում այն առթիվ, որ «...Մոսագեղի մտերիմներից և կողմնակիցներից շատերը Միջազգային բանկի առաջարկի ընդունումը անհամատեղելի դրան նավթարգյումարերության ազգայնացման

¹ L. Binder, Iran. Political Development in a Changing Society, Berkeley and Los Angeles, 1962, p. 78.

اکنون بیشتر نیست... نیزه زن، راهنمایی یادداشتگری ایم پس از آن دلخواه را پسرانه می‌خواهد باید راهنمایی خواهید شد. هر کجا کجا نمایند و باید اینها را بخواهند.

تمامی درستی های این نظر را باز می‌دانم و من این را باز می‌دانم و می‌دانم. همچنان که این را باز می‌دانم و می‌دانم.

برای اینها کوئی راهنمایی نمی‌تواند یافته باشد. همچنان که این را باز می‌دانم و می‌دانم. همچنان که این را باز می‌دانم و می‌دانم.

بله، همچنان که این را باز می‌دانم و می‌دانم. همچنان که این را باز می‌دانم و می‌دانم.

باید این را باز می‌دانم و می‌دانم. همچنان که این را باز می‌دانم و می‌دانم. همچنان که این را باز می‌دانم و می‌دانم. همچنان که این را باز می‌دانم و می‌دانم.

شیوه ایران در دوره سلطنت امپراتوری محمد رضا شاه پهلوی، تهران^۱

F. Sahebjam, L'Iran vers l'an 2000 document, Paris, 1977, p. 188.

۱. ۱۹۷۰ ص. ۵۱.

۲. مازندرانی، نقاهت به زندگی رهایی دیروز و هغantan امروز، گیلان ۱۹۷۰ ص. ۲۳۳۵.

۳. F. Sahebjam, L'Iran vers l'an 2000 document, Paris, 1977, p. 188.

կան նպատակների քողարկումը, այլև երանց իրանի բարեկամ ներկայացնելու բացահայտ միտումը:

Տաթե՛ն, որինակ, իր տիրանի նավթի հիմում առարիեւ⁸ մեծածավալ աշխատության մեջ անդրադառնալով իրանում ԱՄՆ-ի ետպատճերադժան քաղաքականությանն ընդհանրապես, վիճակն այնպես է զատկերում, որ, իրը, զիշելով իրանցիների թախանձանքներին, ամերիկյան գրաբրաբերները նրանց ուզության ձեռքը մեծնեցին նիշտ այնպես, ինչպես պատճերազմի ավարտից հետո մեծահոգարարը ւ...մեծ աշակցություն ցուցաբերեցին իրանց զաշնակիցներին և, նույնիսկ, իրենց դեմ կովող Դերմանիային, ճապոնիային, Խալիֆային⁹, Հայտնի է, սուկայն, որ այդ ակտը բիում էր ոչ թե Միացյալ Նահանգների բարեգործ ձգտառներից, այլ Իրանին, ինչպես նաև Միաւ Ֆրիդներին անտեսապես և քաղաքականապես իրեն և նեթարկելու նպատակից, նպատակ, որը երան որոշ գնապքերում հաջորդեց իրականացնելու:

Մեկ այլ առիթով, վերաբռնագրելով Իրանի նավթարդյումարերության ազգայինացման ողջ ընթացքը, Տաթե՛նը գտում է հաստատել, որ իրու Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների մղումները զուտ բարեկամական էին. և Այն որից, երբ նավթի հանուլիթը դադարեցվեց, և Արադանի նավթադտիչ գործարանը փակվեց, — գրում է նա, — Միացյալ Նահանգներն ամենայն ջանք գործադրեց Իրանին օգնելու, երկու կողմերի (Իրանի և Անգլիայի կառավարությունների — Ա., Ա.) միջև համամալության հասնելու համար: Ամերիկայի նպատակն այն էր, որ Իրանը հնարավորին շափ շուտ վերականգներ նավթի եկամուտները...¹⁰:

Դժվար չէ կառնել, որ Իրանի հանգապ Միացյալ Նահանգների քաղաքականության այսպիսի գովերդումը ինքնանպատակ չէ և այլ պիտակությունների հետ միասին նաև նպատակ ունի մխանել նավթարդյունացերության աղդայնացման օրենքի իրականացումից հետո Իրանում ճգնաժամային վիճակի ստեղծման մեջ ԱՄՆ-ի որևէ առնչությունը և փորձում է մեղքն ամրողութիւն բարդել Մոսադեդի վրա Մասավանդ, երբ հնարավոր է բերել հավաստիանման այնպիսի փաստարկներ, ինչպես, ասծնք, ազգայնացված նավթի դրուին սպառման հնարավորության Մոսադեդի համոզածության անհիմն լինելը¹¹, կամ այն, որ հնավթար-

* 1335 تهران نفت ایران: فاتح پنجاه سال نفت ایران

[†] նոյն տեղում, էջ 425.

[‡] նոյն տեղում, էջ 435.

[§] նոյն տեղում, էջ 323.

պյունարերության ազգայինացման օրները կազմվել էր Հապճեպ, առանց դորժի շահները հաշվի առնելու¹⁰ և այն:

Ներքատիպ է Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների քաղաքականության Ռուսանիքի մեկնարանությունը¹¹: Ընդունելով, որ Միացյալ Նահանգները նավթային խնդրի վճռման գործում Իրանին շագնեց հակային չի ակնարկում այն մասին, որ նա Իրանին նաև մեծ չափով խանդարեց), Ռուսանին, այնուամենային վազ, փորձում է դանել ԱՄՆ-ի այդ դիրքորոշումն արդարացնող պատճառաբանությունները: ԵՄիացյալ Նահանգները, զրութ է նա, — միշտ թույլ երկրների կողմն է եղել Համեկապն Իրանի նկատմամբ նա ցուցարերել է անփոփոխ բարյացակամություն, և երբեք լի զլացել բոլոր միջոցներով օգնել և աշակեցնել Իրան: Այս անգամ, ստեղծային նավթի ազգայնացման հարցում — Ա. Ս.) Անգլիայի հետ նրանց (Անգլիայի և Ամերիկայի ժողովուրդների — Ա. Ս.) ժագամնային, լեզվական, մշակութային, քաղաքական և անտեսական կապերի ընդհանրությունն ու սերտությունը պատճառ գարձան, որ նահանդն ու արդիս Անգլիայի կողմնակիցը¹²:

Ռուսանին այս հանգամանքը համարում է միանգամայն բեական, արինաշատի և, հետնարար, նաև՝ ներկից: Նա նույնիքան արամարանական և համականայի է համարում նաև Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի նման դիրքորոշման մեկ արլ ժանրակցիկ դրդապատճառ, այն է՝ Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման ակտին ժայրահեղ բացասարար արամադրված համաշխարհային նավթային հպոր կարտելներին Միացյալ Նահանգների հակադրվելու վտանգավորությունը¹³:

Ընդունելով, նույնիսկ, որ ԱՄՆ-ի այդպիսի վիրքորոշումը հետագայում չական նշանակություն ունեցագ ազգային բուրժուազիայի կառավարության տապալման գործում¹⁴, Ռուսանին, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի քաղաքականությունն Իրանի նկատմամբ լի ընդունում որպես Իրանի ներքին գործերին կողիտ միշամառություն, որպես, իրոք, իմպերիալիստական քաղաքականություն:

Միացյալ Նահանգների քաղաքականության իմպերիալիստական էությունը լրմրուելու կամ այն զիտավորյալ սրողելու, ինչպես նաև Իրանի նկատմամբ Իրա ինկական ակնկալությունները մեղմելու նույն

10) پویت հայ سیاست գفت مصدق راهնی تهران ص ۲۰

11) روحانی ։ تاریخ ملی شدن صنعت گفت ایران ։ تهران ։ ۱۹۷۴

12) Նոյն անդամ, էջ 328,

13) Նոյն անդամ, էջ 148,

14) Նոյն անդամ, էջ 278,

միտումներով, Ռուսանին Իրանի անկեղծ բարեկամ է ներկայացնում Միացյալ Նահանգների քաղաքական առանձին գործիչների, մասնավորաբար Իրանում ամերիկյան զետապն Հենրի Գրեյդիին¹⁸, այն զեպրում, երբ նրա ողջ գործունեությունն Իրանում այլ բան չէր, քան Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների քաղաքականության անմիշական իրականացնում:

Բոլոր գեղքերում, այսուհետ արգեն լին Շնչում սովորական դարձած այն պնդումներն ու հավաստիացումները, թե Խավթարդունաբերության աղջայնացման առիթով Իրանի և Անգլիայի միջև ծագած նավթարին զեմում Միացյալ Նահանգները միանգամայն անկողմնակալ, համեստ միջնորդ էր և շահագրգուկած էր միայն վեճի օրյեկտիվ նյութ: Այսպիսով, Ռուսանին փաստորնեն հրաժարվում է նաև բուրժուական պատմագրության մեջ դարձալ շափաղանց տարածված այն տեսակետից, թե Խավթային պրոբլեմի լուժման մեջ Միացյալ Նահանգները լուներ իր մասնավոր հետաքրքրություններն ու շահերը, որ իրը Անգլիան էր, որ նրան ենթարկեց իր ազդեցությանն ու տրամադրեց աղջային բուրժուազիայի կառավարության գեմ:

Ծնդգելած պրոռեակցիոն ուղղվածությում ունի Արսանդանիի ռնութեր թիրի¹⁹ ՅՈՒ-ի քաղաքական իրադարձությունների մասին զիրքը²⁰:

Չնայած զբժի զուտ նկարագրական բնույթին և գեղքերի ու իրադարձությունների լուրջ վերլուծության խսպառ բացակայությանը, այն սկզբից մինչև վերջ թշնամանքով է ներթափառ Մոսադեղի ու նրա կառավարության հանդեպ և ներբռնում է հայունի ռեակցիոններ Ղազամ էս Սալթաններին և նրան հոգանակորող շրջաններին:

Խնդիրն և հետեւում է վերենագրից, հեղինակի հիշողությունները վերաբերում են 1952 թ. Հուլիսին Իրանում ժավարկած կարնատն, սակայն բռնու իրադարձություններին, երբ Մոսադեղին ասպարեզից հեռացնելու և նրան Ղազամով փոխարիննելու տեղական ռեակցիայի և օտարերկոյա իմպերիալիստների համատեղ փորձը ձախորդվեց, և շնորհիվ ժողովրդական լայն զանգվածների անձնազո՞ւ պայքարի, աղջային բուրժուազիայի կառավարությունը երեք օր անց վերադրավեց իշխանությունը:

Դեպքերի ու իրադարձությունների ականատեսի, ինչու լափով նաև

¹⁸ Խոյք առեղում, էջ 169:

* Երբ արքա շրջարդ ամիսն է, ըստ պարսկական տարբերի, թիրի ՅՈՒ-ը համապատասխան է Հուլիսի 22-ին:

²⁰ Արժեշտացու մասնաշտեհայ Սամասի սույա Տիր 1951:

մասնակցի և նրանց անկողմնակալ վերաբռնագրով հավակնությամբ, Արանցանցին, իրականում, ամենաբացահայտ կերպով նենդափոխում է իրականությունը: Նա չանում է ժխտել Հավամի դեմ ժամանական ժողովրդական բնույթը: Նա գրում է, «Թեհրանի բնակչությանը թիրի 30-ին (Հուլիսի 21-ին—Ա. Ա.) և հաշորդ օրերին գտնվում էր այն անձանց ուժեղ ազիտացիայի ազդեցության տակ, ովքեր այդ իրազարծություններից շահ ունեին...»¹⁷: Ըզ ապա, ս...իրոք, ինչպիսի հանցանք թույլ տվեցին այն մարդիկ, ովքեր զանցվածների զրդովածությունն օգտագործեցին լոկ իրենց անձնական հաշվները մաքրելու համար և անարդարացիորեն իրենց փառասիրական ձգուումներին հասնելու համար ամեն տեսակ լուսանքներ աեղացին մի մարդու վրա (Դավամ էս Սալթանեի—Ա. Ա.), որն իր ողջ կյանքում ժառայել էր երկրին, և երկրի այն փոքրաթիվ հարգարժան և վաստակաշատ գործիշներից էր, որոնց նմանը դժվար է գտնելը¹⁸:

Ազգային բուրժուազիայի կառավարությանը զարկարեկելու և նրա քաղաքականությունն ամեն կերպ նսեմացնելու բացահայտ նպատակ է հետապնդում Մալեքին, իր ուղղացրին ճակատիչ համառու պատմությունը զրցում¹⁹: Դիտավորյալ շափաղանցելով կառավարության գործունեության թերի կողմերը, Մալեքին այն համոզմանքն է հայտնում, որ ուղղացրին ճակատիչ կողմից պրեմիեր մինիստրի պաշտոնի համար Մոսագեղի թեկնածության առաջադրումը ճակատազրական և աններելի սխալ էր, քանի որ, ինչպես ցույց տվեց մոտիկ պատասխան, շերկերեսանի, զեմագոգ և կարիքերիստն՝ Մոսագեղն իր իշխանության ողջ շրջանում ոչ միայն տիրանի ժողովրդի հանգատի ու բարեկեցության ուղղությամբ որևէ քայլ չձեռնարկեց²⁰, այլև իր քաղաքականությամբ երկրի պիճակի վատթարացման պատճառ դարձավ ու վտանգի մատնեց նրա անկախությունը:

Քենելով Մոսագեղի և ուղղացրին ճակատիչ մյուս լիդերների գորի-հարաբերությունները, Մալեքին Մոսագեղի հետ նրանցից շատերի տարածախությունների և կապերը խզելու հանգամանքը հիմնականում հետևանք է համարում Մոսագեղի արարավոր, անմիտ, նաև ողիկատութական քաղաքականության:

¹⁷ Խոյն տեղամ, էջ 5:

¹⁸ Խոյն տեղամ, էջ 7:

¹⁹ «تاریخچه جمهوری ملی» تهران ۱۹۷۷

²⁰ Խոյն տեղամ, էջ 29:

²¹ Խոյն տեղամ, էջ 64:

Իրանցի Հեղինակներից շատերը փորձում են պրոդել աղջային բուժ-
ժուազիայի կառավարության տապալման էական պատճառները և որո-
շակի նպատակներով դրանք փոխարինում են տապալմանը նպաստած
երկրորդական կամ շինծու հանգամանքներով։ Այս Հեղինակների զի-
տավորությունը միշտ նույնն է՝ ամեն կերպ քողարկել Մոսաքեղի կառա-
վարության տապալման գործում տեղական ռեակցիայի և օտարերկրյա-
կմապերիալիստների հակայական, որոշիչ դերը։

Պնդվող աեսակեաներից մեկն այն է, որ Մոսաքեղի թույլ տված
ամենամեծ սիալը և, միաժամանակ, ազգային բուժուազիայի կառա-
վարության տապալման ամենահիմնական պատճառը Մոսաքեղի կող-
մից նավթարդյունարերության աղջայնացման ործնքի իրականացումն
էր Մոսաքեղի կառավարության տապալման այս վարկաժը, որն ամե-
նից հաճախ է արտահայտվում թե՛ իրանական և թե՛ օտարերկրյա-
բուժուազիան պատմագրության մեջ և թույլ է տալիս ճարպկործն շըր-
ջանցել կառավարության տապալման իսկական Հեղինակներին, ան-
շուշտ, միակը չէ։

Թենելով աղջային բուժուազիայի կառավարության տապալման
հանգամանքները, իրանցի Հեղինակներն այն հիմնականում պատճա-
ռարանում են նաև Մոսաքեղի կառավարության արտաքին և ներքին ոչ
չիշտ քաղաքականությամբ։ Մազանդարանին, օրինակ, կառավարու-
թյան տապալումն արդյունք է համարում նրա գործումներունից զըժ-
դու ժողովրդական զանգվածների հակակառավարական շարժման²²։

Նույնին է ակնարկում նաև Բե՛նիան։ Հիշեցնելով, որ Մոսաքեղին իշ-
խանության էր հասել ժողովրդական զանգվածների արակցությամբ, և
որ կառավարման ողջ շրջանում երկրի ներքին կյանքի որևէ բնազավա-
ռում նրա քաղաքականությունը հաջողության չէր հասել, Բե՛նիան
նզրակացնում է, որ τ... նրա կարիքիրդմը, փառասիրությունը և էգո-
իզմը պետք է, որ վաս հետևանքներ ումնեային, և ... նրա տապալումը
ևս պետք է կատարվեր այն դասակարգերի ձեռքով, որոնք նրան մշտա-
պես հովանափորում էին...²³։

Հետաքրքրական է աղջային բուժուազիայի կառավարության նազ-
թային քաղաքականության անհաջողության նույնանիր վերսիան։ Զհրա-
ժարվելով բուժուազիան պատմագրության մեջ ընդունված սկզբունքից,
այն է՝ մեղքը միշտ և բոլոր դեպքերում բարդել միայն Մոսաքեղի տարա-

²² مازندرانی նշվ. այս., էջ 112.

²³ بهنیա նշվ. այս., էջ 89.

առաջորս քաղաքականության վրա, Շուշանին վիճակն ինչ-որ լափով մեզմում է, այս անգամ արդեն նավթային ֆինանսով հիմնական պատճառ համարելով ուղղակի Մոսագնդի կողմից ցանկալին իրականի հետ շփոթելը²⁸, մասնավորաբար նրա այն ակնկալության անիրականաւությունը ինեւը, թէ Միացյալ Նահանգները նավթային վեճում հանդեմ կամ ի պաշտպանությունը նրանի:

Սակայն իրանցի առանձին հեղինակներ, որոնք ազգային բուրժուազիայի կառավարման ժամանակաշրջանին վերաբերող հարցերը հիմնականում մեկնարանում ու գնահատում Ան դարձյալ նույն՝ Հակամասադիզյան սովոր, այսուհանդիր, ժամանակ առ ժամանակ հակված են իրադրությունը ներկայացնել բավական անկողմնակալութեն: Բե՛նիան, օրինակ, ճշմարտացիորեն է պատկերում Մոսագնդի կառավարության նկատմամբ արքունիքի վերաբերմունքը: ՇԱՐԳՈՒՄԻՑ Մոսագնդի կառավարության հանդեպ բացահայտորեն լավ չէր տրամադրված, — զրում է Բե՛նիան, —և նրան (պրեմինի մինիստր — Ա. Ա.) նշանակելիս այն հույսն ուներ, որ նա շուտափույթ կնրպով կտապալվի և քաղաքական ասպարեզից ընդունա...»²⁹: Բե՛նիան, հիմնականում, ճիշտ է ներկայացնում նաև նրանի նկատմամբ օտարերկրյա իմպերիալիզմի իսկական նպատակները: Սակայն, այնուամենայնիվ, չկարողանալով թաքցնել իր պրոամերիկան հակումները և շանալով մեղմել նրանի նկատմամբ Միացյալ Նահանգների բացահայտ էքսպանսիոնիստական ձգումները, Բե՛նիան իրերի զրությունն այնպես է պատկերում, թէ Միացյալ Նահանգներն նրանի նկատմամբ իր քաղաքականությունն իրականացնելիս գործում էր Անգլիայի դրդմամբ³⁰:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նիրումանդի տերան. Նոր իմպերիալիզմը գործողության մեջ՝³¹ ուսումնասիրությունը, որն ընդգծված հակամապերիալիստական ուղղվածություն ունի: Նիրումանդը լուսարանում է նրանում անզինական և ամերիկյան իմպերիալիստական քաղաքականության պատմությունը և հանդում այն եղրակացության, որ արդ քաղաքականությունը միշտ և բոլոր գեղքերում, իր ամենաքաղաքացանցան դրսնարումներում եղել է և է էքսպանսիոնիստական, զաղութարարական և շահագործողական և, վերջ ի վերջո, պատճառ է դարձել երկրի

²⁸ روحا نیز Եղ. աշխ., էշ 188.

²⁹ Հայութի Եղ. աշխ., էշ 65.

³⁰ ՏԵ՛Կ Խոյն անդամ, էշ 82.

³¹ B. Nirumand, Iran the New Imperialism in Action, N. Y., 1932.

անտեսության քաղաքայման, տնտեսական և քաղաքական ինքնուրույնության կորուսի և հետազիմության:

Որպես այդ կործանարար քաղաքականության լավագույն օրինակ, Նիբռումանը ներկայացնում է Իրանի հիմնական հարատության՝ նազմի կողութաման պատմությունը նախ՝ Անգլո-իրանական նազմային ընկերության և ապա՝ Միջազգային կոնսորցիոնի կողմից:

Աշխատանքում կարենոր տեղ է հատկացված Իրանին տրամադրվող օտարերկրյա տօֆնության համար բացահայտմանը: Վերլուծելով իմպերիալիստական տօֆնության բոլոր արտահայտություններն ու հետկանքները և բացատրելով դրա մեխանիզմի ոչ բարդ արամարանությունը, Նիբռումանը, ի վերջո, հաստատում է, որ այդ տօֆնությունը իմպերիալիստական երկրների կողմից թույլ զարգացած երկրների և մասնավորաբար Իրանի շահագործման բավական ինտենսիվ մի տարատեսակ է, որն անընդհատ կարող է կերպարանափոխվել, բայց իր էությունը մնալ միշտ նույնը:

Նիբռումանը պրեսում արժարժված մրու կարենոր խնդիրը իմպերիալիստական քաղաքականության հանդեպ թույլ զարգացած երկրների, հատկապես Իրանի տիրող շրջանների գիրքորոշման հարցն է: Նիբռումանը գալիս է այն վերջնական համոզման, որ Իրանում օտարերկրյա իմպերիալիզմի անահանափակ, անարգել տեր ու անօրինությունն ու ընդդրձակ պործումներությունը ասրիներ շարունակ հնարավոր է եղել միմիայն շնորհիվ աեղական ուսակցիոն շրջանների և անձամբ շահի հանդուրժող և մասամբ նաև խրախուսող քաղաքականության:

Աշխատանքում արտացըլված է իմպերիալիստական տերությունների նշշմանն ու շահագործմանը ննթարկվող երկրներում անող աղքային ինքնազիտակցությունն ու անկախություն նվաճելու ծգութումը: 40-ական թվականների վերջերին Իրանում մեծ թափով ծավալված հակաիմպերիալիստական պայքարը ու ազգային բռնփուածիալի կառավարության ստեղծումը Նիբռումանը գնահատում է որպես ազգային գիտակցության ծնունդ և օտարերկրյա իմպերիալիզմի դեմ դիմապրության ոգու հաղթանակ: Նա առանձին համակրանքով է ներկայացնում Մոսաղեղի կառավարության թի՛ ներքին և թի՛ արտաքին քաղաքականությունը, ցույց է տալիս, որ այն անժխտելիորեն ուղղված էր երկրի վիճակի բարվեցմանը, տնտեսական և քաղաքական անկախության ձեռքբերմանը:

Նիբռումանը իր գրքում ընդարձակ տեղ է հատկացնում ազգային բռնփուազիալի կառավարության տապալման գործում օտարերկրյա,

Հատկապես ամերիկյան խմբերի ալիքում վճռական ու սրաշիլ դերի բացահայտմանը:

Մոռագնոյի կառավարության տապարաւը նա գնահատում է իրեւ ազգային ողբերգությունն:

Նիրումանը այս աշխատանքը, սակայն, զօրեւ չէ լուրջ թերություններից. Որպես իրանի ազգային բուրժուազիայի շահերի արտահայտիչ և նրա հրկորագու, նա փառաբան անտեսում է իրանական ժողովրդի ազգային-ազատագրական շարժման մեջ ժողովրդական լայն զանգվածների հակաֆեռութական, հակահմակերիալիստական պայքարը և այն կազմակերպութ ու նրան նիշտ ուղղվածություն տվող առաջադիմական կազմակերպությունների հակայական դերը:

Դրվատելով այն մուի վճռականությունը, որով Մոռագնը իշխանության ողջ շրջանում դիմուղը ում էր անզիքական ննջումներին և շանում էր իրականացնել նավթարդյումարերության ազգայնացման օրները, նիրումանը ամենանին չի հիշատակում իմպերիալիստական մեկ այլ տերություն՝ Միացյալ Նահանգների նկատմամբ Մոռագնի լավատեսական արամազքվածությունն ու վարանու, անհամարձակ քաղաքականությունը, որն ինչ-որ տեղ նակատագրական եղավ ազգային բուրժուազիայի կառավարության համար:

* * *

Հիմնականում իրանում տիրող իրադրության, ազգային բուրժուազիայի կառավարության և օտարերկրյա տերությունների գիտօնարարերությունների, ինչպես նաև կառավարության ողջ քաղաքականության ինքանաթյուրմամբ և նրանց ծայրահեղ միտումնավոր մեկնարանությամբ են բնութագրվում նաև ամերիկյան բուրժուազիան հեղինակների այն աշխատանքները, որոնցում այս կամ այն լափով արծարծված է ազգային բուրժուազիայի կառավարման ժամանակահատվածը²³:

Ամերիկացի հեղինակներին նոխ և առաջ բնորոշ է մի ընդհանուր ձգություն. Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների քաղաքականությունն

²³ D. N. Wilber, Contemporary Iran, N. Y., 1963; D. N. Wilber, Iran Past and Present, Princeton, 1976; R. N. Frye, Iran, London, 1963; Y. M. Upton, The History of Modern Iran as Interpretation, Cambridge, 1961; L. Binder, Political Development in a Changing Society, Berkeley—Los-Angeles, 1962; R. W. Cottam, Nationalism in Iran, Pittsburg, 1964; Sh. Kieshanoof, Middle East Oil and U. S. Foreign Policy, N. Y., 1974; E. P. Hoyt, The Shah Mohammed Reza Pahlavi. The glittering Story of Iran and its People, N. Y., 1976.

ամեն կերպ հակազրել Անգլիայի քաղաքականությանը, ԱՄՆ-ը ներկայացնել որպես Իրանի բարեկամ և Հռվանավոր Անդրադառնալով Անգլիայի և Իրանի միջև ծագուե նավթային վեճին Միացյալ Նահանգների միջամտությանը, նրանց միաձախ Հերքում են վերշնիս որևէ շահագրդգրությունն այդ հարցում։ Հետաքրքրական է, որ ամերիկյան պատմագիրներից մեկը՝ Շ. Կլեբանովը, այնուամենալիք, ակամա խռովովանում է, որ ուսնոց որ Մեծ Բրիտանիան խզեց Հարաբերություններն Իրանի հետ, Միացյալ Նահանգների կառավարությունն ակտիվացրեց իր միջամտությունն Իրանի նավթային գործերին։ Եթե Միացյալ Նահանգների գլխավոտագիտական չափերը չօգնեցին նավթարդյունաբերության աջայնացման որենքի չնոյալ հայտարարմանը և ԱՄՆ-ի Իրանի նավթային ապերացիաներուն իր նախկին դիրքերին վերադառնալում, նրանց, անկանութեա, հաջողվեց զաները բացել Միացյալ Նահանգների նավթային ընկերությունների համար՝ մաս սմենալու իրանական ռեսուրսների շահագործումից²⁰։

Ամերիկացի Հեղինակներին նույնքան բնորոշ է նաև բարեգործական նպատակներ վերազրել ամերիկյան հանրահայտ տօգեությանը, որի իսկական դիտագրություններն ամենի բան բացորոշ էին։

Դեռևս 1947 թ. Հրապարակվել էր այսպես կոչված «Տրումենի գոկորինանշ», որը Մերժավոր և Միջին Արևելքի երկրները ներթափակեցիլու ԱՄՆ-ի մշակած բազմազան ծրագրերից մեկն էր։ Այն նպատակ ուներ կարիքավոր, թույլ զարգացած երկրներին դրամական աժանդակություն տրամադրելու միջոցով վերշնիների վրա տնտեսական ու քաղաքական հսկողություն սահմանել և, միաժամանակ, այդ երկրները ծառայեցնել իր հակասովետական մատադրությունների իրականացմանը։ Անշուշտ, տջրումների դրստրինալիք կիրառման համար լափազանց հարմար ապարեղ էր նաև Իրանը։

Նույնանման նպատակներ էր Հետապնդում նաև շահուրորդ կետից ծրագիրը, որն ամերիկյան իմպերիալիստական քաղաքականության փառարանիշների կողմից լայնորեն պրոպագանդվում էր որպես Իրանը և անտեսական կարիք ունեցող մյուս երկրները ազգատությունից փրկելու լավագույն միջոց օգնության և տամերիկյան բարիդրացիական ազանդութիւն լավագույն արտահայտությունն²¹։

²⁰ Sh. Klebanoff, Խ. գ. աշխ., էջ 85.

²¹ U. S. and Soviet Policy in the Middle East 1945—56, N. Y., 1972, p. 32.

²² W. E. Warner, Mission for Peace, Point 4 in Iran, N. Y., 1965, p. 18.

1949 թ. հունվարի 20-ին պրեզիդենտի պաշտոնը գրավելու կապահովությամբ արտասահմած հառաւմ Տրումենը, բացատրելով «Չորրորդ կետի» էությունը, ասաց. «Մենք (Ամերիկայի Միացյալ Նահանգները—Ա. Ա.) պետք է ձեռնամուխ լինենք մեր գիտական նվաճումների և արդյունաբերական առաջադիմության առավելությունները հետամնաց շրջանների բարեկավման ու զարգացման համար օգտագործելու նոր, համարձակ ժրագրին... Մնաք պետք է խթանենք կապիտալ ներդրումներն այն լրջաններում, որոնք զարգացում և աւանանդում»²²:

Բնութագրելով հատկապես Իրանի համար «Չորրորդ կետի» ժրագրի նշանակությունը, Իրանում այդ ժրագրի իրականացման ղեկավար Վ. Ռոտնը գրում է, որ այն ու...պետք է օգիք իրանի ժողովրդին բարեկավելու իր կյանքը...»²³:

Իրանում Միացյալ Նահանգների լափաղանց ակտիվ գործունեության իսկական նպատակները քողարկելու միտումով, ամերիկացի Հեղինակները համարում են դիմում էկոմումիստական աճող սպառնալիքից իմպերիալիստների հսկ հորինած հանրահայտ թեզին, և Իրանի ներքին գործերին Միացյալ Նահանգների բացահայտ միջամտությունը փորձում են ներկայացնել միայն որպես Իրանը տկամումիստական վտանգից փրկելու ռազմիվ միտիալից իրադորժում:

Ամերիկացի հիշատակված հեղինակների աշխատանքներում, որպես կանոն, տեսեական և վարչական բնագավառներում ազգային բուրժուազիայի կառավարության գործումներությունը կամ ընդհանրապես անտեսվում է, կամ էլ, լավագույն դեպքում, գնահատվում է որպես արատավոր միջացառումների մի ամբողջություն, որն էլ ավելի վաթթարացրեց երկրի ճգնաժամային վիճակը:

Թաքննելով Մելլիսում պրոամերիկյան կողմնորոշման դիպուտատների մշտական հակակառավարական գործումներության իսկական դրդապատճառները, ամերիկյան բուրժուական պատմագրությունն այն, զբախավորապես, հետևանք է համարում ազգային բուրժուազիայի կառավարության անօրինական, սահմանադրությանը հակառակ գործոզարդությունների:

Իրադրության նման պատկերումը, անտարակույս, մեծապես պայմանավորված էր նաև նույն՝ Իրանում ստեղծված տնտեսական և քաղաքական աննպաստ վիճակը միշտ և միմիայն Մոռագեղի քաղաքա-

²² Report of a Study of United States Foreign aid in Ten Middle Eastern and African Countries, Washington, 1963, p. 27.

²³ W. E. Warner, ՀՀՊ. աշխ., էջ 27.

կանության առանձնատկություններով բացառելու միտումով, որը լավագույն ձևով ներկայացված է և. Բիեղերի հետևյալ արտահայտությամբ. «Նրա (*Մոսադեղի*—Ա. Ա.) հաջողականություններն ու անհաջողականությունները բխում էին նրա եղանակի անձնական հատկանիշներից և նրա հատուկ ուժակություններից²⁴:»

Ամերիկացի Հեղինակների ուսումնասիրություններում շահի նկատմամբ Մոսադեղի վերաբերմունքը գերակշռաբար մեծնաբանվում է որպես մի քաղաքականություն, որի վերջնական նպատակն իրոն թե, երկրում հանրապետություն հաստատելու նրա զիտավորության իրականացումն էր: Դ. Վիլբերն, օրինակ, ուղղակի գրում է. «...1951 թ. ապրիլի 28-ից մինչև 1953 թ. օգոստոսի 12-ը դոկտոր Մոսադեղը պրեմիեր մինիստր էր և իր մյուս գործողություններին զուգահեռ կայում կամպանիա էր մզում միապետության գեմ... Անկասկած, նրա վերջնական նպատակն իրանում հանրապետության հաստատումն էր, և նա շարժվում էր դեպի այդ նպատակը՝ քայլայիլով թագավորական իշխանությունը...»²⁵: Տևյալ պահանջը, որ շահը պետք է թագավորի և ոչ թե իշխի, որը հոշակիլ էր Մոսադեղի օրոք,—դրում է և. Բիեղերը,—իրականում այլ բան չէր, բան առաջին քայլը հանրապետականության կամ դիկտատուրա հաստատելու աւդությամբ²⁶:

Անդրադարձալով Մոսադեղի և նրանի ժողովրդական կուսակցության (Խմկ կամ Թուրք) փոխհարաբերություններին, այդ հեղինակները Մոսադեղին մեղադրում են Խմկ-ի նկատմամբ շափառանց մեղմ զերաբերմունքի և նրա գործունեության համար երկրում բարենպաստ պայմաններ ստեղծելու մեջ:

Օգոագործելով ազգային բուրժուազիայի կառավարության նկատմամբ Խմկ-ի դիրքորոշման բազմաթիվը և հաճախ իրոք հակասական դրսնորումների փաստը, նրանք առաջ են քաշում ծայրահեղ, երբեմն միմյանց հակադիր տեսակետներ:

Առավել տարածված է ժողովրդական կուսակցությունը Մոսադեղի կառավարության հիմնական աշակից և հովանավոր ներկայացնելու հակումը: Դ. Վիլբերն, օրինակ, գրում է. «Շնայած Թուրք կուսակցությունը պաշտօնապես ընդդիմազիր էր Մոսադեղի կառավարությանը,

²⁴ L. Binder, Եզդ. աշխ., էջ 113.

²⁵ L. Binder, Iran's Potential as a Regional Power (Political Dynamics in the Middle East N. Y., 1972).

²⁶ Նույն սեղան, էջ 281:

սակայն իր հմինական շանքերն ուղղել էր օգնելու նյա՞ իշխանության պլուս մնալունձ³⁷, ո...Մռագեղն իր իշխանության վերջին ամիսներին... ավելի մեծ կախման մեջ ընկած թուղթի ազակցությունից³⁸, — պրում է և թինդերը:

Ինչ-է և Մռագեղի փոխարաբերությունների հենց այս կողմի դիտավորյալ լափազանցումն ու ընդգրությունը պատահական չէ, քանի որ այն օգնում է դյուրացնելու մեկ այլ, դարձյալ հաճախ արտահայտվող կարծիքի հաստատումը, թե իր իշխանության շրջանում Մռագեղը գոնվում էր ժողովրդական կուսակցության ազդեցության տակ և գործում էր նրա թելադրանքով:

Հետաքրքրական է, որ ամերիկացի որոշ հեղինակներ հավասարապես փորձում են ժողովրդական կուսակցությունը ներկայացնել որպես կառավարության թշնամի և նրա դեմ գործող ուժ։ Նույն Վիլբրեգ, Խշելով, որ Մռագեղի օրոք երկրում ստեղծված մինուրուր լափազանց նպաստավոր էր հատկապես զինված ուժերի շրջանում Ինչ-է գործունեության ակտիվացման համար, այն միտքն է հայտնուած, որ այդ կուսակցության նպատակն ի վերջո, թուղեական սպաների կազմակերպության և կուսակցության երիտասարդական խմբերի միջոցով Մռագեղին մեջտեղից վերացնելն էր, այն բանից հետո, եթե վերջինիս կհաջողվեր նրանում վերջ զնել միապետությանց³⁹:

Զգուելով սրողել նրանում հակակառավարական հեղաշրջման կազմակերպման և իրականացման մեջ Միացյալ Նահանգների գործունեածանակցությունն ու որոշիլ դերը, ամերիկացի հեղինակները շեն զլանում հորինել ազգային բուրժուազիայի կառավարության տապալման ամենատարբեր վարկածները. մի դեպքում, իբր Մռագեղին անկման հասցրեց նրա ոչ խելամիտ ներքին քաղաքականությունը⁴⁰, մենք այլ դեպքում, իբր Մռագեղը զո՞ւ դարձավ Շնեկատիվ նացիոնալիզմի շրջանիներում կռնստրուկտիվ նպատակների բացակայությանց⁴¹, իսկ ազելի հաճախ շեշտոց զնում են իշխանության վերջին շրջանում Մռագեղի և շահի փոխարաբերությունների զատթարացման պյառ, որպեսզի հաստատվի այն ենթադրությունը, թե Մռագեղի կառավարությունը

37 D. N. Wilber, Եզգ. աշխ., էջ 143.

38 L. Binder, Political Development in a Changing Society, p. 146.

39 Տե՛ս D. N. Wilber, Եզգ. աշխ., էջ 143.

40 L. Binder, Եզգ. աշխ., էջ 114.

41 D. N. Wilber, Եզգ. աշխ., էջ 95.

42 Y. M. Upton, Եզգ. աշխ., էջ 202.

առապալընք զուտ ներքին ուժերի շանքերով, նույն նպատակն է Շետա-
պեղում նաև Ֆրայը, Նշելով, որ բարեկի բանակի աշակցությամբ
ճշնդց գիմաղրությունը և սպուտոսի 19-ին գրագիծ իշխանությամբ⁴³:

Ամերիկյան հեղինակներն, իհարկե, հաճախ տեղական օպոզիցիա-
յի գործընկեր են ներկայացնում նաև անգլական իմպերիալիզմին,
պիզիլավ, որ օգոստոսյան հակակառավարական հեղաշրջանմ իրակա-
նացվեց նրանց համատեղ շանքերով՝ կրկին բացառելով Միացյալ Նա-
հանգների որևէ առնչությունն այդ ակտին: Զեկորողանալով, երբեմն էլ,
բոլորվին ժխտել հեղաշրջմանը Միացյալ Նահանգների ակտիվ միջա-
մցության չափազանց ակնշարժ և բարձրից ապացուցված փասոց,
ամերիկյան բոլորուական հեղինակները փորձուալ են դա բացատրել այն
հանգամանքով, որ, իրեն, Միացյալ Նահանգներն այդ հարցում գտնվում
էր Անգլիայի քաղաքական ազգացության տակ և գործում էր նրա թե-
լադրանքով:

Դականիք չէ, որ ամերիկյան իմպերիալիզմն իրանի նկատմամբ ու-
ներ իր սեփական, հեռու գնացող ժրագրերը, և, անտարակույթ, ավելի
քան միամիտ է նրա գործությունները բացատրել որպես Հնանանք
այն բանի, որ նա գործիք էր զարձել իր անհամեմատ թույլ գործակցի՝
Անգլիայի. ձեռքին:

* * *

Հետաքրքրվելով անգլո-իրանական նավթային վեճի ընթացքով և
պան հարակից պրորլեմենտով (որութ, ի դեպ, Հիմնականում մեկնա-
բանվում են առողջեկալիզմուն), անգլիական բոլորուական պատմագրու-
թյունը սակավ է անզարդարձել ազգային բոլորուաղյայի կառավարու-
թյան քաղաքականության մյուս կողմերին⁴⁴:

Ժխտելով Իրանում Անգլո-իրանական նավթային ընկերության կո-
ղուպտիչ գործունեությունը և այն ներկայացնելով սոսկ որպես առներա-
կան՝ իրանին անտեսապես ձեռնտու և, միաժամանակ, բարերար ու
քաղաքակրթական միսիա իրականացնող ձեռնարկություն, անգլիացի
հեղինակները մեծ մասմբ ճպում են այն տպավորությունն ստեղծել,

⁴³ R. N. Frye, էջ. աշխ., էջ 207.

⁴⁴ J. Marlowe, Iran, London, 1963; P. Avery, Modern Iran, N. Y.—Washington, 1965; S. N. Fisher, The Middle East. A History, London, 1971; L. P. Elwell-Sutton, Persian Oil. A Study of Power Politics, London, 1965. R. Graham, Iran the Illusions of Power, London, 1978.

թե նրա լուժարքումով վնասվեցին Իրանի իսկ շահերը։ Այս տեսակետի իրավացիքովովն հաստատելու դետավորությամբ միջիններս ամեն առիթով հիշեցնում և թվարկում են այն հայտնի հանգամանքներն ու գործոնները, որոնք, ըստ նրանց, առկա պայմաններում նավթարդյունարերության ազգայնացման օրենքի իրականացումը գործնականում դարձնում էին ոչ նպատակահարմար և, նույնիսկ, անիրականանալի։ Շնորհագեղը, — գրում է Ս. Ֆիշերը, — ... Հուադրում էր իրանցի հասարակ ժողովրդին, թե նավթային արդյունարերությունից ստացվող եկամուտները (ի նկատի ռմի ազգայնացված նավթարդյունարերությունը — Ա. Ա.) նրանց հանդիսատ և բարեկեցիկ կյանքի հնարավորությունը կուն։ Մակալին, նա չէր զիտակցում առանց միջազգային նավթարդյունարերության կամ համաշխարհային համագործակցության նավթի վաճառքի դժվարությունները։ Ավելին, նա հաշմի չէր առել այն հանգամաները, որ հարևան նրկրները՝ Իրաքը, Թուրքիայ և Սասույան Արարիան կառարկեն, եթե նավթային ընկերությունները իրանի նավթի համար պահանջորդ ապահովելու նպատակով սահմանափակեին արտադրանքը նրանց աերիտարիաներում։

Մոսադեղը հավատում էր, որ Բրիտանիան և Արևմտյան Եվրոպան իրենց անտեսության զարդացման համար իրանական նավթի կարիքն են զգում և այդ իսկ պատճառով պետք է յանան ձեռք բերել այն։ Նա նաև հույս ուներ, որ ԱՄՆ-ը կպաշտպաներ Իրանին Աննը-ի դեմ նրա պայքարում...⁴⁵

Իրանի գործերին անդիմակոն և ամերիկյան իմպերիալիստների միջամտությունն ընդհանրապես հերքելու նպատակով անգիտացի հեղինակներն ազգային բուրժուազիայի կառավարության անկումը և առամելիապես աշխատում են բացատրել զուտ Մոսադեղի քաղաքական անզորությամբ, անտեսական հարցերի նրբություններին նրա կատարյալ անիրազեկությամբ և տարրերի բնագավառներում նրա թուվը տվյալ ախալներով։ Զ. Մարկոն, օրինակ, կառավարության տապալման հիմնական պատճառը հանգեցնում է իրանական բանակն իր կողմը գրավելու Մոսադեղի անկարողությանը⁴⁶, Թեմբրիջի համալսարանի դասախոս Պ. Էլլիքին, որի ռժամանակակից Իրանը ուսումնասիրության մեջ առանձին զլուին է հատկացված ազգային բուրժուազիայի կառավարման ժամանակաշրջանի կարևոր պրոբլեմների բնությանը, այն կարծիքն է հայտ-

⁴⁵ S. N. Fisher, Եղբ. աշխ., էջ 520.

⁴⁶ J. Marlowe, Iran, p. 12.

նում, թե ազգային բուրժուազիայի կառավարության վախճանը հետեւ վաճաճ էր միայն Մոսաքիջի ներքին և արտաքին ոչ ճիշտ քաղաքականության, և այդ պատճառով երկրում ստեղծված համընդհանուր դրդության ու անբարյացակամության մթնոլորտի¹¹:

Գիտական պրոբլեմների հիմնականում նույն՝ միասնակալոր լուսաբանմամբ ու զնահամամբ հանդերձ, անզիւական բուրժուազիան պատմագրության մեջ և ազգային բուրժուազիայի կառավարման ժամանակաշրջանին զերաբերող որոշ հարցեր մեկնարանվում են բազական անկողմնապահորներին: Այս առումով առանձնապես ուշագրագի է Լ. Էլվել-Սաթթոնի «Իրանական նավթը. Աւտի քաղաքականության պատմությունը» ուսումնասիրությունը: Չնայած նրա առաջնահերթ նպատակը Իրանի նավթի պատմության և, մասնավորապես, Անգլո-իրանական նավթային ընկերության գործումներության քննությունն է, այնուամենաշենիվ, թե՛ նվազ հանգանայնությամբ, սակայն հիմնական թեմային համարոր լրցությամբ, արժարժվում են նաև ժամանակի մյուս կարևոր խնդիրները:

Ավելորդ չէ նշել, որ բուրժուազիան մի շարք հեղինակների աշխատանքներում առկա է հարուստ փաստական նյութ, որն, անշուշտ, մեծապես նպաստում է ազգային բուրժուազիայի կառավարման շրջանում Իրանում ստեղծված բարդ և հակառական իրադրության, ինչպես նաև կառավարության քաղաքականության տարրեր կողմէրի բացահայտմանը:

А. Г. СТАМБОЛЦЯН

БУРЖУАЗНАЯ ИСТОРИОГРАФИЯ О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ПОЛИТИКИ ПРАВИТЕЛЬСТВА НАЦИОНАЛЬНОЙ БУРЖУАЗИИ ИРАНА (1951—1953 гг.)

Резюме

Важнейшие проблемы периода правления национальной буржуазии Ирана (1951—1953 гг.) и, в частности, ряд вопросов, касающихся политики и деятельности правительства, неоднократно привлекали внимание исследователей, в том числе и буржуазных авторов.

Однако буржуазная историография в большинстве случаев политику правительства национальной буржуазии рассматривает и оценивает с реакционных позиций, предвзято, в определенных целях искажая, а иногда явно фальсифицируя ее сущность, основные тенденции и последствия.

¹¹ Р. Avery. № 24. — 1960. № 416—432.

Վ. Ա. ԽԱՐԲՈՒԹՅԱՆ

ԽԱՌԱԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՈՌՈՒ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1905—1911 թթ.

Դերմանիայի անցումը կապիտալիզմի դարձացման բարձրագույն՝
մոնոպոլիստական, փուլին նշանավորվեց արտաքին քաղաքական բնա-
գավառում եռանդում փորձերով՝ կարև ժամանակամիջոցի ընթացքում
ստեղծել սեփական գաղութային կայտարություն կամ ժայռահեղ գեպքում
շահերի լայնածագալ շրջաններ, դուրս մղելով ամ երկներին, որոնք
հասցրել էին իրենից վաղ առել գրավել արևի տակ։ Դերմանիայի հզոր
մոնոպոլիստական միավորումները պահանջում էին կապիտալի ներ-
դրման նորանոր ոլորտներ, արտահանման շուկաներ և հումքի աղբյուր-
ներ։ Դերմանական մարտնչող միլիոնարիզմի առավել ոհակցուն խմբա-
վորումը՝ պանդերմանիաները, երազում էին իրականացնել մի կոճֆե-
դերացիա, որն ընդդրկեր Դերմանիան, Ավստրո-Հունգարիան, Բալկան-
յան պետությունները և Բուլղարիան, որի օսմանները տարածվեին Հյու-
սիսային ծովից մինչև Պարսից ծոց¹։ Սակայն, քանի որ Մերձավոր և
Միջին արևելքում շափականց ուժեղ էին մյուս իմպերիալիստական պե-
տությունների, մասնավորապես Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի
դիրքերը, գերմանական իմպերիալիզմի գաղութային ներխուժումն այս
շրջանները հնարագոր էր իրականացնել միայն երկարատև և քաղմա-
կողմանի բարարությունը հնառու Բաղդադի երկաթուղին, առա այն լեռ-
նք, որի օգնությամբ իրականացվելու էր գերմանական տնտեսական
ներթափանցումը անառողիական Բուլղարիա, Միջագետք, իսկ ապա նաև
Իրան, Պարսից ծոցի ափերը, Արարական թերակղզի, Հնդկական օվկիա-
նոսի ավագանը, Բաղդադի երկաթուղու շինարարության հետ զուգահեռ
գերմանական մոնոպոլիաները, քաղաքական գործակալությունը, դիվա-
նագիտությունը և զինվորականությունը ձեռնամուխ եղան նշված շրր-
ջաններում գերմանական աղջեցության մեծացման գործին, որպեսզի
իմպերիալիստական այդ երկաթյա գարենիակի շինարարության ավար-

¹ Բալանդ Թագեր, Պատրմազնու, ՊԵ. 1916, ստ. 11.

и в азбуке дипломатии, как и в борьбе за власть в стране. Важно помнить, что в то время, когда Германия стала великой державой, ее политика была направлена на поддержание мира и стабильности в Европе. Для этого требовалось укрепление границ, развитие промышленности и сельского хозяйства, а также создание сильной армии и флота. Но в то же время Германия стремилась к расширению своих интересов за пределами Европы, что привело к конфликтам с Францией, Великобританией и Россией.

Согласно теории Велтполитик (Weltpolitik), которую разработал Генрих фон Шлайхер, Германия должна была стать мировой державой, способной контролировать Европу и Азию. Для этого требовалось создать мощную армию и флот, а также укрепить экономику страны. Важным элементом политики Германии было создание сильных союзников, таких как Австро-Венгрия, Италия и Болгария. Но в то же время Германия стремилась избежать конфликтов с Францией и Великобританией, чтобы не рисковать потерять свою независимость.

Несмотря на то что Германия имела хорошие отношения с Россией, она продолжала развивать свою политику в Азии. В 1898 году Германия заключила договор о союзе с Японией, который предусматривал совместное управление Тонкинским заливом. В 1900 году Германия выступила в роли посредника в переговорах между Китаем и Японией, что привело к подписанию Пекинского договора. В 1904 году Германия выступила в роли посредника в переговорах между Китаем и Японией, что привело к подписанию Пекинского договора.

Таким образом, политика Германии в Азии была направлена на поддержание мира и стабильности в регионе, а также на расширение своих интересов. Для этого требовалось создание сильной армии и флота, а также укрепление экономики страны. Но в то же время Германия стремилась избежать конфликтов с Францией и Великобританией, чтобы не рисковать потерять свою независимость.

¹ В. Н. Ленин, Тетради по империализму, том. собр. соч., т. 28, стр. 709.
² Martin Bradford Gary, German-Persian diplomatic relations 1873–1912, S-Gravenhage, Mouton, 1959, p. 59. 84—104. М. Фёдоров, Соперничество торговых интересов на Востоке, СПб., 1903, стр. 175—176.

³ Чарльз Сароли, Англо-германские проблемы, М., 1915, стр. 158.

Համաձայնությամբ⁸: Խակապես, 1905 թ. վերջերին Անգլիայի և Ռուսաստանի մերձավոր և միջինարևելյան քաղաքականության մեջ նկատվեց շրջադարձ: Այս երկու պետությունների կառավարող շրջանները սկսեցին դրսերել փոխադարձ համաձայնությամբ իրանց, Աֆղանստանը և Տիրքմեր միմյանց միջն ռազմական գոտիներին բաժանելու միտումը Գերմանիան վատենդը և իրանական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման բուռն վերելքը արագացնում էին այդ գործարքի կնքումը: Թեև ռուս-ճապոնական պատերազմը միատամանակ հնատագեց այդ գործը, սակայն եվրոպական քաղաքական շրջաններում համոզված էին, որ վաղ թե ուշ գերմանական վատենդը համաձայնության նորու կատեղծի Ռուսաստանի և Անգլիայի՝ այս երկու վաղեմի մրցակիցների միջն:

Կայքերական Գերմանիայի համար ռուս-ճապոնական պատերազմը՝ ցարիզմի հեռավորնելյան արդ ավանդության, վերին աստիճանի ձեռնուու էր, որովհետև հետագում էր ռուս-անգլիական համաձայնագրի կնքումը և, բացի այդ, նվազային Գերմանիային մեն-մենակ էր թողնում Ֆրանսիայի հետ: Մի կարճառն շրջանում Բեռլինում նույնիսկ հույսեր հայտնվեցին Ռուսաստանը Ֆրանսիայից պոկելու ուղղությամբ:

Այսպիսի փորձ ձեռնարկվեց, օրինակ, 1905 թ. հուլիսին Բյորկում⁹ Նիկոլայ II-ի և Վիլհելմ II-ի հանդիպման ժամանակ, որը, սակայն, ավարտվեց անհաջողությամբ, որովհետև Ռուսաստանը արդեն ամուր կապերով (այդ թվում նաև ֆիննանսական) կապված էր Ֆրանսիական իմպերիալիզմի հետ: Այնուհանդերձ, Գերմանիայի և Ռուսաստանի հարաբերությունները, ընդուակ մինչև պատերազմի ավարտը, շարումակում էին կրել ենթամեծ բնույթ, որն առիթ տվեց երկու երկրների աջ մառույն գրել, նույնիսկ, երկու միապետությունների միջև նախկին բարեկամության վերածնման մասին:

Ռուս-ճապոնական պատերազմի տարիներին գերմանական միջիտարիզմը օգտագործեց ցարական Ռուսաստանի արտաքին քաղաքականության ակտիվության թուլացումը Բալկաններում, Ֆրանսում և Փոքր-Ասիայում՝ էրապանսիալի ուժեղացման և Ռուսաստանին իր գրավող դիրքերից գուստ մղելու համար: Խնչպես Հայտնի է, 1904 թ. Ռուսաստանի և Գերմանիայի միջն առողջության նոր առևտրական պայմանագիրը Բանակցությունների ժամանակ ույիսականցներ Բերեհարդ ֆոն Բյուզով Վիտտեի հետ դրույցի ընթացքում տրտնջում էր, որ Ռուսաստանը բա-

⁸ Յ. Երևա-Կռայք, Կրական պատրակ Պետք, Խ., 1925, տր. 36—37.

վարար շափով թույլ չի տալիս գերմանական ապրանքների աղաւ վաճառահանումը Իրանում և մասնավորապես մատնանշել էր տրանզիտի արգելը դիպի Բաթում, ինչպես նաև այն բոյոր միջոցառումները, որոնք ձեռնարկված էին Ռուսաստանի կողմից Իրանի Հյուսիսային մասում օտարերկորյա մրցակցության դեմ պարարելու համար⁶: Թեև այս թեման բախտկցությունների ժամանակ հետագա զարգացում լստացավ և շարտացոլվեց եղրափակիլ պայմանագրում, ուսկայն այդ փաստն ինքնառախնքյան նախադպուչացում հանդիսացավ Պետրորուրգի համար: Վիտոնեի արտաշայտությամբ պարզվեց, որ Գերմանիան ոչ միայն հազարինություններ ունի Իրանի նկատմամբ, այլն կըսադառում է կունկրետ պլաններ Հյուսիսային Իրանում ռուսական ֆարբեկանաների ռարգելանոցը ներխուժելու համար Խակապես, ռուսական գիշամազիտական ներկայացուցիլները տագնապալից լուրից էին ուղարկում Պետրորուրգ, որ գերմանական արդյունաբերական շրջաններն ուժգին կերպով ռուսականությունը են իրանական շուկան, որ գերմանական ներքին գործերի մինիստրությունում կազմակերպվել է հատուկ ըյուրո, որը առներաարդյունաբերական շրջաններին նյութեր է մատակարարում իրանական շուկայի վիճակի մասին, միաժամանակ զբաղվելով կոնկրետ համեմարտականների (Fingerzeigen) կազմումով⁷:

Գերմանիան աշխատում էր օգտվել նաև իրանական հարցի ընդհանուր սրումից: 1905 թ. մայիսի սկզբին Բուրգիայում ռուսական գնուած Զինովիին հաջողվեց ձեռք բերել Բեռլինում թուրքական զեսպանի 1905 թ. ապրիլի 26-ի գաղտնի հեռազրի պատճենը, որտեղ շարադրվում էր այն զրույցի բովանդակությունը, որ զեսպանը ունեցել էր գերմանական արտաքին գործերի մինիստրության պիտուկան քարտուզար ֆոն Շիխտնոֆենի հետ: Վերջինս թուրքական կառավարության ուշագրությունը հրավիրում էր Ռուսաստանի կողմից Իրանում կառուցվող Ղադ-ովին—Համազան խնայալին ճանապարհի վրա: Ըստ որում հատուկ շեշտվում էր, որ այդ ճանապարհը Ռուսաստանի համար եղանակաշիռին կհեշտացնի զորքերի տեղաշարժը և կունենա ռազմաստրատեգիական նշանակություն: Այս տեղեկությունները հազորգելով, Զինովին նշում էր, որ համար միանգամայն անհասկանայի է թուրքիայում Բեռլինի

* С. Ю. Витте, Воспоминания, т. 3, М., 1960, стр. 455.

⁷ Центральный Государственный исторический архив Ленинграда, ф. 560, чл. 28, д. 359, л. 182 («*штаты*» ЦГИАЛ).

* Архив внешней политики России, ф. Персидский стол, з. 895, л. 34—35 («*штаты*» АВПР).

Հակառակության անվանարկության իմաստը, առավել ևս, որ մինչև այդքան ոչ մի անգամ առիթ չի եղել լսելու, որ գերմանական կառավարությունը մեջ համար անբարենպաստ ներշնչություններ աներ թուցրեցին: Ես առավել ևս, — շարունակում էր դեսպանը, — զժվարանում եմ ինձ համար պարզել այն պատճառները, որոնք հարկադրել են բարոն Միխանովինին թուրքական կառավարության մեջ կասկածներ առաջացնելու Պարսկաստանում մեր առևտորական ճենարկությունների դժմաւ ինձ համար անհասկանալի է, դրանից ի՞նչ օգուտ կարող էր բաղել Գերմանիան:

Ցարական կառավարության համար գերմանական ռուրուսեպիտյան համատը պարզվեց թիվ 1905 թ. վերջին, երբ Թօւլինը քաղաքական ճենք սկսեց աշակեցություն ցույց տալ թուրքական ազգեստիցին արևմտյան Իրանում, որա մեջ առաջին հերթին տեսնելով աղջու միջոց Իրանում նույսաստանի գերբերը թուրացնելու համար:

Դերմանական յունկերա-թուրքուական շրջանները անհանգստանում էին, որ նույսաստանի հեռավորարևելյան քաղաքականության անանկությունը կարող է վերջ գնել ևագատ ճենքերից գերմանական քաղաքականությանը, որը հիմնված էր անզուտ-ռուսական Հակասությունների վրա: Ցարիկմինի պարտությումը Հեռավոր արևելյան անխուսափելի էր գարձնում նույսաստանի արտաքին քաղաքականության ծանրության կճնարանի փոխազդումը դեպի Նյույորք և Մերձավոր ու Միջին արևելյք, որը լէր կարող լինել ուսւ-գերմանական իմպերիալիստական Հակասությունների սրմանը: Խսկապես, ուսւ-ճապոնական պատերազմի ավարտը և 1906 թ. Բաղզադի երկաթուղու ֆինանսավորումը գերմանական քանակային միավորությունների կողմից, անմիջապես իրենց անդրադարձություններն սմեցան միջադարին Հարաբերությունների ընադակառությունը և էլ ավելի սրեցին անզուտ-գերմանական և ուսւ-գերմանական Հակասությունները, ինչպես նաև ավելի ընդգծեցին Անգլիայի և Ռուսաստանի գործողությունների ընդհանրությունը այն բոլոր Հարցերում, որոնց այս կամ այն շափով առնչվում էր Գերմանիան¹²:

Արդին 1906 թ. մայիսին գերմանական կառավարող շրջանները ենթադրում էին, որ անզուտ-ռուսական Համաձայնագրի կնքումը միայն օրերին հարց է: Այդ ենթադրությունը համարյա դարձավ Համոզմումը,

¹² Խոյն տեղամ:

¹³ J. B. Wolf, The Diplomatic history of the Bagdad Railway, Columbia, 1936, p. 46—48.

երբ Հոնգանի ու Մթանդարթշ թէրթը հրապարակեց մի հսկած, որտեղ
նշվում էր, որ անգլո-ռուսական համաձայնազիրը, բացի Ասիային վերա-
քերող հարցերից, պարունակելու է հասուկ կետ Բաղդադի երկաթուղու
վերաբերյալ²¹: Դա ստիպեց Թեոլինի կարինետին անմիջապես դիմել
Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ա. Պ. Խզուլսկուն, որտեղ
ևս հուլիս էր հայտնում, որ էկայաերական կառավարությունը առանց
Թեոլինի կարինետի մասնակցության ոչ մի որոշում չի ընդունեց գերմա-
նական շահները շոշափող հարցերի վերաբերյալ և չի ստիպ Գերմանիա-
յին կանգնելու կատարված փաստի առջև²²: Խզուլսկին պատասխանեց,
որ իր կառավարությունը հաշվի է Խոտում Գերմանիայի շահների հետ և
խոստացավ որևէ որոշում կայացնելու դեպքում նախապես այդ մասին
հաջորդել Թեոլինի կարինետին²³:

Հատկանշական է, որ Գերմանիայի հետ համատեղ անգլո-ռուսա-
կան համաձայնագրի կնքմանը աշխատում էր արգելը հանդիսանալ նաև
ռօմանիան Թուրքիան, որը շահագրգռված էր, որպեսզի իմպերիալիս-
տական պետությունների միջն շարունակվեն պահպանվել երկպառա-
կությամբները: Բացի այդ, Ստամբուլը պիտակցում էր, որ անգլո-ռուսա-
կան համաձայնագրի կնքմանը իր առջև անհաղթահարելի պատճեց կրո-
տհղդի Իրանում Թուրքիայի զավթողական քաղաքականության առջև: Հետո
այդ նպատակով նա ստարերկյա դեսպաններից յուրաքանչյուրին առա-
տորեն կեղծ ինֆորմացիա էր մատակարարում մյօւս պետությունների
քաղաքականության մասին: Այդ ինֆորմացիան սովորաբար ընկնում
էր դեսպանների ձեռքը որպես արտասահմանում թուրքական ներկայու-
ցուցիչների գիվանագիտական գրագրության պատճեն՝ թուրքական արտ-
գործմինստրության հետ, որը իր ձեռք է բերված շաղատնի աղբյու-
րից²⁴:

1905 թ. Մարոկկոյական նզնաժամից հետո Եգիպայում ստեղծված
քաղաքական հարաբերական հանգստ վիճակը բարենպատ պայման-
ներ ստեղծեց Մերձավոր և Միջին արևելքում Անգլիայի և Ֆրանսիայի
քաղաքականության ակտիվացման համար: Պատահական չէ, որ Հետո

²¹ Paul Butterfield, The diplomacy of the Bagdad Railway 1890—1914, Göttingen, 1932, p. 31.

²² АВПР, ф. Помольство в Берлине, оп. 509 в. п. 21 г., л. 1. Տե՛ս նաև «Die grosse Politik der Europäischen Kabinette, 1871—1914», Bd. XXV. t. 1, № 8507, աշխատանք (GP).

²³ Paul Butterfield, աշխ. այլու., էլ 31:

²⁴ Տե՛ս W. M. Carlgren, «Informationssstycken» från Abdul Hamids sena-
re regeringsårs. „Historisk Tidskrift“, 1932, H. 1, Stockholm, 1932, S. 1—35.

այդ օրերին Պետքը բուրգուրգում իրազեկ գարձան, որ բրիտանական արտաքին գործերին միևնուր էղուարդ Դրեյք հայտարարել է Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պ. Կամրոնին, որ ժժամանակն է ձեռնարկել Բաղդադի հերկաթուղու շինարարությանը: Դրեյքի կարծիքով, փոխանակ այդ ձեռնարկումը ամբողջապես Դերմանիայի ձեռքերում թողնելու, անհրաժեշտ է բարձանել նրա հնար բոլոր օգուաները, առավել ևս, որ միննույն է զադ թիւ այդ հանապարհը կիսառուցվի: ՄՄիակ պետությունը, որը կարող է արգելակել դրան,—նկատում է Դրեյք,—Ռուսաստանն է: Նա, ինարկի, չեր ցանկանա ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք վնաս հասցնեին նրա շահերին կամ աշաճություններ պատճառեին ռուսական կառավարությանը: Սակայն ինձ թվում է, որ մենք կարող ենք այդ գործում մասնակցություն ցուցաբերելու համար առաջարկել այնպիսի պայմաններ, որոնք միանգամայն բավարարեին Ռուսաստանի բոլոր հետարագոր պահանջները¹⁵:

Բրիտանական մինիստրի այսպիսի հոգածարությունը Ռուսաստանի շահերի նկատմամբ, անշուշտ, բացարձում էր նրանով, որ շուտով՝ Պետքը բուրգուրգում պատճենու էին բանակցություններ անգլ-ռուսական համաձայնագրի կոնկրետ պայմանների վերաբերյալ և Անգլիան, բնականաբար, շահագործոված էր իր ապագա դաշնակցի բարյացակամ վերաբերմունքով: Բաղդադի ծրագարակությունը կորուպական բաղադրականության կորուպ շրջադարձն ստիպեց Պետքը բուրգին վերանայել Ռուսաստանի դիրքորոշումը Հիշյալ հարցի նկատմամբ, որովհետև մինչ այդ նա զարել էր այդ ծրագարակությունը շինարարությունը կասեցնելու քաղաքականությունը: Ռուսաստանի առներա-արդյունաբարական շրջանները գտնում էին, որ Իրանում ուսմական առևտուրի պաշտպանության լավագույն ձևը տնանապարհազրկության ռա-րեհային մենաշնորհն էր¹⁶:

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ Բաղդադի ծրագարակությունը նկատմամբ անգլ-ռուս-ֆրանսիական նակատը արդեն նեղը կած էր՝ էղուարդ Դրեյքի առաջարկությունը Պետքը բուրգին դրեց կժկարին:

¹⁵ АВПР. Ф. Политархiv. д. 3627, а. 2. Տես «Տակ» „Documents diplomatiques français, 1871—1914”, 2-е série, vol. IX/II, № 625 (Դամբոնի 1908 թ. մարտի 25-ի (ապրիլի 7-ի) նույնական բարձուայշին), այսուհետև DDF.

¹⁶ Л. А. Собоцкин, Персия. Статистико-экономический очерк, СПб., 1913, стр. 70.

¹⁷ Այդ ժամանակ անգամ Զինագանի 1906 թ. մայիսի 25-ի (հունիսի 7-ի) հնացիքը, АВПР. Ф. Политархiv. д. 3627, а. 17—18.

երկընտրանքի առջև Թաղդաղի երկաթուղու շինարարությանը դիմացին քաղաքականությունը այն դեպքում, երբ Անգլիան և Ֆրանսիան հրաժարվում են այդ քաղաքականությունից, ոչ մի հաջողություն չէր խոստանում, իսկ մասնակցությունը ևս ոչ մի օգնություն կարող բերել Ռուսաստանին, որովհետեւ նրան ֆինանսական ազգատությունը հետապրություն չէր տալիս գործնականությն մասնակցելու այդ ձեռնարկությանը:

«Մթանդարթ» թերթի Հոգվածի առթիվ Թիոլինի առաջ քաշակ պահանջը այն մասին, որ առանց Գերմանիայի մասնակցության Ռուսաստանը տու մի որոշում շպետք է ընդունի այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնք շշափում են գերմանական շահները, հուշեց Իզվոլսկում, որ անհրաժեշտ է Թաղդաղի երկաթուղու վերաբերյալ անմիջական համաձայնության մեջ մտնել Գերմանիայի հետ Ռուսական դիվանագիտական շրջաններում այդ ուղղությամբ, արդեն, նախապատրաստված էին որոշակի տրամադրություններ: Ցարիկ զմբց ուղիներ էր որոնում իրանում և Թուրքիայի Հյուսիսում երկաթուղային շինարարությունը կրկին ինչուոյ ժամկետով հետաձգելու համար, որպէսն այդ երկրների կառավարությունների հետ կերած երկաթուղային շինարարության արգելքի մասին համաձայնագրերի ժամկետը մոռենում էր իր ավարտին: Հետևաբար, Գերմանիայի հետ համաձայնագիր կնքելու միջոցով կարելի էր ևս մեկ անգամ փորձել ապահովել ուստական իմպերիալիզմի շահները հիշյալ շրջաններում: ԵԱյդ ուղղությամբ մացերի անկեղծ փոխանակության ճանապարհով, — գրում է Իզվոլսկին Լուսունում ուստական գնուպան Բենկենդորֆին 1906 թ. մայիսի 11/24-ին, — մենք հույս ունենք ապահովել այդ շահները, ավալ դժգուում զեկավարվելով Անգլիայի գործելակերպում, որի կողմէից արդեն փորձեր են արված համաձայնության դալ Գերմանիայի հետ Թաղդաղի երկաթուղու հարցում՝ համապատասխան օգուտներ ձեռք բերելու նպատակով»¹⁶:

Իզվոլսկու մատնօցման իրականացումը հեշտանում էր նրանով, որ Թիոլինի հայտարարության մեջ ասվում էր, որ գերմանական կառավարությունը ռպատրաստ է հանույթով ողջումնել ասիստան գործերի վերաբերյալ Ռուսաստանի և Անգլիայի միջն կերպով ամեն մի համաձայնագրի, եթե այն կվերաբերի բացառուպես Ռուսաստանի և Անգլիայի շահներին»¹⁷:

¹⁶ АВПР, ф. Постольство в Берлине, оп. 509 п. д. 21 г., л. 3.

¹⁷ Խոյե տեղում, թ. 2:

Յարական արտաքին քաղաքականության զեկավարի կարծիքով՝
այդ հայտարարությունը բնակապարհ էր բացում լուսդրենի հետ բա-
նակցությունների համար և ռազմատում էր Պետերբուրգի ձեռքբերցը²⁸:

Ենթադրվող վերոհիշյալ նկատառումներից, 1906 թ. մայիսի 11-ին
(24-ին) Խղճուկին Պետերբուրգում գերմանական զետուան ֆուն Շյոնին
Հանձնեց մի հուշագիր, որտեղ նշվում էր, որ Շկայսերական կառավա-
րությունն առանձնահատուկ հանուցով համոզվեց, որ Թեոլինի կարի-
նեաց ռազմարարությունը է ողջունելու անգլո-ռուսական համաձայնագիրը։
Այսուհետև ասվում էր, որ Պետերբուրգը Թադդագի երկաթուղու վերա-
բերյալ չի ընդումի ոչ մի որոշում, ուստանց նախապես անկեղծ բացա-
րաւթյունների մեջ մտնելու Թեոլինի կարինեաց հետ, հաստատ համոզ-
ված լինելով, որ գերշինս, ողկավարգելով նույն գդացումներով, իր կող-
մից լի մերժի հաշվի առնել Ռուսաստանի շահերը²⁹։

Այսպիսով, ցարական դիվանագիտության առջև կանգնած էր վերին
տատինակի բարդ խնդիր՝ Անգլիային մերձնելու հետ միաժամանակ-
յավ հարաբերություններ պահպանել Գերմանիայի հետ։ Մասնականդ որ-
հիշողության մեջ դեռևս թարմ էին մարտկեցյական ճգնաժամի իրա-
զարձությունները, որն առաջ էր նկել Անգլիայի և Ֆրանսիայի միջև
նույնպիսի մերձնեցման հետևանքով։ Այն գրությունը, որի մեջ ցարիկացը
գտնվում էր 1906 թ., թույլ շէր տալիս որսկի դիմել, կրկնելով Ռուսաս-
տանի և Գերմանիայի միջև հարաբերությունների նման իրազրությունը։
Այդ պատճառով զարմանալի չէ ցարական կառավարության այն հատուկ-
ուշադրությունը Թեոլինի նկատմամբ, որն աշխի է ընկնում 1906—1907 թթ.
ռուս-գերմանական հարաբերությունների ընթացքում։ Այդ տարիներին,
ռուսական զեկանագիտության կարևորագույն խնդիրն էր թույլ շատ
իրեն ընդդրկելու անգլո-գերմանական պայքարի մեջ քաղաքական արդ-
դիծը իրավութելու միակ հնարավորությունը անգլ-ֆրանսիական և
գերմանու-ավստրիական բլուների միջև խոսանավելին էր։

Դեռևս 1906 թ. մայիսին Պետերբուրգում հակած էին կարծելու։
որ Իրանում գերմանացիների գործունեության վերաբերյալ լուրերը շա-
փազանցված են և քանի որ այդ լուրերի մի մասը գալիս էր լուսդրենից,
հնթապես էին, որ էլունդունի կարինեաց միաւումնավոր կերպով թանձ-
բացնում է գույները, բնականարար ձգտելով այդ նահապարհով մեջ

²⁸ Խայք անգում, թ. 2:

²⁹ Տե՛ս DDP, vol. X, № 70 (Բանագրի 1806 թ. մայիսի 11/24-ի Նամակը-
Բանագրի անդամների), „British documents on the origins of the war 1898—1914”, vol.
IV, № 218 (այսուհետեւ BD):

Հակել պարսկական գործերի վերաբերյալ Շաբավավորին շափ շուտ համաձայնության գալու իր հետ, ընդ որում իր համար առաջել ձեռնառություն:

Իր հերթին մինչև 1906 թ. զարունը Թեհրանում գերմանական միսիան, որը ղեկավարում էր ռազմականություն, կոմս Ռեքսը, զարում էր միանգամայն զգուշ քաղաքականություն, վախճառավոր, որ կտրուկ քաղաքականությունը կարող է նպաստել Անգլիայի և Ռուսաստանի մերձակցմանը: Ծիշու է, թեհրանում ֆրանսիական ղետպահությունը հավատացնում էր ոռուական կոլեգաներին, որ Ռեքսը խորամանէ է և կարողանում է տփայլուն կերպով վարել խաղը²⁰, սակայն այդ նախազգացածամերը ոռուական ղետպահն կողմից ընդունվում էին որպես ուսու-գերմանական հարաբերությունները սրբելու փորձ: 1906 թ. մարտին Ռեքսը ետ կանչվեց և նրա փոխարքն նշանակվեց Ֆրեն Շտեմբիխը, որը մինչ այդ հանդիսանում էր Ստամբուլում գերմանական ղետպահությունը Արդեն այդ նշանակումը վկայում էր այն ժամանել, որ Գերմանիան մտադիր է անգլո-ռուսական մերձակցմանը պատասխանէլ իրանում ակտիվ քաղաքականությամբ: Խակապես, 1906 թ. օգոստոսին Պետերբուրգում տեղիկություն ստացվեց գերմանական ռէլամբուրդ-Ամերիկայ միջադաշյին մոնոպոլիայի կողմից դեպի Պարսից ծոց կանոնագործ ժողովուն զիժ բաց անելու մասին, իսկ սեպտեմբերին գերմանական գործերի հավատարար Միկելը հաստատեց թերթերում հայտնված լուրերը Թեհրանում գերմանական շինուած Օրիենտանկա-ի բաժանմունքը բացելու վերաբերյալ գերմանո-իրանական կոնվենցիայի ստորագրման ժամանք²¹: Ծիշու է, Միկելը հայտարարեց, որ բանկը կազմակերպվում է տղուտ առևտորական նպատակներով, և Գերմանիան իրանում քաղաքական նպատակները լի պիտրամէ²², սակայն զժվար թե դա հանդստացներ իզգույսակուն, քանի որ Բաղդադի հանապարհը եւ, Բյուզովի պեղման համաձայն, նույնպես ձեռնարկված էր զուտ առևտորական նպատակներով:

Այսպիսով, 1906 թ. աշնանն արդեն բավականաշափ նյութ էր կուտակվել Բեռլինի հետ իրավագություն սկսելու համար: Սեպտեմբերի

²⁰ АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509 а, л. 21 т., л. 3; ГР, Bd. XXV, 1, № 8568.

²¹ DDP, 2-я серия, vol. X, № 42, p. 181.

²² АВПР, ф. Персидский стол, д. 4453, л. 123.

²³ ГР, Bd. XXV, т. 2, л. 103—121.

28-ին Իզմուլսկին մեկնեց արտասահման, և Հայտարարվեց, որ նա ուղարքում է Հանգստի և ալցելելու իր ընտանիքին, որն ապրում էր Տեղերնդեհի շրջանում (Դերմանիա): Մինչդեռ իրականում Իզմուլսկու նշպատակն էր բանակցություններ վարել Բնույինի և Փարիզի հետ:

Ակզրում Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը ժամանեց Ֆրանսիայի մայրաքաղաքը: Այստեղ նրա նպատակն էր Հավաստիացնել ֆրանսիացիներին, որ Ռուսաստանը հավատարիմ է ֆրանս-ռուսական դաշինքին և Փարիզի կարիքները նախապատրաստել Բելինում ծրագրված բանակցություններին:

Ֆրանսիայում Իզմուլսկու պլաններին վերաբերվում էին վերին աստիճանի կասկածանքով: Առանձնապես անհնագուտացնում էր այն փաստը, որ այդ ուղղության մեջ չեղ ընդգրկված լունդոնի: Անգլիացիները փորձնացին ուսուզելու ռուսական մինիստրի այդ անփությունը, ոչ պաշտոնապես հաջորդելով նրան Էդուարդ VII-ի և անգլիական կառավարության ցանկությունը՝ Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում տեսնելու նրան: Սակայն մինիստրը հարգալից կերպով մերժեց այդ հրավերը, պատճեռաբանելով, որ պրեզիդենտ Ֆալլի Փարիզում²⁸: Մերժման հակական պատճեռը նա անկեղծորնեն բացարկեց Ֆրանսիայում անզիւական դիսպան Բնույինի: Ուղղությունը լուսպն, նշեց մինիստրը, տեղիք կտար լուրերի, որ ռուս-անգլիական բանակցություններն արդեն ավարտվելու մոտ են, մինչդեռ իրականում այդպես չեց: Բացի այդ, մինչև Անգլիայի հետ համաձայնագրի կնքումը, ինքը Բնույինում պետք է պարզի, թե Դերձանիայի շահները որքանով են առնվազում այդ գործին: Իզմուլսկին շատապեց ավելացնելու դրան, որ իր նպատակն է խուսափել Դերձանիայի այնպիսի վարքագից, որպիսին նա գրանորեց մարոկոյական հարցում: Նա իր համար պետք է պարզի, թե Բնույինում ինչ են հասկանում այսպիս կոչված ռազմուրական շահները առելով: Զե՞ս որ Դերձանիան հայտարարում էր, որ ինքը Մարոկոյում ուներ միայն ռազմուրական շահներ, բայց իրականում ֆրանս-գերմանիան հարաբերություններում մեռնագ ռուսվ մեծ լարգաժություն: Ինքը չի կարող իր վրա վերցնել Ռուսաստանի և նրա մերձավոր հարնակի միջև նմանութեակ իրագրություն ստեղծելու ռիսկը²⁹:

²⁸ Տե՛ս A. P. Izmoulsky, Au service de la Russie. Correspondance diplomatique 1906—1911, Paris, 1937—1939, vol. I, p. 379—385.

²⁹ Տե՛ս Բնույի 1908 թ. Հայտեմքերի 3/22-ի հրատ. Հայուրդագրաթյունները Դրախ, BD, vol. IV, № 230, 231:

Իղվուսկին, Պիշտի հետ զրույցի ժամանակ, մոտավորապես նույն կերպ պատճառարանց Բնույն այցելելու անհրաժեշտությունը: Նա հայտարարեց, որ իր արտաքին քաղաքականությունը բոլոր պետությունների նկատմամբ կրծկու է հաշտվողական ընույթ, և զեշտեց, հատկապես, Դերմանիսի հետ լավ հարաբերություններ պահպանելու անհրաժեշտությունը²²:

1906 թ. Հոկտեմբերի 15/28-ին Իղվուսկին ժամանեց Բնույն: Այսուհետ նա մնաց երկու օր և հանդիպումներ ունեցավ Վիլհելմ II-ի, Ֆուն Բյուլովի և գերմանական արտաքին գործերի մինիստրության պետական քարտուղարի տեղակալ Մյուլբերգի հետ: Մինիստրը սկսեց Բաղդադի հանապարհից և իրանական գործերից: Հաղորդելով, որ Բաղդադի երկաթուղու նկատմամբ ուսական հասարակական կարծիքի մեջ գոյություն ունի օպերացիա, նա նշեց, որ իր համար հեշտ կլիներ հաղթահրել այդ տարածայնությունները, եթե հեարազոր լիներ ցրելու այն երկրությունը, որ Բաղդադի ճանապարհը մտադիր է իր ցանցը տարածել Իրանում: Այնուհետև մինիստրը սկսեց հանգամանուրեն նկարագրել ուսական ռեխենական շահները հյուսիսային Իրանում, որոնք հենցում են շաշխարհագրական հարևանության, հարյուրամյա քաղաքականության և այդ երկրու նույսաստանի ֆինանսական ներդրումների վրա: Իղվուսկին նշեց, որ այդ բոլոր շահների պառակները հարցականի տակ կդրվեն, եթե մի այլ ազգ այնտեղ սկսել կառուցել երկաթուղիներ, հեռագրական դժեռ և խնարդային ճանապարհներ: Այդ պատճառով ինքը ցանկանում էր իմանալ, արդյոք Դերմանիան չի բողոքի, եթե ինքը պայմանագրովի Իրանի հետ, որպեսզի վերցնեն իր վրա պարտավորություն վերցնե՞ առանց նույսաստանի նախնական համաձայնության որևէց պետության շտա նման տիպի կոնցեսիաներ:

Մյուլբերգը զգուշողն պատասխանեց, որ Դերմանիան իրանում հասապետում է լոկ առեւրական նպատակներ և միաժամանակ չի ժխտում, որ Իրանը նույսաստանի համար հանդիսանում է կարևոր գործն, սակայն ցանկալի կլիներ, որ Իղվուսկին զրավոր մնով շարադրեր իր առաջարկությունները, որպեսզի արագործմինիստրությունում կարողանան դրանք քննուրկել: Ընդ որում Դերմանիայի համաձայնությունը կհեշտացվեր, ավելացրեց նա, եթե ուստական մինիստրը պրեսմատուլայում հաստատեր իր բանավոր համաձայնությունը Բաղդադի երկաթուղու շինարարությունը շարգելակելու մասին և խոստանար, որ նույսա-

²² DDF, vol. X, № 244 (Պիշտի 1906 թ. Հոկտեմբերի 14/27-ի դրությունը).

տաեց լի դիմագրի այդ ճանապարհի միացմանը իրանական երկաթուղային դժբերին, երբ դրանք արդեն կառուցված լինեն: Մյուլբերգը ուղղակի ակնարկում էր այդ հարցի առթիվ հատուկ համաձայնազիր կընթալու անհրաժեշտության մասին: Իզգուլսկին համաձայնվեց և անցավ թերանում գերմանական բանկի հարցին, երկյալ արտահայտելով, որ, բայց լուրերի, բանկի համար Դերմանիան պահանջում է երաշխավորել իրանական մաքսատների հետառապես, այն զեպքում, երբ երկրի ռուլոր մաքսային հետառապես արդեն զրագ են դրված: Մյուլբերգը կրկին անդամ հավաստիացրեց մինիստրին զերմանական այդ ձևոնարկության բացառապես տառարական նպատակների մասին և կարծիք հայտնեց, որ ճիթե իրանի ռուլոր մաքսային հետառապես արդեն բաշխված են, ապա բանկի իրանին լի հատկացնի նշանակալից գումարներ:

Հաջորդ հարցը նուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի մատնակցության խնդիրն էր Բարդազի երկաթուղու շինարարությանը, ինչպես նաև անգլո-ռուսական բանակցությունների հարցը: Ըստ որում Իզգուլսկին աշխատում էր համոզել Մյուլբերգին, որ Անգլիայի հետ բանակցությունները բնավ ուղղված լեն Դերմանիայի գեմ և առնասարակ լեն շահափում ընդհանուր քաղաքական հարցեր²⁹:

Իզգուլսկին վերադարձավ Պետերբուրգ իր բնույթին պրույցներով լրիվ բավարարված³⁰, որովհետև նրան մեկ անգամ ևս համաստեցին, որ Դերմանիան ունի շամի անգլո-ռուսական համաձայնազրի զեմ, եթե այն անմիջականորեն լցուցափի Դերմանիայի շահերը բացի այդ, նա ստացավ անպիսի տպավորություն, որ Բեռլինում գեմ լեն հրաժարվել Բրանում գերմանական գործունեության ակտիվացումից՝ Բազգադի երկաթուղու հարցում նուսաստանի համապատասխան զիջումների զեպքում:

Անգլ-Ֆրանսիական դիվանագիտությունը մեծապայմ տագնապավ էր հետևում Պետերբուրգի ձգտմանը՝ Դերմանիայի հետ հարարերությունները բարելավելու ուղղությամբ: Բովագարք արդեն խոսում էր երեք միապետների գաշինքի վերականգնան մասին³¹, իսկ նուսաստանում

²⁹ Բանակցությունների մասին մանրամասն ան» 1900 թ. Հոկտեմբերի 16/28-ի Մյուլբերգի հաշվառվելություն (GP, Յն. XXV, լ. 1, № 8649):

³⁰ ՏԵՇ Բարդուրովի 1890 թ. Հոկտեմբերի 22-ի (Նոյեմբերի 4-ի) և Նիքոլաևի Հոկտեմբերի 25-ի (Նոյեմբերի 7-ի) հաջորդագրությունները (DDP, vol. X, № 257; BD, vol. IV, № 369; ՏԵՇ հանձն H. Nicolson, Sir Arthur Nicolson, London, 1930, p. 233):

³¹ DDP, vol. X, № 285 (Բամարդի 1890 թ. Նոյեմբերի 3/16-ի նամակը Գիշունին),

անդրիական դեսպան Նիքոլաոնը հռուտեսորեն գրում էր, թե անհրաժեշտ է բազարար Համարել այն, որ Իդվուսկին Բելինում անզրո-ուստական բանակցությունների վերաբերյալ որևէ պարտավորություն իր վրա չի վերցրել²²:

Նոյեմբերի 1/14-ին և 2/15-ին Ռայխստագում ֆոն Բյուկովի ելույթից հետո, որտեղ գերմանական կանցկաց ամենաչերմ արտահայտություններով նկարագրեց Գերմանիայի և Ռուսաստանի միջև հարաբերությունների վիճակը, Գրանսիական դեսպանը վերջնականապես համոզվեց, որ Բեռլինի և Պետերբուրգի միջև շվերցին թուխուրը արդին ցըմել են, որիորնի Հայաձայնագիրը վերածնվել է և հազանակուն է, որ նույնիսկ ճշավել է: Ավելին, նա նույնիսկ կասկածում էր, որ Համայնքագրին մասնակցում է նաև Ավստրո-Հունգարիան²³:

Բեռլինի և Պետերբուրգի միջև շարումակվող մերձեցումը ստիպեց Լոնդոնին դիմել կանխագնարի սնծովյան նեղուցների վերաբերյալ 1906 թ. նոյեմբերի վերջին անգլիացիները հասկացրին Խավելսկուն, որ բրիտանական կառավարությունը հակված է փոխելու իր տեսակեալ սեծովյան նեղուցների հարցում: Նիքոլաոնի վկայությամբ, հենց արդ պահից բանակցությունների մթնոլորտը դարձավ ավելի բարենպատճեցումը:

1907 թ. փետրվարի 1/14-ին տեղի ունեցավ ցարական կառավարության խորհրդակցություն, որը նվիրված էր առաջիկա անգլո-ռուսական համաձայնագրի քննարկմանը: Խավելսկին հայտարարեց, որ ռԱնգլիայի հետ համաձայնագրի կարող է տալ առասվազ արդյունքները և կանխել միշագային բարդությունների հնարավորությունը միայն այն դեպքում, եթե այն առարկություններ առաջ լրերի երրորդ պետությունների կողմից և առաջին հերթին, իշարկե, Գերմանիայի կողմից, որը, ինչպես ցույց տվեցին մարոկկոյական իրադարձությունները, շափազաց նախանձախնդրությունն է վերաբերվում այն համաձայնագրերին, որոնք կերպում են առանց նրա իմացության և որոնք ինչ-որ հարցում կարող են շշշափել նրա դիրքերը որպես համաշխարհային պետության²⁴: Այնուհետև, հիշեցնելով իրանում Գերմանիայի գործունեության և Բարդգագի երկաթուղու կապակցությամբ Բեռլինի ելույթների

²² BD, vol. IV, № 235 (Նիքոլաոնի 1906 թ. Հականերեք 23-ի (Կայերերեք 7-ի) նույնական գրերին):

²³ Եսայ տեղում: Անհրաժեշտ է ենի, որ Բյուրի Համաձայնագրի սույզ բազականիությունը հայտնի լին Ֆրանսիայում չկանոնաց միեւն 1917 թվականը.

²⁴ H. Nicolson, նշվ. ոչի., էջ 242.

²⁵ «Красная звезда», 1935 г., т. 2-3 (69—70), стр. 20.

մասին, մինչխորը առաջարկեց տաղավել որոշակիորեն լեզու գտնել արևմտյան հարկանի հետ և սահմանագատել փոխադարձ շահերի քնարագառները:

Հատուկ խորհրդակցությունում բոլոր ելույթ ունեցողները (այդ թվում նաև ռազմական հիմնարկությունների ներկայացուցիչները) թեև ոմիաձայն արձանագրեցին Ռուսաստանի համար Բաղդադի երկաթուղու վիճակար լինելը առնարատնտեսական և ռազմաստրատեգիական տեսակետից, սակայն այնուհանդերձ արտահայտվեցին հօգուտ երկաթուղու վերաբերյալ Դերմանիայի հետ համաձայնագիր կերպելու²⁰:

Այսպիսով, Բաղդադի երկաթուղու հարցում Պետքըրությի կարինեակի հայացքների մեջ տեղի ունեցավ թեկում: Ցանկալի համարվեց այդ ձեռնարկության վառագրեց փրկություն դանել ոչ թե նրա շինարարությանը զիմանդրելու, այլ Դերմանիայի հետ անմիջական համաձայնության մեջ մտնելու միջոցով: Քանի դեռ կար այդ ճանապարհի շինարարության դեմ անգլո-ռուսական համատեղ դիմադրության հույսը, ցարական մինիստրները նույնիսկ լէին էլ մտածում նման համաձայնագրի մասին: Սակայն այդ հարցի նկատմամբ Անգլիայի տեսակետի փոփոխությունը ստիպեց Ռուսաստանին վերանայել նաև իր դիրքը²¹: Բացի այդ, ցարական դիվանագիտությունն այնքան էլ հավատ լէր ընծայում անգլիական արտաքին գործերի մինիստրի խռատումներին՝ այդ հարցում դորժել միայն Ռուսաստանի հետ համաձայնեցված կերպով, և այդ պատճառով գերազանց անձամբ հոգ տանել իր շահերի նկատմամբ, առավել ևս, որ նրանք բոլորովին լէին համընկնում անգլիական շահերի հետ:

Համաձայն փետրվարի 1(14)-ի հատուկ խորհրդակցությունում արտահայտված ցանկությունների, արտաքին գործերի մինիստրությունում մշակվեց համաձայնագրի առաջին նախադիմք, որը փետրվարի 20-ին իզվլուկին հանձնեց ֆոն Շյոնին²²: Այդ նախագծով Ռուսաստանը պարտավորվում էր շարգհակել Բաղդադի ճանապարհի շինարարությունը և հեշտացնել նրանում օտարերկրյա կապիտալի մասնակցությունը:

²⁰ Խոյե տեղում, էջ 21—22:

²¹ 1808 թ. գարնանը նույնիսկ յուրեր էին առածքի, որ ճառակա ժամանակակիցում հավանական է Բարձադի երկաթուղու վերաբերյալ անհատ անդամներին համաձայնագրի կնքումը, (Տե՛ս DDF, vol. X, № 106; АВПР, ф. Просольство в Берлине, оп. 509 в, д. 21е, а. 12).

²² АВПР, ф. Персидский стол, д. 4148, д. 2; GP, Bd. XXV, t. 1, № 8580, Anlage.

Դրա գոյխարքն գերմանական կառավարությունը հայտարարելու էր. որ Իրանում քաղաքական շահեր չենի, այլ հետապեղում է բացառապես առաջարական նպատակներ, և անաշխատ է Ռուսականի քաղաքական, և անտեսական բնույթի հատուկ շահերի առկայությունը Իրանի հյուսիսին շրջաններում և հրաժարվելու է իր համար քաղաքական կամ անտեսական բնույթի կոնցեսիաներ (երկաթուղարքներ, ճանապարհային, հեռագրական և այլն) ձեռք բերելուց Իրանի այն շրջաններում, որոնք ընկած են Բաղդադի գծից Հրուսիս³⁰, Բաքի այդ, կողմերը պարտավորվելու էին որոշումներ չկայացնել Բաղդադի երկաթուղիների միջև միացնող գծերը կառուցվող երկաթուղիների միջև միացնող գծեր կառուցնելու վերաբերյալ, առանց նախապես այդ հարցի կապակցությամբ միացնել միջև պայմանավորվելու³¹. Պետքը բուրգուրում աշխատում էին նաև ի վեց դարձել Բեռլինի ձգումը Բաղդադի գծի ցանցը իրանական անդամության վրա տարածելու ուղղությամբ. Դա ցարական միեխսութների տեսակետից Բաղդադի երկաթուղու շինարարության ամենատհաճ հետևանքներից մեկն էր հանդիսանում:

Այսպիսով, ուստական նախադատում միայն մեկ հարցում էին ընդառաջ գնում գերմանական ցանկություններին. խոստանում էին շարգելակել Բաղդադի երկաթուղու շինարարությունը:

Նախադիմք Գերմանիայում առաջ բերեց խիստ առարկություններու Հատկապես Բեռլինում ոչ մի կերպ չէին ցանկանում գրավոր ձեռվ հրաժարվել Իրանում ամեն անօսակի քաղաքական շահերից, թուրքիայում գերմանական գետպան Մարշալի կարգիքով, ոԳերմանիան ընդհանրապես չի կարող նման հայտարարություն անել մի այլ պետությանը³², Ընդհանրապես նախադիմք երկրորդ կետը բնավ չէր համապատասխանում Գերմանիայի շահերին, որովհետև նրանում նույնիսկ ոչ մի խոսք չէր ասվում այն մասին, որ Պետքը բուրգուրը սկզբունքորեն համաձայն է Բաղդադի երկաթուղին միացնել իրանական երկաթուղիների հետ:

³⁰ Անգլ-ռուսական համաշխատթիրը գնա չէր կերպել և բանակարար Պետքը բուրգուրը էր ցանկանում մամանկից ցան մասնացուց ունի այն գոտու առնմանները. որի հիմունամը իւրց հավակնություններ ուներ.

³¹ АВПР, ф. Պերսունի տու, լ. 4148, լ. 2; GP, Bd. XXII, լ. 1, № 7354, և. 33—41; Bd. XXV, լ. 1, № 8580, Anlage; Bd. XXV, լ. 1, № 8649, և. 231—234, № 8590, և. 123—124.

³² GP, Bd. XXV, լ. 1, № 8582 (Մարշալի 1907 թ. Խարտի 4/17-ի նույնը բառացին):

Նրկարատե քննարկումից հետո մշակվեց Համաձայնագրի գերմանական Հականախաղիծը, որը 1907 թ. հունիսի 5/18-ին հանձնվեց Գետերբուրգի կարիքնետին։ Այսուղ առաջարկվում էր պայմանագրովել իրանում ուսում-գիրմանական Հարաբերություններին վերաբերող բոլոր վիճակի հարցերի շուրջ։ Սակայն Հականախագրում խոր անդամ չէր առվում այն մասին, որ Գերմանիան հանուղում է Ռուսաստանի հատուկ շահերը Իրանում և հրաժարվում է այդ երկրում իր ունեցած քաղաքական շահերից։ Ազելին, Ռուսաստանից պահանջվում էր Իրանում գերմանական առեւտրի նկատմամբ հանալի բառանց որևէ անհավասարության, անտեսական ազատության սկզբունքը։ Այսուհետեւ երկրորդ հոդվածը ճնշմարկվում է լրիվ փոփոխության։ Այն վերածվում է Համաձայնագրի կենտրոնական հոդվածի։ Նրանում առաջ է քաշվում մի պահանջ, ըստ որի Ռուսաստանը կառուցելու է երկաթուղարքն մի դիմ, որը իրանական հանապարհների ավարտ ցանցը միացնելու է Բաղդադի երկաթուղուն։ Այն պետք է դուրս գար դեպի թուրք-իրանական սահմանը (հանձնվել մոտ) և պետք է կառուցվել Բաղդադի երկաթուղու Սաղիրծ-հանեկին հյուզավորման շինարարության ավարտի պահին։ Բացի այդ, երկու կառավարությունները պարտավորվելու էին այն գերերի վրա, որոնք ապագայում Իրանը միացնելու էին Թուրքիայի հետ, լմացնել տարանցիկ մաքսատուրքեր և տարբերակված տարիֆներ¹²։

Գերմանական Հականախաղիծը ստանալուց առաջ Ռուսաստանի արտաքին գործերի միևնուրությունում պարզեցին, որ դեռևս 1907 թ. ապրիլին Թեհրան է ժամանել Շներմանական արքական բանկին («Շուլլի օրինատրանեկ») դիրքեկտոր Հերբերտ Գուտմանը, որպեսզի 1908 թ. հունիսին կնքված գերմանո-իրանական կոնվենցիայի հիման վրա բանակցությունները վարի բանկային կոնցեսիա ստանալու համար¹³։ Գուտմանի առաջ քաշած բանկային կոնցեսիայի պահանջները շահի կողմից գաղտնապես հանձնվեցին Թեհրանում ուսուական դեսպանորդ Դարավիզին և Հազորդվեցին Պետերբուրգում¹⁴։ Իր հազորդագրության մեջ դնապանորդը գրում էր. «Շներմանացիների կողմից ներկայացված պահանջների ուսումնասիրությունից երևում է, որ Հականու բազմիցս տրված իրենց Հավաստիացումներին, զերմանական կառավարությունը անկառած

¹² ОР, Bd. XXV, t. I, № 8588, Anlage; АВПР, ф. Персиакский стол, д. 4148, л. 118—119.

¹³ ЦГИАЛ, ф. 560, оп. 28, д. 359, л. 12, 179.

¹⁴ Центральный Государственный военно-исторический архив, ф. 2000, оп. 1, д. 1028, л. 200(«յառաքում» ЦГВИА).

գիտութ է քաղաքական արտօնություններ, որոնք ընդ որում բացահայտված կերպով ուղղված են Պարսկաստանում մեր շահերի դեմք⁴⁴:

Այն հանգամանքը, որ Բեղլինի ներկայացրած հականախազժում բացակայում էր Իրանում զերմանական քաղաքական շահերից հրաժարվելու և այդ երկում ուսական հատուկ շահերը ճանաչվու հրաժարակությումը, Թեհրանից ստացված հաղորդագրության ֆոնի վրա, պետք է ստիպեր ցարական դիվանագիտությանը մտածմունքի մեջ ընկերել: Միանգամայն ակնայտ էր, որ գերմանացիների գործունեությունը Իրանում բացարձակապես լի համապատասխանում Երևնի, Մանզուրերգի և Բյուզովի կողմից արգած բազմաթիվ հավաստիցումներին, Իրանում զերմանական քաղաքականության ըրացառապես առևտորական նպատակների մասին: Բեղլինում ուսական զերպան Յատեն-Սահանը միամտութեն փորձում էր Բեղլինի կարինեատի խոսքի և զորքի միջև եղած անհամազատասխանությունը բացատրել Վիլհելմ II-ի վրա արդյունաբերական և ֆինանսական շրջանների անմիջական ազգիցությամբ, հավաստիցնելով, որ արտգործմինիստրությունը դրա հետ ոչ մի առնչություն լունի, որովհետև իրը թե նա համար տեղյակ լի լինում այն նախագետներին, որոնք ծրագրվում են կայզերի և նրա շրջապատի գործիչների կողմից⁴⁵:

Բանկային կոնցենտրացիայի կողմից ներկայացված պահանջների ծավալով մերժվելուց հետո⁴⁶ ուղիղ երեք որ անց, Հուլիսի 14/27-ին Օետերրուրդում գումարգած հատուկ խորհրդակցությունում քենարկվում էր զերմանական հականախազիթը և ցարական արտգործմինիստրությունում արդին մշակված համաձայնապրի նոր ուսական նախագիթը: Վերընսօ պարունակում էր նշանակալից զիրուաներ Գերմանիային: Այսպես, օրինակ, երկրորդ հոդվածում ուսական կառավարությունը պարտավորվում էր Հրաւիսարին Իրանում ապագա երկաթուղային ցանցը Բաղդադի ճանապարհին միանալու զեպքում մըյուս ուղղությունների համեմատությամբ նախապատվությունը տալ այն գծին, որը

⁴⁴ Այդ տեսք, թ. 202, ԱԲՊՐ, Փ. Միսսի և Պերսի, ոլ. 528 և. 1906—1908 թ., լ. 45, ձ. 26.

⁴⁵ ԱԲՊՐ, Փ. Պերսկական տօղ, 1907 թ., լ. 4455, լ. 204—208; ԱԲՊՐ, Փ. Կանուքիր, 1907 թ., լ. 17, լ. 180 (Յատեն-Սահանի 1907թ. Հանդիսական Համակարգը Բազմազունակությունում պահպան կատարելու մասին պահպան առնելիք երկրներ և ուղղություններ),

⁴⁶ Այդ մասին մահմանան ան Վ. Ա. Բայրութցան, Իրանում իմպերիալիստական ներմանիայի բազմարժանականության հարց շուրջ 1905—1914 թթ. «Մերձավոր և Միջին արևմտյան երկրներ և ուղղություններ», է. 4 (Դրան), Երևան, 1909,

թուրք-պարսկական սահմանում միանալու էր Սաղիշե-Խանեկին գծի հետո⁴⁰. Հենց այս պարտավորությունն էլ քննադատության ճեմարկվեց խորհրդակցությունում բռնոր և լույս ունեցողների կողմից. Ֆինանսների մինիստր Կոկովցովը, օրինակ, Եշեց, որ Դերմանիայի հետ կնքվող համաձայնագրի զյուսպոր նպատակն է Իրանը մեկուսացնելու Բաղդադի հանապարհից, իսկ զրանից խռափելու համար անհրաժեշտ է կասեցնել Սաղիշե-Խանեկին ճյուղի միացումը իրանական երկաթուղիների ապագա ցանցի հետ: Նրա կարծիքով, երկրորդ հոգվածը պետք էր փոխել ունեց լրիվ ազատություն տալու իմաստով կառուցելու խանեկինի հետ միացնող գծեր միայն այն ժամանակ, եթե դա մեր կողմից դիտվի ցանկայի. Համեմայն դեպք մեր ձեռքերը չկապելու համար թեկունք բարոյական պարտավորությամբ⁴¹.

Համարյա բոլոր ելույթ ունեցողները միահամուռ կերպով պաշտպանեցին Կոկովցովին, և Իզվոլսկուն մնում էր միայն խոստանալ, որ երկրորդ հոգվածը փոփոխության կենթարկվի արված դիտողությունների համաձայն:

1907 թ. օգոստոսի սկզբին վերջապես պետք է տեղի ունենար նիկուլայ II-ի պատասխան այցը (առաջինը տեղի էր ունեցել Թյորկում) գերմանական կայզերին: Այդ այցելությունը տեղի ունեցավ Սվյանելյունում օգոստոսի 3-ին: Հանդիպման օրերին Բենյանում Իզվոլսկու քաղաքականությունը դիտում էին որպես ռուս-գերմանական մերձեցման շահերին հիմնականում համապատասխանող քաղաքականությունն, և այդ պայմաններում, ինտրուկտորի հմաստ շտմեր շոշափել Իրանի և Բաղդադի գրադարանու մասին միանքամայն փափկանեատ թեման և դրանով իսկ վտանգի տակ գնել կարգավորվող հարաբերությունները: Հստ երեվութիւն խորհրդակցության ժամանակ որոշեցին ուստական այցելուների նկատմամբ գրավել ամենաբարյացակամ գիրք և Շնարավորության սահմաններում խուսափել վտանգավոր թեմաներից: Միայն դրանով կարելի է բացատրել այն, որ վերոհիշյալ հարցերը Բյուլովի և Իզվոլսկու զրույցի ժամանակ շոշափվեցին բնիային ընդհանուր կերպով: Ընդունում դիմանական կանցկերը, շնայտ նրան, որ Մուսլիմի նամակում հիշյալ հարցը քննության էր ենթարկվում վերին աստիճանի մասրամանորեն և շեշտվում էր, որ Դերմանիայի համար համաձայնագրի ամբողջ նշանակությունը ամփոփվում է երկրորդ հոգվածում և որ ոպայ-

⁴⁰ ԱՐԲԱ, ֆ. 2000, ոլ. 1, լ. 1380, լ. 181.

⁴¹ ԱՎՊՐ. ֆ. Պերսկական տուն, լ. 2292, լ. 46—47/1907 թ. Հուլիս 14/27-ի առողջ խորհրդակցության ժողովուն:

մանազիրը առանց երկրորդ հոգվածի ոչ մի արժեք չունի և գերմանական պետական այն գործիլը, որը կենքեր պայմանագիր առանց այդ երաշխիքի, ժանր վիճակում կատավեր հասարակական կարծիքի առկա³⁰, վկայակուում էր այն, որ ինքը լի հրշում Երևանի կողմից Խղվանկան հանձնված հուշագրի բոլոր մասրամասնությունները: Այդ պատճենով նա խնդրեց Խղվանկան հրշալ հարցի վերաբերյալ բանակցությունները շարունակել Գետերը ու գումարը³¹: Առաջարկությունը միանգամայն համապատասխանում էր նաև ռուսական մինիստրի մտադրություններին: Վերջինս հայտարարեց, որ կարևոր է պարմանավորվել այնպես, որ իր անտեսական ներթափանցմանը զիպի իրան Գերմանիան շվեյցարի Ռուսաստանի ազգանդական շահերին այդ երկրում և դրանով իսկ առիթ լուա երկու երկրների միջև անցանկալի պայքարի³²:

1907 թ. օգոստոսի 16/31-ին ստորագրվեց անգլո-ռուսական համաձայնագիրը, որով Միջին արևելքը այս երկու պետությունների միջև քաժանվում էր ազգեցության գոտիների: Համաձայնագրը կնքելիս Ռուսաստանը և Անգլիան հետապետում էին միանգամայն տարրեր նպատակներ, ցարիկաց ցանկանում էր ժամանակավորապես կոնսերվացման ձեմարկել իր դիրքերը Միջին արևելքում և իր համար ապահովել խաղաղ զարգացման այնքան անհրաժեշտ շրջանը, միևնույն անգլիական իմպերիալիզմը առաջին հերթին ճգում էր գալնակից ծեռք բերել Գերմանիայի դեմ մզվող պայքարում³³:

Բեսկանարար, անգլո-ռուսական համաձայնագրի կերպան լուրը գերմանական մայրաքաղաքում ընդումվելու էր մեծագույն գժուհությամբ³⁴: Մյուս կողմից լուսունը տարրեր ուղիներով մնշում էր գործադրություն Գետերը ու գումարը վրա, պահանջելով Գերմանիայի հետ հարաբերությունների հարցում շխախտել գալնակացային պարտավորությունները Անգլիայի հանդեպ³⁵: Այսպիսով, ցարական կառավարության առջև կանգնած էր ոժվարին երկրներանք: Բեռլինի հետ անշատ բանակցությունների շարունակումը կեշանակեր ոիսկը ենթարկել հարաբերությունների:

³⁰ GP, Bd. XXII, № 7375 (Եյուլը բարեկարգ 1907 թ. հունիսի 8/22-ի նույնականությանը):

³¹ АВПР, ф. Կառավարություն, 1907 թ., լ. 42, լ. 209.

³² GP, Bd. XXII, № 7379 (Եյուլը 1907 թ. հունիսի 28-ի (ոչսուսակ 10-ի) նույնականությանը):

³³ Տե՛ս H. Nicolson, Եղբ. աշխ., էջ 234.

³⁴ Տե՛ս GP, Bd. XXV, լ. 1, № 8536.

³⁵ Տե՛ս BD, vol. VI, № 71.

թյումները Հոնդոնի հետ. ենթարկվել անգլիական ճնշմանը, կնշանակեր սպառնալիքի տակ դնել ռուս-գերմանական հարաբերությունները: Իզ-վոլսկին ընտրեց երրորդ ուղին. նա ուղղակի զադարեցրեց բանակցությունները Գերմանիայի հետ: Միաժամանակ լուսնոն ուղարկվեց Հանգստացուցիչ մի նամակ, որտեղ ասվում էր, որ Ռուսաստանում, ինչպես Անգլիայում ու Ֆրանսիայում, գերմանական նախագիծը համակաների լարժանացավ, և բացատրվում էր, որ Պետերուրում և Թիվլիսի միջին կարծիքների փոխանակության ոմիակ նպատակն էր երաշխավորել Ռուսաստանի կենսական շահերը Պարսկաստանում, այսինքն այն նույն շահերը, որոնք նախալզել են Անգլիայի կողմից նրա հետ վերջերս կոնքած կոնվենցիայում, մինչդեռ Գերմանիան ցանկանում էր ռհազմանարել Ռուսաստանի սկզբունքային գիմադրությունը Բաղդադի երկաթուղու հարցում և այդ երկաթուղու նախագծի ո՞ւ ֆինանսական և ո՞ւ էլ տեխնիկական կողմերը կարինեաների միջն երբեք լին քննարկելու²⁴:

Գերմանիայի հետ բանակցությունները գաղարեցնելու համար Իզվոլսկին ընտրեց գործողության բավականին հետարքիր մեթոդ: 1907 թ. դեկտեմբերի 7/20-ից (այսինքն՝ լուսնոն ուղարկված նամակից մեկ օր անց) Պետերուրություն Թիվլիս, ռուսական զիսպանության և մասնավորապես Օստեն-Սակենի տանձնական ժանովությանը համար սկսում են ուղարկել Պարտվիդի Հեռագրերի պատճենները Թիվլիսում գերմանական դիսպանորդի պաշտոնակատար Ռիխտհոֆնի քաղաքական ուժգին գործունեության մասին, այն հաշվով, որ Օստեն-Սակենը այդ հեռագրերի բովանդակությունը հազորքի կերպանական արտգործմինիստրությանը²⁵:

Դեկտեմբերի 8/21-ին Իզվոլսկին հանդիպեց Պետերուրություն գերմանական նոր զիսպան Պուրտալեսի հետ և խոսակցություն սկսեց Իրանի և Բաղդադի երկաթուղու մասին: Շնորհած այդ առիթից, —հաջորդ օրը գրում էր նա Օստեն-Սակենին, —որպեսզի բացեիրաց բացատրեմ կոմա Պուրտալեսին, որ մեզանում ակամայից կասկածներ են ժադում նշված նպատակին հասնելու հետավորության մասին: ԵՄեր կողմից, —հայտարարում է Իզվոլսկին Պուրտալեսին, —գոյություն ունի կատարալ պատրաստակամություն ընդուած գնալու Գերմանիային Բաղդադի երկաթուղու հարցում...» և ակային այդ զիսպանը Գերմանիան ևս պետք է միանգանայն անկեղծորեն հրաժարվի Հյուսիսային Պարսկաստանում մեր

²⁴ B. Siebert, Graf Benckendorff's diplomatischer Schriftwechsel. Bd. I, Berlin, 1930, S. 9ff; այս նույն ԱՎՊՐ, Փ. Պոլիտարքություն, գ. 3627, լ. 13.

²⁵ ՀՀ ԱՎՊՐ, Փ. Պոսольство Բեռլին, գլ. 509a, լ. 75.

բաղաքան-տնտեսական տիրապետող շահերին դիմագրավելուց և նըշված շրջանում դադարեցնի իր առաջընթաց քաղաքականությունը²⁸: Այնուհետև միեխառը սկսում է մեկ առ մեկ թվարկել այն բոլոր փաստերը, որոնք վկայում էին նրանում գերմանական իմպերիալիզմի տնտեսական և քաղաքական ակտիվության մասին, սկսած բանկային կոնցեսիայից, վերջացրած Ռիխտոնֆենի գործունեության վերաբերյալ վերջին հազորդագրություններով, լուսանալով հիշատակել նաև համաձայնագրի գերմանական հականախափելի վերին աստիճանի կտրուկ բնույթի մասին: Եթե ի նկատի ունենանք, որ պարունակության մասին նույնագույն գործունեության այդ եռանդամ գործիցը, այժմ դարձել է գերմանական արտաքին գործերի մինիստրի մերձավոր օգնականը, — շարունակում էր նզվուլսին, — ապա միանգամայն հասկանալի է, որ մենք անհանգուտությամբ ենք նայում պարուկական գործերի բնագավառում Գերմանիայի հետ մեր հարաբերությունների ապագային և ինքններս մեզ հարց ենք տալիս, հետագույք՝ է արդյոք հասել մեր կողմից այնքան ցանկալի համաձայնագրին: Մենք չենք կարող լզդալ, որ Պարսկաստանում կանգնած ենք պատմական իրավունքների և շահերի հողի վրա, և եթե ստիպված լինենք սրտի ճմլոցով այդ հողի վրա պայքարի դուրս գալ Գերմանիայի հետ, իհարկե, միանգամայն խաղաղ պայքարի, որու համար մեր տրամադրության տակ կան ազդու միջոցներ: Բայց կրկնում եմ, մենք անկեղծորեն ցանկանում ենք իրուագիել այդ պայքարից և գտնել մի այնպիսի ձևակերպում, որը հավասարապես ընդունելի լինի երկու կողմերի համար²⁹:

Թեև գերմանական դեսպանը, իր կառավարությանը հազորդելով այդ պրույցի մասին, գրում էր, որ այնուամենայնիվ նա ստացավ այն տպավորությունը, որ նզվուլսին ովհուականորեն չի ցանկանում, որ բանակցությունների թելերը կտրվեն³⁰, սակայն իրադարձությունները ցույց տրվեցին, որ ցարական մինիստրը հնաց այդ էր ցանկանում: Չնայած թեուլինի բոլոր հավաստիացումներին, որ նրանում Գերմանիան աշխատում է ձեռք բերել միայն առևտրական գործունեության ազատությունը³¹ և շնայտ նրան, որ թեուլինը Թեհրանից ետ կանչեց Ռիխտհոփենին և նրա

²⁸ Նույն տեղում, ձ. 21ր. և. 59 (Խզումիւ. 1997 թ. գնդահերերի 2/22-ի նույնականացնելութեանի):

²⁹ АВПР. ф. Просольство в Берлине, оп. 509а, д. 21 г., л. 60—61. Պարտեական գումարությունների մասին մեջ՝ GP, Bd. XXV, լ. 1, № 8592:

³⁰ Նույն տեղում:

³¹ АВПР. ф. Просольство в Берлине, оп. 509а, д. 75, л. 84—86.

փոխարքնեն նշանակեց Թվադիմին, Համաձայնագրի վերաբերյալ բանակցություններին ընդհատվեցին Համարյա երեք տարի:

Բանակցությունների ընդհատումով արտաքնապիս թվում էր, որ Պետքը ուղարկել է Հակազգի Գերմանիայի գործունեության ակտիվացմանն Իրանում: Իսկ անգիտացիների համար անշատ բանակցությունների ընդհատումը կարող էր թվայ, որպես Պետքը ուղարկել գրայինց ննջում գործադրելու հետևանք: Մինչդեռ իրականում, թեև դա ուներ որոշակի նշանակություն, պատճառներն ավելի խորի չին: Կասկած չկա, որինակ, որ ուսու-գերմանական բանակցությունների սակեցմանը նպաստեց նաև այն, որ շուտով ցարիզմի ուշադրությունը սկսովեց նրա համար նշանակալիորեն ավելի սուր և վտանգավոր այն իրադարձությունների վրա, որոնք ծավալվեցին Բալկաններում: 1908—1909 թթ. բալկանյան իրադարձությունների հետևանքով, համաձայնագրի վերաբերյալ հարցը չէր բարձրացվում նաև Բնույնի կարինեալ կողմից:

Ուսու-գերմանական բանակցությունների ընդհատումից հետո Բեռլինը թեհրանում իր դեսպանորդին խորհուրդ տվեց դրսերել ուղազածություններ, ուրաք սմենալով, որ ուսուները չեն կարող Իրանում երկարժամանակ խաղաղ համագործակցել անգիտացիների հետ և վերջ ի վերջո անգուսուսական Անտախտը, որը գերմանացիները համարում էին չշափից ավելի հակաբնական, ներսից կպայմթի⁴²: Երբ, 1909 թ. գետը զարդարին, Ավստրո-Հունգարիան առաջարկեց Գերմանիային պայմանագործել իրանում Անգլիայի և Ռուսաստանի դեմ համաձայնեցված քաղաքանություն վարելու մասին, Ցյուկամը խորհուրդ տվեց բժողովնել, որ նրանք այլովին սեփական լուսի մեջ: Նրա կարծիքով, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կողմից միշամատությունը միայն ոկհամախմբեր Անտախտի երկրները⁴³:

Սակայն այդ գիվանապիտական զսպվածությունն ուղեկցվում էր Իրանում գերմանական ազգեցությունն ամրապնդելու անդադրում աշխատանքով: Այդ գործունեությունը ուժնացավ հատկապիս 1908 թ. վերջի և 1909 թ. հեղափոխական իրադարձությունների շրջանում: Գերմանիան սկսեց իրան ներմուծել մեծ բանակությամբ զնեք և զինամթերք⁴⁴, որը որպես կանոն բաժանվում էր հակառակական արամադրություններ ունեցող ցեղերի շրջանում: Իրանական Առապատականում գերմանացիները (հատկապիս Շլունեման ընկերությունը)

⁴² GP, Bd. XXVII. t. II, № 10072.

⁴³ նույն տեղում, № 10073:

⁴⁴ Martin Bradford Cary, 224. այլ., էջ 188.

ձեռնամուխ եղան նաև գործարանային տիպի խոշոր ձեռնարկություններ բացելում⁵¹: Համառ լուրջն էին շրջուած նաև այն մասին, որ գերմանացիները պատրաստվուած են Թավրիզուած բացել նաև զենքի ֆարրիկա⁵², 1909 թ. սեպտեմբերին ՇՄԱՍԻՒ և Եյումեմանե ընկերությունը Թավրիզուած հրապարակեց շրջարերական նամակ ուղղված եվրոպական վաճառականներին, որի մեջ առաջարկուած էր իր ծառայությունները բնուների տեղափոխության և ապահովագրման գործուած⁵³: Դա արդեն ուղղակի ուժնագություն էր ուստական Շարսկական գոյխադրամիշոցների բյուրոյի մեծաշնորհային իրավունքների նկատմամբ: Բացի այդ, ՇՄԱՍԻՒ և Եյումեմանե ընկերությունը ուստական ազգեցության գոտում սկսեց տարածել մեծ քանակությամբ ապրանքների⁵⁴: Հոկտեմբերին ըստացվեց էլ ավելի առաջնապալից հազարքագություն, որ գերմանացիները իրանական ներքին գործների մինիստրից թուրլավություն են ստացել ուստական կովկասյան սահմանից 100 կմ հեռավորության վրա գտնվող Ռերմիա լճի վրա նավարկություն կազմակերպելու վերաբերյալ Գերմանական ինժեներները պետք է զբաղվեն նաև լճի շրջանում հանապարհներ անցկացնելու աշխատանքներով⁵⁵: Այդ կոնցեսիան խափանելու համար պահանջվեց Թէհրանում ուստական միսիսիայի նուանդում ննշուած շահական կառավարության վրա, որը ստիպվեց այդ կոնցեսիան հանձնել ուստական ՇԹԱՎՐԻ զենքերությանը⁵⁶:

Հարկ է նշել, որ 1909 թ. կանցլերի պաշտոնում թյուրովին գոյխարինեց թեթան-Լուվիդը: Թանի որ 1907 թ. անգլ-ուստական համաձայնագրի կերպություն հատությունների օդակը ավելի ու ավելի էր սեղմվուած Գերմանիայի շուրջը, այդ պատճառով գերմանական կառավարող շրջաններն իրենց առաջնահերթ խնդիրն էին համարուած պայթեցնել թշնամական իմքանությունների օդակը ավելի ու ավելի էր սեղմվուած Գերմանիայի շուրջը, այդ ինդիրն էլ դրվեց նոր կանցլեր թեթան-Լուվիդի վրա, որը հանդիսանուած էր գերմանական իմքանությունների շրջանու տարածեսակը և գերմանական ոմիցին եվրոպական դաշնաքիչ ստեղծման համապատասխան կողմեակիցը:

⁵¹ ՏԵՇ. Н. Н. Бобиаш, Персия, ее экономическое положение и внешняя торговля 1901—1923, Тифлис, 1923, стр. 37.

⁵² АВПР, ф. Персидский стол, д. 4456, л. 186.

⁵³ Խոյե անգլ., թ. 154:

⁵⁴ А. Խաչաբ, Экономическое положение современной Персии и ее торговли с прочими странами. «Мир ислама», СПб., 1912, т. I, № 2, стр. 171.

⁵⁵ АВПР, ф. Персидский стол, д. 4456, л. 168.

⁵⁶ ЦГВИА, ф. 2030, оп. 1, д. 3906, л. 2.

Դերմանական նոր կանցյերը, սակայն, շատ շուտով համոզվեց, որ Անտանտի ինքնարայքայման հուլիսերը սեպտեմբերի շնորհը Այդ պատճեռով, օգատը կազմելով բարձնագաստ պահից, դերմանական դիվանագիտությունն իրանում ակտիվացրեց իր գործունեությունը նաև քաղաքական բացառայաց միջամտության բնագավառում, 1909 թ. Հոկտեմբերին ուստական միսիային սկսեցին լուրջը հանձնել իրանական որոշ մինիստրների և գերանական ռազմական գործակալի միջն աշխուզվ կապերի մասին։ Հաւական առաջին մինիստր Սեֆանդարը ուստական զեօպանորդ Պոկլեսկի-Կողելիի ննջման տակ շխոստովանեց, որ ինքը, իսկապես, անսակցություն է ունեցնել գործակալի հետ, որան ավելացնելով, որ Պարսկաստանում գոյություն ունեն զանազան կամիստներ, որոնք կցանկանալին պարսկական բանակի ուսուցումը հանձնել գերմանացիներին⁷¹։

1910 թ. սկզբին գործը հասավ Գետերբուրգի և Բեռլինի միջն Հարաբերությունների նշանակալից որմանը։ Դրան մեծապես նպաստեց նաև այն, որ Անգլիան և Ռուսաստանը իրանական կառավարության խեղուանը որոշեցին իրանին հատկացնել 10 միլիոն ֆրանկի չափով կանուազնար։ Դերմանական դիվանագետների համար դժվար չէր հասկանալ, որ կանուազնարի պայմանները⁷² կոչված էին ասպահովելու ուստական ցարիքմի և անզիւական իմպերիալիզմի մեջաշնորհային դիրքեր իրանում և ուղղված էին առաջին հերթին Գերմանիայի դեմ։

Քեռվինը առիթը բաց լթողեց Գետերբուրգի կարիքնեաթի վրա կրկին ննջում գործադրելու համար։ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրի մոտ 1910 թ. Հունվարի 5/18-ին դիվանագիտական ընդունելության ժամանակ Պուրտալեսը Խզվոլոկոն հազորդեց, որ իրեն հանձնարկած է բաղութել վերոհիշյալ հարցի առթիվ⁷³։

Դերմանիայի կողմից ձեռնարկված քայլը ցարական արտաքին գործերի մինիստրությունում առաջ բերեց ընդհանուր տագմատ։ Ենթամանացիները մեզ միշտ ասում էին, — զրում էր իրանական գործերով զրադշող մինիստրության լինովնեկներից մեկը, — որ իրենք պայտական գործերում շահագրգուժած են ոչ թե քաղաքականացեա, այլ միայն տնտեսական առումով։ Սակայն նրանց ներկա ելույթը տեղի է ունենում դուստ քաղաքական հոգի վրա։ Եթե մենք այժմ զիշենք նրանց, դա կը նշանակի թույլ տալ Գերմանիային մասնակցել պարսկական քաղաքա-

⁷¹ АВПР, ф. Персидский стол, д. 4456, л. 179.

⁷² Անդրաման աշ-ս «Сборник дипломатических документов, касающихся событий в Персии», том IV, стр. 51—52.

⁷³ АВПР, ф. Персидский стол, д. 4457, л. 10.

կանությանը, և այդ քայլը կլինի անդառնալիք։ Հեղինակը այսուհետեւ խորհուրդ էր տալիս Թեովինին տալ և վճռական հակառարվածք⁷³։

Իզգուլսկին անմիջապես կապվեց Լոնդոնի Հետ՝ գործողությունների ընդհանուր պլան մշակելու համար⁷⁴, Վերջ ի վերջո որոշեցին դորժել ավելի զգուշ, քան դա առաջարկվում էր ցարական շինովնիկի կողմից⁷⁵. Սակայն Պետերբուրգի կարինենտի պատասխանը Պուրատակների բողոքին լրավարարեց Թեովինին։ Այնտեղոց սկսեցին իսկական ոճոգերանական դրույ, նպատակ ունենալով ստիպել Ռուսաստանին համաձայնության մեջ մտնել Դերմանիայի հետ։ Պուրատակների հանձնարարվեց ակարիկել իզգուլսկուն, որ, եթե Պետերբուրգը Դերմանիային զիշումներ լանի Բադրուդի երկաթուղու հարցում, հնարավոր է դերմանական քաղաքականության հետագա ակտիվացումն Իրանում։ Դեսպանի անձնական տեղեկության համար հաղորդվում էր, որ Իրան է մեկնում Շուռու օրինեացիների ներկայացուցիչ Սայիդ Ռյութեն, որին հանձնարարված է ուրագրության հետ ժանուարնալու համար ուղարկություն կատարել Թեհրանից Բադրակ՝ հանենկինի վրայով (այսինքն՝ ապագա երկաթուղային ճյուղի ուղագծով)։ Ռյութենի ճանապարհորդության գլխավոր նպատակն էր, —ինչպես խիստ մտերմարար հաղորդվում էր Պուրատակներին, — ոպարուն իզգուլսկուն գարձնել ավելի զիշող մեր ցանկությունների նկատմամբ⁷⁶։ Հիշյալ բանկի կողմից Ռյութենին հանձնարարված էր նաև պարզել Թեհրանում բանկի բաժնամունք բաց անելու հնարավորությունը⁷⁷, Հարկ է նշել, որ Թեովինի և Ստամբուլի միջև նախապես համաձայնեցված ժրագրով Թուրքիան անմիջապես արակցություն ցույց տվեց Սայիդ Ռյութենի միսիային։ Թուրքական գործակալությունը Թեհրանի շուկայում և հասարակական այլ վայրերում սկսեց լուրեր տարածել Իրանում ուղամանացների օգտակար գործունեությանը մասին, ձրիաբար բաժնառում էր Թուրքական թերթեր, որոնք լինի-լեցուն էին հակառական հոդվածներով և այնպիսի նյութերով, որոնք աշխատում էին համոզել ընթերցողին, որ Իրանի միակ միջիլը Պերմանիան է⁷⁸, Ընդհանրապես

⁷³ АВПР, ф. Персидский стол, д. 4456, л. 231—232.

⁷⁴ B. Siebert, նույ. աշխ., Bd. I, № 153.

⁷⁵ Պետերբուրգի պատասխանը, Պուրատակների հանձնեց 1910 թ. Հունվարի 27-ին (փետրվարի 5-ին), ոճ՝ GP, Bd. XXVII, t. II, № 10093, Anlage. Տես՝ նույ. B. Siebert նույ. աշխ., Bd. I, № 157.

⁷⁶ GP, Bd. XXVII, t. II, № 10093. (Տես՝ Շյանի 1910 թ. գետրվարի 15/26-ի նույնական Պուրատակներին)։

⁷⁷ Ս. Թուրքի և Իրան միախայի մասին մահրաման ոճ՝ Martin Bradford Gary, նույ. աշխ., էջ 124—125.

⁷⁸ «Русское слово», 1910 թ., 13 մայ.

Իրանում Թուրքիայի հետ համագործակցությունը Գերմանիայի առջև բաց էր անում ուղղակի փայտով հեռանկարներ։ Այդ պատճառով գերմանական խմբերի ազգային գույքատակադրությունը ու հրանում էր Սսմանիան կայսրության ազբեսիվ զավթողական քաղաքականություններանում, որին նա ձեռնամուիլ էր եղել 1905 թվականից և որը շարունակվեց ընդհանուր մինչև առաջին համաշխարհային պատերազմը²⁰։

Բաղդադի երկաթուղու հարցում 1910 թ. Գերմանիայի ակտիվ քաղաքականության պատճառները, բացի մի շարք այլ հանգամանքներից, թարթված էին նաև նրանում, որ գեռն 1909 թ. գեկտեմբերին թեհրանում գերմանական գնուպանորդ Քվաղթը էր կառավարությանն առաջարկեց Իրանում Գերմանիայի քաղաքական գծի նոր տարրերակի նրա հությունը կայսերական էր նրանում, որ այդ երկրում կարևոր կոնցեսիաներ ստանալուց հրաժարվելու դիմաց Գերմանիան պետք է փոխառտուցում ստանար Ռուսաստանից այն առումով, որպեսզի վերջինս աշակեր Գերմանիային Բաղդադի երկաթուղու շինարարության հարցում²¹։ Սակայն գերմանական գրունց Ռուսաստանի, ինչպես նաև Անգլիայի նկատմամբ 1910 թ. չկը սահմանափակվում միայն Բաղդադի երկաթուղու պրոբլեմի շրջանակներում։ Այսպիսում, 1910 թ. մարտի սկզբին թեհրանում հայտնվում են ինչ-որ Շիշշաղպահին սինդիկատիք ներկայացուցիչներ, որի կազմը ուսաւական միսիան այդպես էլ շկարողացավ պարզել, սակայն արտաքին գործերի մինիստրության ավյալների համաձայն նրա մեջ մտնում էին գերմանական կապիտալիստները²²։ Մինդիկատը շահական կառավարությանն առաջարկեց 500 հազար ֆունտ ստերլինգի շափով կանխավճար (այսինքն՝ 100 հազարով ավելի), քան տայիս էին Անգլիան և Ռուսաստանը միասին։ Այսուհետեւ, Իրանում սկսեցին լուրեր պատվել այն մասին, որ իր Գերմանիան առաջարկել է շահական կառավարությունը մի խոշոր փոխառությունը²³, թեև Սեփառդարը, ի պատասխան Պակասիկ-Կոզելիի հարցման, կտրուկ կերպով ժխտեց այդ լուրը²⁴, սակայն Պետերբուրգի անդիմական դեսպանությունից ստացվեց մի հաջորդագրություն, որտեղ խորհրդապահործն հայտնվում էր, որ

²⁰ Այդ ժամանակակից մակրամատ ան-Ն. Ա. Բայրության, Թուրքիայի քաղաքականությունը Իրանի նկատմամբ ՀՀ գ. սկզբին, «Մերձավոր և Միջին արևելյան երկրներ և ժողովրդացւություններ», հ. 5 (Թուրքիա), էջ 219—257.

²¹ ГР, Bd. XXVII, t. II, № 10090.

²² ЦГВИА, ф. 2000, д. 1380, л. 173.

²³ ЦГВИА, ф. 2000, д. 3897, л. 132 և д. 3898, л. 39.

²⁴ Խորի անդամ, թ. 185:

Թեհրանում անզիյական դիսպանորդ Բարկլայի հետ խռակցության ժամանակ իրանական ֆինանսների մինիստրը հաստատել է այդ փաստը²⁵. Միաժամանակ ուստական հաշվառու-վարկատու բանեկի Մաշհադի բաժանմունքից հազորդագրություն ստացվեց, որ գերմանական կապիտալիստներն աշխատում են ձեռք բերել ուստական իմպերիալիզմի համար խոշոր ռազմատրատեգիական և առևտրական նշանակություն ունեցող Մաշհադ—Դաստիան ճանապարհի կոնցեսիան, դրա համար առաջարկելով 2,5 միլիոն ռուբլի²⁶.

Մի խօսքով, արդեն բացահայտ նշաններ կային նրանում գերմանական իմպերիալիզմի անտեսական և քաղաքական կորուկ ակտիվացման մասին: Այդ առթիվ Պոկլուսկի-Կոզելիի կատարած հարցմանը Քվադրից պատասխաննեց, որ իր կարծիքով Շներկայումս այստեղ գերմանական ձեռներեցության համար բացվում է լայն ռազմակեզ, և ինչը զբանում է, որ Գերմանիան լցնեած է Պարսկաստանում հրաժարվի իր գերբերից բացառապես Ռուսաստանի նկատմամբ տածած սենատի ծենառակամության պատճառով: Նա պետք է կամ գործի ակտիվորեն հագուստ առնարի և Իրանում գերմանական ձեռնարկությունների զարգացման և կամ հրաժարվի այդ բոլորից համապատասխան փոխահատուցման դիմաց և առաջ փակի իր միսիան Թեհրանում, այն փոխարինելով զիխավոր հյուպատոսությամբ: Քվադրի հայտնեց նաև այն միտքը, որ տպետք է շատապել լուսում տալ այդ երկրներանքին, որովհետեւ կողմենի ճանապարհով իրեն հասած տեղեկությունների համաձայն կանխավճարի համար Ռուսաստանի և Անգլիայի կողմից զրված պայմանները այնպիսին են, որ Պարսկաստանը շուտով բռնը տնօսակետներից կը նկնի մի վիճակի մեջ, երբ նրա ձեռքերն ու ոտքերը կապված կլինեն, որի հետեւնքով անուղղակի կերպով կարող է տուժել գերմանական առևտուրը: Պոկլուսկու այն հարցին, թե ինչպիսի փոխհատուցումներ նա ի նկատի սնի, Քվադրի ցույց տվեց իր սեղանին զրված Բաղդադի երկաթուղու մասին ուստական և գերմանական կառավարությունների պարզության պատճենները և ափառսանք հայտնեց, որ լցիսի, թե սկարո՞ղ է արդյոք այդ ճանապարհի շինարարության գործերի ներկա վիճակի պարմաներում նման փոխհատուցումը համարել բավարար²⁷:

Ակնարկը միանգամայն պարզ էր. Պետերբուրգից պահանջում էին վերական ընդհատված բանակցությունները: Ընդ որում գերմանական

²⁵ АВПР, ф. Политархия, д. 3528, л. 121.

²⁶ ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3898, л. 31.

²⁷ АВПР, ф. Персидской стол., д. 4456, л. 244 (անշ. Պոկլուսկ-Կոզելի 1910 թ. գերբարի 19-ի (մարտ 4-ի) հաղորդագրությունը նպալուստու):

կողմը հասկացնում էր, որ ինքը բնակ ժտադիր լէ հրաժարվել իրանում երկաթուղային շինարարության իր ծրագրերից։ Այդ կապակցությամբ ցարիզմի դրաւթյունը բարդանում էր նրանով, որ 1910 թ. լրանում էր Ռուսաստանին ոված շահական կառավարության պարտավորության ժամկետը՝ իրանում երկաթուղիներ չկառուցելու վերաբերյալ։ Բեռլինում ուստական գործերի հավատարմատարի հետ գրուցի ժամանակ Երևանը հայտարարել էր, որ երկու պետությունների՝ իրանում երկաթուղային մենաշնորհ ձեռք բերելու ձգումը հակառակ է բաց դռների և անսեսական իրավահավասարության սկզբունքին, որի մասին բազմից հայտարարել են Անդրիան և Ռուսաստանը։ Եթեն ներկա պահին Գերմանիան չի էլ պատրաստվում շահի տիրապետություններում ձեռնամուխ լինել երկաթուղային շինարարության, այնուամենայինվ, դրա հարավորությունը ապագայում չի բացառվում, հատկապես վերջին ժամանակներս ՇՊԱրսկաստանի նկատմամբ գերմանական ֆինանսական շրջանների դրսնորած հետաքրքրության պատճառով⁴⁸։

Օր այդ առթիվ Պետերբուրգում երվողակին դիտողություն արեց Պուրալիսին, որ 1907 թ. Գերմանիան, արգել, համաձայնվել է հրաժարվել իրանի հյուսիսում երկաթուղային կոնցենտրաներից, դեսպանն առարկեց, ասելով, որ Գերմանիան դեռևս ոչ մի քանից լի հրաժարվել նաև ավելացրեց, որ սմեր հրաժարումը երկաթուղային կոնցենտրաներից մենք պատկերացնում ենք միայն այն դեպքում, եթե մեզ արվեն բավար զիցումներ մյուս բնագավառուներում։ Միաժամանակ Պուրալիսը Հիշեցրեց, որ Ռուսաստանը մինչև աշխամ պատասխան չի տվել Գերմանիայի ներկայացրած առաջարկություններին⁴⁹։ Դեսպանի այս խոսքին անմիջապես հետևեց Բեռլինի կարինետի առաջարկությունը բանակցությունները վերականց մասին։ Ընդ որում Պուրալիսը քանազոր կերպով հասկացրեց ցարական դիվանագիտներին, որ իրանում բացի ուստական աղջեցության գոտուց գոյություն ունի նաև 1907 թ. անդրո-ուստական համաձայնագրով սահմանված ընդարձակ շեղոք դրսի, որը բաց է այլ պետությունների գործունեության համար։ Այսպիսով, Գերմանիան ընդլայնում էր իրանի նկատմամբ իր հավակնությունների շրջանակը, ձգտելով այդ երկրում ձեռք բերել այնպիսի դիրքեր, որոնք իրենց նշանակությամբ շատ քիչ էին զիջելու Անգլիայի և Ռուսաստանի

⁴⁸ GP, Bd. XXVII, t. II, 10102 (Շյոնե՛ Պուրալիսին, 1910 թ. մարտի 18/29)։

⁴⁹ Խոյն անդրում, № 10102 (Պուրալիսը՝ Բաման-Հոլլենբեկ, 1910 թ. մարտի 18/21)։

տիրապետող դիրքերին: «Դերմանական իմպերիալիզմի նպատակները,— պառավ էր Սասեն-Մակենը արտաքին գործերի միևնուրի տեղակալ Մազոնվին, —պարզվում է, որ շատ ավելի չափան ու կունկրետ են, քան կարելի էր ճնշադրել Պետերբուրգում կոմս Պուրտալեսի և, նույնիսկ, թեույնում բարոն Ֆոն Շյոնի արած պլատոնական հայտարարություններից»².

Տարական դիմանագիտությանը մեծապես անհանգուացնում էր նաև այն, որ ո՞նքմանիայի իզմերը ուղղված են գլխավորապես ռուսական ազգեցության դուռը կողմը, և որ բնույթին կարինեաց որոշ հույսեր էր տածում որոշակի գնով շահելու Անդրյայի, եթե ոչ համակրանքը, գեթ նրա պատուի վերաբերմունքը այդ իզմերի նկատմամբ³:

1910 թ. գարնանը Խզդույսին գտնվում էր արտասահմանում՝ Հերթական արձակուրդի մեջ, Ապրիլի 13/26-ին զիրմանական արտգործմինիստրությունում Հերթական դիմանագիտական ընդունելության ժամանակ ֆոն Շյոնը Բեռլինում ուսական դեռպանության խորհրդական Ծերեկոյին ակնարկեց, որ ինքը Եշատ երշանիկը կլինիկ Պետերբուրգ վերադառնալու ճանապարհին Բեռլինում հանդիպել ուսական արտաքին գործերի մինիստրի հետ: Ներեկոն ֆոն Շյոնի առաջարկությունն անմիջապես հաջորդեց իր զեկավարությանը⁴, իր Հերթին Սաղոնովը նամակը շտապ ներկայացրեց նիկոլայ Ռ-ին, որը դրեց հետևյալ մակագրությունը. «Վաս լէր լինի, եթե Ալեքսանդր Պետրովիչը (Խզդույսին—վ. թ.) մի քանի ժամով կանգ առներ Բեռլինում»⁵: Ապրիլի 22-ին (մայիսի 5-ին) շտապ հեռագրով Սաղոնովը հրահանգեց Ծերեկոյին որևէ կերպ նախազգուշացնել Փարիզից արդին գույս եկած Խզդույսին ցարի հայտնած ցանկության մասին⁶: Այս իրադարձություններից անտեղյակ մինիստրին իշեցրին «Նորդէքսպրեսից» և ուղարկեցին Շյոնի հետ հանդիպելու:

Խոսակցությունն անմիջապես ընթացավ Իրանի մասին: Գերմանական պետական քարտուղարը սկսեց Պետերբուրգի և Լոնդոնի հասցեին հանդիմանությունից, նշելով, որ իրանական հարցում Գերմանիան միշտ էլ եղել է լուրջ և լի աշխատել ստանալ ոչ մի նշանակալից կոնցեսիա: Մինդուր Անգլիան և Ռուսաստանը լին ցանկանում հավատարիմ մնալ

² АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509а, д. 21 г., л. 113.

³ Խոյն անդամ, էջ 113—114.

⁴ АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509а, д. 78, л. 78.

⁵ АВПР, ф. Канцелярия, 1910 г., д. 19, л. 20.

⁶ АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509а, д. 78, л. 81 об.

իրենց խոստմանը՝ Խրանում առևտրական գործումնեության համար ըրաց դռների սկզբանքը պահպանելու հարցում։ Եյոնն այնուհետև հույս հայտնեց, որ երկու պետությունները չեն պնդի իրանական կառավարությանը ներկայացրած իրենց պահանջները, որովհետև դրա դեմ դուրս կամ ինչպես Գերմանիայի, այնպես էլ մյուս պետությունների ոհատարական կարծիքը, իսկ ողու ոչ միայն էապես կոժվարացներ, եթե անհարին չեր դարձնի, համաձայնության ձեռքբերումը Գերմանիայի, Անգլիայի և Ռուսաստանի միջև ասիսկան հարցերի վերաբերյալ, որի մեջ շահագործոված են բոլոր մասնակիցները, այլև անբարենպատ կերպով կազմեր նաև պետությունների միջև ընդհանուր հարաբերությունների վրա, որոնք Գերմանիան կցանկանար դարձնել ավելի բարեկամական և վատահությամբ լին։ Եյոնը լմուացավ նաև հիշեցնել Խզուակուն Պետերբուրգի կողմից ընդհատված բանակցությունների մասին։

Իր հերթին, ցարական արտաքին գործերի ղեկավարը պատճառաբանություններ էի բերում, որ ինքը տեղյակ էլ վերջին իրադարձություններին և լի կարող Եյոնին որևիցե պարզաբանում տալ, բայց և լթարցրեց, որ և Լուսդոնում, և Պետերբուրգում անհանդատացած են իրանում Գերմանիայի ակտիվ գործումնեության պատճառով։ Ընդհատված բանակցությունների վերաբերյալ մինիստրը հավաստիացրեց, որ մեծ նշանակություն է տալիս Գերմանիայի հետ համաձայնության դալու հարցին և Պետերբուրգ վերադառնալուց հետո անմիջապես կզրագիր արդ խնդրով։⁵⁵

Բելլինը, սակայն, լրավարարվեց այդ զրույցով։ Սրկու որ անց Բետման-Հոլվեգը լուսանի և Պետերբուրգի իր դեսպաններին ուղարկեց հեռագրեր, որոնց մեջ ցուցում էր տրվում հայտարարել երկու պետությունների մինիստրներին, որ համաձայն 1873 թ. գերմանո-իրանական պայմանագրի Գերմանիան իրանում ունի շառավել բարենպատության իրավունք և այստեղից բխող հավակնություններից պատրաստ է հրաժարվել միայն Շլեզվիխի և Ռուսաստանի հետ բարեկամական պայմանագրային համաձայնության միջոցով։ Սակայն այդ համաձայնությունը կարող է բարդանալ, եթե պետությունները պնդեն ընդունելու կոնցեսիաների վերաբերյալ իրենց պահանջները⁵⁶։

Հազորդելով կանցլերի խոսքերը Խզուակուն, Պուրտալեսը ավելաց-

⁵⁵ GP, Bd. XXVII, t. II, № 10113 (Եյոնի 1910 թ. պարելի 26-ի (Ժայիսի 7-ի) գեկուագործը վերեկը 11-ին)։

⁵⁶ GP, Bd. XXVII, t. II, № 10114 (Բետման-Հոլվեգը՝ Կյուլմանին 1910 թ. պարելի 25-ի և (Ժայիսի 8-ին))։

բեց, որ ցանկալի այդ համաձայնագիրը կնքվի ավելի վաղ, քան Դերմանիան ու Հասարակական կարծիքի ազդեցության տակ ստիպված լինի պնդելու իր իրավունքների վրա: Մակայն մինխստը կրկին վկայակուշեց այն, որ դեռևս լրիվ լի ժանութացել իրերի վիճակի հետ և խուսափեց որոշակի պատասխան տալուց⁷⁷:

Այնժամ թե՛պինը հրահանգ ուղարկեց անդիմական և ռուսական կառավարություններին բաշտուապես նախազգուցացնելու, որպեսզի նրանք Դերմանիային շդնեն կատարված փաստի առջև և դրանով իսկ լստիպն նրան առաջարրություն կատարել իրանական կառավարության մոտ; մեղադրելով նրան առավել բարենպաստության իրավունքի խախտման մեջ⁷⁸:

Դերմանական իմպերիալիզմի նեշումը գնալով ուժեղանում էր: Անհրաժեշտ էր ինչ-որ բան վճռել: Ռուս-գերմանական հարաբերությունների նոր սրումը, որով ոպառենում էր Եյոնը Խզմուսկու հետ խռովակցության ժամանակ, ոչ մի կերպ չեր համապատասխանում ցարիչմի շահերին: Անհրաժեշտությունը զգացվեց պիշտաներ անել: Պետերբուրգին ու Լոնդոնը, բանակցություններից հետո, որոշեցին հրաժարվել նրանին ներկայացված այս պահանջման, որտեղ ասվում էր, որ վերջինս օտարերկրացիներին շպետք է տա այնպիսի կոնցեսիաներ, որոնք կարող են խախտել Անգլիայի և Ռուսաստանի քաղաքական կամ ստրատեգիական շահերը: Նրանք սահմանափակվում էին միայն նրանով, որ, եթե շահը ու ազգորդակցության նաևապարհների, հեռագրական գծերի կամ նազահանգիստներին վերաբերյալ որնից կոնցեսիա տալու ցանկություն ունենա, պետք է նախապես այդ առթիվ մաքեր փոխանակի լուսոնի և Պետերբուրգի հետ⁷⁹: Այս ոգով կազմված նոտան հանձնվեց նրանին, ընդ որում դեսպանորդին հրահանգ տրվեց, որ կարիք չկա սպասելու հիշալ նոտայի պատասխանին⁸⁰:

Պուրաալեսին հազորդելով ընդումված որոշման մասին, իզմուսկին հույս հայտնեց, որ իրանական կառավարությանը տրված հազորդման և բովանդակությունը, և ձեզ առաջ չի բերի Դերմանիայի բողոքը: Զրույցի վերջում նա մեկ անգամ ևս հավաստեց Պետերբուրգի կարի-

⁷⁷ Խոյե անգլամ, № 10215 (Պուրաալես՝ Բնաման-Նորդենին, 1910 թ. ապրիլ 25-ին (Ժայիս թ.ի.):

⁷⁸ Խոյե անգլամ, № 10217 (Ելոնը՝ Անոնքիին, 1910 թ. ապրիլ 29 (Ժայիս 12)-ին, Տումանեան Շամադր ուղարկեց նաև Պուրաալեսին:

⁷⁹ АВПР, ф. Потсдамъ въ Берлине, оп. 509а, д. 30а, л. 51. (Խզմուսկին՝ Օսմан-Շահենին, 1910 թ. ապրիլ 6/19-ին):

⁸⁰ «Сборник дипл. документов», вып. IV, стр. 188—189. (Թե՛պինը խորհրդով

նետի ռամոզմումըց իրանական գործերի վերաբերյալ ոգերմանական կուռավարության հետ բարեկամական համաձայնության գալու հարավորության մասին և իր մտադրությունը ոհնարավորին շափ կարճ ժամկետի ընթացքում վերականել 1907 թ. ընդհատված բանակցությունները։ Այս խոսակցության բավանդակությունը հեռագրով հաղորդվեց Սատեն-Սակենին, որպեսզի նա ևս իր հերթին դրա մասին տեղեկացնի Բեռլինի կարինետին¹⁸¹։

Այսպիսով, ցարիկմը ստիպված էր տեղի տալ գերմանական իշպերիալիզմի մեջմանը։ Օրակարգում դրված էր համաձայնագրի հարցը։ 1910 թ. Պետքրություն սկսեցին նախապատրաստություններ տեսնել հատուկ խորհրդակցություն գումարելու համար, որի ժամանակ պետք է մշակվեին այն պայմանները, որոնց գնդքում նույաստանը կարող էր համաձայնվել բավարարելու գերմանական պահանջները։ Դատիլով Եյոնի և Պուտաւեսի հայտարարություններից դրանք հիմնականում հանդում էին հետեւյալին։ 1. Ռուսաստանը պարտավորվելու էր կառուցել Թեհրան—Խանեկին երկաթուղին, թեկուզն գերմանական կապիտալների մինիմալ մասնակցությամբ և 2. Իրանում գերմանական առևտորին պետք է տար լրիվ ազատություն։

Այդ խորհրդակցության առթիվ հանդամանալից տեղեկանքում, որը կազմված էր ցարական մինիստրությունում, խոստովանվում էր, որ «Ներմանիան ըստ երկու լինին վճռական ձևով մտադիր է այսպիս թե այնպիս մեզ հետ որոշակի համաձայնության գալ նշված երկու կետերի առթիվ, և եթե մենք ցանկանում ենք մեզ համար ապահովում ապահովել գործողությունների ազատություն հյուսիսային Պարսկաստանում, և զադարեցնել Թեհրանում մեր զամ ուղղված դավերը, մենք այլ ելք չունենք, քան համաձայնության մեջ մտնել Բեռլինի կարինետի հետ մեզ համար հարավորին շափ ձեռնետու պայմաններով»¹⁸²։

Իսկ Բեռլինում, ստանալով հաղորդագրություն իզվուսկու խոսաման մտսին՝ էկարճատն ժամկետում վերադառնալ ընդհատված բաշխական կառավարություններ, այսուուենակից, ուղարկեց դատավորներու, որուն կարգադրությունը կարող էր ընկալվել որպես համաձայնություն, ստայի առաջգայ հրանտեցի համաձայն ո՞չ ուղարկած է անդադար դեպաներդները այն լշնառնեցին, (Ցեղա Շահը 1910 թ. հունիսի 8/21-ի դեկուացիոն՝ GP, Bd. XXVII, 1. II, № 10131 և Պահեսկ-Կողելլի 1910 թ. պահուստի 24-ի (անգլաներեք թ-ի) հեռացքը՝ Сборник дипл. документов., вып. V, стр. 86).

¹⁸¹ АВПР, ф. Посольство в Берлине, оп. 509в, л. 30в, л. 51.

¹⁸² ЦГВИА, ф. 2000, л. 1380, л. 175 (արական մինիստրության 1910 թ. մայիսի 12/22-ի անդեկանը)։

նակցություններին, որոշեցին միառամանակ ձեռնպահ մնալ Հետազա
առաջադրություններից և սպանել մյուս կողմի առաջարկություններին¹⁰²:

Այդ որոշումը, Բետման-Շոլվեգի խոստովանությամբ, նշանակա-
լից լափով բացատրվում էր նոն նրանով, որ գերմանական ֆինան-
սիստները շղթան հակում շղթինք ստանալու կոնցեսիաներ, որոնց
մասին հիշատակվում էր անդուռ-ուռատական նոտայում¹⁰³: Ե՛ուշի որինտ
բանկը կարուկ կերպով հրաժարվեց Գվինների կողմից ստացված բան-
կային կոնցեսիայի օգտագործումից¹⁰⁴, և նոր ներկայացուցիլը, որը
(Երևանմանի խնդրանքով) մեկնել էր Թավրիզ՝ այդ քաղաքում բանկի
բաժանմումը կազմակերպելու պայմանները պարզելու համար, իրանը
համեմատեց քամզաթ լինոնի հետ, որից այլևս ոչինչ լին բամի¹⁰⁵,
Ե՛ուշի օրինտ բանկը Ռյութեին ուղարկեց Հետազոտելու իրանուկան
պայմանները միայն արտգործմինիստրության ճնշման տակ¹⁰⁶: Ֆինան-
սական տեսակետից իրանը հատուկ հետաքրքրություն լիր ներկայաց-
նում գերմանական կապիտալիստների համար, որոնք արդեն մինչև կո-
կորդը զրազված էին Մերձավոր արևելքի մասնարկություններով: Մշտին
արևելքում գերմանական էքսպանսիայի նախաձեռնություն ու առաջ մղողը
թեունի կարինետն էր, որը դա դիտում էր որպես գերմանական իմ-
պերիալիզմի ընդհանուր հարձակման օղակներից մեկը՝ ուրիշ տակ
տեղ ունենալու պայքարում:

Այսպիսով, ստիպելով Պետրովուրդի կարինետին համաձայնվել
բանակցությունների վերսկսմանը, Բեռլինը գերադասեց հասագա նա-
խաձեռնությունը տրամադրել ուստաներին: Իզգուսկում ուղղված Սատեն-
Սակենի հետապրում հայտնվում էր, որ որաբու Եյոնը անհամբերու-
թյամբ սպասում է 1907 թ. բանակցությունների վերսկսմանը և ձերդ
զերպանցության կողմից խոստացված առաջարկություններին¹⁰⁷:

Սակայն անգլիական գործերի հավատարմատարի հետ գրույցի ժա-
մանակ, Եյոնը անզգուշություն ունեցավ ասելու, որ Իզգուսկու հետ
զրույցից և իրանին ներկայացված անդուռ-ուռատական նոտայի նոր խըմ-
բագրության մասին հաղորդումից հետո, իրանական հարցը ոկորցրեց

¹⁰² ОР. XXVII /II, № 10130 (Բետման-Հուզեն՝ Զիցենի 2ից հուն, 1910 թ. Ճայրակ
20-ին (հունի 2-ին):

¹⁰³ Նույն տեղում:

¹⁰⁴ M. Bradford Gary. Եղի. աշխ., էջ 124.

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 125:

¹⁰⁶ Նույն տեղում:

¹⁰⁷ АВПР, ф. Просольство в Берлине, оп. 509в, д. 30а, л. 55 об. (Յառն-
Սուկնին՝ Իզգուսկու 1910 թ. Ճայրակ 7/20-ին):

իր սրությունը և որ ինքը ցուցում է ավել Մետաբռնիխին ազնա այն շշոշափել¹¹²: Շրոնի խոսքերը անձիշապես հաղորդվեցին Պետքրություն¹¹³ ու որանող ուշագություն գրադրին, որ Պուրտալիսը ևս վերջին ժամանակներում չէր վերադառնում իրանական հարցին, եփսկ ընդհանուր խոսակցությունների ժամանակ դրսնորում էր ավելի գափկությունը¹¹⁴ և բանակցությունների վերականգնման միտքը կրկին հետաձգեցին: Ծարտական դիմանագնունները հասկանում էին, որ բանակցությունների ժամանակ իրենց ատիպած կլինճն զիշումներ անել և աշխատում էին նարագորին շափ հետաձգել այդ պահը:

Սակայն հարցը երկար ժամանակ հետաձգել շնարողվեց: 1910 թ. հունիսի կեսին Եյսնը Փարիզում դեսպան նշանակվեց և արտաքին գործիք պետական քարտուղարի պաշտոնը զրադեցրեց Կիդրլեն-Վեխտերը, ուս աշժմ, թեն գեռ չեմ կարող արտահայտվել նոր պետական քարտուղարի ապագա գործունեության ուղղության մասին,—զրում էր Օսման-Ալեքսանդրը, —սակայն միայն կախատեսում եմ, որ ֆոն Կիդրլեն-Վեխտերի հայտնվելը կայսերական գեպարտամենտի ղեկավարի գերու ավելի շուտ կարող է ուժիցացնել, քան թուլացնել գերմանական քաղաքականության ձգառումը Արևելքում նրա կողմից նշված խնդիրների նշկառմամբ¹¹⁵: Դեսպանի անհանգատությունը շուտով սկսեց հաստատվել: Արդեն գլուխուսի սկզբին նա արտգործմինիստրությունը հաղորդեց գերմանական արտաքին գործերի գեպարտամենտում թուսաստանի նկատմամբ արամաղրությունների ակնառու փռփոխության և իրանական հարցում Գերմանիայի ակտիվացման մասին¹¹⁶: Մի քանի օր հետո դա հաստատվեց Սագոնվի հետ Պուրտալիսի զրուցի ժամանակ: «Մեկժամյա բուռն, սակայն միանգամայն քարեկամական հականառումներից հետո, —զրում էր արտաքին գործերի մինիստրի տեղակալը իջվուսկում, —Պուրտալիսը ինձ արեց հետեւյալ հայտարարությունը, որի հաղորդումը և հանդիսանում է իմ այս նամակի նպատակը. Թուսաստանի և Գերմանիայի միջև ներկայիս խրոնիկական թյուրիմացությունների

առ Բ.Д. vol. VI № 371 (Դե Սուլինը՝ Գրեյին, 1910 թ. Հոյքի 11 /24-ին):

112 ԱԲՊՐ, գ. Պոսոլություն Բեռլին, ող. 509ն, լ. 78, հ. 100 օն. (Խոջուակը՝ Օսման Սովենին, 1910 թ. Հոյքի 12 /25-ին):

113 Նույն տեղում:

114 ԱԲՊՐ, գ. Կանցլերակ, 1910 թ., լ. 18, հ. 209 (Օսման-Սովենինը՝ Իսֆեւ-կուն, 1910 թ. Հոյքի 15 /29-ին):

115 ԱԲՊՐ, գ. Կանցլերակ, 1910 թ., լ. 204, հ. 2—4 (Օսման-Սովենինը՝ Սովենին, 1910 թ. պատուի 6 /19-ին):

պատճառով¹¹¹ անհրաժեշտ է, որպեսզի վերջինս մեղանից ստանա բարեկամական դիրքավորման ապացույցները՝ Բաղդազի գծի հետ և անենեկինում ապագա պարտական նաև ապարաների միացման վերաբերյալ համաձայնագրի ձևով, Այբովիսի համաձայնապիրը, կոմս Պուրտալիսի արտահայտությամբ, գերմանական կառավարության և հասարակական կարծիքի կողմից կը դումնվեր երախտագիտությամբ և վերջ կդներ մեր միջև ամեն տեսակի թյուրիմացություններին¹¹²:

Ջրույցի ժամանակ Սագոնովը հարցեսում է Պուրտալիսին, արդյոք իրականում գերմանական առևտուրը նրանում այդքան նշանակալի՞ց է, որ Գերմանիան շահագրգութած է Հնարավորին չափ համաձայնապիրը շուտ կերծել, Դրան, ես ստացավ հետեւյալ պատասխանը, որ այդ առևտուրը ամենա էլ քիչ չէ, որքան, ըստ երկույթին, մտածում է պարօն Սագոնովը և որ բացի այդ Շներմանիան եկատի ունի նաև ապագա հետանիարները:

Դրանից հետո Սագոնովը հավաստիացրեց դեսպանին, որ բանակցությունները վերսկսելու վերաբերյալ Պետերբուրգի կարինետի մտադրությունը լի փոխվել, սկզբում եղուն արդեն վեճակ է անել հանդիպակաց առաջարկություններ և հնարավոր է, որ Իզվոլսկին կրնեարկի իրանական հարցը Վիլնիում II-ի հետ Նիկոլայ II-ի առաջիկա հանդիպման ժամանակի Շակայի լի կարծիք թերագիտահատել այն գժվարությունները, որոնք կանգնուեն են գերմանական ցանկությունները բազարելու նախապարհին: Դա մեծ աղմուկ առաջ կրների հատկապես առևտրական շրջաններում, որոնք վախճանում են գերմանական մրցակցությունների: Սակայն վերջ ի վերջո ավելի լավ է կովկել շաբարի գլխիկներով, քան արկերով, —վերջացնում է իր խոսքը ցարական արտաքին գործերի մինիստրի տեղակալը¹¹³:

1910 թ. հոկտեմբերի 15/28-ին Պետերբուրգում գումարվեց հատուկ խորհրդակցություն՝ քննելու համար Գերմանիայի հետ հետապու համաձայնագրի սկզբումբները: Նախապես կողմվեց համաձայնագրի

¹¹¹ Այսուղի խորց այն ժամին է, որ «հիօնու պրուս թերթը հարակումներ էր կազմակերպում թեհրանում թվազմբի գործունեության նկատմամբ, ինչպես նաև մի շարք այլ հարցեր, որուր և պատրված հանդիպության վերաբերյալ հետապու համաձայնագրի վեհականությունը կազմակերպումը կամ պատրաստությունը» (Տեսական ՕՐ, XXVII/ II, № 9950 /Պատրաստված-Վեների 1910 թ. Հունիսի 30 (պատուի 12-ի հազարդարկությունը),

¹¹² АВПР, ф. Կառուլարի, 1910 թ., լ. 97, լ. 78 (Սագոնովը՝ Բայուսկուն, 1910 թ. պատուի 12/25-ըն):

¹¹³ ГР, Bd. XVII, t. II, № 10137.

նախագծի նոր տարրերակ, որն ուղարկվեց խորհրդակցության բոլոր ժամանակիցներին:

Այսպիսով տատանումների շրջանն ավարտվեց: Գետերը ուրգում ռկնացին լրջորեն զբաղվել Գերմանիայի հետ բանակցություններին նախապատրաստմանը:

Նոր մշակված նախագծում իրանական երկաթուղիների հարցում շարիդմը զնում էր ավելի մեծ զիշումների, քան 1907 թվականին¹¹⁷:

Հականմրերի 15/28-ի հատուկ խորհրդակցությունում կրկին առավել ուժեղ առարկություններ առաջ բերեց համաձայնագրի երկրորդ հոդվածը: Քիչ չէին նաև տագնապով լի այն ցուցումները, որ իրանում ռուսական առերքին ապառնում է մեծագույն վտանգ:

Թեև խորհրդակցության մասնակիցները, այսուամենայնիվ, ստիպված էին գալ այն եղբակացության, որ Ռիհերան—Խանեկին գծից հրաժարվելը, ամենայն հավանականությամբ, ավելի վեառակար կլիները քան նրա շինարարության մեջ մեր իրավումքի ապահովությունը, քանի որ գերմանացիները իրենք կարող էին իրականացնել շայդ զծի հառուցումը և այն պահել իրենց տրամադրության տակ՝ այդպիսի վիճակի բոլոր առավելություններով հանդիրձ: Վերջին հաշվով վճարեց, որ բանակցությունները թեույինում պետք է իրեն շշատ ընդհանուր բնույթը և տվյալ պահին բոլորովին հայդ շկա ռկապել մեկ ոչ մի որոշակի խոստումով¹¹⁸:

Այսպիսով, Սացոնովի վիճակն ուղղակի աննախանձելի էր¹¹⁹, որովհետեւ հատուկ խորհրդակցության ժամանակ, Ռուսաստանի կողմից հարավոր զիշումների հարցում, այդպես էլ վերջնական որոշման շեկանց Միեղյեն Պետերբուրգում գերմանական գեսպանի հետ զրուցներից առաջա միենատը գիտեր, որ Պոտաղամում բանակցությունների գլխավոր և հանդուցային հարցը լինելու է իրանական պրոբլեմը¹²⁰: Գեր-

117 ՏԵՇԱ ԱՐԲИԼ. Փ. 2000. օպ. 1. լ. 178, 183 (Գերմանիայի հետ համաձայնը նոր նախագծեց): «Կրանք պրկա», 1933, թ. 3 (58), ստ. 55 (1910 թ. հականմրերի 10/28-ի հատուկ խորհրդակցության մասյանց):

118 «Կրանք պրկա», 1933, թ. 3 (58), ստ. 55—57 (Խորհրդակցության մեջը բարձրացնով հայտորործ, որ ինքը հասկիր չէ մշտիվություններին նախագիծ հանձնել հետական առաջարկության անօգագ, սոհայն մտածում է բանակցությունների ժամանակ գեկավարչին երտենք):

119 Պոտաղամում բանակցություններ վարելու պարականությունը բարական համապարփությունը պահ էր Սացոնովի վրա:

120 S. D. Sazonov. Fateful Years 1909—1916, London, 1928, p. 37.

մանական դեկազմարների հետ հետց առաջին Հանդիպումները¹²¹ հասաւատեցին այդու սնև նկատեցի, — հետագայում զրոյ էր Սագունովը, — որ նրանք պարուակական հարցին տալիս են արտակարդ նշանակություն և ամբողջ ուժով պետք է ձգտեն նրա բարենպատ լուծմանը¹²²: Սակայն զեռևս Գերմանիա մեկնելուց առաջ պարզվեց, որ զերմանացիներն ունեն ավելի լուրջ նպատակներ, քան իրանական հարցը: Նրանք որոշել էին լուրջ փորձ կատարել Անտանտը պառակտելու ուղղությամբ և այդ նպատակով մտազիր էին առաջարկել կնքելու ընդհանուր քաղաքական դաշինք Ռուսաստանի և Գերմանիայի միջև 1910 թ. նոյեմբերի 2/15-ին Բետման-Լոլվեգը Պուրալիսին ուղարկեց ուսւագերմանական համաձայնադրի նոր նախադիմ, որի առաջին հիեզ կետերն էին կազմում ընդհանուր քաղաքական դաշինք կնքելու պայմանները: Մասնավորապես, այնտեղ նշվում էր, որ Գերմանիան իր վրա պարտավորության կզերծնեի շարախումել Ավստրո-Հունգարիայի, Բուրգիայի և Բալկանյան պետությունների ազգեսիմ քաղաքականությունը, եթե Ռուսաստանը իր վրա պարտավորություն վերցնի շաշակցելու Անգլիայի և ույնպիսի քաղաքականությանը¹²³:

Պատահական չէ, որ անզյիական դիվանագիտությունը, որը գաղտնի ճանապարհով տեղեկացել էր գերմանական այս առաջարկության մասին, ուղղակի խումազի մեջ էր: Այդ պատճեռով Պուսդամում ուսւագերմանական բանակցությունների ժամանակ անցլիացիները մշտապես ձևուում էին զործադրում ուսւական պատգամավորության վրա, որպեսզի վերցին միշտ հիշի, որ սկս մի կետ, որից այն կողմ ուսւական կառավարությունը չի կարող անցնել, հակառակ զեպքում Գերմանիային կրհացողվի լուրջ պառակտում մտցնել համաձայնության երկրների մեջը¹²⁴:

1910 թ. նոյեմբերին Պուսդամում նիկոլայ II-ի և Վիլհելմ II-ի հանդիպման ժամանակ գերմանական կողմը կրկին առաջ քաշեց ուսւագերմանական դաշինքի հարցը, սակայն կրկին անզամ հանդիպեց ուսւական դիվանագետների անորոշ և մանվածապատ պատասխաններին, որոնք գերմանացիների կողմից ընկալվեցին որպես մերժում: Այդ պատ-

¹²¹ Հոկտեմբերի 27/28-ին արտօքին զօրքերի մինիստրության առաջին գեղարքունիքության վեհական Վ. Օ. Այսէմի և արտղործմիջնարարության գրանդյուքի տեսքն Ա. Ա. Ռազինիւս: ուղեցությամբ Սագունով մեկնեց Գերմանիա:

¹²² S. D. Sazonov, Խոգ. աշխ., էջ 26.

¹²³ Տե՛ս GP, Bd. XXVII, t. II, № 10159, Anlage I, էջ 847: (Կայսերի այս ամսությանը հաջարկված է նաև „Красный архив”, 1923, տ. 3, стр. 9—10).

¹²⁴ Джордж Бьюкенен, Моя миссия в России. Воспоминания дипломата, том I, Берлин, 1924, стр. 75.

Հառով բանակցությունների բավանգակությունը կրկին հանգեց իրանական հարցին և Բազդաղի ճանապարհին:

Բանակցություններ վարելու ընթացքում, ըստ էության, զուրկ լինելով ամեն տեսանի լիազորություններից, Սազոնովը սովորված էր առաջնախափակմբել համաձայնագրի ընդհանուր սկզբումքների քննարկումով, խուսափելով որևէ կոնկրետ պարտավորություններից: Այդ պատճառով Պոտոսդամում իրանական հարցը քննարկվեց միայն ուսմենարնդանուր գժերով²²:

Քանի որ բանակցությունների արդյունքի գրամքոր որոշում տեղի չունեցավ, կողմերը միայն պայմանագրով ենթավորվեցին հետևյալի մասին. Ռուսաստանը սկզբումքային համաձայնություն տվեց կառուցելու թեհրան—հանճերին գիծը, պարմանով, որ Գերմանիան հրաժարվի Իրանի ուսական գոտում բաղաքական բնույթի կոնցեսիաներ ձեռք բերելուց:

Այսպիսով, համաձայնագրի մասին հարցի վերջնական լուծման համար անհրաժեշտ էր գեռնա քննարկել բազմաթիվ էական հարցեր, ինչպես, օրինակ, ինչպիսի կոնցեսիաներ պետք է համարվեին բաղաքական, թեհրան—հանճերին գծի շինարարության ճշգրիտ ժամկետներն ու պայմանները և այլն:

Այդ հարցերի վերաբերյալ բանակցությունները պետք է շարունակվեին Պետերբուրգում Սազոնովի և Պուրալեսի միջև Սակայն Պետերբուրգի բանակցությունները դրսնորեցին կողմերի խորը տարակարծությունը վերոբհշյալ երկու առանցքային հարցերի վերաբերյալ: Այդ պատճառով գաստորեն ոռու-գերմանական բանակցությունները ոչ մի խորք չի առվում Բեռլինի կողմից բանակցությունների դադարեցման պատճառների մասին, որոնց վրա նա այբան պեղում էր: Ամենայն հավանականությամբ այնտեղ դանում էին, որ արդեն շատապելու անհրաժեշտություն չկա և ավելի նպատակահարմար է սպասել Գերմանիայի համար առավել ձեռնուու իրավիճակի: Իսկապես, Բեռլինի կողմից բանակցությունները վերսկըսվեցին միայն այն ժամանակ, երբ հնարավոր ծղագ դրանք օգտագործել Գերմանիայի համար այլ, առավել կարևոր հարցում՝ մարտկույական հարցում: 1911 թ. մարտին դրությունը Մարտկույում հասել էր խիստ մեծ լարվածության: Այդ պարմաներում Ռուսաստանի գիրքը Բեռլինի կարինետի համար մեռք էր բերում հատկապես կարեօր նշանակություն, իսկ բանակցությունները հարմար միշտ էին Պետերբուրգի վրա ճնշում:

²² «Կրօսնայ արքո», 1923, թ. 3, սր. 7 (Տե՛ս Սազոնովի 1910 թ. Խոյելքեր-4/27-ի գեկուցություն):

գործադրելու համար, լիուսելով արդեն այն մասին, որ համաձայնագրի կեդումը Ֆրանսիայի դաշնակցի հետ ֆրանս-գերմանական հարաբերությանների սրման շրջանում Փարիզի վրա պետք է ունենար բարոյալքող ներգործություն:

Եվ Բեռլինը սկսում է աստիճանաբար հոգ նախադատրատեմ, որ պեսզի իր համար ապահովի Ռուսաստանի աշակեռությունը կամ թեկուզ չեղոք դիրքը նոր՝ մարոկկոյական ճգնաժամի դեպքում։ Այդ պատճառով 1911 թ. ապրիլի սկզբին գերմանական արտգործմինիստրության քաղաքական բաժնի դեկանար ծիմմերմանը հայտարարեց Բեռլինում ուսուական գործերի հավատարմատարին, որ Բեռլինի կարինետը Իրանի վերաբերյալ բանակցությունները համարում է որաբհաջող կերպով ավարտված և աճիակ պատճառը, որը ստիպեց գերմանական կառավարությանը ուշացնել այդ հարցի ավարտումը, հանդիսանում է Սագոնի հիմանդրությունը։ Այսուհետև նույն արդ հայտարարության մեջ ծիմմերմանը, Երեկոյի համար միանգամայն անսպասելի կերպով, անցնում է մարոկկոյական հարցին, հայտարարելով, որ Կ'երմանիան մի տվել և լէր ցանկանա տալ իր համաձայնությունը Ֆրանսիայի զինված միջամտությանը, որը գործ է գալիս աշխանիրասյան ակտի սահմաններից¹²⁰։

Թանի որ Մարոկկոյում իրադարձությունները վեալով գարգանում էին, Բեռլինը անցնում է ավելի կոնկրետ գործողությունների։ Ապրիլի 13/30-ին Բետան-Լուվեդը Պուրտալէսին է ուղարկում ուսու-գերմանական համաձայնագրի նոր նախագիծ, որտեղ Պուսգամում ներկայացված պահանջների համեմատ պարունակվում էին որոշ գիշումներ։ Մասնավորապես գերմանացինները համաձայնվում էին, որպեսզի Խանեկին—Թեհրան երկաթուղու շինարարությունը սկսվի Սադիշն—Խանեկին դժի ավարտից հետո ուշ քան երկու տարվա ընթացքում։

Այսուհետև նշվում էր, որ գերմանական կառավարությունը պարտավորվում է առանց Պետերբուրգի հետ նախական համաձայնության, ո՞չ իր և ո՞չ էլ գերմանական կամ օտարերկրյա հպատակների համար ձեռք շրբերել Բաղդադի երկաթուղու նյուզավորումներ՝ Խանեկինից հյուսիս ընկած ուսուական գոտում¹²¹։

Ռուսական նախագծի տեքստում Բեռլինի կողմից կատարված մյուս

¹²⁰ АВПР, ф. Персидский стол, д. 4457, л. 286а—2866 (Երեկոյ 1911 թ. ապրիլ 5 /18-ի հազարդագրությանը ներտառվին)։

¹²¹ ОР, Bd. XXVII, t. II, № 10124, 10152—10155.

փոփոխություններից²² Հարկ է նշել պրօմքուզայի մեջ նրկու պետությունների պարտավորության մտցնումը Իրանի տերիտորիալ ամրողականությունը և անկախությունը Հարգելու վերաբերյալ Այս կետն, անշուշտ, նպատակ ռամեր ստիպելու նույսուտանին, թեկուզն անուղղակի կերպով, ճանաչել Դերմանիայի բաղաբական շահնիքն ու իրավունքներն Իրանում։ Դա դերմանական կառավարությանը տալու էր ձայնի իրավունք Իրանի բաղաբական գործերում և այդ երկրի հետ նույսուտանի Հարարերություններին միջամտելու հարավորությունն այն պատրիակով, որ նույսուտանի ոյս կամ այն քայլը կարող է աղջել Իրանի ամրողականության վրա։

Սակայն չնայած դրան, 1911 թ. օգոստոսի 6/19-ին Պետերուրդում ստորագրվեց ռուս-գերմանական համաձայնագրի վերջնական տեքստը²³։

Պետերուրդի Համաձայնագրի ստորագրումը կարելի է դիտել որպես առաջին Համաշխարհացին պատերազմի նախօրյակին իմպերիալիստական Դերմանիայի գիշանագիտության ակնառու նվաճումներից մեկը։ Դերմանիային հաջողվեց ոչ միայն հասնել նույսուտանի հրաժարմանը Բաղդադի երկաթուղում գիմադրություն ցույց տալուց, այլև ամրապնդել Իրանում։ Թեհրան—եանեկին գերի կառուցման որոշակիթեւել և հեռավոր ժամկետի սահմանումը նրան հույս էր ներշնչում ապագայում գերմանական ապրանքների համար նվաճելու իրանական շուկան։ Դա հատկապես ուալ հեռանկարներ էր ձեռք բերում նրանով, որ համաձայնագրի վերջնական տեքստի մեջ թեուլիսի պնդմամբ մացվեց մի վերապահում։ որը խանեկինյան ճանապարհն կռնցնեսիայից ցարական կառավարության հրաժարման գեպքում ապահովում էր Դերմանիայի իրավունքը՝ իրանական կառավարությունից իր համար ձեռք բերելու այդ կոնցեսիան²⁴։ Այդ վերապահումը փաստորեն նեղագածք էր բայց անում նույսուտանի պլիավոր պահանջի մեջ, որպեսզի հրաւիսային Իրանում Դերմանիան լփորձեր ձեռք բերել երկաթուղարին, ճանապարհային և այլ կոնցեսիաներ։ Եվ դատելով նիկուլայ Ռ-ին ուղղված

22 Գերմանիան նախադիմ հիմքում դրվել էր ռուսական տեսաց, որուն Թեհրան մաքսն էր իր վախճախթանեցը։ (Տե՛ս GP, Bd. XXVII, 1. II, № 10214, Անլուց)։

23 Այդ համաձայնագրը հայտնի է նաև Պատրամյան անունով, որը հայտնաբերը բնադրիվէ էին Ծիյալ վայրում ևս։

24 Ռուս-գերմանիան Համաձայնագրը տեքտը ան՛ Մеждүнародные отношения и эпоху империализма. Документы из архивов царского и временного правительства (1878—1917), серия II, 1900—1913, т. XVIII, ч. 1, 1938, стр. 353—354.

Ներառութիւն զեկուցապրից, Պետերբուրգում արդճն այն աստիճանի հաշտըվել էին այն մտքի հետ, որ ցարիզմին ոչ միայն չեւդույի մնաւակիրագործել թե՛րան—և անեկին գիծը, այլև նույնիսկ օտարերկրյա կապիտալների օգնությամբ, շորոնք անկասկած մնանակից կարահանչեն երաշխիքները և որ պմերը ի վերջո այդ գիծը կկառուցվի զերմանացիների կողմից, որ նույնիսկ համաձայնագրի տեքստի մեջ մտցրին մի պայման, ըստ որի պայմանավորմող կողմերը պարտավորվում էին մնելոր մյուսին թույլատրել մասնակցելու այն բռնոր արտօնություններին, որոնք նրանցից մնելը կարող էր ստանալ այդ գծի վերաբերյալ¹¹:

Բազդադի երկաթուղու շինարարությանը նույնաստանի պիմադրության դադարեցումով Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միասնական գործազրությունների ճակատը ճնշվեց և պատահական չէ, որ հետագա երեք տարիների ընթացքում Դերմանիան աշխատում էր այդ երկաթուղու վերաբերյալ անշատ պայմանագրեր կնքել նաև Ֆրանսիայի (1914 թ. փետրվար) և Անգլիայի (1914 թ. հունիս) հետ Առաջարարակ պետք է նշել, որ Պետերբուրգի համաձայնագրը ունոյակ դաշինքին և Շվեյցակ համաձայնության պետությունների միջն ներքին գաղշեակցային կարգապահության խախտման առավել բնորոշ օրինակներից մեկն էր:

Ռուսաստանը նաև խոշոր զիջում էր անում Դերմանիային, պաշտանապես նաև աշխիզ իրանում որաց որներից սկսվեմքը և Դերմանիայի առջն լայնորեն բաց էր անում Հյուսիսային իրանի դռները:

Ամբողջությամբ վերցրած, Պատսդամի համաձայնագիրը իրենից ներկայացնում է ցարական Ռուսաստանի նահանջը գերմանական իմպերիայիցմի առջև Միաժամանակ այն հանդիսանում է ոչինչ կապիտալիստական պետությունների գիրքների դեմ գերմանական իմպերիալիզմի հարձակման ցայտում դրանքուններից մնելը, որը խիստ բնորոշ է XX դ. սկզբի Գերմանիայի արտաքին քաղաքականության համար:

Պատսդամի համաձայնագիրը պատճերազմից առաջ Գերմանիայի վերցին գործն է իր հակառակորդների՝ Անտանտի երկրների, բլոկը պառակտելու ուղղությամբ: Սակայն ո՞չ անգլո-ռուսական և Հատկապնդ ֆրանս-ռուսական հրաբերությունների սրումը համաձայնագրի կերպումից հետո, ո՞չ Ռուսաստանի կողմից գրաված հաշտարարական դիրքը մարդկության նպատամում լհանգեցրին Անտանտի խորտակմանը: Ընդհակառակը, Գերմանիայի հետ ընդհանուր քաղաքական դաշինք կնքե-

¹¹ Խորի անզում: (25-րդ համաձայնագրի վերաբերյալ Կամացի բացարարագրը):

լու հարցի քննարկման ժամանակը Պետերբուրգի համար գարձավ քեկումնային՝ նրա կողմից տարվող խուսանավելու քաղաքականության մեջ, և այդ ժամանականից ցարական կառավարությունը ավելի վճռականորեն կանգնեց Անտանտի ամրապնդման կուրսի վրա, որին իր արտաքին քաղաքականության հիմնական հենական հենարանի:

В. А. БАЛБУРГЯН

ИРАНСКИЙ ВОПРОС В РУССКО-ГЕРМАНСКИХ ДИПЛОМАТИЧЕСКИХ ОТНОШЕНИЯХ В 1905—1911 ГГ.

Резюме

В статье освещается история острой дипломатической борьбы, которая разгорелась между империалистическими державами вокруг иранского вопроса, достигшего своего апогея накануне первой мировой войны.

На фоне межимпериалистических противоречий на Ближнем и Среднем Востоке показывается дипломатическая борьба между царской Россией и кайзеровской Германией вокруг Багдадской железной дороги и отражение этой борьбы на взаимоотношениях держав внутри Тройственного согласия.

В частности показывается, что «иранский вопрос», который неразрывно был связан с «восточным вопросом», имел определенное значение в ускорении вооруженного конфликта между противоборствующими империалистическими военно-политическими блоками—Антанты и Тройственного союза.

ԽԱՎԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԻ ՊԱՅԹԱՔԸ ՕՏԱՐԵՐԿՐՁԱ ԽՄԳԵՐԻԱՎԻԶՄԻ
ԳԱՂՈՒԹԱՐԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՇ

XIX դարի վերջին քառորդին իմպերիալիստական երկրների էլ ավելի ամրապնդեցին իրենց տնտեսական և քաղաքական զիրքերն իրանում:

Օտարերկրյա կապիտալի հնտենսիվ ներթափանցումը, օտարերկրյա բանկերի հիմնադրումը, շահի և կառավարության՝ օտար պետություններից վերցրած պարտքերը, բազմաթիվ կոնցեսիաների շնորհումը և, արդ ամենի հետևանագով երկրի վերածումը կիսազարդութի էլ ավելի վատթարացրին երանական ժողովրդի առանց այն էլ ժանր վիճակը, ուժեղացրին դասակարգային շահագործումը, ժողովրդական զանգվածների դժգոհությունն ու դիմագրությունը և նախապայմաններ ստեղծեցին 1905—1911 թթ. հեղափոխության համար:

Նար էդ Դին շահի թագավորության տարիներին (1848—1896) մեծ թափ ստացան ժողովրդական շարժումները, որոնց մասնակցուած էին ամենատարբեր դասակարգերն ու խավերը (արհեստավորները, քաղաքացիների շքավորությունը, գյուղացիությունը, զինվորականությունը):

Բազմաթիվ տեղեկություններ կան արդ շրջանում գործող գաղտնի կազմակերպությունների գործումներության մասին, որոնք ժողովրդին կոչ էին անուած պայքարել օտարերկրացիներին կոնցեսիաները տալու գեմ: Օրինակ, Հայտնի է, որ Թէհրանում մի շարք ականավոր դեմքեր հավաքվուած էին քաղաքական գործի միրզա մահյա Շովլաթարագիի տանը և դադանի նիստեր գումարում: Այդ կազմակերպության անդամները ժողովրդին բացառում էին երանի համար օտարերկրյա պարտքերի կորժանարար նշանակությունը, նուաստանից վերցրած պարտքի գեմ բաղադրող հոգիածեներ էին ուղարկուած արտասահմանյան մամուլին և նման բովանդակությամբ հեռագրեր հղում տարբեր երկրների արտաքին:

դրսերի մինիստրներին։ Այդ կազմակերպությունը միաժամանակ գողտնի թռուցիկներ էր տարածում, որոնք հայտնի էին ոշաբնամեջ անոնով։ Դրանցում խոսվում էր պետական պարտքի քաղաքական և անտեսական մշաների մասին և մատնանշում էին այն վատանգերը, որ այն կարող էր ունենալ Իրանի համար Այդ թերթիկներում հայտնվում էր, որ պալատականները և կառավարության ղեկավարներն իրենց անձնական շահներից ենելով ուզում են երկիրը ծախել տարերկրացիներին և Իրանի ժողովրդին խաղատիկներ դարձել ուսւների ձնոքում։

1901 թ. օգոստոսի վերջերին Թեհրանում տեղի ունեցան զժամանակակից ամսային պաշտոնյաների կողմից սահմանված սակացուցակների գեմ, որոնց հետևանքով անցրաժեշտ անդամթերքի զները բարձրացել էին¹.

Փաստերը ցույց են տալիս, որ զարավերցին Իրանն ապրում էր քաղաքական և տնտեսական լուրջ և զնաժամամ։ Սավալվող այդ շարժումների մասին անդեկտություններ էին տպագրվում նաև եղյուպական մամուլում։ Օրինակ՝ «Թունիչ» ցալտումզ թերթը 1901 թ. օգոստոսի 27-ի համարում հաղորդում էր, որ Իրանում ծայր է առել Հեղափոխական քննարձակ շարժում, որի պատճառը կառավարության նկատմամբ եղած անող զժամանությունն է և, հատկապես, նոր պարող վերցնելու համար նուսասատնի հետ սկսվելիք բանակցությունները։ Թերթի վկարությամբ, շահն իր գրասեղանի վրա շարումակ սպառնալից նամակների էր հանդիպում։ Այդ նամակները հատկապես ուղղված էին Ամին է և Սոլյան մեծ վեզիրի գեմ, որը մեղադրվում էր իր հայրենիքը ծախելու և բարենորդումներ լանցկացնելու մեջ²։

Անգլիական «Թունիչ» թերթը 1904 թ. հունվարի 29-ին հայտնում էր, որ Պետերբուրգից ստացված հաղորդագրությունների համաձայն Թեհրանում պարսկերն լիզվով մի շարք թուուցիկներ են տարածվել, որոնք պարսիկներին զգուշացնում են Իրանը Հեղափոխական վիճակին իրեցնելու Անգլիայի մասնակիցներին մասին³։

Իրանում զիմուկրատական շարժման վերելքին նպաստող շատ կարևոր դործոն էին Ռուսաստանում տեղի ունեցող Հեղափոխական խմորումները, Ռուս-ճապոնական պատերազմում գլուխացնում են Իրանը Հեղափոխական վիճակին իրեցնելու Անգլիայի մասնակիցներին մասին⁴։

¹ Խ. Հայրենիք պատմություն Իրան 1901-1902 թվականներ։

² E. Browne, A Brief Narrative of Recent Events in Persia, London, 1909, p. 9.

³ E. Browne, The Persian Revolution of 1905-1909, Cambridge, 1910, p. 10.

⁴ Խոյն անգլակ, էջ 109։

պարտության և Ռուսաստանում ժավալվող հեղափոխական շարժումների ազգացությունը Իրանում անցյալ ունեցող իրադարձությունների վրա, չեն կարող ծիստել նաև արևմտակելքութական հեղինակները։ Օրինակ, Բրանտն իր աշխատությունում մեջբերում է ականատեսներից մեկի հետեւյալ խռովքները։ «Ինձ թվում է, որ Արևելքում ինչ-որ գործոխություն է սպասվում, մապոնիայի հաղթանակն, ըստ երկույթին, նշանակալի ազգացություն է ունեցել ամրող Արևելքում։ Նույնիսկ այստեղ՝ Իրանում, զա (հեղափոխական շարժումը—Հ. Ա.) առանց ազգացության չեն եղել... Իրանում, շատրվաճ նրա մոտիկությանը Ռուսաստանին, զարթունքը կարծեն ընդունում է դիմոկրատական և հետորմների շարժման ձև...»

Դուքս Արևելքին ինկապես արթենում է իր դարավոր քնից և մենք շուտով պիտի կիրակարար միջինների ուստի ելնելուն՝ ընդդեմ ու մի միջոցի առաջ կանգ լառնող Արևմուտքի շահագործմանց։

Բնական է, որ իշխող ինակների ներկայացրուցիլների մեծ մասը զիմէ էր որևէ բարեփոխման, քանի որ կերպներ իր հակարական ապօքինի եկամուտները և արտոնուալ վիճակը, Մյաւ կողմից, նման բարեփոխութեներին հակառակ էր Իրանում օրեքօր իր զիրքերն ամրապնդող ռատօնիքութայ կապիտալը՝ Իրանի ներքին գործերին միջամտող և զիալով իրենց ազգացությունն ուժեղացնող ցարական Ռուսաստանը և իմպերիալիստական Անգլիան։ Դրա լավագույն ապացուցչներից մեկը հենց այն բացասական վերաբերմունքն էր, որ Անգլիան և Ռուսաստանը ցուցաբերեցին Ամիր Քարիրի բարենորոգումների նկատմամբ։

Վերոհիշյալ հանդամանքները չեն ավելի որեցին ու խորացրին Իրանի դաստիարակին և սոցիալական հակասությունները, որոնց հետնանցով երկրում ժայռ առաջ լուսավորչական շարժումը։

* * *

Լուսավորչական շարժումն Իրանում ժավալվեց և հատկապես մեծ թափ ստացավ ՀԻՀ դարի վերջին քառորդին։ Անշուշտ, այդ շարժումն ուներ իր լուսահատկությունները, որոնք բխում էին երկրի քաղաքական և տնտեսական կյանքի բնույթից։

Այդ շրջանի իրանական լուսավորիլների գործունեությունը զնաւատելիս պետք է, նախ և առաջ, նկատի ունենալ, որ նրանք աշխատում էին ազատագրական և դիմոկրատական գաղափարները կիրառել երկրի

⁸ Խոյն տեղամ, էջ 123.

առցիալ-քաղաքական ամենաբարդ խնդիրները լուծելու համար և շանում էին ժողովրդին ձերքազատել թճողալական բանապետական կարգերի նկատմամբ հնազանդություն և հանդուժողականություն քարոզող գաղափարներից:

Լուսավորիչների հասարակական-քաղաքական գործունեությունն իր սուր ծալուվ ուղղված էր նաև նրանում իմակերիսալիստական տերությունների գաղութարարական քաղաքականության և իրենց գործունեությամբ այդ քաղաքականության իրականացմանը նպաստող իշխող խավերի դեմ: Դաղութատիրության հարատևման կարևոր աղդակներից մեկը նրանք համարում էին նրանի քաղաքական և տնտեսական հետամացությունը և շանում էին միջոցներ գտնել երկիրն այդ վիճակից գուրս քերելու համար: Ըստ նրանց, փրկության հիմնական ուղին պետական կառուցվածքի փոփոխումն էր և պիտության ու լուսավորության զարգացումն ու տարածումը:

Լուսավորիչները մեծ հայրենաաներներ էին: Նրանց հայրենաանիրությունն անցակտելիորեն զուգորդվում էր նրանի անկախության և աղդային ամրութականության գաղափարի հետ: Նրանց քարոզում էին սիրել ժողովրդին, հարգել և պահպանել աղդային ազանդեներն ու սովորությունները, շանում էին ժողովրդի մեջ արթնացնել հայրենաօքրական զգացմումներ, իսկ հայրենիքի պաշտպանությունը համարում էին յուրաքանչյուր իրանցու սրբազնն գործը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ XIX դարի վերջի իրանական լուսավորիչների ազգայնական գաղափարախոսությունն արմատապես տարրերվում էր Հետապայում գարգացած պանիրանական կամ պանիրալամական գաղափարախոսությունից:

Արտահայտելով աղդային բուրժուազիայի շահերը, լուսավորիչները մերկացնում էին կոմպրադորական բուրժուազիայի գործունեությունը և ժողովրդին կոչ էին անում պայքարել տարրերկոյաց շահագործողների և երկրի ներսում նրանց գործակալների գեմ:

Իրանական լուսավորիչների հայացքներում ուրույն տեղ է գրավում երկրի տնտեսական զարգացման հարցը: Նրանք համագալած էին, որ միայն երկրի տնտեսության, հատկապես աղդային արդյունաբերության զարգացումը, կարող է հասարակական առաջադիմության և աղատագրման երաշխիք հանդիսանալ:

Ի տարրերություն պանիրալամիջմի գաղափարախոսների, որոնք նրանց գոյություն ունեցող անմիտար վիճակից գուրս քերելու միակ միջոց էին համարում վերադարձ նախնական, անազարտ իտլամին և

امروزیم اند ժողովուրդների անշատումը քրիստոնեությանից, լուսավորիչները ելքը տեսնում էին Իրանում գիտությունը և նորագույն տեխնիկան կիրառելու և տարածելու, ինչպես նաև առաջավոր երկրներից կատարելագործված ձեզը ընդորինակելու մեջ:

Լուսավորիչների այս գաղափարները լայնորեն արտացոլվում էին արտասահմանյան տարբեր երկրներում հրատարակվող պարսկական թերթերում:

Ֆիրոզ Դավարը Բոմբեյում լույս տեսած իր «Իրանը և Նրա մշակությը» աշխատության մեջ գրում է. «Իրանական գրականության ողին հեղափոխականացնելու... զանգվածների մեջ քաղաքական հարցերի շուրջ հետաքրքրություն արթնացնելու պատիվը, ըստ արժանավորին, պետք է վերագրել մամուլին: Մամուլի միջոցով էր, որ իրանցիները պիտակցնեցին, որ իրենք ամրուի են նղել և շահագործվել են իրենց ղեկավարների և նրանց գլուխն կանգնած երկու եզրապական երկրների կողմից: ...Կարև ասած, իրանական մամուլը առաջնորդող գեր էր խաղում երկրի սոցիալական, քաղաքական և մշտական զարթունքի գործում»¹:

Իրանում մեծ տարածում և աղջեցություն ուներ «Հարլ օլ մաթին» թերթը, որը հրատարակվում էր «Ալկաթայում» 1892 թվականից սկսած: Թերթը հանդես էր գալիք ստարերկրյա պարտերի գեմ և ցույց էր տալիս երկրի համար նրանց քայլայիլ հետևանացները:

Մալեքադեն գրում է. «Հարլ օլ մաթին» թերթը ավելի քան երես տարվա ընթացքում հանդիսանում էր նոր գաղափարների տարածող, քազմաթիվ ազատասերներ և օրենքի իշխանության կողմնակիցներ թերթի միջոցով իրենց տեսակետներն էին արտահայտում և զրահը հաստրակության սեփականությունը դարձնում: Այդ թերթի միջոցով բռնապնդության տակ հեծող ժողովուրդն իր ձայնն էր հասցեում ամրոց աշխարհինք»²:

Քարավին գտնում է, որ «Հարլ օլ մաթին» թերթն այդ ժամանակված ամենամասնաշխատ թերթներից էր: Այն նյութեր էր հրապարակում իրանի քաղաքական գծվարությունների մասին: Նրա էջերում սուր քրնեադատական հռովածներ լույս տեսան, հատկապես, Շուսատանից պարտք վերցնելու ժամանակի Քասրավիի կարծիքով, հենց այդ էր պատճառը, որ մոտ լորս տարի արգելված էր այդ թերթի մռացքն իրան:

* J. C. Dastur, Iran and its Culture, Bombay, 1933, p. 428.

۱ مهدی ملکزاده، تاریخ القلاب مشروطیت ایران تهران ۱۳۷۸ صفحه ۴۶۰

۲ احمد کسروی، تاریخ مشروطه ایران، تهران صفحه ۴۲

1907 թ. ապրիլի 29-ին Թեհրանում լույս տեսած ոչ շաբաթ ոչ մաթինա թերթի հենց առաջին համարում, անդրադառնալով կալկաթայում լույս տեսնող համանում թերթի գործունեությանը, ասվում է, որ «Շաբաթ ոչ մաթինը» տասնչորս տարի շարում ակ քարոզել է Իրանի ժողովրդի և պետության ազատագրումը ստարերկրացիներից, արդարության և սահմանադրության հիմունքների հաստատումը, բանապետության ու բրոնւթյան վերացումը...» Թերթի այս համարում քաղվածքներ են քերգած երթագի թերթի մի հոգվածից, որտեղ բնապետական կարգերի տապալման միակ ուղին դինված ապատամբությունն ու հեղափոխությունն է համարվում և միաժամանակ, արծարծվում ձև ռուս-ապատական պատերազմի և ռուսական 1905 թ. հեղափոխության ազգեցության հարցերը: Ռուսար երկրները և Իրանի կառավարությունը շպետք է ձևունան, — գրված է հոգվածում, — որ ճապոնիայի հաղթանակը և Ռուսաստանում ժամանակած ազատագրական շարժումը ազդել են ողջ աշխարհի վրա և բացել բոլոր ժողովուրդների աշքերը¹:

Թերթն իր համարներից մեծում հավատիացնում էր Իրանի ժողովրդին, որ օտար երկրներից հատկապես Ռուսաստանն ու Անգլիան ամենին շահագրգուշած լին Իրանի դարձացման, շենության և առաջերազն նրա ազատության ապահովմամբ, այլ, ընդհակառակը, Իրանց ցանկությունն է Իրանը միշտ իրենց ձեռքում պահել²:

Ավելի քան 20 տարի Ստամբուլում լույս էր տեսնում «Ախմար» թերթը, որը հիմնադրվել էր 1875 թվականին: Թերթը հատկապես լայն տարածում դառնապահ գիտակութիւն կոնցեսիայի դեմ մղվող պայքարի տարիներին: Նրա էջերում լույս էին տեսնում անտեսական բնույթի հոգվածներ, որոնք ցույց էին տալիս Իրանի քայլայված վիճակը և խիստ քըն-նադատության հնթարկում կառավարության քաղաքականությունը:

Լուսագործական գաղափարներ տարածող ամենախոշոր թերթը, իհարկե, «Ղանումներ» էր, որին և անրամասն կանգրազանենք նրա խրծքագիր Մալթում խանի մասին խոսելիս:

Իրանական լուսագորիչների ալիքի ընկնող ներկայացուցիչներից էր Արդ ոչ Բահմի Արու Թալերը, որը պատմագրության մեջ հայտնի է Թալիրով անունով:

Թեհրանում գրում է, որ Արու Թալերի գրավոր նլույթները, նրա բնակչագրությունները, Իրանի ժողովրդի արթնացման գործում արտակարգ դեր են ունեցել³:

¹ روزنامه حبیل المتنین تهران ۱۹۰۷ شماره ۱ اوریل ۲۹

² Անյն տեղում, № 7:

³ گریم جهزاده قیام آذربایجان در انتقام مشروطیت ایران تهران صفحه ۷۰.

իր սահղթագործություններում նա առաջ էր քաշօմ սահմանագրության, անձի, խորի, մամուչի, ժողովների ազատության, օտարերկրյա պարտքերից և առանց ժողովրդի համաձայնության կոնցեսիոններ տալուց հրաժարվելու և այլ հարցեր։

Աբով Թալերի գրած ոճեթարե Անմադ յա սաֆինեյէ Թալերիշ զիրքը հրատարակվեց 1890 թ. և մեծ առաջնում գտավ։ Աբով Թալերը իր զրգում հատուկ կերպով բնորոշում էր արևմտյան զաղութատիրական պիտությունների հովանուն ու զերը, և իր հայրենակիցներին զգուշացնում, որ դորժիք շգառնան նրանց ձեռքին նա գրում էր. «Թաղաքարակիրթ և լավ արտաքին ունեցող արևմուտքի հարուստներից շատերը զաշտացին մկների պես շրջում են աշխարհով մեկ և որտեղ հարստության սիրմերի նոր կուտակումներ են գտնում, հրավիրում են իրենց ուղղեկիցներին, որպեսողի աղվեսային խորամանկությամբ ներթափանցեն այնտեղ և ինչ որ կա կամ ինչ հարյուր տարի հետո է լինելու, կարճ ժամանակում, անխոնորն կլանեն։ Դրանից հետո նրանց մարդկային կերպարանք են ընդունում, ուրիշների իրավունքների, ազատության և հազարության մասին են խոսում և մինելին հարցերի լուծման ու կարգավորման գործը վերապահում իրենց ուժին և որիշների թուլությանը»¹²։

Աբով Թալերն այսուհետև նգրակացնում է. «Ելլին ժողովուրդը, որի արգեցիկ ղեկավարները դյուրահավատ, տգետ, անփորձ և փողասեր են, բոլորից շռաւ կընկնի ստեղծինքի, ուուրլու, դռլարի և ֆրանկի հզոր բազմի նաևկը»¹³։

Աբով Թալերը դմտ էր նաև պատերազմին և կոչ էր անում ուղամական ժախսերի և անիմաստ արկածախնդրությունների համար հեկայական միջոցներ շվատենլու նա զրում էր. «Արդյո՞ք մեր և ուրիշների հայրենիքը նրա համար է, որ ամբողջ ընակլությունը սուր, հրացան և նիդակ կրի, ռազմական գիտելիքներին ընտելանա, դպրոցներում պիտության և քաղաքակրթության փոխարձեն դաժանությունն և վայրենությունն սովորի։ Երիտասարդներին, որոնք սկզբից ենթ պետք է հանրապետ գործունեությամբ, հողագործությամբ ու վարչացանքով զբաղվեն, իրենց և հարազաւների ապրուսար բարելավեն, քաղաքակրթություն տարածեն, զորանոցներում անհոգի մեքենաների պես մարդասպանությունն սովորեցնուած, ժողովրդական հարստությունից գումարներ են ժախսում, որպեսողի անհրաժեշտության դեպքում նրանց սպագործեն իրենց անձ-

¹² ՀՀ ՀՀԿ հայության պահպանի և պահպանի աշխատավորության մասին օրենք։

¹³ Հույն անգամ։

նական նպատակներին աշխարհակալության, երկրների ավերման, շինությունները քանդելու և յուր նմանների սպանության համարը¹⁴:

Նա հայտարարում էր, որ քաղաքակրթության զարգացման, լուսավորության տարածման և օրենքի հաստատման պայմաններում կվերանան այդ վայրագությունները, կգումարվեն այնպիսի կռնպրեսներ, որոնց կմասնակցեն բոլոր ժողովուրդների և ցեղերի ներկայացուցիչները և միջազգային վիճելի հարցերը կլուծվեն ամենայն արդարությամբ: Շնչա այդ ժամանակ է, — եղբակացնում է Արու Թալեբը, — որ զորանոցներում սպանության և ավերածության կարգադրության սպասող հարցուր հազարավոր զինվորներ կողմանցորդվեն բարիքներ ստեղծելու և անապատները մշակելի դարձնելու համարը¹⁵:

«Մասսել ոլ հայաթ» գրքում Արու Թալեբը, հատկապես Իրանը Անգլիայի և Ռուսաստանի միջև ազդեցության դուրիների բաժանելու կապակցությամբ, մերկացնում է իմպերիալիստական Անգլիայի և ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականություններում և ցույց է տալիս Իրանի իշխող շրջանների դավաճանությունն ու անտարքերությունը:

Արու Թալեբը անզրագանում է նաև Էդ Դին շահի և Մողանար Էդ Դին շահի նվաճակառած ճամփորդություններին և այդ առիթով ռատար պիտություններից վերցրած հակայական պարտքերի հարցին: Նա հեգնանքով զբում է, որ Թագավորեների Համփորդության ժամանակ կատարված ծախսները իզուր լանցան, քանի որ կառուցվեցին հոյակապ պարաներ, ընդարձակ մայրուղիներ, բարե դարպասներ, զեղատեսիլ արգիներ, թանկարժեք հայելիներով շքեղ հյուրասրաններ, որոնք զարմանք են պատճառում նույնիսկ ռատրենորյա դեսպաններին: «Մինչդեռ, — զբում է հեղինակը, — այդ բոլորը հենց նրանց (եվրոպական երկրների — Հ. Ե.) գործարաններին էին պատմվելք»¹⁶:

Արու Թալեբը բռնորում է նաև ռատրենորյա իմպերիալիստների՝ Իրանի նկատմամբ կիրառած քաղաքականության դիմ: Այդ քաղաքականությունը բնորոշելու համար նա քերում է հետեւալ օրինակը. Դամավանդ լեռան գագաթը բարձրացած խումբ վերադառնում է Թէհրան և հանգիպում ունենում մինիստրի հետ: Մինիստրը խոստովանում է, որ Անգլիայի դեսպանի պահանջով է նրանց Դամավանդ ուղարկել: Շնչա դիմացի դեսպանը մեր գրամով և ձեր ջանքերով ուզում էր բրիտանական

¹⁴ Նույն անդամ, էջ 143.

¹⁵ Նույն անդամ, էջ 144.

¹⁶ عبد الرحيم ابن شيخ أبوطالب مسائل المحسنين قاهرة ١٣٦٣ ص ١٥

աշխարհագրական ընկերությանը ժառայությամբ մատուցել...—ասում է նա: Մեր հարևանների՝ Ռուսաստանի և Անգլիայի, ձեռքից կրակի ճնշ ընկել... ամեն օր մի նոր բան են պահանջում և լրնգումնելու դեպքում սպանում են մինիստրներին հեռացնելու: Դա շատ վճռական զննք է. ... եկեղեց մտածենք, թե ինչպիս այս գործանքը մեր և մեր սերտանդների գլխից հեռացնենք¹⁷:

Իրանական հեղափոխական գեմոկրատիզմի լավագույն ներկայացուցիչներից է Մալիք ոչ Մոթաքայիմինը: Նրա աշխատություններում պարզություն կերպով նկատելի են հակաբիմպերիալիստական և հակաֆեոդալական տրամադրությունները:

Երբ Իրանում ցարական Ռուսաստանից նոր պարտք վերցնելու հարց էր առաջացել, և հայրենասիրական ու առաջազիմական խավերը սուրբի էին եւել ի պաշտպանություն երկրի շահների ու անկախության, Մալիք ոչ Մոթաքայիմինը ևս մեծ շանքեր թափեց խափանելու: Խշոր շրջանների այդ գավառնանությունն ու հայրենավաճառությունը:

Մեծ էր Մալիք ոչ Մոթաքայիմինի վրդովմունքը ռուսարերկրյա ստրկացուցիչ պարտքերի նկատմամբ: Նոր պարտքեր վերցնելու բանակցությունների ժամանակ նա մի նամակ է դրում արտաքին գործերի մինիստրը Մինիստրը Միրզա Նարուլախան Մոշիր էդ Դոլինին և հայտնում է իր կարծիքը այդ մասին:

Բերենք որոշ հատվածներ այդ նամակից: Անյօ օրերին տեղական շրջաններում և արտասահմանյան մամուլում,—դրում է նա, —խոսվում է Ռուսաստանից նոր պարտք վերցնելու մասին: Այժմ հաստատվում է, որ իսկապես Իրանի կառավարությունը երկրի ամբողջականության և անկախության հետ անհամատեղելի ժանր բռն է դրում Իրանի ժողովրդի ուսերին, որի տակից նա երբեք ի վիճակի չի լինի դուրս գալ:

Կառավարության եկամուտների ու ծախսերի բալանսը և այն դեմքից, որ ամեն տարի տաշանում է բյուջեում, թույլ չեն տա, որ կառավարությունը մոտ ապագայում մուծի պարտքի ժամկետավճարները, և այս ստրկացուցիչը լուծը մշտապես կփանրանա Իրանի ժողովրդի վրան:

Իրանի ներքին դրությանը լավառեղյակ և խոհեմ մարդիկ զիտեն, որ նույնիսկ, եթե վստահություն լիներ, որ այդ դրամը կժառայիր բարեփոխությունների և երկրի տեսհատությունը զարգացնելու նպատակին, դարձյալ երկրի շահների տեսակետից նպատակահարմար չէր այդ քայլին դիմելը: ...Այդ պարտքը բացի վարկարեկումից, զժբախտությունից և

¹⁷ Խոյն տեղամ, էջ 245.

ագուստանից իրանի ժողովով Համար ուրիշ հետևանքներ լի ռմբնաւ¹³:

Նամակի բովանգակությամբ ցույց է տալիս, որ Մալքը ու Մոթացալեմինը զիտակցում էր օտարերկրյա պարտքերի առդիացուցիչ բընույթը, և վճռական կերպով հանգես էր զալիս զբանց գիտ։ Նա զտնում էր, որ առկա քաղաքական պայմաններում հեարավոր չէ երկրի անտեսական քայլարված վիճակը կարդավորել օտարերկրյա պարտքերի միջոցով, և այդ նպատակի համար պետք է օգտագործել ներքին ազրյուրները։

Մալեք ու Մոթաքալիմինը Հեղկաստանում հրատարակել է ոման
ալ խալդ ալ ալճադը (Ժողովրդի միջոցով գիպի ճշմարտություն) զեր-
և ազգության մի գիրք, որտեղ խոսում է ոչ միայն իրանական, այլև Հնդկի
ժողովրդի ճակատագրի մասին։ Դրանում կարմիր թելի պես անցնում են
նրա Հումանիստական-դիմոկրատական ձգառուները։ Հիշյալ ժողո-
վուրդների նժրախտության պատճառը նա, իրավացիորեն, տեսնում է
ֆեոդալական կարգերի պահպանման և ստարերկրյա իմպերիալիզմի
ստրկացուցիչ քաղաքականության մեջ և Հանգում է այն մոտքին, որ միակ
փրկությունը ֆեոդալական և իմպերիալիստական լծի թոթափումն է և դե-
մոկրատական ու անկախ պետության առեղծումը։ Նա գտնում է, որ պատ-
մական զարդացման հիմնական առանցքը և պատմության շարժիչ ուժը
ոչ այլ ոք է, քան ժողովուրդը, և հենց նա էլ պետք է տապալի այդ եր-
կակի ըստքը։

Իրանի լուսավորիչների շարքին է դասվում նաև Ջեյն օլ Աբդղին Մարգարեթին՝ «Էրրահիմ» թեկի ճանապարհորդական հուշերը (Միահար-եամբ)՝ դրբի հեղինակը:

Այս զրբի՝ Կալկաթայում հրատարակված օրինակի անգլերեն ամփոփման մեջ հիշատակվում է Մարաղերի մահմանից առաջ հրատարակությանը ուղղված նամակից մի հատված, որտեղ նա նշում է, որ Միահամբեամենա զրելիս նպատակ է ունեցել իր հայրենակիցներին ոտքի հանել, զույց տալով այն անմիտիթար վիճակը, որ տիրում էր երկրի բոլոր պետական հիմնարկներում²⁰. Սալիդ Նաֆիսին իր սժամանակակից պարսկաց արձակին պատիվարժությունները գրքում այն կարծիքն է հայտնում, որ «Միահամբեամենա» մեծապես նպաստել է իրանում հայրե-

^{۲۰} ابراهیم تیموری، *دصر بی خبری یا تاریخ امتیازات در ایران*، تهران ۱۳۹۲

PAW Awards

¹⁸ ذین العايدین مراجعتی سیاحت خانه ابراهیم بگ چای گلکته ۱۹۰۰

in length and width, fig. 253.

նասիրական դգացմունքների վերելքին²¹: Մարազին Իրանի զեկավարներին ներկայացնում է որպես ժողովրդի նակատապրի նկատմամբ բացարձակապես անտարբեր մարդիկ, որոնք մատահոգված են միայն իրենց անձնական գիրքի, պաշտոնի և եկամուռների ապահովմամբ, և այդ նպատակի համար չեն խօսափում մինչև իսկ ամենասուր արարքներից:

Նարեմակելով Ախումդովի, ինչպես նաև Մալթումի առաջադիմ ավանդույթները, Մարազին անողոքաբար խարազանում է Իրանում տիրոջ Հասարակական և պետական կարգի արատները: Իրանի անմիտիթար վիճակն ընդգծելու նպատակով Մարազին անդրադառնում է Իրանի երրամսնի հզորությանը: Շիրանը, որը մի ժամանակ եղած է ամրող աշխարհի ծաղկում արգին, այժմ դարձել է ավերակ ու ամայի, իսկ նրա ժողովուրդը, որն անցյալում աշխարհի ամենաշարքարժան ժողովուրդներից մեկն էր, այսօր արհամարհված է և ողորմելիչ, — գրում է նա:

Մարազին հերոսը թյուրիմացաբար կարծում է, թե մինիստրներն ու մյուս զեկավարները տեղյակ շեն երկրում տիրող դրությանը, և որ անհրաժեշտ է նրանց ցույց տալ գոյություն ունեցած թյուրիմունները: Այս մտավորությամբ նա դիմում է վեպիրներին, հուսալով, որ նրանք միշտ ուղներ կանոնարկներ զարգացնելու ազգային արդյունարերությունն ու առնառուք և կաահամանափակեն օտարերկրյա կապիտալի ներթափանցումն Իրան:

Ժողովրդի թշվառության համար Մարազին մեղադրում է երկրի զեկավարներին, որոնք ոչ միայն չեն հոգում նրա բարեկեցության մասին, այլև զաժանորքն մեջում և հարատաշարում էին նրան, որի հետմանք հարյուրավոր ու հազարավոր իրանցիներ հարկադրված էին աշխատանք որոնելու համար հեռանալ իրենց հայրենիքից:

Խոամազորիլ Մարազին մեծ վրդովմունքով է խոսում Իրանի ներքին կյանքին օտարերկրյա զաղութարարների միջամտության մասին. և Մինչև ե՞րբ պետք է օտարերկրյա հյուպատոսները մեր երկրում օգտվեն անսահմանափակ իշխանությունից, — հարցնում է նա²²: Մարազին զայրույթով զատապարտում է Իրանն ազգեցության ոլորտի բաժանելու իմպերիալիստական երկրների ձգումը: Նա գրում է. «Մի կողմից մեզ մոտ են զայիս գերմանացիները, մյուս կողմից ամերիկացի-

21 ۱۳۰- ۱۳۱. شیخید تفییسی شاهکارهای نثر فارسی معاصر جلد اول تهران صفحه ۲۱

²² նոյն տեղում, էջ 21.

²³ նոյն տեղում, էջ 75.

ները. զպրոցներ են բացում, Հյուպատուններ նշանակում, երաշխիք չկա, որ վաղն էլ նապոնական նավերը չեն ներփռումք Պարսից ծոցը և նման արտօնություններ չեն ստանան²¹:

Իրանում կուլտուր-լուսավորչական շարժման առավել ռադիկալ թերակայացուցիչ էր Մալքումը: Նրա հիմնական նպատակն էր օգնել իրանական ժողովրդին ազտատրվել բանակետական կարգերից:

Մալքը զաղնն, խոսելով Մալքումի պահանջական գիրի մասին, գրում է. «Թունապետության շրջանի գործիւներից միրզա Մալքում խանը, ավելի քան որոնէ մեկը, շանացել է ժողովրդին ծանոթացնել համաշխարհային քաղաքակարգությանը, որինքի սգութաներին, ժողովրդական իշխանության առավելություններին: Ժողովրդին լուսավորելու և սահմանադրությունների ձեռք բերելու գործում մեծ է եղել նրա գաղափարների ազգեցությունը»²²:

Ենթանի սահմանադրության պատմությունը աշխատության հեղինակ Ահմադ Թասրավին Մալքումին զասում է այն մարդկանց շարքը, որոնք ընասր էին Դին շահնի օրոք սրացավություն են երեսն բերել ժողովրդին և երկրի նկատմամբ և շաներեք ձև թափել ժողովրդին զարթոնքի ուղղությամբ: Նա գտնում է, որ ոՄալքումը նասր էղ Դին շահնի ինքնակալության և Ամինի էս Սոլթանի եսասիրության ու անազնվության թշշնամին էր, ոժուն էր ստարերկրացիներին կոնցեսիաներ տալուց և բացահայտել է զրանց վնասները²³:

Մալքը զաղնն հետաքրքիր փաստեր է հազորդում Ռուսաստանից 22,5 միլիոն ռուբլի պարտք վերցնելու հարցի նկատմամբ Մալքումի վերաբերնումքի մասին:

Հեղինակը նշում է, որ չնայած այդ պարտքի դեմ երկրի ազատասերների բողոքին և կառավարող շրջանների համար նրա վնասակարությունն ու վատանգավորությունը բացահայտելու վճրիններիս շանեցրին, այնուամենայնիվ, էմիակ մարդը, որ գույս եկավ այդ սուրարքի գեմ, Լուգոնում նրանի գեսակն միրզա Մալքում խանն էր:

«Մալքում խանը, — գրում է նա, — անվախ ու համարձակ կերպով բազմաթիվ հեռագրեր ուղարկեց մեծ վեղիքին, արտաքին գործերի մինիստրությանն ու կառավարությանը՝ տեղեկացնելով նրանց այդ պարտքի վտանգների մասին: Նա միաժամանակ պարտքի քաղաքական և

²¹ Խոյն տեղամ, էջ 232.

²² 175 ռուբլ 1328 թվական:

²³ Հ. Հ. Կոսրով, «تاریخ مکروطیت ایران»، تهران، صفحه 1.

անահռական վեասների մասին հոդվածներ հրատարակեց Անգլիայի և Ֆրանսիայի մեծատիրած թերթերումը²¹:

Հենքելով Մոսթոֆի ոլ Մամակերի վկարությանը, Մալեք զադեն գրում է, որ պարտը վերցնող Աթարեկը հետագալում Եվելյարիայում հանդիպում է Մալբոր խանին, հրավիրում է իր մոռ և արդարանալու համար նրան աշխատում է հավատացնել, որ այդ գործում ոչ մի մասնակցություն և որևէ օգուտ չի ունեցել: Միրզա Մալբոր խանը, սակայն, պատասխանում է. «Ես մինչև հիմա նեղ արժանի էի համարում հարյուր մարակի, որսինետև կարծում էի, թե երկրին ու ժողովրդին դավաճանելու դիմաց առնվազն պատճառ բաժին եք ստացել: Հիմա, որ ասում եք, թե այդ գործից որևէ օգուտ չեք ունեցել և բացի վիրավորանքից ուրիշ բան ձեզ չասել, ձեզ արժանի եմ համարում հազար մարտիկը²²:

Մալբորը, բայ երնույթին, ակնարկում է, որ, եթե Աթարեկը կաշաքի դիմաց է նման դավաճանության դիմել, ապա արժանի է պատժի, իսկ եթե հայրենիքին դավաճանել է իր համոզմունքներից ելեկով, ապա պատժի չափը, բնականարար, մեծանում է:

«Երբ որևէ մեկը,—դրում է Մալբորը,—իրանի վիճակը համեմատում է նվազապայի հետ խորապես ապշում է, թե մեր պետության զեկավարները ինչպես են կարազացել բնական բարիքներով այնքան հարաւատ երկիրը նման թշվառության հասցնելը²³:

Դասակարգելով երկրի զեկավարների՝ Իրանի պատմական փառավոր անցյալը բոլոր լարիքների պատճեց համարելու և նրանով քողարկվելու փորձերը, ինչպես նաև Իրանի հետագա անձեռնամխելիության նկատմամբ նրանց վատահությունը, Մալբորը դրում է. «.... Նուշիրվանի օրոք Անգլիա չկար: Բայց այժմ մի քանի անգլիացի առևտրականներ իրենց տանը նստած, և հենց ձեր կողմից բացառվող միջոցներով, հիեզ հազար ֆարսախ հեռավորությունից ստրկության մեջ են պահում նուշիրվանի պետությունից տառ անդամ ավելի մեծ մի երկիր (նկատի ումի Հեղիաստանը—Հ. Ե.)²⁴:

«Զարգացման ազրուրը, շեյխը և վեպիրը գրքում Մալբոր խանը անդրազանում է նաև Արևելքի ժողովուրդների հետամնացության հար-

²¹ 127 հատված 1978 Թիրան, Իրան

²² Նոյն տեղում, էջ 158.

²³ مجموعه اثار میرزا ملکم خان، تهران 1978 کتابچه تیپیسی یا (فتر تقطیمات)

²⁴ 5 հատված

²⁵ Խայք տեղում, էջ 3:

շին, միանգամայն հրաժարվելով նրա բազական տարածված ռասայական պատճառաբանությունից:

«Մի մարդ անպայման պետք է ծննդի Սենայի կամ Թիմրայի ափերին, որպեսզի ընդունակ լինի զարգանալու և հասուն իրավունք ունենա յուրացնելու լուսավորությունն ու գիտությունները։ Եթե մարդ ծնվել է Աֆրիկայում՝ կամ Ասիայում, ապա մի թե նա պետք է դասվի ոչ լիարժեների շարքը»²¹։

Թարեփոխումների իր ծրագրի պրոպագանդման հետ մեկտեղ Մալքում լայն պայքար էր ժագալում նաև օտարերկրյա պարտերի գեմ։ Պարտ վերցնելու բանակցությունների ժամանակ Մալքումը արտաքին դորժերի մինստրությանն է ուղարկում բռղոքի մի նամակ, որն իր ժամանակին ապարագվել է նաև մամուլում։

Նամակում Մալքումը գրում է. «Էսել եմ, որ Թեհրանի զեկովարները մտազիր են նոր պարագ վերցնել։ Գետք է խուսափել այդպիսի սարսափիի սխալի կրկնություններց։ քանի որ այն ռազգային աղետ կլինի»²²։

Մողագար էդ Դին շահն հվյալական երրորդ ճանապարհորդության ժամանակ, Մալքումը ռԱրդարության ձայնը վերեսագրով մի հոգված է գրում, որն անստոքագիր ուղարկում է Խալկաթայի ՇՀարլ ոլ մաթիս թերթում։ Անզրագանաւոզ երկրի միջակին, Մալքումը գրում է. «... Գետական բոլոր հիմնարկներն անկարգ վիճակում են, գանձարանը դատարկ է, ժողովական սպիտերը մեջ է, անկախության հիմքերը սասանված են։ Ինչ դժբախտություն ասես, որ լի տիրում այս խեղճ հողի վրա»։

Այս դրության վերջը ի՞նչ է լինելու

հենցիր պարզ է՝ օտար տերությունները կդրավեն իրանը։

Ի՞նչ իրավունքուն։

Հետո մեր մեղքով, քանի որ մենք շնչեք ուզում աշխ բացել և տեսնել, թե այս զարաշրջանում ինչքան են փոխվել աշխարհը և պետությունների գոյության պայմանները»²³։

Սա փաստորնեն երկրի անկախությունը պաշտպանելու մի կոչ էր՝ ուղղված ժաղավարին։ Մալքումը զգուշացնում է, որ եթե իրանում բարեփոխումներ լանցկացվեն, վերդիվերջու, օտար պետությունները երկիրը կևանդեն։

21 19.7 مجموعه آثار میرزا ملکخان مبتدئ ترقی و شیخ و وزیر تغليص
22 189.

23 189.

24 189.

Սկսած 1890 թ. մոտ երեք ու կես տարի Մալբումը լոնգոնում հրատարակում էր «Ղանուն» թերթը, որն իրանում խիստ արգելված էր:

Թերթը պարունակում է բավական հարուստ նյութ, որի ուսումնասիրումը շատ կարևոր է Մալբումի բազարական հայացքները և հետապնդած նոպատակները պարզաբանելու համար:

«Ղանուն» թերթի երկրորդ համարումը գրում է. «Յուարերկրյաց ներկայացուցիչներն իրանից ուղարկած իրենց զաղանի կամ բացահայտ զեկուցագրերում անշնորհառ կրկնում են, որ իրանի ժողովուրդը, հատկապես դիմվորականությունը, իր երկրի վիճակից այնքան է ձանձրացել և այնպես է այն առողջականությունը, իր երկրի վիճակից այնքան է ձանձրացել և այնպես է այն առողջականությունը, որ ոչ մի օտար թշնամու զեմ թեկուզ մեկ զնդակ էլ չի արձակի, այլ, ընդհակառակից, զրոյից եկող որևէ բանակի ուրախությամբ և շնորհակալությամբ զընդառաջի:

Մեր զեներալներից մեկը լսելով այս խոսքերը, զիել է. Անսովուած վետ, օտարերկրյաց ներկայացուցիչները ճիշտ են հասկացել՝ իրանի զորքը ինչպէս և հանուն ինչպէս պետք է կոմիզ²⁴:

Մալբումն, այսպիսով, փառառորեն արտահայտում է հայրենասիրության իր ըմբռնումը. պետք է սիրել և պաշտպանել հայրենիքը, բայց ոչ նրա նեխած հասարակարգը: Նա, միաժամանակ, կարծես նախազգում է, որ իշխող խավերի դավանանական բազարականությունը վերջիվերջու երկրը կդժի օտարերկրացիների ձեռքը, և որ ժողովուրդը հանուն հայրենիքի երրեք լի պաշտպանի իշխող խավերին:

Մալբումը համեմատության մեջ է զնում իրանի առկա վիճակը նրա պատմական անցյալի հետ և ցույց է տալիս այն նվաստացուցիչ վիճակը, որի մեջ զտանվում է իրանի ժողովուրդը:

«Աշխարհում քիչ պետություններ կան, — գրում է նա, — որ իրանի ներկա կառավարության շափ ստորացած և նվաստացած լինեն: Այս գրախոտ պետությունը, որը մի ժամանակ մարդկության պարեանքներից էր, մեր դարաշրջանում իր նախկին վեհությունից այնպես է իշել, որ նրա զեկավարները Զամշիդի թագավորական պալատը վերածել են անուղղի մեծ շուկայի՝ վաճառելով պետության պաշտոնները, շքանշաններն ու կոշումները: Նահանգապետությունները, զեսպանությունները և մինչխորությունները ժախսեցին ամեն տեսակ ապիկար մարդկանց, ժախսեցին զետերը, հանգերը, երկրամասերը և սահմանները, շատ ցածր գնով վաճառեցին ժողովորդի իրավունքները, երկրի առևտուրը և պետության անկախությունը»²⁵.

²⁴ Հայոց Հայութի օրենսդրություն:

²⁵ Հայութի օրենսդրություն:

Վերը բերված տռդիրում Մալքոմը փորձում է վերլուծել անցյալում հզոր և բարձր մշակույթ ունեցող երկրի հետամեջության պատճառները: Նա դրա հիմքում տեսնում է երկրում տիրող անիշխանությունը, դեկավարենքի հայրենադավությունը, ատորությունն ու կաշառակերությունը:

Թերթի էջերում Մալքոմը հատուկ ուշադրություն է դարձնում ռարեկրյա կոնցեսիաների հարցին, մերկացնում իշխող խավերի դավամանական քաղաքականությունը և լուսարանում Իրանի համար կոնցեսիաների կործանելը նշանակությունը:

Թերթի 6-րդ համարում Մալքոմը գրում է. «Չկա» արդյոք մեկը, որ հարցնի այս երիտասարդից (նկատի ունի Ամեն էս Սոլթանին—Հ. Ե.), թե ո՞ր օրենքով ես դու մեր պետության այս իրավունքները և արտոնությունները ժախում ռատար արկածախնդիրներին: Խոլամի առուրք օրենքի և բոլոր պետությունների օրենքների համաձայն այս միջոցները և առևտորական գործարքները մեր երկրի ժողովրդի օրինական սեփականությունն են: Դրանց մեր գոյության միջոցներն ու հիմքն են: Խոլամի առուրք և համարձակվում ռատարներին ժախել մուտումանների գոյամիջոցները: Արդյո՞ք Իրանի ժողովուրդը խսկապես մահացել է, որ դուք նրա ժառանգությունը անօրդինար էր հանդում»²⁶:

Այսպիսի հարցադրումից հետո թերթին իր կողմից պատասխանում է. «Ճարտարքի պարոն ռատարներկրացիները իրավունք ունեն մեզ անկճնդան համարել... Եթե այս երկրում մարդկանց մեջ կենդանի չղեր մեացած լինեն, ո՞ր պատվարժան վեցիրը կկարողանար այսպիսի ատոր և նենդ քեզ պարտադրել ժողովրդին և այսքան հանդում լինելը»²⁷:

Այս խոսքերը փաստորեն ժողովրդին կոչ են անում կառավարության դավանական քաղաքականության նկատմամբ անտարբեր շմերալ և ռաքի ելնել հանում իրենց իրավունքների:

Մալքոմը խստորեն բազոքում է նաև կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության դեմ: Թերթի 15-րդ համարում ապագրվել է Թեհրանից սատցված հետևյալ թղթակցությունը: Եթել մեծաժամանակ կալվածք ունեինք, բռնագրավեցին և ավերեցին: Խոչ կուտակած հարատարիւմ ունեինք, բոլորը հարկենքի կամ փեշքաշի կարգով կապացի հարվածով մեզանից վերցրին: Ինչքան խիզախ երիտասարդներ ունեինք, ռարան բանակ և Իրանը ավերելու գործիք դարձրին: Աֆղաններից պարագնեցին, անգլիացիներից պարտվեցին, ուստիների մատի

²⁶ Հ. Ճառանգության գոյությունը.

²⁷ Հ. Ճառանգությունը.

մեկ շարժումով ամբողջ Խորասանը և սրբավայրերը հանձնեցին. Այս ժողովրդի ապրուստի բոլոր միջոցները, ինչպես հանքերը, նաև ապահոված ները, վարուցանքն ու առևտություն, հեռագիրը, գործարանները, բուհորը օտարեներին ժախեցին²⁸:

Մալքոմը մեծ հագատով էր լցված դեպի ժողովուրդը, և նրա մեջ էր տեսնում այն հզոր ուժը, որն ընդունակ է փոխել երկրում ստեղծված դրությունը, վերջ դնել անօահմանափակ միապետությանն ու օտարերկրյա տիրապետությանը: «...Ժողովուրդն իր ապահովության միջոցները պետք է անպայման ինչք ձնոք բնիք, — գրում է նա»²⁹:

Հսկայական է եղել «Ղանում» թերթի դերը իրանական հասարակության զարթունքի դրժում:

«Ղանում» թերթը և նրա հրատարակիլը, — գրում է Մալքը զագնն, — պետք է ճանալվին որպես Իրանի առաջադիմության առաջնորդներ: Նրանց պետք է համարվին սահմանադրական շարժման առաջացման և Իրանի ժողովրդին ստրկության կապանքներից ազատագրելու կարևոր դրժուն: Իրանի սահմանադրության պատմությունն իր էջերում երախտապիտիքամբ և հարգանքով պետք է արձանագրի միրզա Մալքոմ խանի անունը և նրա երկերը»³⁰:

* * *

Իրանում կապիտալիստական երկրների ազեցության ուժեղացմանը էլ ավելի սրվեց գողագիտական պայքարը երկրի ներսում: Հատկապես լայն տարծում գտավ պանխուամիջմը, որը հանդիսանում էր ֆեոդալ-կալվածատիրական դասակարգի գաղափարախոսությունը: Պանխուամիջմի գաղափարախոսության հիմնական ուղղությունն այս էտապում պայքարի էր օտարերերյա կապիտալի դեմ: Բայց նա, միաժամանակ, հանդիս էր գայիս նաև իր զարք ապրած, սակայն զեռներ գոյացում ունեցող ֆեոդալական կարգերի պաշտպանի և, ընդհանրապես, նորագույն քաղաքակրթության, գիտության և մշակութի զարգացումը խանկարողի զերում:

Իռուելով պանխուամիստների հետապնդած նպատակների մասին, վ. ի. լենինը գրել է. Շնրանք փորձում են նվազուական և ամերիկյան իմպերիալիզմի դեմ ուղղված ազատագրական շարժումը միացնել խո-

²⁸ 7 آگسٹوس 10 نمره.

²⁹ 7 آگسٹوس 11 نمره.

³⁰ 1978 10 آگسٹوس 1978 صفحه 10.

ների, կալվառատերերի, մոլլաների և նմանների դիրքի ամրացման հետո⁴¹,

Մենք այստեղ կանդ կառնենք միայն պանխումիզմի օտարերկրյա տիրապետության գիմ մզած պայքարին:

Հենց սկզբից անըրաժեշտ է նշել, որ օտարերկրյա կապիտալի գիմ պանխումիստների պայքարը, չնայած արտաքնապես հրապուրի էր և դրագում էր լայն մասսաների, սակայն շեր տանում դեպի օտարերկրյա լծի վերջնական թոթափում:

Պանխումիզմի պլազմոր գաղափարախոռոք համարվում էր սեյն Զամալ էդ Դին Աֆղանին: Նա մոլեկուլարիզմի պայքարում էր իմպերիալիզմի գիմ և նշանակալի ազգացություն ուներ ժողովրդական գանգաձմների վրա:

Սեյեղ Զամալ էդ Դին Ասադարազի (Աֆղանի) կյանքին ու դորժունեալիյանը նվիրված ուսումնասիրություններ են գրել պարսկի, անգլիացի, ֆրանսիացի և բազմաթիվ այլ հեղինակներ: Սակայն պետք է ասել, որ այդ աշխատությունները հաճախ սուրյեկտիվ են և չափազանցություններով լի: Նրանք մեծ մասամբ զրչանցել են կարող և էական հարցերը, իսկ երկրորդական ու աննշան գիտական ընդդեմ կամ ուսունացրել: Հակառական են նաև նրան տրված զնահատականները: Խնձուս նշում է խան Մալիք Սասանին, Զամալ էդ Դինի կողմնակիցները նրան համարում էին Արևելի ամենախոշոր փիլիսոփան և հայրենասերը, իսկ հակառակորդները՝ վտանգավոր խռովարար⁴²:

«Սեյեղ Զամալ էդ Դին Աֆղանինի կյանքն ու հասարակական, քաղաքական փիլիսոփայությունը աշխատության հեղինակ Զահարդինին գրում է, որ Եգիպտասի ազատակաները Զամալ էդ Դինից խնդրեցին կազմել նզիպտոսի Ազգային ժողովի ընտրությունների կանոնադրությունը, որի հիման վրա ժողովուրդը կարողանար ընտրել իր ներկայացուցիչներին: Զամալ էդ Դինը, պատասխաններով այս առաջարկին, ասում է. ունդզային ժողովն այն ժամանակ կարող է իրենից իսկական ուժ ներկայացնել, եթե կազմված լինի ժողովրդի ոգին արտահայտող ներկայացուցիչներից: Փաշայի, ամիրի կամ օտար տերության միջոցով գումարված ազգային ժողովն անհմաստ կլինի և կենթարկիլի իր ստեղծողների կամքին... ազգային ամենամեծ իդեալը օտարների նիրաններից և ստրկությունից ազատվելին է»⁴³:

41. Ա. Ի. Անդրե, Օրդեր, 4. 21, էջ 171:

42. 181 հայուս 1920 թվական դուրս գայացար Թերան քայլար Հայաստանու պատմության մասին:

43. مرتضیٰ چهاردهی، زندگانی و فلسفه اجتماعی و سیاسی جمال الدین

آفغانی تهران ۱۳۷۴ صفحه ۲

Զամալ էդ Դինը որոշ ժամանակ շրջագայել է Հնդկաստանում, որտեղից և վտարվել է իշխանությունների մտավախության պատճառով։ Հնդկաստանում իր հերույթներից մեկում դիմելով Հնդիկ ժողովրդին, նատառում է. ութի գուրք հարյուր միլիոնավոր մածակներ դառնաք և կառավարության ականջին տղզաք, ապա ձայնը կհասնի նրանց զեկավար Անգլիայի պրեմիեր Գլամատոնի ականջը։ Ծըն գուրք՝ հարյուր միլիոնավոր Հնդկներ, միասնական լինեք, ամենակարող ասավածք ձեզ կրիս կդարձնի և գուրք Մեծ Բրիտանիայի կղզիներում կառւզվեք և Հնդկաստանում զլուկին՝ որպես ազատ մարդիկ⁴⁴։

Զամալ էդ Դինը, փաստորեն, ժողովրդին կոչ է անում միավորել ուժերը և պայքարի գուրու զալ ստարերկրյա գաղութարանների գնմ՝ Հկասկածելով այդ պայքարի հայողությանը։

Զամալ էդ Դինի համախոնները և աշակերտները հանդեռ էին զալիս Մերձավոր արևելքում իմպերիալիստական տերությունների քաղաքականությունը քննադատող հոգածածներով, որոնց թարգմանություններն ուղարկում էին նաև անգլիական թերթերին։ Այս հանգամանքը շվրիպեց Գլամատոնի ուշադրությունից և նա հանձնարարեց նգիպառուսում անգլիական զիյունավոր հյուսատուսին հսկողության տակ վերցնել Զամալ էդ Դինի գործունեությունը։ Դրանից հետո Զամալ էդ Դինը աբարդեց նաև նգիպառուսից։

Նա Փարիզում հրատարակում է ունութ ոչ ոսղաշ թերթը (լույս է տեսնել ընդամենը տասնութ համար), Այն տարածվում էր Աֆրակստանում, Հնդկաստանում, Թուրքիայում, Նգիպառուսում, Սուլանում, Իրաքում, Միջիայում, Հեղազում, Նմենում, Մարոկկոյում։ Ալժիրում և, որոշացրյուների վկայությամբ, մեծ հեղինակություն էր վայելում։

Այդ թերթում տպագրված հոգածներից մեկում Զամալ էդ Դինը գրում է. «Խոհապետ զարմանալին է, թե համաշխարհային խոշոր քաղաքագիտները ինչպիսի՝ վարդապետ ունեն, ինչ որոշումներ ճեն կայացնում ու ինչ եղանակացությունների հանգում, որ մարդկությանը դեպի ոչնչացում նն տանում։ Մերձավոր արևելքի խավարամիտ ժողովուրդները ... մի օր պետք է խորը քնից արթնանան և խլամի հզորության վերածննդի համար զրհարերություններ կատարենք»⁴⁵։ Որոշ աղբյուրներ վկայում են, որ երբ Սուլանում ապօտամբություն ծագեց, Սուլըրերին Զամալ էդ Դինին առաջարկեց Սուլանի թագավոր կարգվել, որպեսզի նեշի Մեծդիքի գլխավորած ապօտամբությունը, իրականացնի Անգլիայի նախատեսած բարձրիությունները։

⁴⁴ Տայն տեղում, էջ 14։

⁴⁵ Տայն տեղում, էջ 39։

Զամալ էդ Դինը այդ առաջարկը կտրականապես մերժեց, ասելով՝
«Եթե Բրիտանիան կողմնակից է բարեփոխումների և մտադիր է ինչ
գեղվ էլ լինի ժողովրդի բարեկեցության ուղղությամբ քայլերի դիմել,
ապա ավելի լազ է ուշադրություն դարձնի նույնդիայի վրա, որը ձեզ
ավելի մոռ է և ձեր ու իրանդացիների միջն ընդհանուր գծեր կան, մի
բան, որ բացակայում է ձեր և Եղիպտոսի, Սուսանի և Մերձավոր արծ-
վելքի մյուս երկրների միջև»⁴⁴:

1889 թ. Զամալ էդ Դինը նվրոպայից վերադառնում է Իրան, և այն-
տեղ լայն գործունեություն ժամալում՝ նա ոչ միայն, ինչպես առաջին
ճամփորդության ժամանակ, ժողովրդին քարոզում է դեմ դուրս գալ
բռնապետությանց և աահմանադրություն հաստատել, այլև մուսուլման-
ներին կոչ է անում միասնական պայքարի ելնել ընդդեմ նվրոպացիների։
Պատահական չէ, որ նրան շուտով արտաքրօն են նաև Իրանից։

Զամարդանին զրում է, որ Զամալ էդ Դինի բաղաքական պայքարի
նպատակն էր արթեացնել և ուղի հանել Արևելքի ժողովուրդներին, որ-
պեսզի նրանք զգան արևմտյան պետությունների կողմից սպառնացող
զարանդը, զգաստանան և իրենց իշխանությունները աահմանադրական
հիմքի վրա կառուցնեն⁴⁵։

Զամալ էդ Դինի բաղաքական հայացքները պարզաբանելու համար
կարելի է բերել նաև նրա հնտեյալ տեսակետները։

Արևելքի երկրների զաղութացման պատճառը Զամալ էդ Դինը հա-
մարում էր այդ երկրների հսկայական հարստությունները և նրանց աշ-
խարհագրական կարևոր դիրքը։ Նո գտնում էր, որ արևելքիների
պարագն է օտարերկրացիներին հասկացնել տալ, որ այդ երկրներում
ձեռք բնրգած հարստությունն ու բարիքը պետք է հենց այդ երկրներում
գլուխացրեցնեն⁴⁶։

Զամալ էդ Դինը հնդիկ տարբեր խավերին (Հոգնորականնե-
րին, առևտրականներին և նույնիսկ Հողագործներին) կոչ էր անում
միավորվել և համատեղ միջոցներ ձեռնարկել՝ բարձրագույն ու տար-
րական դպրոցներում ուսուցումը հնդիկներին լեզվով անցկացնելու համար։

Պատասխաննելով նրանց, ովքեր արդարացնում էին Հնդկաստա-
նում անգերենն լեզվի տարածումը, պատճառարաննելով այն գիտության
տարբեր բնագավառներում անդլիքացիների խռովը ներգրումով, անգե-
րեն լեզվով հարուստ գրականության առկայությամբ, ինչպես նաև Հընդ-

⁴⁴ Խույն անդում, էջ 40,

⁴⁵ Խույն անդում, էջ 51,

⁴⁶ Խույն անդում, էջ 123.

կաստանին երկար տարիներ տիրապետող Անգլիային ընդհանրապես ենթարկվելու անհրաժեշտությամբ, Համալ էդ Դինը զրում է, ունրայոք Շնդիկներին սազակա՞ն է, որ տարերկյոյ գերիշխողներից օգտաներ ստանալու համար իրենց ժագումը մռուանան, գոյության երաշխիքներից հրաժարվեն, դիտությունն ու լուսավորությունն սառուցաննեն հաղթող ազգի լեզվով, այդ լեզուն գերազանցն աղջային լեզվից և օգտագործեն նրա գործարձն⁴².

Անգլագանձակավ աշխարհի վերաբաժանման համար իմպերիալիստական պետությունների միջև մղվող պայքարին և, մասնավորապես, Շնդիկաստանում Անգլիայի գերիշխանությանը, Համալ էդ Դինը, այսուամենայիվ, համոզմումք է հայտնում, որ անգլիացիներին չի հաջողվի Շնդիկաստանը սեփականացնելու ուղղիկների ու անգլիացիների միջև բարեկամական հարաբերություններ կհաստատվեն միայն այն ժամանակ, — զրում է նա, — երբ Շնդիկները կդառնա երկրի պաշտօնական լեզուն, դադութարարների արտօնությունները կփրացվեն, Շնդիկներն իրավունքներ կստանան, իներկայացվեն պառլամենտում, երկրում կտարածվի պետությունն ու լուսավորությունը, դպրոցներում ուսուցումը կիրականացվի մարդնի լեզվով, արդյունաբերության և գյուղանոտեռության համար բարեխագույն դպրոցներ կհիմնվեն, կարճ ասած, անգլիացիները Շնդիկներին այն աշխատ կնային, ինչ իրենց են նայում և բոլոր տարրերությունները և արտօնությունները կվերացվեն⁴³.

Մեկ այլ հոդվածում զայրություն հիշատակելով տարերկյա աղջեցության ուժեղացման հանգամանքը և թվարկելով օտար տերությունների կողմից զավթված մուտքմանական երկրները, Համալ էդ Դինը նշում է, որ վտանգ է սպառնում նաև զենք որևէ պետության ենթակայության տակ շգտնվող մուտքմանական փորբաթիվ երկրների անկախությանը: Մասնավորապես իրանում օտարերկյա ներթափանցման աստիճանացման մեջ Համալ էդ Դինը մեղադրում էր նասր էդ Դին շահին, որը ոչ միայն չէր պայքարում օտար տերությունների ունենալությունների դեմ, այլև նպաստում էր նրանց բաղարականության իրականացմանը:

«Զիա ու խաֆեղին թերթում 1891 թ. Համալ էդ Դինը հրապարակում է շիա զեկավար հոգևորականներին ուղարկած մի նամակ, որով պահեցում է նասր էդ Դին շահի գահընկեցությունը⁴⁴:

مرتضى مدرسی چهاردهی، آراء و معتقدات سید جمال الدين الفقاني

تهران ۱۳۷۷ صفحه ۱۶

⁴² Խոր անդամ, էջ 149—150.

⁴³ خان ملک ساسانی، سیاستگران دوره قاجار تهران ۱۹۱۰ հաւաք ۱۴۲

1892 پ. مارتاپ 1-ին հրապարակված մի այլ հոդվածում Զամալ էդ Դինը բարձր հոգևորականությանց կրկին կոչ է անում գալքնեց անել շահնին: Նա մատնանշում է, որ շահնը հոգևորականության իրավունք-ներն ու ազգայինությունը աստիճանաբար աահմանափակելու, ինչպես նաև ժողովրդին հարստանաբերելու և ստրկացնելու միջոցով կարողացավ ապահովել իր միանեթան իշխանությունը: Երկրում տիրոջ այդ պիճակը, միաժամանակ, Շահապորություն ովկեց եզրոպացիներին, առանց դիմադրության հանդիպելու, ներթափանցել իրան և հաստատել իրենց տիրապետությունը:

Զամալ էդ Դինը զգուշացնում է հոգևորականությանը, որ եթե նրանք շշտապեն շահնի գահընկեց անել, ապա այլևս ուշ կլինի զրությունը փրկել⁵¹:

Զամալ էդ Դինը գտնում էր, որ մինչև ժողովուրդները, հատկապես մուսուլմանները, բռնության և ստրկության շղթաները չփշրն և ժողովրդական իշխանություն շնչառատեն, որւր շնեն գա վերելքի ու գարգացման ուղին և շնեն ազատագրվի օտարերկրյա ազգեցությունից⁵²:

Զահարդեհին, անդրադառնալով Զամալ էդ Դինի տեսակետներին, հատկապես նշում է, որ նա մուսուլմանական աշխարհի փրկության միակ ուղին տեսնում էր մուսուլմանական ժողովուրդների միանության և գաղութակալության մեջնայտություններն ու դիտավորությունները միացյալ ուժերով կասեցնելու մեջ⁵³:

Զամալ էդ Դինի՝ Զահարդեհի գրքում մեշքերված որոշ դատողությունները վկայում են, որ նա լի հավատում օտարերկրյա նվաճողների մարդկային խոզին կամ նրանց համազելու հնարավորությանը, այլ զիմում է ժողովուրդներին ու պահանջում, որ նրանք սորի ելնեն ու ըստի ուժով թրթափեն օտարերկրացիների լուսն:

Սեյեզ Զամալ էդ Դինի հակամաքերիալիստական գործունեության մասին հետաքրքիր փաստեր է հազորդում նաև Շիրանցիների զարթունքի պատմությունը աշխատության հեղինակ նազեմ ոլ Էսլամ Թերմանին: Նա գրում է, որ Զամալ էդ Դինի գործունեությունը շեր աահմանափակվում իրանով, որ նա ակտիվորեն միշամառում էր նաև միշազգային քաղաքական կյանքին: Նրբ անդիմացիները սկսուացրին նզիպտուր

⁵¹ Խոյի տեղում, էջ 24–25.

مهدي منكتزاده، تاريخ انقلاب مشروطيت ايران تهران ۱۳۷۸ صفحه ۲۴۷
مرتضى، مدرسی چهاردهی، آراء و معتقدات سیدجمال الدین افغانی ^{۵۲}
تهران ۱۳۷۷ صفحه ۲۸

և ոչնչացրին նրա անկախությունը, ֆամալ էդ Դինը հանդես եկավ որպես ծգիպառոսի անկախության պաշտպան: Նու մեծ ատելություն էր տաժում անգիտացիների նկատմամբ, բուռն պայքար էր ծավալել նրանց դեմ և անդւերեն լեզվով մերկացնող հոդվածներ էր տպապատմ թերթերում²⁵:

«Այ Մանարը թերթի խմբագիր սեյեղ Մոհամադ Ռաշիդը հրապարակել է Ջամալ էդ Դինի գրչին պատկանող երեք արժեքավոր փառատիղթեր, որոնք ցույց են տալիս, թե որքան մեծ է եղել նրա ազդեցությունը Իրանում տեղի ունեցած իրադարձությունների վրա: Առաջին նամակը ուղղված է Սամարայի գլխավոր մոշթահեղներից Հաջ միրզա Հասան Շիրազիին, որով նա պահանջում էր ժխախոտի կոնցեսիայի դեմ միջոցներ ձեռնարկել և ժողովրդական կամ ազգային կուսակցությանը միանալ:

1891 թ. գլխավոր մոշթահեղին գրած այս նամակում Ջամալ էդ Դինը անդրադառնում է ճրկում տիրող վիճակին, հատկապես շեշտելով Իրանի ժողովրդական զանգվածների դրվությունն ու զայրությը իրենց հայրենիքը ստրկացնող այդ նոր գործարքի կապակցությամբ: Նա, այնուհետև, գառապարում է շահին, որն Իրանի թշնամիներին է զանառել նրա նկամուաները՝ Հանքերը, Հանապարհները, արգելները, զայտերը... ժխախոտը և նրա ցանքերը..., օտարերկրացիներին է հանձնել նաև քանկը, որը նշանակում է կառավարության զեկը տալ ուրիշներին, և ժողովրդին ստրկացնել...»:

Անգրադառնալով 1889 թ. Դոլգուուկիին տրված կոնցեսիային, Ջամալ էդ Դինը նշում է, որ դրանով Ռուսաստանին տրվեց այն ամենը, ինչ մնացել էր երկրից: «Կարբ ասած, — գրում է նա, — ուստի առաջործները Իրանի նահանգները անուրդի են դեռ մեծ պետությունների միջև, այն էլ այդպիսի լնյին գումարի գիմացաւ:

Այսուհետև Ջամալ էդ Դինը կու է անում մոշթահեղին՝ ղեկավարել օտարերկրացիների դեմ ժողովրդական պայքարը²⁶:

Ջամալ էդ Դինի ջանքերը զոր շանցան: Ամենայն հավանականությամբ նրա այդ նամակը մեծ գեր խազաց մոշթահեղի կողմից ֆեթվայի հրապարակման գործում, որով մինչև ժխախոտի կոնցեսիայի թեկանումը ժխախոտի գործաժությունը հայտարարվեց օրենքից դուրս: Եվ, ի

²⁵ ՅԱ Առաջ Բիմար Ջութան Մայլ Օվ Թերան Համական:

²⁶ E. Browne, The Persian Revolution of 1905–1909, Cambridge, 1910, p. 2.

վերը, նայու էդ Դին շահը, Ամին էս Սոլթանը, օտար պետությանները
և ծխախոսի կոնցեսիալի տերերը ստիպված եղան տեղի տալ:

Սեյսդ Ջամալ էդ Դինը, անկասկած, XIX դարի Իրանի խոշոր գոր-
ծիչներից է, որի աշխարհայացքն ու գործունեությունը շատ բարգ է և
հակառակն է:

Г. М. ЕГАНЯН

БОРЬБА ИРАНСКИХ ПРОСВЕТИТЕЛЕЙ ПРОТИВ КОЛОНИАЛЬНОЙ ПОЛИТИКИ ИНОСТРАННОГО ИМПЕРИАЛИЗМА

Резюме

Просветительское движение в Иране особенно большой раз-
мах получило во второй половине XIX в. Безусловно, это явле-
ние имело свои особенности, обусловленные характером полити-
ко-экономической жизни страны.

Общественно-политическая деятельность просветителей своим
острием была направлена также против колониальной политики
империалистических стран в Иране и господствующих слоев, ко-
торые своей деятельностью всячески способствовали осуществле-
нию этой политики.

Наиболее видные представители просветительского движе-
ния—Талибов, Зейн оль-Абедин Мараги, Малек оль-Мотакале-
мин, Мирза-Мальком хан и др. В статье подробно освещаются
антимпериалистические идеи просветителей и прослеживается
процесс их борьбы против колониальной политики империалисти-
ческих стран.

Հ. 1. ՓԱՇԽԱՅԱՅՆ

ԲԱՐԻՒՄԵՐԻ ԱՊՍԱՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ

XIX դ. առաջին կեսին Իրանը սոցիալ-տնտեսական խոր ճգնաժամ էր ապրում: Քաղաքական տնտեսակետից այդ ճգնաժամն արտահայտվում էր ստարերկրյա պետություններից և, ամենից առաջ, Անգլիայից ու ցարական Ռուսաստանից նրա կախյալ վիճակով:

XIX դ. երկրորդ քառորդից սկսած Իրանի տնտեսական կյանքում տեղի են ունենում մեծ փոփոխություններ: 1801 թ. Անգլիայի և Իրանի միջև կնքված քաղաքական ու տնտեսական պայմանագրի համաձայն անգլիական ու Շնդկական առևտրականներին իրավունք էր վերապահում ազատ բնակություն հաստատել Իրանի հարավային բոլոր նավահանգիստներում և առանց մարսի Իրան ներմուծել անգլիական արդյունաբերական ապրանքներ:

Երկրի տնտեսության համար ոչ պակաս կործանարար էին նաև ռուս-իրանական ճրկու պատերազմները, որոնք ի հայտ բերեցին Իրանի հասարակարգի ուղղ սնանկությունը: 1828 թ. կնքված Ռուսական հաշտության պայմանագրի համաձայն Իրանը Ռուսաստանին պետք է վճարեր մոտ 20 միլիոն ռուբ ռուբրի ռազմատուպանք, որը, բնականաբար, պետք է իրականացվեր ժողովրդի կենքքումն ուժեղացնելու, նրա վրա արտակարգ հարկեր և այլ գանձումներ նշանակելու միջոցով: Մյուս կողմից, պատերազմում արագ հաղթանակը պուսական առևտրական կապիտալի համար լավ գոներ էր բացում իրանական շոկայում:

Անիրավահաջախար պայմանագրերը, ինչպես նաև կապիտալյացիոն իրավումների հաստատումն Իրանում բարենպաստ պայմաններ ստեղծեցին ստարերկրյա կապիտալի ներթափանցման համար, որի հետեւ ճրկումը, գիւղատորեն, վերածվեց արևմտաեվրոպական ճրկումների վաճառահանման շուկայի:

Շնդպակվելով համաշխարհային շուկայի ոլորտը, Իրանն ընդարձակեց իր արտահանումներն ու ներմուծումները: Մակայն դա կրում էր

զադութային առմտրի բնույթի, քանի որ ներմուծումը մի քանի անգամ ավելի էր արտահանումից և դրա հետևանքով քայլայվում էին երկրի արհեստաները։ Այս ամենը բացասարար անդրադառնալով Իրանի սոցիալ-քաղաքական դրույթին վրա, խոշընդուռում էր նրա զարգացումը։

Խնչպիս գրում է իրանցի պատմաբան Ս. Մալեքզադին, ժիրանի ժողովուրդը չէր կարողանում իր բնական ու հանրային հարստություններից օգտվել և ստիպված էր օտար երկրներից ներմուծել այն ամենը, ինչ ինքն ուներ։ Օտար պետություններից ազահության ու բանության հետեւանքով Իրանի ժողովուրդը նստած էր իր երկրի ընդերքում թաքնված գունեների վրա և մահանում էր սովորցաւ։¹

Օտարերկրյա հրապառուսները շարաշահելով իրենց արտոնյալ իրավունքները, միջամտում էին երկրի ներքին գործերին։ Հաճախ նրանց առաջարկով և պահանջով նշանակվում կամ հեռացվում էին նահանգապետներ կամ այլ պաշտոնյաններ։ Այդպիսով, Իրանի կենտրոնական կառավարությունը հեղինակազրկում էր և գրեթե կորցնում իր իշխանությունը գավառներում։ Թուվոր ցեղերը մայրուղիներում թալանում էին նախապարհորդներին, կողովուրում քարավանները։ Սգովելով երկրում տիրող քառոսային վիճակից, շահի պինակուները նույնպես զրադվում էին կողովուրում։ Դյուոդի բնակիչները նկատելով զինվորների մուտքաւոր գալուստը, հազարում էին իրենց ումեցվածքը և դիմում փախուստի։

Նման զինակում էին նաև երկրի առանձին կալվածատերներ և առևտրականներ, որոնք շումնեին անձի և ումեցվածքի ազահություն։

Երկրի բարձրաստիճան հոգևորականությունը և հոգևոր գատարանների միջոցով, քաղաքացիական գործերը ժկարգավորելու պատճենակով կողովուրում էր ժողովրդին։ Այսպիսով, XIX դ. երկրորդ կեսին Հակայական շափերը ընդումած կամայականությունն ու թալանը երկիրը հասցրել էին քայլայման եղրին։

XIX դ. կեսերին Իրանում ժայռ առան գյուղացիական մի շարք շարժումներ, որոնք անմիջականորեն ուղղված էին ինչպես ներքին շահագործողների, այնպես էլ օտարերկրյա գաղութարարների գեմ։

Ապատամբությունները, որ տեղի էին ումենում Իրանի տարրեր վայրերում, արդեն 40-ական թվականների վերջերին բռնկվեցին նոր ուժով՝ ընդդրությով նորանոր շրջաններ։ Զանգանում 1847 թ. աղբյուրները նշում են այդպիսի մի ապատամբություն։ Այդ խոռվության անմիջական պատ-

¹ مهدی منکزاده، تاریخ اقلیات مشروطیت ایران، تهران، ۱۳۸۰، ص ۶۱

Հառող Զանշանի հարեմ Աշբաթ խանի կամայականություններն էին, որի դեմ սուրբ ելած քաղաքի չքավոր խավը հարձակվում է քաղաքապետի տան վրա և ավերում այն²:

Նման խռովությունների ու հակաֆեռդալական պողոթկումների բազմաթիվ վկայություններ կան իրանական և ծովոպական սկզբնաղբյուրներում, որոնք ապացուցում են, որ ժողովրդական շարժումները ավելի ու ավելի մեծ չափեր ընդունելով, ամենուրեք հոգ էին նախապատրաստում համաժողովրդական խռովության համար:

Այդ կապակցությամբ հետաքրքրիր է Թավրիզում ուստական գլխավոր հյուպատոս Ն. Ա. Անիշիկովի 1850 թ. գիտարկությամբ Թավրիզի շրջակա գյուղերի գյուղացիական խռովությունների վերաբերյալ:

Եօրեկ Թավրիզում խռովություն էր բռնկվել, որը մասամբ շարունակվում է և այսօր։ Զերիսթար բնակավայրի բերքը մորեխների ներխումման հետևանեցով ոչնչացել է։ Բնակիչները 45 վերաս հեռավորությունից եկել և խնդրել էին, որպեսզի այս տարի զիջում կատարվի նրանցից գանձվող հարկի ընդհանուր գումարում։ Սկզբում նրանց զիմեցին բարձր հոգևորականությանը, իսկ հետո ինձ՝ խնդրելով իմ միջնորդությունը սանձելու այն գինվորների գործողությունները, որոնց ուղարկված լինելով հարկանավագի և տեղական իշխանությունների ուժեղացման համար տեղի էին տալիս սանձարձակությունների ու կամայականությունների, առևանգում էին նրանց կանանց Թաղաքում անգորդը պաշտպանելու նպատակով ևս շնրամարգնեցի նրանց բողոքը հասցնել իշխանություններին, առեկայն իմ միջնորդությունը նրանց շրավարարեց։ Թավրիզի վեղիբը առավել երկյուղ է կրում զիջում կատարել Զերիսթարի բնակչությանը, որովհետև ներկայումս նման վիճակում է Աղրբենշանի շրջանների մի մասը։ Մորեխը լրիվ ոչնչացել է Ուրմիայի, Խոյի և Սալմաստի հացահատիկներ, ուստի որևէ բնակավայրում հարկերի զիջումը Թավրիզի իշխանություններին կհարկադրի այդ վայրերում նույնպես զիջումներ անելու³։

XIX դ. առաջին կեսին նրանում ծավալված ապստամբություններից ամենակարևորը և նշանակալիցը 1848—1851 թթ. բարիական ապստամբությունն է։

Նրանի անտեսական խոր անկման պատճառով քայլայված հազարավոր արշեստավորներ, տնայնազործներ, մանր և միջին առևտու-

¹ كتاب نعلة الكاف في تاریخ جاییه، ص ۲۰.

² АВПР, Фонд Канцелярия, д. 1, լ. 4—5.

հանեկը Հանգիսացան դժոյ՛ զանգվածների Համընդհանուր շարժիչ ուժը: Մուսուլմանական ցածրաստիճան հոգնորականությունը ևս, Հակառակ Հոգնորական բարձր խավի՝ մոշիահնեղների, ամենուրեք ներդրությաց նրկուում ժագալիսդ շարժումների մեջ, Յաժբաստիճան հոգնորականության Հակաֆեռդալական տրամադրությունների ակումբը պետք է փետրուն նրա սոցիալական ժագալան մեջ: Խանի որ այդ խավը իր սոցիալական դրությամբ չէր տարբերվուած ժողովրդական զանգվածներից: Նրա ներկայացուցիչները ևս գոյությունը պահպանելու համար զբաղմում էին Հողագործությամբ, մանր առներով և արհեստով:

Ինչպես և այլ կրօններում, այնպես էլ մահմեդականության մեջ կրօնական աղանդները սոցիալական Հակասությունների արդյումք էին: Պատահական չէ, որ աղանդավորական շարժումները տեղի են ունենում սոցիալ-տնտեսական սուր ցնցումների և նզնաժամների ժամանակի: Վ. Ի. Լենինը գրում է, որ «...կրօնական կեղնի տակ քաղաքական բողոքի հանդիս գալը մի երնությ է, որը զարգացման որոշ աստիճանի վրա հառուկ է բոլոր ժողովուրդաներին...»⁴:

Բարիսական շարժումը, որը ծավալվեց XIX դ. 40-ական թվականներին, անծց և զարգացավ նրկուում առաջացած սոցիալ-տնտեսական սուր նվաճամի հետեանքով, դառնալով անցյալ դարում Իրանի ամենախոշոր շարժումներից մենքը: Այդ շարժմանը մասնակցում էին գյուղացիությունը, քաղաքային շքավոր խավի՝ արհեստավորների, մանր առարականների ու ստորին հոգնորականության մի մասը, որի շնորհիվ այն ստացավ Հակաֆեռդալական և Հակագաղությային կորեղ բնույթ:

Այդ ժամանակաշրջանի գասակարգային գոտեմարտերը կանխորոշեցին Իրանի հետագա պատմության զարգացման ուղին, ընդհանուր մինչև 1905—1911 թթ. բռնքուա-սահմանադրական հեղափոխությունը:

Հատ շիաների գավանության, նրանց տառներկուերորդ էմամը (փրկիչ Մեհդին) սանհայտացելը է IX դ. վերջին: Շիաների ուսմունքի համաձայն Մեհդիի գալուատը պետք է անարգարությամբ և լարությամբ նեղեղված երկրում հաստատեր արդարություն և նշմարտություն: Բացի այդ, նա պետք է մաքրագործեր խլամը: Վերջին հազարամյակում մուսուլմանական աշխարհում արդին ի Հայր էին եկել առանձին անհատներ, որոնք «Մեհդի» իրենց հուակելով, Հակապետական ծավալում պայքար էին մղում իշխանությունների դեմ⁵:

⁴ Ա. Ի. Անդրեասյան, Տրկեց, հ. 4, էջ 228:

⁵ جزرسی و محکمه در تاریخ مقاومت و احکام، چاپ و جهاد، تهران، ۱۹۵۰، جلد ۲، اول، ص ۲:

Եռառք սեյնդ Ալի Մոհամմադի համբավը տարածվեց որպես Քարար, նրա հիշյալ աշխատությունները պյուղագանդվեցին նրա աշակերտների կողմից և ամենուրեք սկսեցին խոսել Մեհղիի մոտալուս գալուստյան մասին:

1844 թ. վերջներին Բարին իր մերձավոր հետնորդների՝ բարֆրուչեցի Հաջի Մօհամմադ Ալիի (որը հետազայտմ գարեավ Մաղանդարանի ապրուտաժրաբյան առաջնորդը) և Հաջի Սոլեկման խանի հետ ուխտագնացություն է կատարում Մարքի, իսկ մեկ տարի անց՝ վերադառնում Բանգար-Բուշեն:

Նահանգապետ Հոսեյն խանի կարգադրությամբ Բանզար Բուշենը բարը ձերբակալվում է և տեղափոխվում Երրաջ, Սկզբում նա տնային կալանքի տակ է պահվում իր մորթորայր Հաջի Սեյջի տանը, սակայն կարողանում է կապ պահպանել Համախոնների հետ: Հակառակորդներեւոդ մասին իմանալով, Հարժակվում են Բարի տան վրա ու ավերում են այն, որից հետո նրան տեղափոխում են քաղաքապետ Արդու Համիդ խանի տունը¹²:

Այդ Հալածանքներն ազելի են գրգռում Բարի հետնորդներին, որոնք ավելի համարձակութեան սկսեցին քարոզել նրա վարդապետությունը:

Տահական իշխանությունների և շիա բարձր հոգևորականության պահանջով, մոշթահեղենների և Բարի միջն կազմակերպվում է Հրապառակային բանագիտ, որը տեղի է ունենում 1848 թ. սեպտեմբերին: Բանագիտներին իշխանությունների կողմից ներկա էր Բարի հետազա համախոհ սեյնդ Ցահյա Դարարին: Բանագիտները ավարտվում է նրանով, որ Բարին համարում են խննդ և նիպոտահարում: Խման հանդիպումների և բանագիտների շնորհիվ սեյնդ Ցահյան դառնում է Բարի ամենանվիրված հետնորդներից մեկը¹³:

Սպահանի նահանգապետ Մանուկենը խանը, որն անձամբ համակրում էր Բարին, մտադրվում է մի ժողով հրավիրել, որտեղ շիա հոգևոր բարձր խաջը և Բարը պետք է քննարկեին մինելի Հարցերը: Սակայն, ինչպես վկայում են ազդյուրները, մոշթահեղենների Հրաժարման պատճեռով այդ բանագիտը տեղի չի ունենում¹⁴ և նրանց պահանջով էմամ Ջումին¹⁵ Բարին հեռացնում է իր տնից:

12 كتاب نقطته الكاف، ج 112

13 مقالة شخى سیماج، ج 1.

14 كتاب نقطته الكاف، ج 118

15 Քաղաքի զինավոր հոգերը գնմաց, որն ուրբաթ օրերին մշկիթում աշոթ է կատարում:

Մանուկեհնը իսանը Բարին տեղափոխում է իր տուն և, նույնիսկ, նամակ է գրում շահին, խնդրելով շնորապետել Բարին¹⁴,

1847 թ. փետրվարին Մանուկեհնը իսանից հետո մայրաքաղաքից կարգադրություն է ստացվում, Բարին Հսկողության տակ վերջնելու և Թեհրան ուղարկելու մասին։ Սակայն շուտով որոշվում է Բարին անմիջապես տեղափոխել Մարտի ամրոցը։

Այդ ժամանակ, արդեն, Բարի հետևորդների քանթերով նրա վարդապետությունը և քարոզները մեծ տարածում էին գտնել ամբողջ երկրում։ Անախորժություններից խոսափելու համար իշխանությունները կարգադրում են նրան զարտուցի հանապարհով հացնել Մարտու Ամձնակից, որտեղից անցնում էր Բարը, ժողովուրդն արժանավայր էր դիմավորում նրան։ Օրինակ, Զանցանի քաղաքապետը, ժողովրդական շարժումից վախճառաւով, Բարի պահակներին կարգադրում է նրան անմիջապես հեռացնել քաղաքի արվարձաններից, որտեղ նրանք որոշել էին իշխանել¹⁵։

Խշագետ վկարում են սկզբնաղբյուրները, եղել են դիպլոմատ, երր ամբողջ գյուղների բնակիչները դարձել են բարիններ¹⁶։

Բարի աքսոր տանող երթուղու վրա գտնվող քաղաքների և պյուղերի բնակչության մեծ մասը դառնում են նրա ուսմունքի համակիրներ։

Իշխանությունների կարգադրությամբ, Մարզում Բարը պետք է բանտարկվեր սարի գագաթին գտնվող բերդում։ Սակայն այդ միջնորդ էլ իշխանությունները լկարողացան լրիդ մեկուսացնել Բարին և նա շարումակում էր կապ պահպանել իր համախորհների հետ։ 1847 թ. այդ աքսորավայրում Բարը գրեց գնայան (Ճայտնություն) աշխատությունը, որը հանդիսանում է բարիական ադանդի սուրբ պիրքը և, ըստ Բարի, պետք է փոխարինեն Պորանին։

Իրանի և Ռուսաստանի սահմանագետում Բարի լայն ժողովրդականությունը սարսափ է առաջացնում ցարական իշխանությունների մեջ Ռուսական դիսպան Դոլգորուկին Իրանի կառավարությունից պահանջում է Բարին տեղափոխել երկրի խորթերը¹⁷։

1848 թ. սկզբներին հաջի Աղասիի կարգադրությամբ Բարին տեղափոխում են Ռուսիայից ոչ հեռու Ջեհրիդ ամրոցը, ապա հետաքրնեսության համար՝ Բավրիզ։

¹⁴ Tarikh-i-Jasid, p. 402.

¹⁵ 177 «كتاب نقطته الكاف»، ص

¹⁶ նույն տեղամաս

¹⁷ АВПР, Фонд. Канцелярия, д. № 178, л. 360.

Թագրիզի դատավարության ժամանակ Բարին իրեն հռչակում է շիական առանձին կումբուրդ էմամ:

Դատավարաթյունը տևում է երկու օր, որից հետո Բարին կրկին տեղափոխում են Ջենրիդ ամրոցը¹⁸:

Իրանական իշխանությունները վախճեալով բարիականության տարածման հետանըքներից, 1850 թ. կհսերին Բարին տեղափոխում են Թագրիզ և զնդականարում:

Խչ դրույթներ է առաջադրում Բարի ուսմունքը: Դրանք շարագրված են հատկապես նրա «Բայան» գրքում: Այստեղ նա հայտարարում է, որ Նորանի օրենքները հնացել են և պետք է փոխարինվեն նոր օրենքներով:

Իր ուսմունքի տարածման համար Բարը ստեղծում է յուրահատուկ մի միություն, որը կոչում էր «Միասնություն»: Նրա մերձավոր աշակերտներից 19-ը մտնում էին այդ միության մեջ:

Բարից հետո միության նաևալված անզամներից էին Մոհամմադ Ալի բարի բրուժեցին, մոլլա Հոսեյն Բուշրույին, միրզա Յանշան, որը հետապոյտ կերանվանքնեց Սորեն Ազարի: Այդ միության մեջ մտնում էին նաև կին քանաստեղ Ղորրաթ ոլ Ալիը, Բահա օլլանց, Ջանջանի ապրատամրության առաջնորդ Մոլլա Մոհամմադ Ալին և ուրիշներ:

Բարին իր կրօնական ուսմունքի մեջ նոր, արտակարգ դրույթներ չի առաջարկել: Նրա ուսմունքի գրիթե բոլոր դրույթները փոխառված են մինչ այդ հայունի կրօնական ուսմունքից, հատկապես շելյաներից: Մեր կարծիքով, ամենակարեւը գործոնը, որը նպաստեց նրա ուսմունքի տարածմանը, իրանի վյուղացիության, արհեստավորների և ցածրաստիճանի հոգնորականության սոցիալական ծայրանեզ քնչազրկությամն էր: Բարիզմը հանդիս էր զայթ ընդդեմ ֆեռդայական կարգերի և առաջարկում էր վերանայել Ղորանը: Նա պահանջում էր երկրից վտարել ու բարիներին, որպեսզի իրենք կարողանան օգտվել աշխարհի բարիներից և ապրել եղբայրաբար:

Բարի վարդապետությունը արտացոլում էր Իրանի ժողովրդի տարբեր զանգվածների իդաբը:

18 Անզան կորում ենք «Անուզում» ուսմունքունիքություն Բարի և Բայանի զայդաների և կրօնական կարգագերաց պրում, Բարը Թալյիբը դատավարության ժամանակ իր ձևուրդը և սուրբապությամբ պրում է մեղայացիր, որը դրանցված է և գրնազմական և իրանական Մելլիսէ արիքաւում: Տե՛ս ց Հայոց ց Ճայա ց Շահա ց Շահում առաջնորդների և առաջնորդական մասնակիւնների աշխատ Նրան նուժացնելու նպատակը:

Մարդկային հասարակության դարձացման վերաբերյալ բարի կղզն առաջ էր քաշում հետևյալ դրույթը. դարաշրջանները մարդկության գոյության մշտապես զարգացող և կատարելազործվող փուլերն են: Թաելի որ հաջորդող դարաշրջանը գերազանցում է նախորդին, ապա իր զարք ապրած հասարակական կարգերը և օրենքները, դրանց հետ միասին նաև տվյալ դարաշրջանի մարդարներն ու իրենց սուրբ դրեհը, կորցնում են արժեքը և փոխարինվում ավելի առաջադեմ մարդարներով ու սուրբ գրքերով:

Սակայն, ըստ Բարի, մարդիկ անկարող են ինքնուրույն, առանց աստծու օգնության, այնպիսի օրենքներ ու կարգեր սահմանել, որոնք իսկությամբ համապատասխանեին նրանց զարգացման մակարդակին: Դա կատարվում է մարդարների միջոցով, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է աստեղ էության արտացոլման միջոց:

Այսպիսով, համաձայն Բարի վարդապետության, յուրաքանչյուր դարաշրջան ունեցել է իր մարդարն, որի միջոցով մարդկությանն է հասել աստվածային կամքը:

ԵԱՅԺԸ ՄՈՇԱՄՄԱԴԻ ԳԱԼՈՒՄԻՑ անցել է ավելի քան հազար տարի, — գրում է Բարը, — և մարդկային հասարակության զարգացման ուղին բավականաշի առաջ է անցել: Ղորանի օրենքները հնացել են և այլևս չեն բավարարում ժամանակի պահանջները: Խշանությունը դանդում է մողթահեղների և նահանգապետերի ձեռքում, որոնք երբեկցի հոգ չեն տանում ժողովրդի բարեկեցության մասին նրանք պահպանում են միայն կրոնական օրենքների ձեռկան կողմէ և դրա միջոցով հարստություն դիզում²⁸:

Բարիզմի սոցիալական բնույթը իր արտահայտությունն է գտնել Բարի պատվիրաններում: Իր ԵԲԱՐԱՆ աշխատության Յ-րդ գլխի 7-րդ ենթագլխում նա գրում է բոլոր պարագերը մարելու անհրաժեշտության մասին: Խսկ Ց-րդ գլխի 10-րդ ճնշագլխի 5-րդ մասում առ ու ժախը թուլլատրելի է համարում բոլորի՝ անգամ անշափահասների ու գնդաժգերիների համար: Այդ պատվիրանում նա թուլլատրելի է հայտարարում նաև զաշխառությունը: Մի այլ պատվիրանում Բարը իր հետևորդներին հանձնարարում է արգելել ոչ բարիների բնակությունը բարիների երկրում և այնուհետ թուլլատրելի է համարում ապրելու միայն նրանց, ովքեր զրադպում են օգտագիտ առներով²⁹: Նշված պատվիրաններում

بيان الباب التالع والعشرين الواحد الخامس ²⁸

بيان الباب السادس والعشرين الواحد السادس ²⁹

ակե՛ւոյս է Բարի Համակրանքը առևտրական դասի նկատմամբ: Մի այլ պատվիրանում նա կարգադրում է բնազրավիլ ուրարիականների ամրոց ունեցվածքը և այն բաժանել բարինների միջև²²:

Իր հետեւրդների Համար Բարը մշտական բնակավայր է նշանակում Քրոնի կարևոր հինգ նահանգները՝ Մազանդարանը, Խորասանը, Յարսը, Աղրիշտանը և իրանական իրաքը, որտեղ, ըստ նրա, պետք է ստեղծվի արդարության սրբազն թագավորությունը²³:

Նշված պատվիրաններում արտացոլված են Բարի առաջազրած կարևորագույն դրսւթները: Բացի առևտրական դասի զիրաբերյալ առաջարած դրսւթներից, նրա մշտական գաղափարները, ինչպես նշեցինք, եղել են նախորդող առարքներ կրօնական աղանդների ուսմունքներում:

Բարիական շարժման մեջ իր առաջադիմական, դժմոկրատական Հայացքներով աշբի էր ընկեռում Ղազվիլն քաղաքի Հայտնի աստվածարան մովա Մուշամադ Սալինի դրսուր Թահիրե Ղորրաթ ոլ Այնը (աշբի լույս): Դեռ մանկությունից նա կրել է իր Ղորեղորոր գաղափարական ազդեցությունը, որը Սելիմ Ռաշտիի Համախոններից էր:

Տեղեկանալով Բարի Հայտնության մասին, Ղորրաթ ոլ Այնը դառնում է նրա ամենանվիրված հետեւրդներից մեկը և ամենուրեք սկսում քարոզնել նրա ուսմունքը: Հետանալով ամուսնուց, որը Բարի վարդապետության ուժգին Հակառակորդներից էր, Ղորրաթ ոլ Այնը 1843 թ. մեկնում է Թորքելա²⁴: Աղյուսիների վկայությամբ նա Թարրելայում առանց շադրոյի, բաց երեսով, կանանց և տղմարդկանց բարիզմ էր բարոզում: Դա շարժում է Թարրելայի բարձր հոգևորականների զայրությը և նրանց Բարձր Դունից պահանջում են Ղորրաթ ոլ Այնին Հետացնել երկրի սահմաններից²⁵: Այնուհետև նա Հարկադրված տեղափոխվում է Թաղդադ, որտեղ, ինչպես Հայտնում է միրզա Ջանին, ուժգին վեճի մեջ է մտնուած աղյի մողմանեղների հետ և թիւ է մնում զոհ գառնա²⁶:

Հետանալով Թուրքիայի սահմաններից, Ղորրաթ ոլ Այնը գնում է Թերմանցան, հետո անցեռում Սպահան, ապա Ղազվին և ամենուրեք քարզում Բարի վարդապետությունը: Հետագա իրադարձությունները

بيان الباب السادس من الواحد الخامس،²²

بيان الباب الرابع من الواحد السادس²³

بررسی و محکمة در تاریخ و احکام باب و بهاء، جلد اول، ص ۷۰

²⁴ Աշուկե, Խամաթ, Աշխարհնդապուր, 1908, էջ 85—86.

كتاب نقطته الكاف، ص ۱۵

Նրան ստիպում են հեռանեալ Ղաղմինից և մեկնել նորասան, որտեղ կայանալու էր բարիականեների ամենակարևոր համահավաքը:

Բարիական շարժման ռատումանամբույթը ցույց է տալիս, որ թե Բարը և թե Նրա մերժավոր համախռները այդ ռասմութիւն տարածման սկզբնական շրջանում անտեսում էին ժողովրդական զանգվածների դերն ու ուժը: Նրանք ամենուրեք ձգտում էին իրենց ռամումքը տարածել իրանի բարձր հոգնորականության և պետական բարձրաստիճան գործիչների մեջ և Նրանց օգնությամբ բարձիարգումներ մտցնել Իրանի սոցիալական կյանքում: Ասկայն, հետագայում, այդ աղանդի առաջադիմական գաղափարների տեր մի շարք առաջնորդներ, որոնցից էին բարֆրուշեցի Մոհամմադ Ալին, որը շատ ավելի մոտ էր կանգնած պյուղացիությանը և քաղաքային շրավոր խավին, և Ղորրաթ ու Ալին իրենց նպատակների իրականացման համար զիմում են ժողովրդական զանգվածներին: Նրանք նույնիսկ Բարի առաջարած դրույթներից դուրս են նետում այն պատվիրանները, որոնց հակառակ էին գյուղացիության և ընշաղուրկ խավի շահներին:

Այսպիսով, բարիականների մեջ առաջ է գալիս տարածայնություն, որին իր գրանորումն է գտնեալ 1848 թ. Բեգաշթում կայացած բարիականների համաժողովի ժամանակ: Հաստ միրզա Ջանիրի, այդ համաժողովին մասնակցում էին ավելի քան 300 բարիներ³⁸: Մոհամմադ Ալի բարֆրուշեցին և Ղորրաթ ու Ալիջ զեկավարում էին այդ կարևորագույն հավաքը: Համաժողովին ներկա էին նաև նուրեցի միրզա Հոսեյն Ալին (Բահա ոլլահը) և բարիական այլ անվանի առաջնորդներ:

Այդ համաժողովում առաջարկվեց գոյություն ունեցող բոլոր օրենքների և կարգերի, այդ թվում՝ Հարկերի, պարհակների և մասնավոր սեփականության վերացում: Ժողովում հայտարարվեց, որ վրա է հասել միշմարգարենության (Շահ) ժամանակաշրջանը, որի հետևանքով հին օրենքները վերանում են, և քանի որ գեռն նոր օրենքներ հրապարակի վրա չկան, բոլոր այն անձինք, որոնք համարվում են բարձր, կրուպունան ստորին, իսկ ստորինները՝ բարձր³⁹:

Բարֆրուշեցի Մոհամմադ Ալին դժայի շափով առաջ անցնելով Բարի ռամումքը, առաջարկում է ունեցվածքի ընդհանրություն, որպեսզի մարդիկ բոլոր բարիներից օգտվեն հավասարապես⁴⁰: Նա առաջարկում է նաև իրավունքների հավասարություն կախանց և տղամարդկանց միջև:

³⁸ 105 - كتاب نقطته الالكاف، من

³⁹ նոյն անգամ, էջ 201-202.

⁴⁰ նոյն անգամ, էջ 181.

Այդ համահավաքում հանդիս է պալիս Ղերրաթ ոլ Այնը և պահանջում խւածի օրենքների և կարգերի վերացում²⁰, երկու սեռերի հավասարություն, շաղրայի վերացում, սիրո վրա հիմնված ամուսնություն և այլն²¹:

Այսպիսով, Թեղաշթում Բարի առաջադիմական հայացքներ ուժեցող համախուժները մերժեցին նրա ուսմունքի այն դրույթները, որոնք անհիշականորեն պաշտպանում էին առաջրական դասի շահերը և առաջ քաշեցին այսպիսի դրույթներ, որոնք պաշտպանում էին միայն և միայն գյուղացիության և չքավոր խավի շահերը: Այդ առաջադիմական գաղափարները բոլոր բարիտկաների կողմէց լընդունվեցին, որի հետեւ վանքով, ինչպես նշեցինք, բարիտկան ազանդի մեջ պառակտում առաջացավ:

Համաժողովի առաջադրած նոր դեմոկրատական դրույթները քաշամիքում էին Թեղաշթի շրջակայրում թեակվող գյուղացիությանը, որոնք խմբերով գալիս էին լսնելու այդ բարոզները:

Դա սարսափ առաջացրեց Թեղաշթից ոչ հետու գանվող Եահուտ քաղաքի իշխանությունների և Հռոմորականության շրջանում, որոնց պահանջով զինված ուժերը ցրեցին հավաքը: Սակայն մոլլա Մոհամմադի և նրա մերձավոր համախուժների դեմոկրատական գաղափարները համայնքներին Խրանի գյուղացիությանը և քաղաքների չքավոր խավին: Մահղթվեց հակապետական և հակագաղութարարական զորեղ մի շարժում, որն անսառան կնրանով պայքարում էր հանուն ազատության և հավասարության:

*

1848 թ. Մոհամմադ շահը մահացավ և մինչ Նասր էպ-Ռին շահի գահակալումը Թեհրանում, գավառներում տեղի են ունենում նոր հուգումներ: Խորասանում, Սպահանում, Թերմանում, Եփրազում և Ճարդում ծագեցին խոռվություններ: Մազանդարանի նահանգապետն իր մերձավորների հետ մեկնեց Թեհրան, իր հետագա անելիքները որոշելու համար, մյուս նահանգապետները ևս գտնվում էին անորոշ կացության մեջ²²:

Ծգովելով երկուում աիրող խառնաշփոթ գրությունից, իրենց մտա-

²⁰ 1. چریس و مکمە در تاریخ عقائد و احکام داد و دهاء، ص 1.7.

²¹ Առաջին, Իմամթ, էջ 88.

²² M. Խաչոս, Օչերք պատմության, Մ, 1952, տր. 162.

որովմյուներն իրականացնելու նպատակով բարիները Բարփրուշ քա-
ղաքում բացեփրաց սկսում են զինվել²³:

Բարփրուշի քաղաքապետը և բարձր հօգնութեականությունը դիմակ-
ցելով, որ միայն բաղաքի զինված ուժերով անհնար է խափանել բա-
րիների ծավալուն գործունեությունը, այլ քաղաքներից զրուցիկ ուժեր
ոպահանջնեցին: Շուտով Մահամմադ բնեկի պլիավորությամբ 300 հօգուց
բաղկացած մի հրաձգային ջոկատ է ուղարկվում Բարփրուշ: Տեղի են
ունենում կատաղի մարտեր: Մոհամմադ բնեկը ցանկանալով սարսափ
առաջացնել բարիների շարժերում, շափառանց դաժան է զարգում
գերզածների հետ՝ հաճախ կենդանի թաղելով նրանց²⁴: Մակայն զա ավե-
լի է բորբոքում բարիներին, որոնք ավելի համարձակ են սկսում մար-
տրնել: Խշանությունները տեսնելով, որ բռնությունները արդյունք չեն
տալին, սկսում են բանակցել բարիների հետ: Հակառակորդ կողմերը
համաձայնության են գալիս, որ բարիները անարդել հեռանան Մազանդա-
րանի սահմաններից, սակայն այդ պայմանավորվածությունը չի բա-
վարարում տեղական ավելի ռածակցիոն տարրերին: Նրանք որոշում են
վերջնականապես արմատախիլ անել բարիներին և այդ նպատակով
կազմում են մի հետյալ ջոկատ:

Նրբ բարիները բավականալափ հեռանում են քաղաքից և հօնգը-
առանալու նպատակով կանգ առնում Ենյին Բարարսիի դամբարանի մո-
տակալցում, նրանց վրա է Հարձակվում վերտնիշյալ ջոկատը, որը շաւ-
առով համալրվում է նոր ուժերով: Բարիները պաշտպանվելու նպատա-
կով ստիպված են լինում մտնել Ենյին Բարարսիի դամբարանը²⁵:

Այս լուրին անմիջապես տարածվում է ամրոց նրանով մեկը Շուտով
բարիներին է միանում Բնաղաջթի բարիականների համաժողովի առաջ-
նորդ բարփրուշների Մոհամմադ Ալին, որի ջանքերով շրջակա գյուղերի
բնակլության մեջ ավելի է ուժեղանում բարիների նկատմամբ համա-
կրանքը: Դյուլացիներն ամենուրեք պարենաթերթներով ապահովում
են բարիներին: Ենյին Բարարսիի մոտակայքի երկու գյուղերի գյուղա-
ցիությունը ամբողջությամբ գալիս է Ենյին Բարարսիի դամբարան և
միանում բարիներին²⁶: Նատ կարճ ժամանակամիջոցում բարիների թիգը

23 بـ 62 دـ روضـة الصـفـاء جـلـد دـعـم

24 كتاب تقطـتـه الـكـافـ، صـ 158

25 كتاب تقطـتـه الـكـافـ، صـ 159

26 Tarikh-i-Jadid, pp. 105—105.

Հասնում է 2000-ի²⁶, որոնց մեծամասնությունը կազմում էին պյուղացիները:

Ենիս Թարարսիում բարիները կառուցում են ամուր բերդ և ամրանում ալգուեղ:

Ենիս Թարարսիի ապստամբությունը, որը անց ուղի ամիս, առ ու ապրանքի առաջացրեց իրանի կառավարության և, հատկապես, հետազիմական Հոգևորականների շրջանում։ Այս ապստամբությունը զեկումքարում էին մոլլա Մոհամմադ Ալի բարինեցին և մոլլա Հոսեին Բուշրույին։ Ենիս Թարարսիի բարինեկան համայնքում նրանք վերացրին մասնավոր սճիմականությունը և հաստատեցին իրավունքի հավասարություն։ Այնտեղ յուրաքանչյուրի սճիմականությունը հայտարարվում էր ընդհանուրինը։ Խոլանք վկայում է միրզա Զանին, նրանք բոլորը մնկում էին նույն սեղանից և տարբեր մասնագիտությունների տեր արհեստագործների արտադրանքը պատկանում էր բոլորին²⁷:

Թեհրանում ռուսական դեսպան Դ. Դուկորուկիի²⁸ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր կոմս Նեսելլողին 1849 թ. փետրվարի 10-ին ուղարկած զեկուցագրում ասվում է, որ ոնքանը (բարիականները—Հ. Փ.) գձների ուժով արմատավորում են կոմունիզմը²⁹:

Կառավարության հրամանով Ենիս Թարարսիում ժամանակած բարիների ապստամբության ճնշման գործը հանձնարարվում է Մազանդարանի խաններին։ Եռանգված մի զորամաս է ուղարկվում Ենիս Թարարսիի ամրոց։ Բարիները իրազեկ դառնալով այդ զորամասի ժամանմանը՝ գիշերվա կեսին մոլլա Հոսեինի զեկումքարությամբ անակնեալ կերպով հարձակվում են նրանց վրա և փախուստի մատնում³⁰։

Բարիների այս հաղթանակը մեծ սարսափ է առաջացնում Թեհրանում, որտեղ որոշում են նորը զորամաս ուղարկել Մազանդարան՝ շարժումը վերջնականապես արմատախիլ անելու համար։ Բացի այդ, Մազանդարանի բոլոր խաններին կարգադրում են կազմակերպել նոր զինված զոկատներ և պատրաստ լինել միանալու կանոնավոր բանակին³¹։

Նոյեմբերի վերջերին արքայազն Մեհմի Ղուլի խանը 2000-անոց

²⁶ روضة الصفاء جلد دهم Թեհրը 42 ր.

²⁷ كتاب نقطته الكتف، من 104

²⁸ АВПР, Фонд. Капиталерия, 2. № 177, 2. 56—58.

²⁹ كتاب نقطته الكتف، من 105

³⁰ Խույն տեղում

բանակով շարժվում է դեպի Մազանգարան։ Ծանապարհին նրան է միանում թուրքմենական և գրդական մեծաթիվ հեծելազորը։ Այդ բանակը մոռնելով Շեյխ Թարարօսի սահմաններին, կենտրոնանում է Վասեկիս գյուղում։

Մեհրի Ղուլի Միրզան դպաւով, որ ուժի միջոցով բավական զժվար կլինի մնշնչ այդ շարժումը, որոշում է բանակը ություններ վարձել բարիների առաջնորդների հետ։ Նա մի նամակով հարցում է կառարում նրանց պահանջների մասին և առաջարկում ցած դնել զենքերը։ Թարծուցեցի մոլլա Մոհամմադ Ալին պատասխան նամակում շարադրում է ապստամբության նպատակները, նասր էդ Դին շահնին անվանում ոթեթեամիտ ու կեղծարարը, ուուր քննադատում բարձրաստիճան Հոգևորականության միջն կայացնել հրազարակային բանագին, որպեսզի զերքնականագին պարզվի, թե ով է իրավացի, ով՝ մեղավոր։

Մեհրի Ղուլի միրզան ժամանակ շահնիւու նպատակով ընդունում է բարիների առաջարկությունները։

Ինչպես նշվեց, Շեյխ Թարարօսի շրջանում գտնվող գյուղերի բնակչությունը պարենամթերք էր մատակարարում պաշարված բարինականներին⁴¹։ Ենիշ Թարարսիի մատակարարումը խափանելու համար Մեհրի Ղուլի միրզան կարգադրում է պաշարման գործը ավելի ուժեղացնել և ամրոցի վերածված դամբարանը լրիվ մեկուսացնել զրոյի աշխարհից։ Սակայն այդ միջոցառումները և զորքերի թիվի քառապատիկ ավելացումը ոչ մի կերպ լընկնեցին բարիներին⁴²։

Ինչպես վկայում են ազբյուրները, ուրիշ վայրերից եկած բարիներ գիործում էին ներթափանցել Շեյխ Թարարսիի ամրոցը, որպեսզի միանան իրենց պաշարված համախռներին։ Գրանցեց էին ընողթաթ ու քաֆա զրքի հեղինակ միրզա Ջանին, Բահաօլլահը և Սորճե Ազալը։ Սակայն շի հաջողվում իրականացնել այդ մտապրությունը և նրանք շուտով ձերբակարվում են իշխանությունների կողմից և ազատվում միայն փրկարին տալուց հետո⁴³։

Ինչպես գրած է «Աւուգում և ուսումնասիրություն» Թարի և Բահալի դավանանքի և կրոնական կարգադրեր գրքում այդ ժամանակաշրջա-

⁴¹ Мирза Казем-бек, Баг и бабиды, религиозно-политические смуты в Персии 1844—1852, СПб., 1866, стр. 70.

⁴² Խոյն տեղում։

⁴³ Tariikh-i-Jadid, pp. 64—65.

Նույն Ղորրաթ ոչ Այնք հաճախակի առանց շաղրային, ձիու վրա, սուրբ ձեռքին հայտնվում էր Ենիք Թարարսիի շրջակա զյուղերում և քարոզում, որ անցել էն այն ժամանակները, երբ կարպեաների վրա Ղորան էին ընթերցում, հիմա հասել է այն պահը, երբ պետք է համախմբվել և զերչ տալ երկրում տիրող քառասյին վիճակին⁴⁴.

Մեծոյի Ղուպի միրզան անհամբեր սպառում էր Լառիշանից նկազ ուժերի ժամանմանը, ուստի անընդհատ ձգձգում էր իր քանակցությունները բարիների հնատ:

1849 թ. հունվար ամսին, խիստ ձմռան պայմաններում, բարիները որոշում են մինչև Լառիշանի ուժերի ժամանումը անսպասելի հարձակում գործել թշնամու բանակի վրա, որն անկանոն կերպով ցրված էր գյուղացիների խրճիթերում։ 300 բարիներ մոլլա Մոհամմադ Ալիի և միրզա Հոսեինի ղեկավարությամբ⁴⁵ դիշերը գգուշությամբ դուրս են դալիս իրենց ամրոցից, շրջանցում Վասեկիս գյուղը, որտեղ անհոգ ննջում էին զինվորները, հասնում են Լառիշան տանող հանապարհին։ Այսուհետև իրենց մարտիկներից մի քանիսին ուղարկում են թշնամու բանակը ու հայտնում, թե ժամանում են Լառիշանից նկող ուժերը։

Այսպիսով, նրանց հաշողվում է, առանց արգելվի, 300 մարտիկներով մասել գյուղ և շրջապատել հակառակորդին⁴⁶։

Բարիներն առաջին հերթին զերացնում են թշնամու պահակներին, հարձակվում այն տան վրա, որտեղ բնակվում էր ինքը՝ Մեծոյի Ղուպի միրզան, ցանկանալով վերցնիսն կենդանի գերի վերցնել։ Այդ հարձակման ընթացքում բարիներին հաշողվում է սպանել արքայազնի շքախմբի 25 անձանց⁴⁷։

Հատ Միրզա Զաեիի, Մազանդարին նահանգապետին հաշողվում է թոշել կտորից, թաքնվել անտառում⁴⁸, Սակայն բարիները այլում են այն տունը, որտեղ թաքնված էին Ֆաթհ Ալի շահի և Ջել Էս Սոլթանի որդիները⁴⁹. Խօսմապային փախուստի ղիմող պինվորները բարիներին թողնելով իրենց զինամթերքը, թաքնվում են շրջակա անտառներում։

⁴⁴ Հատ Մ. Իջևանցի, Թեզաքի իրազարկություններից հետ Ղորրաթ ու Այնք մեկնամ է՝ Մազանդարակի նոր ընկածայրը, որտեղ ձերբակալվում է իշխանությունների կողմից և աշխարհում Թերուս։ Տե՛ս „Բանձնական հայություններից իրենց զինամթերքը, թաքնվում են շրջակա անտառներում“.

⁴⁵ كتاب نقطته الكاف، ص ٣٧.

⁴⁶ Мирза Козен-Бек, Баб и бабады, стр. 76.

⁴⁷ روضته الصغاء جلد دهم ٥٢.

⁴⁸ كتاب نقطته الكاف، ص ٣٧.

⁴⁹ Ասորյան, Խամաթ, էջ 68, Տե՛ս « Խամաթ» կատարությունը և պատճենը պահպանության մեջ մտնելը».

Այդ մարտադաշտում կառավարական զորքերը կորցնում են մոտ 300 զինվոր, իսկ բարիների կորուստը կազմում է ընդամենը 3 մարդ²⁰:

Կանոնավոր բանակի այդ պարտությունն այնպիսի ահ ու սարսափ է առաջացնում Բարիների, Մազմանդարանի և այլ քաղաքների խաների և մոշթա՛ների մեջ, որ վերջիններս թողնելով իրենց ունեցվածքը, փախչում են աարերը²¹:

Երկրում տիրող խառնաշփոթ դրությունը և Շեյխ Թարարսիում բարինեկանների պարբերական հաղթանակները անեկարագրելի սարսափ առաջացրին Մայրաքաղաքում: Կառավարությունը Մազմանդարանի Լառիջանի գորամասներին կրկին խիստ կարգադրում է վերջնականացնել շախշախան բարիներին: Կենտրոնական և տեղական իշխանությունների համատեղ շաներով կազմվում է 7000-անոց մի բանակ, որը դիմում էր Հրացաններով և թեզանոթներով²²:

Բարիները մերձավոր դյուլերի բնակիչներից տեղեկանալով զորքերի անդակարման և պահակների դասավորության մասին, 1849 թ. փետրվարի առաջին կեսին որոշում են կրկին անակնեալ Հարձակում գործել նրանց վրա: Այդ Հարձակումը տեղի է ունենամ գետրվարի Յ-ի գիշերը, որին մասնակցում էին 400 խիզախ բարիներ՝ մոլլա Հոսեյն Բուշրուի ղեկավարությամբ: Որպեսզի թշնամու բանակում տագնապ շառագանա, նրանք ձիերի սմբակներով փաթեթում են լաթերով, ձմռան այդ սառնամանիքին հանում կոշիկները քայլում ստարտիկ: Նրանց որոշ մասը զինված էր Հրացաններով, իսկ մեծամասնությունը՝ սրերով և նիզակներով: Դնդակների խնայողության նպատակով Հարձակման պահին Համազարկ էին տալիս, հետո մոռենալով թշնամուն, սրերով ու նիզակներով Հարձակվում էին նրանց վրա: Խղաքն գրում է միրզա Ջանին, Տակառամարտի ընթացքում, երբ առաջին շարքի բարիներից որևէ մեկն ընկնում կամ ծանր վիրավորվում էր, նրան անմիջապես գոխարինում էր մի ուրիշը²³: Նրանց այդ անակնեալ Հարձակումն այնպիսի խառնաշփոթություն է առաջացնում Հակառակորդի զինվորների մեջ, որ վերջիններս շփոթանար, իրենց կյանքը փրկելու համար դիմում են փախուստի: Զնայած մեծ կորուստներին, կառավարական զորքերին հաշողվում է սպանել բարիների առաջնորդ մոլլա Հոսեյնին²⁴:

²⁰ كتاب نقطته الكاف، ص ۱۷۶

²¹ M. Насаков, Бобицкое восстание в Иране (1848—1852), М., 1939, стр. 97.

²² Առաջին, Ամասի, էջ 59:

²³ كتاب نقطته الكاف، ص ۱۷۱

²⁴ كتاب نقطته الكاف، ص ۱۷۲ — ۱۷۳ حزيران ۱۸۴۹ روضته الصغاء جلد دهم

Այդ ճակատամարտում կանոնավոր բանակի կողուատը կազմում է 400 սպանված, այդ թվում 35 սպաներ և 1000-ից ավելի վիրավորներ, իսկ բարիների կողուատը կազմում էր 70 սպանված և 20 վիրավոր⁵⁵,

Աշբյուրները վկայում են, որ 7000-ից բազկացած կանոնավոր բանակի շարքերում հիշալ ճակատամարտից հետո մեացել էր ընդամենը 50 մարդ⁵⁶:

Այդ իրագարձություններից մի քանի որ անց, տեղական իշխանությունների և հոգևորականության միացյալ բանքերով կազմված զորքերը կրկին շարժվում են դեպի Եելի Թարարութիւն Սակայն երբ նրանք հասնում են բարիների ամրոցը, ականատես են լինում մի ահավոր տեսարանի. բերդի պարիսպների երկարությամբ, ցցերի վրա, բարձրացված էին վերջին ճակատամարտի ժամանակ սպանված զինվորների գլուխութերը: Դա կատարվել էր թշնամու բանակում ավելի մեծ սարսափ առաջացնելու նպատակով⁵⁷, հաշի Մոհամմադ Ալիի կարգադրությամբ:

Այդ հոգեբանական քայլը ժառայում է իր նպատակին և ամենկարագրելի սարսափ է առաջացնում թշնամու բանակում: Բացի արդ, երբ հակառակորդը մոտենում է բերդին, բարիները բացում են բերդի դարպասը և թշնամուց գրաված հրացաններով ու թնդանոթներով հարձակվում նրա վրա⁵⁸: Այդ իրագարձությունը տեղի է ունենում գիշերը, և թշնամու զորքը շնկառելով, որ բարիների թիվը մի քանի տասնյակից լէր անցնում, դիմում է փախուատի: Հաջորդ օրը թշնամին կրկին պաշարում է բերդը, կառուցում հողաթմբեր՝ նպատակ ունենալով գնդակուծել ամբողջը⁵⁹:

Պաշարողները հրկիվող հրթիռներով այրում են ամրոցի ներսում գտնվող բռլոր շինությունները: Դա բարիներին ստիպում է լքել իրենց տեսակներն ու տեղափոխվել խոնավ դետնագործները: Այսպիսով, բարիների կապը մերձավոր գյուղացիների հետ համարյա կտրվում է, իսկ նրանց պաշարը՝ սպառվում:

Ըստ միջրած Զանիի, Մեհմի Նույի խաներ, ցանկանալով պառակտում առաջացնել բարիների շարքերում, առաջարկում է պաշարված բարիներին լրել իրենց ընկերներին և հեռանալ ամրոցից⁶⁰: Այնուհետև նրանք

⁵⁵ كتاب نقطته الكاف، ج 173.

⁵⁶ كتاب نقطته الكاف، ج 173، Առաջին, Խոստաթ، էջ 25.

⁵⁷ كتاب نقطته الكاف، ج 177، Հայոց، անգլական، 85' - 100'.

⁵⁸ كتاب نقطته الكاف، ج 178.

⁵⁹ كتاب نقطته الكاف، ج 178 - 179، Քերեր ՀՀ ա. Համբակ Հայոց ճշճամ.

⁶⁰ كتاب نقطته الكاف، ج 179.

գտնում են բարիների առաջնորդ բարֆրուշեցի Մոհամմադ Ալիի Հորը և ուղարկում ամրոց, որպեսզի նա համոզի որդում՝ մենատուր լինել: Սակայն այդ բոլոր մեռնարկումներն անցեռում են ապարդյուն⁵¹:

Այդ օրերին կառավարական բանակն անցնոհատ ուժեղանում է և խորացնում բերդի պաշարումը: Մերձավոր գյուղերից պաշար հայթայթելու բարիների մի քանի փարձերն ավարտվում են անհաջողությամբ⁵²: Այս դժվարությունները ումանց մոտ տատանում են առաջացնում: Խնչպիս նշում է միրզա Զանին, իրենց կյանքը փրկելու նպատակով երկու բարիների հետ միասին փախուստի է զիմում ուն Մոհամմադ Հոսեմին, որը թշնամուն իրազեկ է դարձնում բերդում տիրող իրադարձությունների, մոլու Հոսեմին մահվան մասին⁵³: Ապրիլի կեսերին բերդից փախում են նաև 30 բարիներ և հայտնում, որ պաշարվածները սովոր են մատնվել⁵⁴:

Այս լուրը ոգնորում է կառավարական գործերին: Նրանք որոշում են հարձակվել բերդի վրա: Ջինվորների մեջ շահապրգովածություն առաջացնելու նպատակով հինգ կարգի պարգմեներ են սահմանվում: Առաջին կարգի պարգմենը 500 թումանի շափով, նրան ով առաջինը հաղթության դրու կրաքարացնի բերդի պարիսպների վրա:

Չնայած այս ամենին, այնուամենայնիվ, բերդի վրա ձեռնարկված հարձակումը ձախողվում է⁵⁵:

Սակայն բարիների վիճակը շարումակ վատանում է. Նրանց թիվը նվազելով հասել էր 250-ի:

Անելանելի գումարածը և այն հանգամանքը, որ այնու Ծարավայր չէր զիմադրել մոտ 10.000 մարդուց բազկացած բանակին, հարկադրում են մոլու Մոհամմադ Ալի բարֆրուշեցուն՝ Մեհմի Ղուկի միրզային հայտնելու, որ կդադարեցնեն պայքարը, եթե իրենց թույլատրվի անարգել կերպով հճունալ այդ մարդերից:

Այդ առաջարկությունը մեծ դրույնակություն է առաջացնում բանակի հրամանատարի մոտ, որը երգվում է Ղորանով նրանց ազատ արձակել⁵⁶: Սակայն, երբ Մոհամմադ Ալին բանակի կողմից ուղարկված

⁵¹ Նույն տեղում, էջ 193:

⁵² Նույն տեղում, էջ 184—187:

⁵³ Նույն տեղում, էջ 187:

⁵⁴ Նույն տեղում, էջ 188:

⁵⁵ Նույն տեղում, էջ 191:

⁵⁶ Առաջին, ինստաբ, էջ 59:

ձիու վրա նստած, իր հազարարիյ 230 մարտիկների հետ դուրս է գալիս ավերգած Շելին Թարարսիի ամրոցից, անմիշապես շրջապատվում է զրբաժաների կողմից: Թանի որ բարիները զինված էին, վերջիներս չեն համարձակվում նրանց վրա հարձակում գործել³⁷:

Հաջորդ օրը արքայազն Մեհղի Առաջի միրզան ճաշի է հրավիրում Հաշի Մոհամմադ Ալիին և նրա մերձավոր օգնականներին: Ծաշի ժամանակ ձերբակալվում են բարիների բոլոր առաջնորդները, որից հետո Հաշի Մոհամմադ Ալիից պահանջում են կարգադրել իր հետնորդներին հանձնելու զննքերը, որը և կատարվում է³⁸:

Բարիներին զինաթագի անելուց հետո զինվորները հարձակվում են նրանց վրա և կռուրում, կենդանի թողնելով միայն առաջնորդներին³⁹, Ազգարաննորդ կռուրածը, բանակը շարժվում է զիպի Շելին Թարարսի բերդը և անմիշապես ավերում այն:

Իշխանություններն ահազոր դաժանությամբ սպանում են կճնդանի մնացած բարիների առաջնորդներին, իսկ այդ շարժման ամենաառաջիմական ներկայացուցիչը բարփռուչների Մոհամմադ Ալիին վաճառում են նրա ամենասուերին թշնամի, Մարգանդարանի հոգնորականության առաջնորդ սեյյեդ օլ Յլամային: Վերջինս իր ձեռքով կացնահար է անուն Մոհամմադ Ալիին և մարմինը մասնատելով՝ նետում քաղաքի աահանձներից դուրս⁴⁰:

Մազանդարանում բարիական շարժման անկումից անմիշապես հետո տեղի իշխանությունները խիստ դատաստան են տեսնում այն զյուղացիների հետ, որոնք օժանդակել էին նրանց:

Զանշանի ապառամբությունը, Մազանդարանում տեղի ունեցած բարիների ծավալուն, երկարատև, հերոսական ազատագրական պայքարը մեծ ազդեցություն է թողնում ամբողջ երկրում: Նկատելի կերպով անում ու համարվում է բարիական ուսմունքի հետնորդների թիվը: Նրանք պրոպագանդում և տարածում են այդ ուսմունքը և իրանի ընշաղություն բազմանագար բնակությանը հրահրում պայքարի՝ հանուն աշատության և սոցիալական հավասարության: Դրանցից էր զանշանցի մոլլա Մոհամմադ Ալին, որը մեծ հարգանք էր վայելում Զանշանի շրջակա գյուղացիության և բազարային շրավորության շրջանում: Հատ միրզա

³⁷ كتاب تقطّعه الكاف، ص ١٣٢

³⁸ նույն աեզրում:

³⁹ 26 բարիներ, որնք զիմում են փայտուակ և երանք մեծ տարածում այդ հնցուական մարտերի իշացարձությունները, Տէ՛ս Առաքիս, Խամաթ, էջ 69.

⁴⁰ كتاب تقطّعه الكاف، ص ١٩٧

Հանիի, վերջինիս տարած պրոպագանդիստական աշխատանքի շնորհիվ համսէ նաշանդի մի քանի հազար գյուղացիներ դառնում են այդ ազանդի համերժները⁷¹: Նրա ժողովրդականությունն ու համբավը զգաստացնում է տեղական իշխանություններին ու հոգևորականներին: Վերջիներս նրա հակապետական ժամանակ գործունեությունը կանխելու և մեկուսացնելու նպատակով բողոքներ են ուղարկում արքունիք և պահանջում անձնել բարիներին և նրանց առաջնորդ մռլլա Մոհամմադ Ալիին⁷², Արքունիքը, ընդառաջելով Զանշանի ղեկավար մարմինների պահանջին, անմիջապես մի հեծյալ ջոկատ է ուղարկում, որը արքացիցներով բնակչությանը, կարողանում է կալանավորել Մոհամմադ Ալիին և տանել Թէհրան: Մայրաքաղաքում նա աներկյուղ պաշտպանում է իր դավանանքը, իսկ Մոհամմադ շահի մահանալուց հետո փախչում բանտից և վերագանուում իր ծննդավայրը⁷³: Զանշանում զեալով անում է բարիների թիվը, ապստամբության նախօրյաձին հասնելով հազարների⁷⁴: Դրա շնորհիվ նրանք փառատրեն դառնում են քաղաքի տերն ու տիրականը:

Ֆեռդալական բռնություններն ու կեղերի հոգներականների անլուր դաժմությունները ժողովրդական զանդվածների զայրությը հասցրել էին գագաթնակետին և պետք էր մի շնչին առիթ, որպեսզի բռնկվեր համաժողովրդական ապստամբություն:

Այդպիսի առիթը ներկայացավ 1850 թ. դարնանը, երբ շահի կողմից իշանակված նոր նահանգապետ Արդու Ղասիմ Ալյան խանց կարգադրեց բանտարկել հակառակորդներից մեկի հետ վեճի մտած մի բարիականի: Նահանգապետի այդ արարթը առիթ ավեց բարիներին հարձակվելու բանտի վրա, բոլոր բանտարկյալներին ազատելու համար: Տեղի ունեցած իրադարձությունները հարկադրում են նահանգապետին անվանի խաների ու մոքքաշնչների ժողովը հրավիրելու Այդ ժողովում որոշվում է ձերբակալել մռլլա Մոհամմադ Ալիին և ապանել նրան, իսկ նրա բոլոր զինակիցներին՝ կալանավորելու թարձրառության հոգևորականությունը իր հերթին բարիներին բահանգա՛ սրբազն պատերազմ է հայտարարում:

Բարիներն ամենուրեք սկսում են զինվել և նախապատրաստվել նոր գոտեմարտերի: Զինամթերքների մեռքբերման ուղղությամբ մեծ

⁷¹ كتاب نقطه الكلف، ص 177.

⁷² Առաջին, Բամաթ, էջ 72.

⁷³ Նոյն ազգում:

⁷⁴ دروسته الصقاد، جلد دهم، էջ 25:

գործում ենություն է ծավալում Զանջանի բարիների առաջնորդի օգնական Դին Մոհամմադը⁷⁵. 1850 թ. Ճայիսին բարիները բացելուց սկսում են իրենց պայքարը միապետական իշխանությունների դեմ և դրագում քաղաքի Ալի Մարդան խան միջնաբերդը՝ Նրանք անմիջապես սկսում են բերդի վերանորոգումը, կառուցում բազմապիսի պաշտպանական ամրությունները⁷⁶. Այսպիսով, քաղաքը բաժանվում է երկու մասի, արևմուտքը դրագում են բարիները, իսկ արևելքը՝ թաղաքի ավելի ընդարձակ մասը, որի մայրավորին կապվում էր մայրաքաղաքի հետ, մնում է իշխանությունների ձեռքում։ Սա հարկադրում է բարիների գրաված մասում ապրող ունկորներին փախչել քաղաքի մյուս մասը։ Հակադիր կողմերն անմիջապես սկսում են կառուցել փողոցային բարիկադներ և ամրություններ։ Զանջանի շրջակա գյուղերի բնակիչներն իրենց ամրոց ընտանիքներով, բարիներին միանալու նպատակով, շարժվում են զապի քաղաքը։ Բարիների թիվը հասնում է 3000-ի։ Նրանց մեծամասնությունը գյուղացիներ ու արհեստավորներ էին⁷⁷, կային մեծ թվով կանայք⁷⁸։ Աղբյուրները նշում են, որ բարիները ստեղծում են մարտական կոմիտե։ Ապատամբության առաջնորդ է նշանակվում մոլլա Մոհամմադ Ալին, իրան օգնական է ընտրվում Դին Մոհամմադը, որը միաժամանակ ապատամբուների չոկատների հրամանատարն էր։

Խոռվության սկզբնական շրջանում պետական իշխանությունները և հոգանորականները ցանկանալով տեսուրի միջոցով խափանել և վերացնել շարժումը, փորձում են սպանել Մոհամմադ Ալիին։ Մակայն այդ փորձը լի հաջողվում և առիթ է գառնում, որ քաղաքի երկու մասերի միջև հաջորդպահցությունը լրիվ վերանա⁷⁹։

Մազանդարանի Շեյխ Թարարսիի բարիական հերոսական ապրատամբությունը և արյունահեղ մարտերը հարկադրում են Զանջանի պետական գործիչներին ավելի խելամիտ մուտքաւ այս ապատամբությանը։ Նրանց ռազմական հրամանատարությունը որոշում է մինչ պատերազմն սկսելը հաշտության բանակցությունների պատրվակի տակ թշնամութիկումքն ուղարկել ստրուր Ալի խանին, որն իր քանակցությանց ընթացքում զննում և ուսումնասիրում է բարիների կառուցած տարրեր ամրությունները և տեղաբաշխումը⁸⁰, Սակայն դա լի ծառայում իր

⁷⁵ Tarikh-i-Jasid, p. 144.

⁷⁶ Առաջին, Բամարք, էջ 73.

⁷⁷ كتاب نظمته الكاف، ص ٢٧.

⁷⁸ Առաջին, Բամարք, էջ 73.

⁷⁹ М. Иванов. Бабидские восстания в Иране, стр. 112—113.

⁸⁰ روضة الصنادع جلد دعم թիվ 62 թ.

նպատակին. ապարդյուն բանակցություններից հետո, թեղանոթերով և հրամանդներով հարձակման անցած պետական զորամասերը հանդիպում են այնպիսի մի հակառարվածի, որ մեծ կորուստներով, խառնաշփոթությումը ետք են նախաճշում:

Այդ պարտությունը ստիպում է պետական զորքերի համար նոր ստեր պահանջնել կենարութից: Սակայն ուս ևս արդյունք չի տալիս: Արդյունքը ապատամբությունը վերշնականապես ջախջախելու նպատակով Զանգանի բանակի նոր հրամանատարը է նշանակում Ազգբեշանի բանակի նախակին հրամանատար Մոհամմադ խանին, որի հետ Զանգանի ուղարկվում ուղամական նոր ուժեր⁵¹:

Տեղի են ունենում արյունահեղ նոր մարտեր, որի հետևանքով երկու կողմերն էլ տալիս են մեծ թվով զոհեր: Ըստ Առաքեարի, այդ մարտում բարիների կանայք իրենց ամուսնների հետ միասին պատերազմում էին հանուն ազատության ու հավասարության: Դրանցից էր Ռուբամ Ալի անունն ընդունած, ուղամարդու շորեր հագած հերոսուհին, որի երկալը սարսափ էր սփռում և շահթահարում էր բոլորին⁵²:

Բանակի հրամանատարները համոզվելով, որ ուժի միջացով չեն կարող հանել իրենց նպատակին, պաշարում են քաղաքի այն մասը, որտեղ գտնվում էին բարիները:

Մեծ ուժերի հարձակումը (կառավարական զորքերի թիվն արգեն համեստ էր 30 հազարի)⁵³ վերցններին ստիպում է ետք քաշվել, ամրանալ քաղաքի թաղամասերից մեկում:

Մոլլա Մոհամմադ Ալին գրկության ելք սրոնելու նպատակով 1850 թ. սեպտեմբերին նամակ է գրում պրեմիեր մինիստրին, պահանջելով վերջ տալ արյունալի սպանդներին: Նա առաջարկում է շահնի և ամիր նեղամի ներկայությամբ գումարել հրապարակային բանավեն բարիների առաջանորդների և Հոգևորականության բարձրաստիճան մոշթահղոների միջն⁵⁴: Սակայն առաջարկությունը մերժվում է:

Ուշագրավ են բարիների շարժումների վերաբերյալ աղբյուրների վկայությունները այն մասին, որ բանակի բազմաթիվ սպաներ և զինվորներ հրաժարվում էին կռվել բարիների դեմ: Նրանցից էին զեներալ Քաջամ խանը և մի շարք այլ սպաներ ու շարժայիններ: Այդ մասին իրազեկ դառնալով՝ կենարուն անմիջապես կարգադրում է նրանց փո-

⁵¹ ناسخ التواریخ، تاریخ قاجاریه، جلد سیم p44 թ.

⁵² Առաքեար, Խամար, էջ 74:

⁵³ Խոյե անշատ, էջ 75:

⁵⁴ كتاب نقطته الكاف، ص ٢٢٣

խաղողի մայրաբազար, որտեղ միրջա Թաղի խանի հրամանով գնդականաւորում են բոլորին⁴⁵:

1850 թ. նոյեմբեր ամսին Զանշանի բանակը կրկին համայստում է թարմ ուժով, որն ունեց Հրետանային շոկատ: Երկարաւոճ ուժակոծումներից հետո, դեկտեմբերին, բանակն սկսում է լայն ճակատով հարձակում: բարիները մեծ կորուստներ են ունենում և նահանջում⁴⁶:

Բարիները որոշում են անցնել հարձակման և ճեղքի թշնամու պաշարումը, սակայն նրանց այդ վերջին փորձը նույնապես խափանվում է: Մոհամմադ Ալին ժանր վիրավորվում է և երեք օր անց՝ մահանում⁴⁷:

Այդ դժվարին սրերին բարիները, որոնց թիվը հասնում էր 100-ի, հերսուարար մարտնչում էին 30.000-անոց⁴⁸ կանոնավոր բանակի դմտ: Դեկտեմբերի վերջերին Դիլ Մոհամմադը և կենդանի մնացած բարիական այլ առաջնորդներ ստիպված նամակ են ուղարկում իշխանություններին ու հարսնում, որ պատրաստ են անձնատուր լինել՝ պայմանով, որ իրենց թուլլատրվի անարգել հեռանալ քաղաքի սահմաններից:

Այստեղ ես, ինչպես Մազանդարանի ապատամբության անկման շրջանում, իշխանությունները երդում են Ղորանով, որ բարիներին ոչ մի վառակ լի սպառնա, եթե նրանց անձնատուր լինեն և համեմեն զենքերը: Ինչպես զրում է Ասրագետը, բարիները համոզված էին, որ իշխանությունները լին հարգելու իրենց երդումը, սակայն ստեղծված անելանելի պիճակը, վերահաս մմուն ցուրտը, մթերքի սպառումը ստիպեցին նրանց անձնատուր լինելու թշնամիները անխնա կռտորեցին այլքրին, մանուկներին ոտքերի տակ արորեցին, ծնողներին սրերի ցցեցին, դարձուրելի տանշանքների հնթարկելուց հետ գերեցին մանկանա ազդիներին, աղանդերին ու կանանց⁴⁹:

Իրանի իշխանությունները, ժողովրդին սաստելու նպատակով, բարիների երեք առաջնորդներին՝ Սուլյանիներ, Հաջի Թազեմին և սեյեց Ռամազանին պատժեցին՝ թնդանոթների բերանին կապելու և կրակելու եղանակով⁵⁰:

Այսպիսով, նշշից նաև Զանշանի համաժողովրդական-հակաֆեռ-

⁴⁵ Tarikh-i-Jadid, p. 151.

⁴⁶ تاریخ التواریخ، تاریخ قاجاریه، جلد سیم، ۴۵ թ.

⁴⁷ Նոյեմ անդամ, թերթ 65ր:

⁴⁸ Տէկիրառութ այ թիվը շափազակցված է:

⁴⁹ Առաջնորդ, Խանութ, էջ 75:

⁵⁰ M. Иванов, Бабилские восстания в Иране, стр. 120.

գալական ապստամբությունը, որի ընթացքում, Համաձայն պաշտոնական աղբյուրների, զո՞վեցին 3000 բարիներ⁵¹:

Ցագդի ու Նեյրիզի ապստամբությունները: Դռա չէր ավարտվել Զանջանի ապստամբությունը, երբ Ցագդում սեյն Ցարարիի գլխավորությամբ բռնկվեց բարիների մի նոր ապստամբություն:

Ցագդի քաղաքապետ Ազա Խանը իրադեկ դառնալով Ցարարիի հակապետական գործունեությանը, կարգադրում է ձերքակալել նրան: Այդ կարգադրությունը խափանելու նպատակով Ցարարիի հետնորդները ապստամբում են և զենքի միջոցով ձախողում այն: Բարիները Հարձակվում են բերդի վրա, որտեղ հականարգած ստանալուց հետո վակվել էին զինված շոկանները: Այդ հարձակման ընթացքում դորամասները կրում են մեծ թվով կորուստներ, իսկ քաղաքապետը ահարձակված փախուարի է դիմում:

Այս իրադարձությունները սարսափեցնում են Հռոմեականությանը, որը կառավարությունից պահանջում է նոր ուժեր ուղարկել, որոնց օգնությամբ հարձակվում են սեյն Ցահյայի հետնորդների վրա և շախշախում նրանց: Վերջիններս սեյն Ցահյայի հետ սահմանված են լինում Ցազդից հեռանալ Ցարա:

Ինչպես հայտնում է միրզա Զանին, այսուեղ ևս, ինչպես Զանջանի ապստամբության պարտությունից հետո, գերիների նկատմամբ վարդում են դաժանաբար: Կենդանի մնացած բարիներին կապում են թեղանոթների բերաներին և կրակում⁵²:

Այդ պարտությունը լի հուալքում սեյն Ցահյային: Նա Ցարսից անմիջապես անցնում է Նեյրիզ՝ իր մշտական բնակավայրը: Ցանապարհին ամենուրեք բարոզում է Թարի վարդապետությունը, որի շնորհիվ մինչև Նեյրիզ հասնելը նրան է միանում մոտ 500 մարդ⁵³:

Նեյրիզում այդ ժամանակ իշխում էր Ջեյն օլ Աբեդին խանը: Վերջինիս զաժանությունն այնպիսի զայրույթ էր առաջացրել բնակչության, հատկապես, գյուղացիության մեջ, որ նրանք անհամբեր ապասում էին մի փոքր առիթի, պայցարի դուրս գալու համար:

1850 թ. հունիսին, երբ Ցարարին համեստ է Նեյրիզ, նրան են միանում մեծ թվով բարիներ: Այդ իրադարձություններից զգացածած, աեղական իշխանությանները նահանգի կենտրոն Շիրազից շտապ օգ-

⁵¹ The Encyclopaedia of Islam, New ed., Vol. 1, London, 1960, p. 847.

⁵² كتاب تقطة الالقاف، ج ٢٢٤

⁵³ ناسخ التواریخ، تاريخ قاجاریه، جلد سیم، ۲۷ پ

նություն են խնդրում: Բարիներն օգտվելով խառը դրությումից, պրակտիկ են բաղաքամերձ բերդը և ամրանում այսուհետ Մի գիշեր նրանք գուրս են գալիք ամրացից և Հարձակվում թշնամու վրա՝ պատճառելով մեծ զոհեր: Այդ հաղթանակը մեծ համբավ է բերում սեյեղ Ցահային: Միրզա Մեփեհը հազորդում է, որ այդ օրերին Նեյրիզում բարիների թիվը հասելում էր 2000-ի²⁴:

Այդ ժամանակ Երիազ է ժամանում նոր Խաչանգապետ Ֆիրուզ խանը: Վերջինին հրամանով նահանջի տարրերը բաղաքներում կազմվում են մեծ թվով ուժեր և ուղարկվում Նեյրիզ:

Նեյրիզ համելում պես կառավարական ուժերը շրջապատում են բարիների դրաված բերդը և սկսում ուժբակութել այն: Բարիները պաշտպամից դուրս գալու նպատակով, կատարում են գիշերային մի քանի հարձակում: Սակայն այդ հարձակումներն անցնում են անհաջող ու ձախովում են:

Բարիների հարձակումների անհաջողության պատճառը զծնք չունենալն էր: Զինված լինելով միայն սրերով ու գազանակներով, այդ հարձակումների ժամանակ բարիները մեծ կորուսուներ ունեցան: Այդ իսկ պատճառով սեյեղ Ցահայն դիմում է մերձավոր գյուղերի բնակչությանց և նրանցից օգնություն խնդրում²⁵: Երբ զյուղացիների օգնությամբ բարիների շարժեցը բավականաշատ համալրվում են, նրանք կրկին սկսում են իրենց գրոհները, սակայն նրանց լի հայողվում մեղքել պաշարումք:

Թանակի հրամանատարությունը այսուհետ ևս կիրառելով նույն խաներայական գործելակերպը, սեյեղ Ցահային առաջարկում է Հաշտության բանակցություններ վարելու համար դուրս գալ ամրոցից, նրան խոստանալով ապահովություն: Հավատալով խոստաներին՝ սեյեղ Ցահայն դուրս է գալիս բերդից և սպանվում:

Ինքում գտնվող բարիները իրազեկ դառնալով այդ սպանությանը, դիմում են փախուստի, որի ժամանակ նրանց մեծամասնությունը կոտորվում է²⁶:

Նեյրիզի բաղաքապետ Ջեյն օլ Արեգինը լրավարդվելով այդքանով, դատաստան է տեսնում բոլոր բարիների, մինչև իսկ ոչ բարիների հետ²⁷:

²⁴ Խոյե ռեզում:

²⁵ Քեր թ 67 թ:

²⁶ Դասիք թ 68 թ:

²⁷ Առավել, Խամաթ, էջ 71:

Այսպիսով, Նելլիզի առաջին ապատամբությունը պարտվում է:

Իշխանությանների կողմից բարիների արյունահեղ դաժան բարդերը մեծ զայրույթ են առաջացնում, որից չուսով նոր ապատամբություն է բռնկվում: Այս անգամ ապատամբներն իրենց ընտանիքների հետ բարձրանում են մոտակա լինենքը: Կենարունից նոր ուժեր ստանալով՝ կառավարական զորքերը նորանոր հարձակումների են դիմում: Բայց նրանց այդ բազմաթիվ հարձակումները մատնվում են անհաջողություն: Խելպես հաղորդում են պատմական ազրուրները, այլդ ժամանակաշրջաններում կառավարական զորքերի թիվը հասնում էր 10.000-ի, որոնք իրենց թնգանոթներով ոմքակռնում էին ապատամները, այդերն ու անտառները: Բորբոքված բարիներն անզերը թիվում էին լիներից, հարզածում կառավարական ջոկատներին, ապա հափշտակելով թշնամու վառողը, զենքերը, ուստի իրեւ, վերագառնում էին լիները²²:

Իշխանությաններն այդ դրությունից դուրս գալու նպատակով դիմում են լինեային ցննդների օգնությանը և պահանջում պաշարել լինենքը և ոչնչացնել բարիներին:

Բարիները ջուառվ ընկնում են պաշարժան մեջ, և օրեցօր վատթարանում է գրությունը, սպառվում զինամթերքը, և նրանք սկսում են անհաջողություններ կրել Վերջապես, զորքերին հայողվում է լրիվ ջախշախնել բարիներին և գառատատն տեսնել նրանց հետ, որն իր դաժանությամբ գերազանցում է բարիների նախկինում տեղի ունեցած բոլոր բարդերին²³: Ըստ Ալեքսանդրի, բարիների գերի ընկած առաջնորդներին տեղափոխում են Ֆարս նահանջի տարրեր բազարներ, որպեսզի հոգեվորականությունը և պետական պաշտոնյաները ականատես լինեն բարիների նկատմամբ կիրառած գառատատնին: Նելլիզի իշխանությունները զարհուրելի տանշանքների ենթարկելով՝ Շիրազ են բերում երեխաներին, կանանց և աղջիկներին, զինվորներն իրենց նիրակների ժայռերին ցցած տանում են քաջ բարիների գլուխները²⁴:

Նելլիզի ապստամբությունը բարիների վերջին համախմբված ելույթը եղավ:

Այնուհետև, ինչպես հայտնում են աղբյուրները, բարիների աղանդի կճնդանի մնացած առաջնորդները 1852 թ. իրանի տարրեր վայրերից

²² Ալեքսանդր, Ալամբ, էջ 71, Յան՝ Tarikh-i-ladid, p. 126.

²³ M. Насим, Бабиджане восстания в Иране, стр. 126.

²⁴ Ալեքսանդր, Ալամբ, էջ 71-72:

մեկնում են Թեհրան և ծրագրում տեսողի ենթարկել շահին, գրավել Թեհրանի բնեղը, գանձատումը և զինանոցը¹⁰¹,

Տեղեկանալով, որ օգոստոսի 16-ին շահը վնալու է որսի, տաս բարիներ ատրճանակներով զինված թաքնվում են նրա ճանապարհի վրա: Նրանցից երեքը պետք է հարձակվեն շահի վրա և սպանեին վերջինիս: Սպանությունը կատարված է զանցանցի Սադեղը, որը հանրագիր հանձնելու պատրավակով մոտենում է շահին և մի քանի անգամ կրակում նրա վրա: Մյուս երկու տեսորիստները նկատելով, որ շահը շապանվեց, հարձակվում են նրա վրա, վայր գցում ծիռուց և փորձում դաշտանար անձի: Սակայն այդ նրանց լի հաջողվում, քանի որ օգնության է հասնում շահի շրախումը:

Բարիների ձեռնարկած այդ անհաջող մահափորձից հետո ամբողջ Իրանում, հատկապես Թեհրանում, սկսվում է բոլոր բարիների ձերբակալումը և արյունալի պատիժներու:

Բացի Բահաօլլահից, որն օտարերկրյա գաղութաբարների ներկայացուցիչների միջնորդությամբ ազատվում է բանտից և անարգել հեռանում Իրանի սահմաններից, մնացած բոլոր բարիները տանչամա՞ս են արվում:

Պատահիանատվությունը միայն իր վրա լվերցնելու նպատակով շահը կարգադրում է արյունալի ակտին մասնակից դարձնել բոլոր վեպիրներին, ընդհանրապես բաղարի բոլոր ռմբուր և անվանի անձանց: Բարձր հոգնորականությունն իր հերթին հրաման է արձակում և բարիների սպանությունը հայտարարում սրբազն գործ: Մահապատժի հեթակա 28 բարիներին բաժանում են արքունիքի վեպիրների, մոշթահնդների և այլ անվանի անձանց միջև¹⁰², Նրանք հաջի Սոլիման խանի, Նեյրիզեցի Ղասեմի և զռմեցի մոլլա Ֆաթհլլահի մարմինները ծագութում են դաշտվներով, ծակերի մեջ մոմեր խրում և վառում, որից հետ նստեցնում են ազատակների վրա, մոմետիկներով և դ՛ուղղունայով մտն են ածում մայրաբաղաթի փողոցներում¹⁰³:

Ինչպես գրում է Ատրպետը, այդ հրեշտակին տանչանքների մատնված հաջի Սոլիման խանը առանց հառաջելու, անտրտունչ և անվհատ առաջ էր գնում և երթեմն ազատակից ցած գալով, մարմելից վար թափված

¹⁰¹ թերթ 85 ա.

¹⁰² թերթ 22.

¹⁰³ Խայեն անձաւ, թերթ 23.

մոմերը նորից խրում էր մարմելի մեջ¹²⁴, թեհրանի ողջ բնակչությունը
փողոց գուրս թափված՝ դիտում էր այդ ածարանը:

Վերջապես, Սուլեյման խանին և նրա Համայնշներին տանում են քա-
ղաքի դարպաններից գուրս: Այստեղ նրանց սպանում են դաշինուերը,
որոնք կտրատում են նրանց մարմինները և դիմատում¹²⁵:

Մեջի Մալեք զադեն անդրադառնալով այդ վայրագ իրադարձու-
թյուններին, գրում է հետեւյալը: Սպահանում բարձրաստիճան պաշտո-
յաները և հոգևորականությունը որում թշնամանքի դեպքում անմեղ
մարդկանց զրպարտում էին Բարի համարդ լինելու մեջ և սկսում թալա-
նել վերջինիս ունեցվածքը: Քաղաքի բարինները, այդ թվում և ազատա-
խուն անձինք, որոնց թիվը հասնում էր 800-ի, հարկադրաբար, ըստ Մա-
լեք զադեի, ոմիզուցե հիմարաբար, իրանց կրանքը փրկելու նպատակով,
ներփուժում են ուստական հյուպատոսարան և տապատանչ զտնում
այնտեղ: Այդ բայց առիթ է առյօն բարձրաստիճան հոգևորականու-
թյանը ուժը հանել քաղաքի և նրա մերձակա պատճերի տարրերին և
գագանակներով ու կոպալներով հարձակվել ուստական հյուպատոսարա-
նի վրա և շրջապատել այն: Այսուհետև, հյուպատոսարանում շապաստա-
նածներին նակատագիրը որոշելու համար մի քանի հանդիպումներ են
կայանում ուստական հյուպատոսի, նահանգապետ Զել Էլ Մոլթանի և
մոլթանցների միջև: Մրանից հետո ուստական հյուպատոսը հավաստի-
ացնում է, որ համաձայնություն է կայացվել հյուպատոսարանում գրտ-
նըվող բարիններին անվտանգ թոշնելու մասին, պայմանով, որ վերջին-
ներս կամավոր հեռանան ապաստարանից վատանելով հյուպատոսին,
նրանք գիշերը գուրս են գալիս հյուպատոսարանից: Ապա տեղի է ունե-
նում այն եղելությունը, որը, ըստ Մալեք զադեի ընտլիսկ գրին է
ամաշում նկարագրել¹²⁶: Հոգմորականները սրի են մատնում նրանց:

Այսպես ձեզգից XIX դ. 40-ական թվականներին իրանում բռնկված
բարիական հերսոնական շարժումը, որը նրանի հեղափոխական շարժում-
ների պատմության մեջ ամենաշահակալից շարժումներից մեկն է:

Այդ ապատամբության ընթացքում, ըստ պաշտոնական տվյալների,
պանզեցին մոտ 20.000 բարիններ¹²⁷:

¹²⁴ Առաքե, Խայաթ, էջ. 81.

¹²⁵ բերք 23: تاسیخ التواریخ احوالات صدراعظم

¹²⁶ مهدی منکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص 22-23.

¹²⁷ The Encyclopaedia of Islam, New ed., vol. 1, p. 847.

О. Л. ПАХЛЕВАНЯН

ВОССТАНИЕ БАБИДОВ В ИРАНЕ
В СЕРЕДИНЕ XIX В.

Резюме

В середине XIX в. в Иране беспрецедентно усилилось проникновение и влияние европейских держав. Как логическое последствие созданной в Иране ситуации, в стране возникли и распространялись мощные народные восстания. Среди них крупнейшим и важнейшим является бабидское восстание 1848—1851 гг., которое имело ярко выраженное антифеодальное и антиколониальное направление и которое было жестоко подавлено реакционными властями.

Ա. Ա. ԲԱՐՁՐԻՒԹՅԱՆ

ԹՈՒՐԳ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻ
ԵՐՆՍՆԱՄՑԱԿԱՆ ԽՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XVI—XVII դարերի թուրք-իրանական համարյա անընդմեջ պատերազմները, որոնք մղվում էին Մերձավոր արևելքում քաղաքական և տնտեսական գերակշռություն ձեռք բերելու համար, շարումակվեցին նաև XVIII դարում՝ Սակայի այս դարաշրջանում մղված պատերազմների ընթացքում ևս ախոյաններից ոչ մեկին շնորով հասկել քաղաքական առավելության և, մասնականդ, տարածքային ընդարձակում ձեռք բերել մյուսի հաշվին։ 1623 թ. Զօհարի պայմանագրով նախատեսված սահմանները մնացին անփոփոխ, բացառությամբ Արարատից մինչև Եաթթ ոչ Արար գետն ընկած հոկայական տարածքի առանձին հատվածների, որոնց մինչև XX դարի սկիզբը վեճի առարկա էին հանգիսանում երկու պետությունների միջև, ժամանակ առ ժամանակ պատճառ հանդիսանալով արյունոտ բախումների և մեծ ու փոքր պատերազմների համար։

XVIII դարի երկրորդ կեսին նկատվում է Սամանյան կայսրության ռազմական էքսպանսիայի թաւացում իր արևելյան հարեանի նկատմամբ։ Դրա պատճառները, անշուշտ, պետք է փետրել այդ հոկա ռազմական պետության ռազմական, տնտեսական և քաղաքական թուլացման մեջ, որի առաջին նշանները ի հայտ էին եկել զետև XVI—XVII դարերում։

Վիճնայի տակ օմանյան բանակի բախջախումից հետո, ըստ թուրքական բուրժուական պատմաբանների, սկսվում է Թուրքիայի պատմության նոր էտապը, այսպիս կողման ժնահանցի շրջանը (ըիչաթ դերի)¹, որի ընորոշ գիծը հենց օմանյան ռազմական էքսպանսիայի դադարեցումն է նվազայում։

¹ „Tarih“, c. III, Istanbul, 1933, s. 253.
120

Վիճակայի մաս պարտությունն, անշուշտ, պատահական չէր, այլ ուժեր իր ներքին, խորը պատճառները։ Այդ առթիվ կ, Մարքսը նշում է, որ «...Թացարձակապես ոչ մի հիմք չկա համարելու, որ Թուրքիայի անկումը սկսվեց այն պահից, երբ Սործսոկին օգնություն ցուց տվեց ազգից ավտորիական մայրաքաղաքին... Թուրքական կայսրության կազմակերպությունը այն ժամանակ գտնվում էր քայլաբան վիճակում ...մինչ այդ արդին... արագործն ուղիս է օտառմանը հզորության և մեծության պարագրանի վերը»²։

Հսկայական կայսրության տարածքում ազելի ու ավելի ուժգին կերպով են սկսում գրսնորվել կենտրոնախույս ձգուումները։ Ծփառուուր գոնզում էր մամլյուկյան ֆեոդալների ձեռքերում։ XVII—XVIII դարերի սահմանագիծը նշանավորվում է հակաթուրքական ուժեղ ապատամբություններով՝ Իրարում, Լիբանանում, Հեջազում։ 1706 թ. Իրանը փորձեր է հատարում խրախուսել Հարավային Իրաքի արաբական ցեղերի հակառակառավարական շարժումները³։

Սովորեյան կայսրության ներքին անկայունությունը, ֆեոդալների անշատվողական ձգուումները, յանի լարիների մշտական խոռվությունները, ժողովրդական հույսումները, բազմաթիվ պատերազմների հետևանքով համատարած քայլայումը, կայսրության տնտեսական և ֆինանսական ճնշաժամը, մեջմատ ժողովուրդների ազատազրական պայքարը, XVII դարի երկրորդ կեսին համարյա անընդմեջ մզգած պատերազմներում ուղաժական պարտությունները և դրանց հետևանքով տերիտորիաների կորուստը, ինչպես նաև մի շարք այլ հանգամանքներ ունեցան այն հետևանքը, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ նշանառվեցին նոր գծեր։ Յ. Էնգելսի արտահայտությամբ XVII դարի վերջին ընդուրքերի Հարձակողական ուժը կրտովել էր⁴, Սուլթանների մշտական ազգեսիւթյանը և Հարձակողական ոպուն մերի ընդ մերթ փոխարինելու է գալիս սպասողական դիրքը։ Թուրքական արտաքին քաղաքականության մեջ դրանորվում է ավելի շատ ճկումություն։ ոչ միշտ է, որ կառավարող շրջաններն աշխատում են իրենց առջև դրված խնդիրները լուծել բացառապես զենքի օգնությամբ։ Նոր պայմաններում ազելի ու ավելի հանախակի դիմում են հարցերի լուծման դիվանագիտական ճա-

² К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 10, изд. 2, стр. 252.

³ Центральный Государственный Архив Древних Актов (ЦГАДА), Священства с Турцией, ф. 89, 1706 г., л. 3, л. 66.

⁴ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 22, изд. 2, стр. 17.

նապարհին և, ամենակարևորը, աշխատում են խուռանազիլ էվրոպական պետությունների միջև և խաղալ Նորանց հակասությունների վրա: Ի գեկ, արդ մասին ուշագրավ դիտումներ չ անում Կռուսանդեռուպուլսում ուսւական դիսպան Պ. Ա. Տոլստոյը⁶:

Ժամանակակից թուրք պատմագրությունը XVIII դարի սկզբի Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականությունը թեութագրում է որպես ոչեղաբարության քաղաքականություն (statasfsizlik): Խակապես, XVIII դարի առաջին տասնամյակի ընթացքում Օսմանյան կայսրությունը սկսում է վարել Համեմատաբար Շիազաղասիրական քաղաքականություն, և ու այն դեպքում, երբ եվրոպական տերությունները զրադարձ էին համաձայնության բնույթի անողիք պատերազմներով, ինչպիսիք էին խսպանական ժառանգության համար մզգող պատերազմը, Հյուսիսային պատերազմը և այն, որոնց պայմաններում միջազգային իրադրությունը, անտարակույթ, նպաստում էր թուրքական ուղղական էքսպանսիայի ծավալմանը Սարոպայում: Սակայն բնութագրելով այդ ժամանակաշրջանի թուրքական արտաքին քաղաքականությունը, պետք է հաշվի առնել, որ Օսմանյան կայսրության Շիազաղասիրությունը կրում էր հարաբերական և սահողողական բնույթը: Այդ առթիվ Պ. Կանտոնմիրը, որը բազմաթիվ տարիներ ապրել է սուլթանական պալատում և քայլատեղյակ էր Թուրքիայի արտաքին քաղաքականությանը, մեծ վկացիք Պարլուպու Ալի փաշայի քաղաքական գիծը բնութագրում է հետեւյալ կերպ: «...Նու երազում էր նվաճումների մասին, ուսկայն չէր ցանկանում երկրը հնիտարկել վտանգի և շատ բան կորցնել, հույս ունենալով ձեռք բորել միայն նվազագույնը»⁷:

Այդ նույն միտքը Պետրոս I-ին դրաժ նամակում ավելի պատկերավոր ձևակերպում է ստանում Երուսաղեմի պատրիարքի կողմից: Թուրքերը ժերր աղքատ են, ասում են՝ իրենք խաղաղասեր են»⁸:

* ЦГАДА. Сношения с Турцией, ф. 89, 1703 г., л. 2, л. 252.

* A. N. Karat, 18 yüzyıl başı Avrupa umevi hâlinde Türkiye'ni tarafsızlığı, *Bulleten*, 1943, с. 8, с. 25.

⁷ С. Ф. Орешников, Русско-турецкие отношения в начале XVIII в. (Диссерт. на соиск. уч. степ. канд. историч. наук), М., 1966, стр. 123.

⁸ D. Gantemir, Histoire de l'Empire Ottoman, t. 2, Paris, 1743, liv. IV, p. 314.

⁹ Н. Ф. Каптерев, Иерусалимский патриарх Досифей в его сношениях с русским правительством (1669—1707). «Чтения в императорском обществе истории и древностей российских при Московском университете», к. 2, М., 1891, стр. 49.

հաղադ Հարաբերություններ պահպանելով ստցիալ-տնտեսական, ռազմական և մշակութային դարձագման մակարդակով Թուրքիայից առաջ անցած ճյժուպական պետությունների հետ, Սամանյան կայսրությունը, որին Կ. Մարգար անվանել է «...Միջնադարի միակ իսկական ռազմական տերությունը», ընդհանրապես բնազ չէր հրաժարվում զավթողական պատերազմներից: Խազմաշոմը տրամադրություններ ունեցող թուրքական ռազմագուտական ազնվականությունը, որը ռազմական արնեսուր դիտում էր որպես իր գործության հիմնական աղբյուր, շարունակում էր երկիրը մզել Սամանյան կայսրության համար ավանդական ազգագրականության հունով:

Թուրքական կառավարող շրջանները նվազայրում տերիառիալ նվաճումներ կատարելու անհարինությունը աշխատում էն փոխհատուցել առիական մայրամաքում պատերազմներ մղելով, մասնավորապես աշխատելով տարածքային առաջելություններ մեռք բերել և ժամանել Հարևան Իրանի Հաջվին:

Այս իսկ տեսակետից շափառանց հատկանշական է Պետրոս I-ին ուղղված սուլլան Ահմադ III-ի¹¹ 1708 թ. թվակիր հրովարտակը¹², որտեղ նա խնդրում է ոռուական կայսրին օգնություն բույց տալ թուրքերին՝ Իրանի դեմ իրենց կողմից ծրագրված պատերազմում, փոխարինեց խոստանելով օգնել ոռուակիրին՝ լիների դեմ պարբերում:

Միանգամայն ակներեկ է, որ XVIII դարի 20-ական թվականներին Սեֆյան պետության ճգնաժամը նպաստել էր Թուրքիայրամ ազգեսիզ ժրագրերի վերակենդանացմանը՝ Իրանի և Անդրկովկասի նկատմամբ: Սամանյան պաշտոնական տարեգիր Քյուջյուկ Ֆելիքսիագեն վկայում է, որ 1722 թ. Դիվանի նիստերից մեջի ժամանակ որոշում է ընդունվում Իրանի նկատմամբ աֆղանների Հաղթանակի դեպքում ռաստվածապես պետությանը միացնել բոլոր այն երկրները, որոնք կմնան առանց այրուց¹³:

¹¹ Կ. Մարքս և Փ. Էնգելս, Ըստ., տ. 22, ոլ. 2-ը, տր. 20.

¹² Ա. Ա. Շահումյան, Տարածաշրջանական պատության (1707 թ.) հնցումից հետո, երբ լուրջեր են տարածվել Բառասահի թշնամի Ստուխալով Անդրկովկաս պրես Անդրասահի թուրքիա պատուեալն հանալիքը մարին:

¹³ قاریخ اسماعیل داضم افندی الشهیر بکوچك چنیزاده استانبول 1887

Խախտելով 1639թ. Թուրք-իրանական պայմանագիրը, 1723 թ. Թուրքական զորքերը ներխուժում են Ալղոբովկաս & Իրան¹², գրանցվ իսկ զորքնական իրականացում տալով ամանյան կառավարող շրջան-ների վերոնշյալ ծրագրերին, 1727 թ. Իրանի աֆղանական տիրակալ Աշրաֆի հետ կնքած պայմանագրով Թուրքիան արևմտյան և հյուսիս-արևմտյան Իրանում նվաճում է զգալի տերիտորիաներ¹³:

Թուրք-իրանական պատերազմները բարով թափով շարունակվում են նաև Իրանում նազիր շահի տիրապետության տարիներին (1736—1747 թթ.)¹⁴:

XVIII դարի առաջին կեսին Թուրքիայի ռազմական էքսպանսիան դեպի Իրան և Անդրբիկովկաս հանդիպեց Ռուսաստանի հակազդեցությանը: Հայտնի է, որ Պետրոս I-ի պարսկական արշավանքը նվաճակ ունեց արգելակել Թուրքիայի ելքը դեպի Կասպից ծով: Այդ նույն շրջանում Ռուսաստանն իր առջև պատճեկան կարևոր խնդիր էր դրել: Աև ժողի առավելյա շրջանները ազատագրելու թաթարա-Թուրքական կախումից և հարավում ելք ստանալ զեղի ժողի¹⁵: Պետրոս I-ի ազնված արշավանքները (1695—1696 թթ.) հետապնդում էին հենց այդ նախառակեները:

Այսուհետև ոչ միայն Անդրբովկասում, այլև Մերձավոր և Միջին արևելյում Ռուսաստանի և Օսմանյան կայսրության շահերը անմիջական բախխման մեջ էին մտնում:

XVIII դարի երկրորդ կեսին ռուսական զենքի հաջողությունները Թուրքիայի նկատմամբ, և Ռուսական կայսրության ծավալումը դեպի հարավ ունեցավ այն հետևանքը, որ այդ ժամանակվանից սկսած Մերձավոր և Միջին արևելյու խնդիրները վեճի առարկա էին դառնալու, արդեն, երեք պետությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի միջև նույն երր արդ պարագարի մեջ ընդդիկվեցին նաև Արևելյում Ռուսաստանի մրցակիցներ և քաղաքական ախոյաններ Անդրբովկաս և Ֆրանսիան, Թուրք-իրանական գործադրու հակամարտությունը անխուսափելի իրքին պետք է ընդուներ սկզբունքավորին նոր բազմագույթյուն, որովհետ շո-

¹² Roukollah K. Ramazani, *The foreign policy of Iran. A developing nation in World affairs 1500—1941*, Charlottesville, 1966, p. 22.

¹³ Նոյն տեղում:

¹⁴ Hekmat, Mohammad-Ali, *Essai sur l'histoire des relations politiques franco-ottomanes de 1722—1747*, Paris, 1937; L. Lockart, *Nadir Shah*, London, 1938.

¹⁵ История дипломатии, т. I, изд. 2-е, М., 1959, стр. 293.

շափելով և վրապական պետությունների շահերը Մերձավոր և Միջին արևելքում, այդ պայքարը այսուհետև դադարում էր լինել միայն հարման մարտնչող տերությունների գործը:

XVIII դարի վերջին Մերձավոր արևելքում Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքականության ակտիվացման պայմաններում, Թուրքիայի և Իրանի նկատմամբ վերաբերմունքի հարցում, մասնավորապես Թուրքիանեական հարաբերությունների կապակցությամբ, Խոնդոնում և Փարիզում մշակվում են քաղաքական ծրագրեր, որոնք իրենց վերջնականագույններով հար և նման էին միմյանց: Այդ ծրագրերի հությունը կայանում է Իրանում, որ երկու հարևան պետություններին՝ Թուրքիային և Իրանին, առանձին-առանձին կամ համառեղ սարի հանել Ռուսաստանի դեմ: Օրիգարատն ժամանակների համար մշակված քաղաքական այս ծրագիրը միանգամայն համընկնում էր Թուրքիայի և Իրանի կառավարող շրջանների շահներին, որոնք դիտակցելով, որ մեն-մենակ ի մինակի չեն ռազմական առումով լավվելու հզոր Ռուսաստանի հետ, ի դեմք մենք մյուսի գիտերում էին դաշնակիցներ:

Այսպիսով, Թուրք-իրանական հակամարտությունը և փոխադարձ տարածքային հավակնությունների խնդիրը որոշ առումով մղվում է ետին պլան, թեև, ինչպես կտեսնենք առորդն, ժամանակ առ ժամանակ այն կրկին ձեռք է բերում սրբություն, աճողիք տալով տեղական բնույթի և ազգական ընդհարումների և նույնիսկ խոշոր մասշտարի պատերազմների:

Դեռևս 1793 թ., երբ Իրանում դեռ չեր ավարտվել իշխանության համար մղվող միջեռդարձական պայքարը դադարների և զննդերի միջև, Աղա Մոհամմադ խանը ծրագրում էր արշավանքի դուրս գալ զեպի Անդրկովկաս՝ այնտեղ ժամանակաշրջանում միանալու շաբաթումը բախչական համար: Նրա արդ ծրագիրը անմիջապես հագանության է արժանանում Թուրքիայի կողմից: Աղելին, վերջինս սկսում է հրահրել զաշարների առաջնորդին արագացնել այդ արշավանքը, որովհետև Կոստանդնոպոլսին հայտնի էր դարձել, որ Աղա Մոհամմադի հակառակորդներից մենք՝ Այս Մուլտադ խանը, ձգտում է Ռուսաստանի հետ զաշինք կնքել զարգարների և Թուրքիայի դեմ: Այդ առթիվ Կոստանդնոպոլսում Ռուսաստանի գործների հավատարմատար Ա. Խվատովը 1793 թ. հոկտեմբերի 20-ին հաղորդում է. ԵԲ. Դուան անօնից թաղթադի փաշան Պարսկաստան է ուղարկել Թուրքաշի Բաշիին՝ Աղա Մոհամմադ խանին շնորհավորելու նրա հաղթանակների առթիվ և հայտնելու, որ Բ. Դուոր նրան շի հանալի Պարսկաստանի տիրակալ, քանի դեռ նա իր իշխանությունը առաջ է գտնվում:

թյանը լի ենթարկել Վրաստանը։ Այդ գործին նպաստելու համար, եկեղեցի բարեկամության պարտականություններից, թ. Դուռը պատրաստ է Պարսկաստանին հատկացնել դրամ և թնդանոթները¹⁷։

Իր հերթին, Ֆրանսիան նույնպես, Ռուսաստանի մասնակցությունը ծվրոպական պետությունների հակաֆրանսիական կուլտուրային կանխելու համար, աշխատում էր իրանա-ռուսական պատերազմը Հրահելի Այդ նպատակով Իրանում գործող ֆրանսիական գործակալները ամեն կերպ բորբոքում էին Աղա Մոհամմադ խանի զավթողական նկրտումները Կովկասի նկատմամբ¹⁸։

Այս առջրանքները, անտարակույս, արագացրին դեպքերի ընթացքը, և ինչպես հայտնի է, 1795 թ. գարնանը Աղա Մոհամմադ խանը շարժվեց դեպի Վրաստան, առավոր ավերածության և կողոպուտի ենթարկելով այդ երկերը։

Սակայն քանի որ իրա Հրահակների անլուր գազանությունները ուժեղացնում են Վրաստանի կողնորոշումը դեպի Ռուսաստան, զաշարների առաջնորդը որոշում է կազմակերպել նրկորդ պատժի արշավանքը։ Այդ ժրագիրը կրկին խրախուսանքի է արժանանում օսմանյան կառավարող շրջանների կողմից։ Վկայելով այդ մասին, Կոստանդնուպոլիսում ռուսական դեպանորդը 1796 թ. հունիսին հաղորդում է. «Բ. Դուռը խսկապես կապեր ունի Աղա Մոհամմադ խանի հետ»¹⁹, Մեկ այլ տեղեկության համաձայն ռուսական ռուսական սերակեր Յուսուֆ փաշան Աղա Մոհամմադ խանի Անդրկովկաս կատարելիք արշավանքի համար պնդություն էր նախապատրաստում²⁰։

Ֆրանսիան, իր հերթին, աշխատում է Կովկասում խոշոր պատերազմ բորբոքել մի կողմից Ռուսաստանի, Մյուս կողմից՝ Իրանի և Ռուսակայի միջև Ֆրանսիական դիվանագետների անմիջական մասնակցությամբ թուրքերի և պարսիկների միջև աշխույժ բանակցություններ էին տեղի ունենում Ռուսաստանի դեմ դաշնակցելու և Կովկասում համատեղ գործողություններ վարելու վերաբերյալ»։ 1795—1797 թթ. զիրեկտո-

¹⁷ Архив Внешней Политики России (АВПР), ф. «Сношения с Турцией 1793—1794 гг.», д. 77, лл. 199—200.

¹⁸ АВПР, ф. «Сношения с Персией 1795 г.», д. 810, лл. 9—10.

¹⁹ АВПР, ф. «Сношения с Турцией 1795 г.», д. 831, л. 1 об., д. 828, л. 103.

²⁰ П. Г. Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 гг., ч. I—III, СПб., 1889, стр. 404—405.

²¹ ЗГУ А. Р. Иоомиашвили, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958, стр. 11—21.

թիւրքի Հանձնարարությամբ Իրան ուղարկված Ֆրանսիական դեսպանությունը Սլիմինի և Թրյուզերի գլխավորությամբ հետազնդում է հենց այդ նպատակները²²:

1801 թ. ֆրանսիական կառավարության հատուկ առաքելությամբ կոստանդնուպոլիս ժամանած զնդապետ Սերաստիանին Հանձնարարություն ուներ նաև վերականգնել կապերը Իրանի հետ և նպաստել շահի և սուլթանի մերձնեցմանը: Այդ առիթիվ Կոռլիանում ուստական գլխավոր հրամանատարին ուղղված 1802 թ. սեպտեմբերի 26-ի ցարական կառավարության հրահանգում նշվում է. «Բոլոր տեղեկությունների համամայն թ. Դատուց կարգեն թե չափազանց քիչ էր զրազգում պարսկական գործերով, ինչպես նաև Վրաստանում մեր գործերի ընթացքով... Այժմ թուրքական մինիստրությունը ֆրանսիական կառավարության հրահրումով սկսել է ավելի շատ հետաքրքրվել այդ հարցերով: Հայտնի է, որ առաջին կօնսուլը կարգադրել է նաև ապարհությունների անվան տակ Վրաստանի Պարսկաստան ուղարկել մի էմիսարի՝ ուն գնդապետ Սերաստիանիի, որն իր նաև ապարհությունը պետք է սկսի կոստանդնուպոլիսից²³:

Մուսական իշխանությունների տեղեկությունների համաձայն սուլթանը զիմեն էր Բարբա Խանին (Ֆաթհ Ալի շահին—Վ. Բ.) հատուկ ուղերձով, որտեղ նա թուսատանի դեմ արշավանքի յուրաքանչյուր մասնուկցի խոստանում էր սահմանել ուղեկի տօրը մեկ զուրուցիչ չափով²⁴:

Մուս-իրանական պատերազմի նախօրյակին նապոլեոնի մեջ ավելի ու ավելի էր Հասումանում թուսատանի դեմ ֆրանս-իրանա-թուրքական ռազմական դաշինք ստեղծելու մտահղացումը, որը ենթադրվում էր օգտագործել նաև Մերձավոր արևելյան Ֆրանսիայի մեկ այլ ախոյանի՝ Անդրիայի դեմ: Այդ նպատակով 1803 թ. ֆրանսիական դիվանագիտությունը կօստանդնուպոլուսում և Թեհրանում սկսում է շշափել թուրքական և իրանական կոռավարությունների սեռակետը²⁵:

1804 թ. սուլ-իրանական առաջին պատերազմը սկսվելուց հետո նման դաշինքի ստեղծումը ֆրանսիական կառավարության տեսակետից դառնում է ավելի սեալ Սակայն Թուրքիայի և Իրանի միջն հարաբերությունների անակնկալ սրումը ի շիք է գարձնում ֆրանսիական կա-

²² ՏԵՇ. G. A. Olévier, Voyage dans l'Empire Ottoman, l'Egypte et la Perse, T. 3, Paris, 1807; The Dynasty of the Caesars, London, 1833, p. 274. —

²³ Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК), т. 2, стр. 9.

²⁴ АКАК, т. 2, ч. II, стр. 288, 406—407.

²⁵ АКАК, т. 2, стр. 874—875, 886; т. 3, стр. 324.

ռազմարտության ձգտումը շուտափույթ կերպով գլուխ բնիքներ այդ գործը:

Կոնֆլիկտը նախ բորբոքվեց Թաղդաղի փաշալիքի մեջ մտնող Սովորյանին շրջանի համար, որը վաղուց ի վեր կովախնները էր հանդիսանում Թուրքիայի և Իրանի միջև։ 1805 թ. Սովորյանինի Բարան ցեղի աշխրեթապես Արդուրանման փաշան բացահայտ կերպով ապատամբեց ունիմ և ոչնչացրեց նրա զորամասերը։ Սակայն թուրքական բանակի հեշման ներքո նա ստիպված եղավ փախչել Իրան և զիմնել Զաթը Ալի շահի օգնությանը²⁰։ Զբաղված լինելով Ռուսաստանի հետ պատերազմով, շահը որոշեց ուղարկան զործողություններ շահօնել Թուրքիայի դեմ, ուահմանափակմելով լոկ Իրաքի փոխարքան Հաֆեղ Ալի փաշալիք մոտ միշնորդությամբ, որպեսզի վերդինս դադարեցնի իր հաւատեցները Արդուրանմանի զիմ²¹։ Մինևոյն ժամանակ վախճենալով Թուրքիայի անակնկալ հարձակումից, շահը միջոցառումներ ձեռնարկեց իր արմատան սահմանը պաշտպանելու համար։ Ի վերջո տեղական բնույթի այս կռնիքիկոտը վերածվեց երկու երկրների միջև բացահայտ ուղարկան բախման²²։ Շահի ավագ որդի, Թերմանշահի կառավարի Մոհամմադ Ալի միրզան և Հաֆեղ Ալի փաշան ուղարկան զործողություններ ժամանեցին միմյանց դիմաւ։

Երկու պետությունների բազում հակասությունները, որոնք միաժամանակ խորք էին աեցիլ, կրկին բարձրացան մակերես։ Նրանց փոխհարերություններում հատկապես հատուկ սրություն ձեռք բերեց քրդական հարցը։ XIX դ. սկզբից Սամանյան կայսրությունը ձեռնամուխ է լինում քրդական անկախ և կիսանկախ իշխանությունները հնազանդեցնելու և իր իշխանության տակ պահելու քաղաքականությանը, որի հանահնքը զնալով հաճախակի են դառնում քրդական ըմբռատությունները։ Հանում իր քաղաքական շահերի, Իրանը ստանձնում է քրդական շարժումների հոգանավորի գերը²³։ Ի դեպ, Իրանն աշխատում

²⁰ C. J. Rich, Narrative of a Residence in Koordistan, London, 1836, vol. I, p. 384.

²¹ R. G. Watson, A history of Persia from the beginning of the XIX century to the year 1858, London, 1865, p. 155.

²² Այդ յարբ ան՝ J. M. Kinneir, Mémoires Géographiques sur l'Empire de Perse. Trad. de l'anglais par le Colonel G. Drouville, St. Petersbourg, 1827, T. II, p. 58—60; A. Adams, Ирак Арабский. Басторский вкладает в его прошлом и настоящем, СПб., 1912, стр. 401—405.

²³ Կ. Սոսումի, Բուրք ազգային շարժումները և Հայ-քրդական հարաբերությունները, Բեյրութ, 1869, էջ 82—84։

է սպազմի նաև հարեւան արարական երկրներում ծավալված վահարիթ-ների շարժումների²¹ ռամանյան տիրապետության տակ գտնվող Պարսից ժողովի արարական շրջանների, ինչպես նաև Իրաքի նկատմամբ իր տեղումորիալ հավակնություններին հազուր տալու համար²², 1806 թ. սկզբին, երբ ռուս-թուրքական հարարերությունները կրկին սկսեցին սրբիլ, Գետերը բարդ պահանջական շրջաններում միտք հղացավ սկզբել թուրք-իրանական հարարերությունների սրումից, դադարեցնել պատերազմը Իրանի դեմ և գաշնակցնել նրա հետ՝ ընդդեմ թուրքիայի. Այդ առթիվ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Բուլգրերգը կովկասում ռուսական դիմավոր հրամանառար Գուղովիչին զրում է. «...Եօ պետք է հայտնեմ Զեզ, որ ներկա հանգամանքներում հաշտությունը Բարս խանի հետ խիստ անհրաժեշտ է Սատանանյան Դուռ դիմ պատերազմի ժամանակ ազատ ձեռքեր ունենալու համար, որպեսզի Հարավորության դեպքում պարսիկներին հանենք թուրքերի դեմ»²³, Բանակցություններ վարելու գործը հեշտանում էր նրանով, որ 1806 թ. սեպտեմբերին Դիլանի նահանգի խան Միրզա Մուսան իր հավատարմատարի միջոցով ռուսներին հղել էր մի նամակ, որտեղ առաջարկում էր Ռուսաստանի ներկայացուցչին ուզարկել Թեհրան՝ հաշտության բանակցություններ սկսելու համար, ի պատասխան զրա, Գուղովիչը Գետերուրողից Հրահանդ ստացավ հաշություն կերել Իրանի հետ²⁴: Սակայն ռուսական ներկայացուցչի բանակցությունները Թեհրանում ոչ մի արդյունք չուվեցին, որովհետև շահական կառավարությունը պահանջեց ուզ Անդրկավասը և Պաղստանը: Ակադեմիկոս Ա. Ռ. Հոգհանիսյանը իրավացիության նշում է, որ տպարտիկները ոչ մի զիրման լինին գնում, բանի որ հույս ունեին սպառություն ստանալ թուրքերից և Իրանսիացիներից²⁵,

Հաշական արքունիքի ալջ հույսերը հիմնվում էին հնանյալ փառա-տերի վրա: Դեռևս 1805 թ. Իրան էին ժամանել Նապոլեոն Բոնապարտի լիազորներ Ռումինի և Թորերը, որոնք խրախուսելով շահին շարունակելու պատերազմը Ռուսաստանի դեմ, մինչև մասմակ առաջարկում էին գաշինք կերել Ֆրանսիայի հետ²⁶: Խակ 1806 թ. վերջին սկզբել էր ռուս-

²¹ Տե՛ս L. A. Histoire des Wahabis, Paris, 1810, p.p. 96—98, 109.

²² ԱԿԱԼ, տ. 3, ստ. 424.

²³ Դայք անզում, էջ 420—421:

²⁴ A. R. Խոհմանք, Դպրություն, էջ 177:

²⁵ ԱԿԱԼ, տ. 2, ստ. 883—887, 1033—1035; տ. 3, ստ. 416—418. Այդ ժամանակակից ակադեմիկոս ակ' Պ. A. Jaudert, Voyage en Arménie et la Perse, Paris, 1821; E. Driault, La politique orientale de Napoléon, I, Paris, 1904, pp. 172—177.

թուրքական պատերազմը, որի պայմաններում Սահանյան կայսրությունը պետք է շահադրգովածություն դրսնորնը ոչ միայն զիցումներ անելու երանի հետ կռնիշիկաց հարթելու գործում, այլև օգնություն ցույց տալու երան ընդհանուր թշնամու՝ Ռուսաստանի դեմ մզգող պայքարում:

Դեռևս մինչև ռուս-թուրքական պատերազմի սկսվելը ֆրանսիացիների միջնորդությամբ Թուրքիայի և Իրանի միջև տեղի էին ունենուած անընդմեջ բանակցություններ դաշինք կնքելու վերաբերյալ³⁵: Այդ առիվ 1806 թ. սնապեմքերի 7-ի հաջորդագրությունում ռուսական դիտորդներից մեկը գրում է, ուժուատուի 2-ին երկու ֆրանսիական և երկու թուրքական կմիսարներ մեկնել են շահի մոտ: Նրանց արգելված է շփման մեջ մտնել որնից մեկի հետև, ուզուատուի 7-ին շահի կողմից էրզրում են ժամանել ՅՈ մարդ և Նրանց հետ երկու ֆրանսիական կմիսարները, որոնք հանդիպում են ունեցել Անտուլիայում թուրքական գերագույն հրամանաւարը Ցուառուֆ փաշայի հետ³⁶:

Այս շրջանում նապոլեոնը Արևելքում Ֆրանսիայի քաղաքականության անկյունաքարն էր համարում իր փայտայած սեույակ գաշինթը իր. թ. Դուան և Պարսկաստանի միջև ընդդեմ Ռուսաստանի³⁷: Պատահական չէ, որ 1807 թ. գարնանը նա փորձում է գործեականորնել իրականացնել այդ գաղափարը, որպես առաջին քայլ իր վրա վերցնելով միջնորդի դերը՝ Թուրքիային և Իրանին հաշտեցնելու և նրանց միջև առկա կոնֆլիկտուր հարթելու գործում: 1807 թ. ապրիլի 3-ին ֆրանսիական կայուրը դիմում է սուլթան Մելիմ III-ին, առաջարկելով համաձայնության գալ Ֆաթիհ Ալի շահի հետ և դրանով իսկ Ըստավոր գարձնել Թուրքիայի և Իրանի համատնօ ելութեք ընդհանուր թշնամու դեմ: Միաժամանակ նա հայտնում է շահին իր շահագրգովածությունը երկու երկրների միջև բարեկամություն հաստատվելու հարցում և խնդրում է, որ նրանց վերը տան իրենց վեճերին և միավորվեն՝ համատեղ կերպով դիմագրավելու իրենց իսկական թշնամուն³⁸:

1806 թ. ռուսական զորքերի կողմից Դերբենտի, Բաքվի, Մուղանի և Անդրկովկասի այլ քաղաքների ու շրջանների գրավումը ստիպեց շահին նապոլեոնի մոտ ուղարկել իր ներկայացուցիլ: Ղազմինի նա-

³⁵ Տե՛ս Ա. Փ. Խալչեր, Մուստաֆա-պաշա Ենթակար, Ա.՝ Ա., 1948, տր. 150; O. Schlechta-Weserkrd. Die Kämpfe zwischen Russland und Persien in Transkaukasien, Wien, 1864, S. 30.

³⁶ ԱԿԱԿ. տ. 3, տր. 522.

³⁷ Ա. Բ. Խօստիստ, Խշկ. աշխ., էջ 145.

³⁸ Նույն ուղում, էջ 146—147:

Հանդապետ Միրզա Ռեզա խանին, Հանձնարարձով նրան Հնարավորին շափ շուտափույթ կերպով գաշինք կնքել Ֆրանսիայի հետ⁴¹, Դեռևս մինչև իրանական լիազորի Ֆրանկիանեյն հասնելը, որտեղ նախատեսվում էր կնքել այդ դաշինքը, Թալեբրանը դիմում է նապոլեոնին հետևյալ հարցումով. աշխատել կնքել եռյակ դաշինք Ֆրանսիայի, Թուրքիայի և Իրանի միջև, ինչպես ինքն է համարում նպատակահարմար ու ցանկալի, թէ՝ ինչպես Թորերի է առաջարկում՝ կնքել երկու առանձին պայմանագրեր Ծիլլալ պետությունների հետ⁴². Ընդ որում Թալեբրանի այդ հարցման մեջ շեշտվում էր, որ Թորերի առաջարկը հիմնված է այն իրադության վրա, որ Օսմանյան կայսրության և Իրանի միջև առկա հակասությունները դժվար թէ հնարավորություն տան կնքելու եռյակ դաշինք:

Ի դեպ Թուրքիան ուշադրությամբ հետևում էր Ֆրանկինշտեյնում Ֆրանսիական բանակցությունների ընթացքին: Ֆրանկինշտեյնի նապայիններ նույրարում գտնվող Թուրքական դեսպան Վահենի էֆենդին բնակ չէր թաքցնում թ. Դուան անրարյացակամ վերաբերմուճը Իրանի նկատմամբ: Ավելին, Թուրքական դեսպանը աշխատում էր աղջել Նապոլեոնի վրա, որպեսզի վերջինն մնչում գործադրի շահական կառավարության վրա Թուրքիայի հետ տերիտորիալ վեճերի հարցում ազելի պիշող լինելու համար: Միաժամանակ նա փորձում էր կանխիլ առաջիկա Ֆրանս-իրանական պայմանագրի այն կետերը, որոնք կարող էին ձեռնուու լինել Թուրքական կառավարությանը⁴³:

Իր հերթին նապոլեոնը ամեն կերպ աշխատում էր միավորել երկու պետություններին ընդուն ուռւուների, Թուրքերին գայթակղեցնելով շասույթում ու սուստումներով, որ եթե էրդըսմի փաշան կովկասյան ճակատում իր բոլոր զորքերով օգնության հասնի Արքաս Միրզային, ինքը՝ նապոլեոնը, խոստանում է նպաստել, որ Թուրքիան ուռւուներից ետ ստանա Ղրիմը, Վրաստանը և վերջապես Թուրքական Հսկողություն սահմանվի ողբանական ավագանի վրա⁴⁴:

Ֆրանկինշտեյնում նապոլեոնի փորձերը կողմերին հաշտեցնելու և

محمود محمود، تاریخ روابط سیاسی ایران و انگلیس در قرن نوزدهم⁴⁵
میاناه، جلد اول تهران ۱۳۷۸، ص ۴۶-۴۷

⁴⁶ A. R. Hoanissian, Եզր. աշխ., էջ 147.
ناصرتجمی، ایران در میان طوفان یا شرم زندگی عباس میرزا، تهران ۱۹۷۸، ص ۷۵-۷۶

⁴⁷ Հայեն անդամ, էջ 26.

նրանց ընդգրկելու համատեղ դաշինքի մեջ ավարտվեցին անհաջողությամբ։ Այդ պատճառով որոշվեց կնքել առանձին ֆրանս-իրանական պայմանագիր⁴³, որը ստորագրվեց 1807 թ. մայիսի 4-ին։ Պաշտպանության-Հարձակողական կողման այդ պայմանագիրը ըստ էության հանդիսանում էր ֆրանս-իրանական գաշնակցային պարմանագիր⁴⁴, թեև անկասկած, դա արևելյան քաղաքականության ընազարյաց նապարանին դիմանագիրը բաղադրականության խոշոր մեկն էր, մասնավոր որ Ֆրենքլինը պայմանագիրն իր սուր ժայռով ուղղված էր նաև Անգլիայի գեմ, սակայն այնուհետեւ ֆրանս-թուրք-իրանական հոյակ դաշինքը նապալեոնը առանձին երկկողմանի համաձայնագրերը իրանի և Թուրքիայի հետ չեր համարում բավականաշափ արդյունավետ։ Նրա կարծիքով, առավել աղջու և շոշափելի ուժ կդառնար եռյակ դաշինքը։ Այդ բանը հաստիացեա ցայտում կերպով երևում է զիներալ Կլոդ Մատյաշ Գարդանին տրված նապոլեոնի 1807 թ. մայիսի 10-ի գրավոր հրահանգում, որտեղ նա ուղղակի պնդում է Ռուսաստանի գեմ Իրանի և Թուրքիայի միջն ռազմական դաշինքի կնքման անհրաժեշտության մրաց։ Նրա կարծիքով, այդպիսի գաշինքը ոչ միայն արգելը կհանդիսանար Ռուսաստանի առաջինադաշտանը Մերձավոր և Միջին արևմերում, այլև մեծապես կազդեր ուստական քաղաքականության ակտիվության վրա նաև ծմբովայում⁴⁵։

Ենելով նշված նկատառություններից, ֆրանսիական դիմանագիրությունը հետեւղականորեն աշխատում էր հարթել Թուրք-իրանական կոնֆլիկտը և կողմերին համապետ բանակցություններ սկսել։ Այդ շանթերը շուտով պասկեցին հաջողությամբ։ շահական կառավարությունը համաձայնություն տվեց Կոստանդնուպոլիսի հետ սկսել բանակցություններ։ Ի վերջո կողմերը համաձայնության եկան համատեղ ելույթ ունենալ Ռուսաստանի գեմ, 1807 թ. ամռանը սերասկեր Թուսութ փաշան հրամայեց Թուրքիայի ասիական նահանգների բոլոր փաշաներին, որ-

⁴³ A. P. Խօսնութեան, Եղ. աշխ., էջ 147.

⁴⁴ Պայմանագրի լրիվ աերաց ակն՝ J. C. Hurewitz, Diplomacy in the Near and Middle East, Princeton, New-York, 1956, vol. I, pp. 77-78.

⁴⁵ Տե՛ս „Mission du général Gardane en Perse sous le premier Empire”, Paris, 1865, p. 81-94 (ծիռված է շատ A. P. Խօսնութ, Եղ. աշխ., էջ 149-200)։

سعید نفیسی، تاریخ اجتماعی و سیاسی ایران در دوره معاصر، جلد ⁴⁶ اول، تهران ۱۳۷۰، ص ۱۰۰

պեսզի իրենց գործերով շարժվեն ու միանան պարսիկներին, եթք ուստի ուղարկան գործողաթյուններ սկսեն Երևանի նահանգում։ Ֆաթէ Ալի շահն իր հերթին խռատանում էր օգնել Թուրքերին, Ռուսաստանի դեմ մզգած նրանց ռազմական գործողություններում⁴։ Ալի առթիվ պարսիկ պատմաբան Ա. Ա. Բիենան գրում է, «Նրանք ծրագրել էին, որ Թուրքական զորամասերը արևելքից, իսկ իրանական զորքերը արևմուտքից պետք է մուտք գործեն Վրաստան»⁵։ Սահմանի մոտ կենտրոնացնելով ՅԵ Հայուրանոց բանակ, Աքրաս Միրզան սպասում էր Արքայի նակատամարտի (1807 թ. Հունիսի 17—18) ելքին, որպեսզի շարժի իր բանակը Սակայն այդ նակատամարտում Թուրքական զորքերի պարտությունը ստիպեց գահաժառանգին հապշտապ հեռանալ Նախիչենան⁶։

Ալպիսով, ուստական զենքի վճռական հաղթանակի շնորհիվ ձախողվեց Ռուսատանի դեմ Թուրքերի և պարսիկների համատեղ հարգածի պլանը։

Եռառով միշազգային դրության մեջ տեղի ունեցավ արմատական գորփոխություն։ 1807 թ. Հունիսի 8-ին Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կնքվեց Տիրքիթի հաշտությունը, որի հետևանքով ցարական Ռուսատանը թշնամի լինելուց ժամանակավորապես վերածվեց Ֆրանսիայի դաշնակցի։ Շնապուծոնը, — այդ առթիվ գրում է Ռուփը, — «տիպված էր Ասիայում իր համար ձեռնուու Թուրք-պարսկական բարեկամությունը գոհել հանում ուստական դաշինքի, որը նրան անհրաժեշտ էր նվրոպայում»⁷։

Սակայն Ռուսաստանի նկատմամբ Ֆրանսիացիների թշնամական գործունեությունն Իրանում շգագարեց նաև Տիրքիթից հետու Ֆրանսիական դիվանագիտությունը եռանդում կերպով աշխատում էր հասնել Թուրքիայի և Իրանի մերձեցմանը և մասնավորապես նրանց ու Ֆրանսիայի միջև հակառական հոյակ դաշինքի կնքմանը։

Հենց այս շրջանում ուժեղանում է անգլիացիների գրուց Իրանում Ֆրանսիացիների զիրքը Իրանու վրա 1808 թ. վերջին բրիտանական կառավարության հանձնարարությամբ Իրան է ժամանում անգլիական ԱԻ

⁴ Н. Ф. Дубровин, История войн и взаимоотношений русских на Кавказе, т. 5, 1888, стр. 141.

على أكيرادينا، تاريخ سياسي و دبلوماسي ايران، جند اول، تهران⁸

١٢٣٧ ص ١٢٣٧

⁵ АКАД. т. 3, стр. 548—549; Н. Ф. Дубровин, նույ. աշխ., և. 8, էջ 177—179.

⁶ Руар, Англо-русское соперничество в Азии в XIX в., М., 1924, стр. 154.

առաքելություն՝ Հարֆորդ Ջոնսի զիմավորությամբ: 1809 թ. մարտի 19-ին Զընեսը Իրանի հետ կնքում է պայմանագիր, ըստ որի շահը պարտավորվում է Խզել իր կապերը Ֆրանսիայի հետ: Պայմանագրով բրիտանական կառավարությունը խստանում էր շահին ամենամյա ֆինանսական հատկացում 160 հազար թումանի շափով (մինչև երա պատերազմի ավարտը Ռուսաստանի հետ) և բացի այդ, իր վրա պարտվորություն էր վերցնել իրանական բանակին տրամադրել զենք և ուղարկել ռազմական հրահանգիլենք³¹:

Հիշյալ պայմանագրի ստորագրումից հետո Իրանում առաջնությունը ձեռք բերելու համար Անգլիայի և Ֆրանսիայի միջև պայքարն ավարտվեց Մեծ Բրիտանիայի հաղթանակով:

Անգլիական դիվանագիտությունը, առաջնորդվելով իր հակառակական միտումներով, անմիջապես ձեռնամուխ նշագ նաև թուրք-իրանական դաշինքի ոտեղժմանը: 1809 թ. Հունվարին անգլո-թուրքական պայմանագրի ստորագրումը, որի հետեւանդով ապրիլին թուրքիան վերականց պատերազմը Ռուսաստանի գեմ, ավելի ուշալ դարձեց այդ դաշինքի ձևավորումը: Հարֆորդ Ջոնսը Թիերանում և անգլիական դասպան էցերը³² Կոստանդնուպոլսում այդ ուղղությամբ ձեռնամուխ եղան բուռն դորժումների անդամանության նրանց համատեղ շանթերի շնորհմամբ 1809 թ. օգոստոսին Կոստանդնուպոլսի ժամանեց շահի լիազորը Կովկասում համատեղ ռազմական գործողությունները սկսելու հարցը թուրքական կառավարության հետ համաձայնեցնելու համար³³: Նա Ֆաթհ Ալի շահի անունից առաջարկություն է անում Անգլիայի մասնակցությամբ կնքել թուրք-իրանական դաշինք՝ Ռուսաստանի դեմ համատեղ պայքար մղելու համար և առաջարկում է պարտավորվել զենքը ցած շդենի, մինչև երկու կողմերի համար ձեռնառու հաշտության հետումը: Ընդ որում շահը պատրաստակամություն էր հայտնում մի բանակ ուղարկել Անդրկովկասում գործող թուրքական զորքերին միանալու համար և բացի այդ, խոստանում էր Կոստանդնուպոլսին հատկացնել գրամական օգնություն³⁴:

³¹ J. W. Kaye, The life and correspondence of Sir John Malcolm, London, 1856, vol. I, p. 439.

³² Տե՛ս R. Adair, The negotiations for the peace of the Dardanelles in 1808—1809, London, 1845, vol. I—II.

³³ ԱՅՊՐ, Գլազու արխ 1—15, հ. 7, հ. 51 օհ—52. Փ. ԵՎԱ, հ. 6184, է. 124.

³⁴ Ա. Բ. Խոլկուսկո, Ելք, աշխ., էջ 242.

Որպես այդ համաձայնության գործնական իրականացում Ախալ-
ցիայի Շնրիֆ փաշան իրանից ստացավ 100 հազար ռուբլի և նույն ար-
ժությամբ զանազան հանդերձանք իր պինդորներին բաժանելու հա-
մար, որոնք պատրաստվում էին իրանական բանակի հարձակման անց-
նելում պես մուտք գործել Անդրկովկասի տաճանները²⁸: Միաժամա-
նակ Եղբայր և Փաշան ներխուժելու մտադրությամբ իր գործերը
Ասպարանի մոտ կենացրացնելուց հետո, Արքաս Միրզան բանակցություն-
ների մեջ մտավ էրզրումի բանակի հրամանատարի և Ախալցիայի փա-
շայի հետ ուստի դեմ համատեղ ելույթի վերաբերյալ: Ջեռք բերված
պայմանավորվածության շնորհիվ իրանական 10 հազարանց մի բա-
նակ, Երևանի սարդար Հոսեին խանի հրամանատարությամբ, օգոստոս
ամսին Կարսի փաշալիքի վրայով անցավ Ախալցիայի փաշալիք, որ-
պեսզի այսուհետից թուրքական զորքերի հետ համատեղ ներխուժի Վրաս-
տան²⁹:

Այս բոլորը վկայում էր այն մասին, որ 1809 թ. կողմերը սրոշակի
համաձայնության էին նկել միավորներու իրենց չանքերը Կովկասում
համատեղ ազրեսիայի դիմելու համար: Եվ միայն սեպտեմբերի 5-ին
Ախալցիալաբի մոտ իրանական զորքերի պարտությունը միաստամանակ
հետաձգեց թուրք-իրանական միացյալ ճակատի ստեղծումը³⁰:

Այսպիսով, 1809 թ. նա, հակառակ անզիյացիների թոյտը ջանքերին,
թուրք-իրանական զաշինքի կնքումը գործնական իրականացում լսու-
ցավ: Դրա վիճակոր պատճառը կայանում է նրանում, որ Թուրքիան զե-
րադասում էր ընդհանուր թշնամու դեմ պայքար մղել առանձին-առան-
ձին, առանց իր վրա դաշնակցային պարտավորություններ վերցնելու:
Այդ առթիվ Ա. Ռ. Հովհաննիսյանն իրավացիորեն նշում է. «Բ. Դուքը
շցոնկացավ Իրանի հետ իրեն կապել պայմանագրային պարտավորու-
թյուններով և այդ պատճառով ընդառաջ լցնաց անպլիական դիվանա-
գիտության շանքերին, առավել ևս, որ Ֆրանսիայի կողմից Ավստրիայի
շախութանմամբ հետո Ասպիհայի ազգեցությունը Կոստանդնուպոլիսում
ժամանակավորապես - թուրքել էր»³¹: Թուրք-իրանական զաշինքի ձե-
վավորմանը մեծապես խանգարում էին նաև երկու երկրների միջն շա-

²⁸ Утверждение русского властечства на Кавказе, под ред. В. Потто,
т. 2, стр. 13.

²⁹ АКАД. т. 4, стр. 185—186, 810—812.

³⁰ А. Р. Ноанисян, Եղի. աշխ., էջ 282,

³¹ ملک نجفی، اکبر دینا

բամակվող աերիտորիալ վեճերը, սահմանամերձ շրջանների ցեղերի անընդհատ բախումները և միմյանց ներքին գործերին միջամտելու անդրդում փորձմարդը:

Իրանական բանակի նոր պարտությունները և Թուրքիայի հետ զինական դաշինքի այս փորձի անհաջողությունը ստիպեցին Արբաս միրզային 1810 թ. ապրիլին բանակցություններ սկսել ուստական հրամանաւարության հետ զինադադար ստորագրելու վերաբերյալ: Ի պատասխան դրա, անզինացիները ժավակեցին բռուն գործունեություն՝ ձախողելու այդ բանակցությունները, միաժամանակ իրենց հույսը շկտրելով Թուրք-իրանական դաշինքի կերպան ապագա հնարավորության նկատմամբ: Շքնուսը աշխատում էր բանակցությունների տեքստի մեջ ընդգրկել այնպիսի կետեր, զբում է պրոֆեսոր Ալի Աբբար Բինան, — որոնք նախապես երաշխավորում էին ուստի համար նրանց անընդունելի լինելը³⁹:

Թուրքիայի սաղրանքները ևս պակաս կարևոր դեր շնազացին ուսւիրանական բանակցությունները ձախողելու գործում: Եաւագրզոված լինելով Թուսաւատանի և Իրանի միջև պատերազմի շարումակման մեջ, կոստանդնուպոլիսը սկսում է շմեծարժեք նկերներ ուղարկել Թեհրանի արքումիքին, միաժամանակ խոստանալով օգնության կարգով Իրանին հատկացնել իր անատոլիական գորամասերից 12 հազարանոց ընտիր զորք⁴⁰: Այնունեան, թ. Դուռը Իրան է ուղարկում սուլթանի լիազորություններով օժտված մեծ վեզիր Արդուլ Վահիր Էֆենդիին, որին հանձնարարված էր նախ խափանել ուստի-իրանական զինադադարը և ապա ուազմական դաշինք կնքել շահի հետ:

Աղբյուրների վկայությամբ, այս անգամ ևս անզիւմական դիվանագիտությունն ակտիվ միջամտություն է ցույց տալիս այդ բանակցություններին⁴¹: Այդ առթիվ Կովկասում գիշավոր հրամանատար գիներալ Տորմասովը գրում է. «Այժմ Նույն օտարերկրյա (իմա՝ Անգլիայի—Վ. թ.) աղքածության շնորհիվ երկու պետությունները միավորվում են մեր դիմ⁴²»:

Պատերազմում Իրանի ժամանակակից ատիպեց շահական արքունիքին ընդառաջ զնալ դաշինք կնքելու վերաբերյալ Թուրքական առաջարկերին: Ինչպես նշվեց, իրանական բանակը ուստական գործերից կրում

³⁹ Մուհամմադ Հաջ. աշխ., հ. 2, էջ 184—187.

⁴⁰ ԱՐԲԱՆԻԱ, Փ. ՎԱՀ, լ. 6184, լլ. 221—222.

⁴¹ ԱԿԱԿ, թ. 4, ստ. 719.

⁴² ԱԿԱԿ, թ. 6, ս. 2, ստ. 400.

էր պարտություն պարտության հոգից: Անգլիական ռազմական դահլիճարությամբ Արքաս միրզայի բանակի վերակազմակերպման դործը առաջ էր գնում շափականց զանդաղ, զեռևս շղունաբերով ոչ մի նոր որակ: Ավելին, խաները դիմադրում էին բանակի վերակառուցման այդ դործին, դրա մեջ տեսնելով իրենց ազգացության սահմանափակման նկատառությունը: Անդրդիվկասում գնալով ամենանում էր Ռուսաստանին միանալու ձգությունները, որոնք ուղեկցվում էին տեղական ժողովուրդների և հատկապես հայերի բացահայտ հակաբրանական ելույթներով: Մրկրի ներսում այս ու այնտեղ անընդհատ ըռնկում էին տեղական ֆեոդալների ապստամբություններ կճնարունական շահական իշխանության դեմ:

Այս բոլորը ստիպեցին շահին 1810 թ. օգոստոսին Թուրքիայի հետ դաշինք կնքել⁴², որը հայունի է Կոստանդնուպոլիսի պալմանագիր անունով:

Այսպիսով, այն, ինչ շկարողացավ իրագործել Ֆրանսիան, զլուխ բերեց անդիլիական զիվանապիտությունը:

Հենց Թեհրանում գտնվելու օրերին Արգու Վահրի էֆենդին շահական կառավարության հետ մշակում է երկու պետությունների դորժությունների միանական պլան՝ ուղղված Ռուսաստանի դեմ: Հատկապես կարուր նշանակություն էր արվում ռուսների թիկունքում, Սև ծովից մինչև Կասպից ծովից ընկած տարածության վրա, տեղական ժողովուրդների (հատկապես մահմեդական) ապահովագրություններ հրահրկու հարցին: Այդ նպատակով Դաղստան, Աղրբեզան, Վրաստան և Կովկասի մյուս նահանգներն ուղարկվեցին թուրքական և պարսկական դորժակալներ, որոնք իրենց հետ ունեին շահի, գոհաժառանգ Արքաս միրզայի և թուրքական սուլթանի բազմաթիվ կույր⁴³:

Որոշվել էր նաև 1811 թ. մայիսի վերջին միացյալ ուժերով հարձակում դորժել Վրաստանի վրա: Սակայն այդ ժրագիրը հնարավոր չեղազ իրագործել մի շարք տարածալությունների պատճառով: Այսուհետեւ, 1811 թ. սպահեմթերին փորձ կատարվեց միավորել իրանական և թուրքական զորքերին՝ ռաւստերին համատեղ հարված հասցենելու համար, սակայն այդ փորձը ևս մատնվեց անհաջողության, ընդ որում ոչ թե պատահական զիպվածի հետևանքով, ինչպես ենթազրում էր Տորմասովը⁴⁴, այլ Իրանի և Թուրքիայի միջև գոյսություն ռմեցող խորը հակասությունների պատճառով, որոնց հետևանքով, ինչպես իրավացիո-

⁴² مملکتی ایکبر یعنی ۱۸۱۰ թ.

⁴³ ЦГИА Груз. ССР, ф. 16, д. 852, лл. 1—3; АКАК, т. 4, стр. 115.

⁴⁴ АКАК, т. 4, стр. 775—776, док. № 1180.

բնել նշում է ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը, այդպես էլ այդ երկու պետությունների միջև, Հայրած սկզբում ֆրանսիացիների, ապա անգլիացիների շանքերի, Համատառվեց իրական և կոյում դաշինք²⁷:

Այս շրջանում թուրք-իրանական հարաբերությունների սրման հիմնական պատճառը քրդական հարցն էր: Մոսուլի փաշալիքի Մուկը մասնին շրջանի քրդական առաջնորդը շարունակում էր սերտ հարաբերություններ պահպանել շահական կառավարության հետ: Ամենայն հավանականությամբ շահն դրդումով իրեն վերադրելով Թրդուտանի փաշալի տիտղոսը, նա հրաժարվում էր ներարկվել Բ. Դուսեր: Ավելին, նա ակտիվորեն նպաստում էր իրանական ազդեցության արածմանը ողջ Հայրավային Թրդուտանում, մասնավորապես Շենքուղի և Բաշդինանի կիսանկախի իշխանություններում²⁸:

Հարկ է նշել, որ ՀԻՀ դ. սկզբին Իրանի քրդական քաղաքականությունը աշբի էր ընկերում իր Հկունությամբ: Մովորաբար շահն քրդական ցեղերից մեկի առավել ազդեցիկ և իրեն առավել շատ նվիրված առաջնորդներից մեկին շնորհում էր Թրդուտանի ժառանգական վալիի տիտղոս & այնուհետև օգնում էր նրան զննքի ուժով իր ազդեցությունը արածել ինչպես իրանական, այնպես էլ թուրքական Թրդուտանի մյուս մասերի ցեղերի վրա: Ճիշտ է, թեն Թրդուտանի վալիները ոչ միշտ է, որ նվիրված էին մեռում շահական կառավարությանը և հյու-հնազանդ կատարում նրանց ցուցումները, սակայն այնուհանգերձ Թուրքիայի հետ անընդհատ ռազմական բախումների ժամանակ, Իրանը հաճախակի զգաւառքում էր արդ վալիների ազդեցությունը Թուրքիայի քրդերին իր կողմը հրապուրելու համար²⁹:

Օսմանյան կայսրությունը մեծապես անհանգստացած էր նրանից, որ քրդերի նկատմամբ Իրանի ազդեցությունն անցնում է նրա պետական սահմանից այն կողմ, Թուրքիայի աւարածքում ընդդրկելով Նշանակալից տարածություն: Մասնավորապես այն հանգամանքը, որ Երևանը և Նախիջևանը գտնվում էին պարսիկների ձեռքուում, նրանց հնարավորություն էր տալիս այնուղից իրենց ազդեցությունը տարածել համարյա ողջ Հյուսիսային Թրդուտանի, ինչպես նաև Բայրազետի և մասմբ նաև Վանի փաշալիքի քրդերի վրա:

Շահական կառավարությունը հետևողականորեն սիրաշահում էր

²⁷ А. Р. Иоаннисян, № 24. աշխ., էջ 228, 232—234.

²⁸ П. И. Аверьянов, Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия. Современное политическое положение турецких, персидских и русских курдов, Тифлис, 1900, стр. 7.

²⁹ Խուկ ակտում, էջ 5:

նաև թաղեցի քրդական խոշոր իշխանապետությանը, հատկապես նկատի առևելով նրա ռազմական, ինչպես նաև անտեսական կարևոր դիրքը Հայեղի և Թագրիպի. Հազորդակցության նաև ապարհի վրա⁷⁰.

Արբաս միրզային հաջողվեց զանազան արտոնություններ խռատանայու զնով իր կողմը գրավել նաև Թելյամի քրդական ռազմական զնովազումը ցեղերին, որոնք գահաժառանքի հեծելազորը համայնքին 10—15 հազար անկանոն հեծյալ զորքերով։ Այդ նույն կերպ նա իր բանակի մեջ ընդդրկեց նաև Հերյարիի քրդական որոշ ցեղերի⁷¹,

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում և Թրգուտանուն, որտեղ զերպիշխուում էին ժառանգական քրդական զերերեխները և որտեղ թուրքական իշխանությունը կրում էր գուտ անվանական բնույթ, գնալով ուժեղամուում էր իրանական ազդեցությունը, որը չէր կարող թուրքական կառամարտող շրջաններում առաջ շրերել թշնամական ռեակցիա Իրանի նկատմամբ։ Դրան պետք է ամփացնել, որ այդ թվականներին տեղի էին ունենում մի շարք ազատագրական բռնկումներ թե՛ քրդերի և թե՛ Հայերի կողմից, որոնք էլ ազելի էին խարխուզ դարձնում թուրքական ազդեցությունը Անառողիայի արևելյան շրջաններում։ Շամանյան կառավարությունը որքան անհամբեր կդառնար և որքան չդայնու շարժումներով իր քաղաքական կերպարեր ինքնիշխան շրջանները թնարկելու, այնքան հաճախակի կդառնարին ըմբռատությունները։ Թրգուտանի ներքին իշխանապետությունները թուրքական վատանգը կզգային և առիթը չէին փախցնեն հարվածենու թուրքական զորքերը։ Այսպես, Զեյթումից հետո, Թրգուտանի հնուազոր, բայց ամենից զորագոր մեկ շրջանը, Սուլեյմանին փաշալիքը, ապստամբության դրոշակը կը բարձրացներէ⁷²։

Բացի վերոհիշյալ հանգամանքներից, թուրք-իրանական դաշինքը ի վիճակի չէր գործողության մեջ մտնել այն պատճառով, որ 1811 թ. աշնանը ոռուական զորքերը Կուտուզովի հրամանառարությամբ շախշախանցին թուրքական բանակը թուրքիային այնու ունեն չէր մնում, բացի հաշտություն խնդրելուց։ 1812 թ. մայիսի 28-ին թուրքարեսուում կերպեց ոռու-թուրքական հաշտության պայմանագիր։

Այդ պայմանագիրը իրանական կառավարող շրջանները զնահատե-

⁷⁰ Ա. Սասմի, Պատմություն Տարօնի աշխարհի, Գլյուք, 1855, էջ 73—81.

⁷¹ Ա. Ազրեանոս, Կով. աշխ., էջ 8—15.

⁷² Ա. Սասմի, Թուրք պաշտին շախումները և Հայ-քրդական հացարերությունները, Թելյուք, 1969, էջ 54.

ցին որպես Սոմանյան կալւրության կողմից դաշնակցային պարտավերությանների կոպիտ խախտում։ Դժգո՞ւ լինելով, որ առվլիան Մահմետու Ա-ը Հայություն կնքեց մի պետության հետ, որի դեմ ինքը պատերազմ է մղում, Ֆաթէ Ալի շահը Թուփարեստի պայմանագիրը Հայությարեց որպես իր զիս ուղղված մի ակտ¹³, Եահական արքունիքի վրա ջղայնացնող ներգործություն ունեցավ Հայության այն տեղեկությունը, որ ըստ Թուփարեստի պայմանագրի 13-րդ կետի, Խախտածնազում է Բ. Դուան Շաբաթի ժառայությունները Խուասուանի և Իրանի միջև Հայությունուն կնքելու դորեւում¹⁴:

Թուփարեստի Հայության պայմանագրի կեցումը Համբենկավ Թուրքիանական Հարաբիրությունների նոր սրման հետ, որը 1812 թ. Հանգեցրեց երկու պետությունների միջև ուազմական լուրջ կոնֆլիկտի։ Զինված ընդհարման անմիջական պատճառ Հանդիսացավ Հետայալը. Համոզվելով, որ Թուփիհայի միջազգային և ներքին գրությունը Ընարարդություն չեն տալիս նրան ակտիվորեն միջամտել Թրդատանի Հարցերին, Սոլեյմանիների կառավորից Արդուրանձնանը կրկին տպատամրեց, իրեն հողակելով թ. Դանից միանդամայն անկախության մասին։ Միաժամանակ դուրս գալով շահական կառավարության հնազանդությունից, նա Հայությարեց, որ Հարժարվում է Հարկատու լինել Իրանին Ավելին, Արդուրանձնանց շահական արքունիքից պահանջեց իրեն վերագրաբնել պատանդի վիճակում Իրանում գտնվող իր սրդում, Հակառակ գեղյում ուասնաւով առապատակ սփռել Թերմանշահի նահանգում։ Ի պատասխան դրա, Թերմանշահի կառավարի Սոհամմադ Ալի միրզան իր զորքերը անմիջապես շարժեց գեպի Սոլեյմանին և զրավեց այն։ Արդուրանձնանը ստիպված էր վերստին իր հնազանդությունը Հայտնել շահին և արքայազուն Սոհամմադ Ալի միրզային վճարել 50.000 թուման ռազմատուգանք, պարտավորվելով յուրաքանչյուր ատարի վճարել նույնքան գումար որպես հարկ։

Այս իրադարձությունները Կռուսանդուպուտում մեկնարանկեցին որպես Թուրքական Թրդատանի նկատմամբ Իրանի կողմից հոգանակորություն Հաստատելու փորձ։ Անմիջապես սուլթանը հրապարակեց Համանագիր, որի հիման վրա Բաղդադի Արդուլլա-փաշան կատարեց զարհավաք և շարժվեց գեպի Սոլեյմանին, պատժելու քրդական անհնագույն առաջարկի վեհական առաջարկանի իշխանու-

¹³ Ա. Աճամօս, Խչ. աշխ., էջ 413.

¹⁴ Г. Юзефович, Договоры России с Востоком, СПб., 1869, стр. 57.

թյօնը: Արդուքրահմանց կրկին ստիպված էր փախչել Թերմանշահ և ինը նրան կառավարչի հռվանավորությունը²⁴:

Սգովելով ստեղծված Հարմար առիթից, իրանական զորքերը ներխուսեցին Բաղգաղի փաշալիքը Կոստանդնուպոլիսում ոռուական դեսպան Քառայնսկին Հազորքում էր, որ իրանական կառավարությունը իր թշրիմական դրբուղությունները Թուրքիայի նկատմամբ պատճառարանում է նրանով, որ վերջինու Ռուսաստանի հետ կնքել է սեպարատ Հաշտություն, առանց Հաշվի առնելու նրանի շահերը²⁵:

Թուրքական կառավարությունն իր հերթին զորքերի լրացուցիչ Համալրումներ ուղարկեց Բաղդաղի փաշալիքը, որի հետեւանքով կոնֆլիկտն ընդունեց ավելի ծավալում բնույթի, Թուրքական ուժիս-էֆենդին, նույնիսկ, Կոստանդնուպոլիսում անգիտական դեսպանին պաշտոնապես հայտարարեց, որ Շամանյան կույսությունը և նրանը գտնվում են պատճառական մինակում:

Անգիտական դիվանագիտությունից մեծ շանքեր պահանջվեցին Մերձավոր արևելքում Մեծ Բրիտանիայի քաղաքական շահերին հակառազ այդ ռազմական կոնֆլիկտաց դադարեցնելու համար: Դրան համեմու համար Լոնդոնը նույնիսկ համաձայնվեց թուրքերին վճարել այն բոլոր վեաները, որոնք նրանց հասցել էին շահական զորքերի կողմից 1812 թ. ռազմական ընդհարումների ընթացքում²⁶: Անգլիացիներն անում էին այս զոհուղությունը, նպատակ ունենալով Ֆաթհ Ալի շահի և Մահմետ II-ի մերձեցման շնորհիվ ամրապնդել նրանի զիրքերը Ռուսաստանի հետ առաջիկա հաշտության բանակցությունների ընթացքում և դրանով իսկ ճշշում գործազրել Միջին արևելքում իրենց հիմնական ախույտնի նկատմամբ:

1812 թ. հոկտեմբերին Ասլանդուզի մոտ տեղի ունեցած հակառամարտում ռուսական զորքերի կողմից Արբաս միրզայի բանակի գլխով էին շախախումը շահական կառավարությանն ստիպեց Թուրքիայի հետ հարաբերություններում ավելի պիշող լինել: Ավելին, Արբաս միրզան գործում է ունանշ վերցնել պարտության համար, որոշում է ռուսների վրա հարձակում գործել նրանց համար միանդամայն անակնեկալ տեղից՝ Կարսի և Ախուլյանի փաշալիքների վրայով: Խակ դա, հասկանալի է, հեարազոր էր միայն թուրքերի համաձայնության դեպքում: Այդ

²⁴ J. Marier, Second Voyage en Perse, en Arménie et dans l' Asie Mineure fait de 1810 à 1816, Paris, 1818, vol. I, p. 343—345; vol. II, p. 28.

²⁵ A. P. Խօսնական, Երգ. աշխ., էջ 405.

²⁶ Նույն անգամ, էջ 407.

առթիվ նույսատանի արտաքին գործերի մինիստր Ն. Պ. Ռումյանցը պուամ է Կոստանդնովում դեռպանուրդ Ա. Յա. Խուլինսկուն, որ թեև թուրքական իշխանությունները թույլատրել են, սակայն Արքան միրդացի⁷⁷ Վրաստան ներխուժելու երկու փորձերն էլ ավարտվել են անհաջողությամբ⁷⁸, իսկ Ալեքսանդր I-ին հասցեագրված 1813 թ. օգոստոսի 21-ի զեկուցագրում Ռումյանցը հայտնում է հետեւյալը. «...պարսիկները եռակուն կերպով աշխատում են զերականգնել խաղաղությունը Թուրքերի հետ, հավանական է նաև, որ երանց հետ դաշինք կերնել»⁷⁹, 1813 թ. սեպտեմբերին Բ. Դուլց գիշանագիտական զեմարչ կուտարեց Կոստանդնուպոլատում բրիտանական դեռպան Լիստուի առջև, պատրաստվելով նույն ոգով առաջադրություններ կատարել նաև ինսերնումցիք և Ֆրանսիական դեսպանի առջև, պահանջելով Թուրքիային վերադարձնել կովկասյան այն բռլոր տերիտորիաները, որոնք Ռուսաստանին էին անցել ըստ Բուխարեստի պայմանագրի: Այդ պահանջը Բ. Դուն կողմից պատճառաբանվում էր տեղը պահանջանագրությունը վերականգնելու անհրաժեշտությամբ: Իր գիրքերն ամրապնդելու համար Թուրքիան կոչ էր անում, որ երանց ևս վարվի նույն կերպ⁸⁰:

Պատահական լէ, որ երբ 1813 թ. աշխանց Ռուսաստանի և Իրանի միջև հաշտության պայմանագիր կերպելու վերաբերյալ բանակցություններ էին տեղի ունենում, Կոստանդնուպոլիսը եռանդուն գործունեություն է ծավալում պայմանագրի ստորագրումը խանգարելու համար Ռումյանցներն ուղղված հաղորդագրությունում, խոսելով ուսու-իրանական բանակցությունների վերաբերյալ Թուրքիայի ունակցիայի մասին, Բատակինսկին շեշտում է, որ այդ իրադարձությունը բրավականացափ հնուու է այն բանից, որ հանձնի լինի Բ. Դուն համարչ, որը հավակնություններ ունի Կովկասի մի շարք նահանգների նկատմամբ⁸¹:

Անդրկովկասում իրենց տիրապետությունը վերականգնելու ձբդառումը ստիպեց Իրանի և Թուրքիայի կառավարող շրջաններին միջյանց միջև եղած հակասությունները մղել ետին պլան և հանդիս գալ միասնական նահատակը: Թեև 1813 թ. աշխանց թուրքական մայրաքարտություններ ունի Կովկասի մի շարք նահանգների նկատմամբ⁸²,

⁷⁷ Внешняя политика России. Документы Российского министерства иностранных дел, серия II, т. VII, М., 1970, стр. 361.

⁷⁸ Նոյն տեղում, էջ 375:

⁷⁹ Նոյն տեղում, էջ 388:

⁸⁰ Նոյն տեղում, էջ 724:

զարության հետ բանակցություններ վարելու ժամանակ գոխազարձար միջանց ներկայացնում էին տարրեր մեղադրանքներ և տերիտորիալ հագակնություններ, սակայն անպլիացիների անմիջական մասնակցության շնորհիվ կրկին պարմանավորվեցին Ռուսաստանի դեմ առեղծել միացյալ ճակատ:

Այս նոր պայմանավորվածությունը ևս ոչ մի գործնական հնաեանք չունեցավ, որովհետև 1813 թ. Հոկտեմբերի 12-ին Ռուսաստանի և Իրանի միջև ստորագրվեց Դյուլիստանի հաշտության պայմանագիրը: Այն, ինչպես և պատճենը էր, դժբանությամբ ընդունվեց թուրքական կառավարող շրջանների կողմից: Բ. Դուռը հատկապես զժգոհ էր նրանից, որ շահը ընդունում էր Արքազիայի նկատմամբ Ռուսաստանի տիրապետության իրավունքը, տերիտորիաներ, որոնց նկատմամբ Սամանյան կայսրությունը գեռ հավաելությաններ ուներ: Այնուհետև, Դյուլիստանի պարմանագրի կնքումը, թուրքական տիրապետող շրջանների կարծիքով, ի շիբ էր գարձնում Իրանի և Թուրքիայի միացյալ եւութիւն հնարավորությունը Ռուսաստանի դեմ: Սակայն տեղյակ լինելով, որ հաշտության պայմանագիրը ստորագրելով շահը մտածում էր Ռուսաստանի դեմ նոր պատերազմի մասին և առևասարակ իրանական արրունիքում տիրում էին ունանչիստական արամադրություններ, թուրքերը սկսում են շեշտված սիրայիր վերաբերմունք դրանորել Կոստանդնուպոլիսում իրանական դեսպանորդ միրզա Շեկայի նկատմամբ: Վերցինս հրամանավոր է Բաղդադի փաշալիքի կապակցությամբ գումարված հատուկ խորհրդաժողովի, որի ընթացքում, առիթից օգտվելով, թուրքական մինհատրները ամեն կերպ աշխատում են համոզել նրան, որ Թուրքիայի և Իրանի միջև դաշինքի կերպով հենսական անհրաժեշտություն է երկու պետությունների համար²: Ընդ որում այդ բանակցությունների ժամանակ միրզա Շեկան սուրբանդակների միջոցով անընդհատ կապ էր պահպանում Թէհրանի հետ, հետեւարար, շահական արքունիքը տեղյակ էր այդ բանակցություններին:

Իրականում թուրքական կառավարող շրջաններին այդ ժամանակ ոչ այնքան հետաքրքրում էր դաշինքի հարցը Իրանի հետ, որքան Բաղդադի փաշալիքի հարցում իրանա-թուրքական նոր կոնֆլիկտի ըսնկման հավանականությունը կանխելու հարցը: Կոստանդնուպոլիսը երկրուդներ ուներ, որ Ռուսաստանից պարտություն կրելուց հետո Իրանը փոխհատուցում կփնտրի Բաղդադի փաշալիքի կողմում: Այս հոդի վրա, Դյու-

² A. P. Խօսնաւան, Երջ. աշխ., էջ 425.

լիւստանի պայմանագրի ստորագրումից հետո, ինչպես հազարդում էին կ. Պոլսում ուստական դիվանագիտական ներկայացուցիչները, Թուրքային և Իրանի քաղաքական հարաբերություններում նկատվում է լարվածություն⁵², Խոալինսկին նույնպես զբում է, որ հավանական է Բարախանին և թ. Դռան միջն պատերազմ բռնկվի, որ Կոստանդնուպոլիսում այդ մասին լուրեր են շրջան, որոնց պատճառով դիվանը երկու անգամ նիստ է գումարել և վերջին նիստի որոշման համաձայն գորահավաքի վերաբերյալ ուղարկվել են մոտավորապես հարյուր ֆիրմաններ⁵³:

Բ. Դռան այս անհանգուստությունը բնավ անհիմն չէր: Կոստանդնուպոլիսում հավաստի տեղեկություններ ունեին, որ Դյուլիստանի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո զահաժառանգ Արքաս միրզան (որի կողմից, ի դեպ, գաճը ժառանգելու օրինական իրավումը ուստաների կողմից պաշտոնապես նաևպատճ էր Դյուլիստանի պայմանագրով), Թավրիզից իր զորքերը անմիջապես շարժել է դեպի թուրքական սահմանը և սկսել է անընդհատ զորաշարժեր կատարել⁵⁴:

Իրանական դեպան միրզա Ռեզզայի հետ բանակցությունների ձախողութը նույնպես անուղղակի կերպով վկայում էր, որ Իրանը Սամանյան կայսրության նկատմամբ թշնամական հոփեն մացեր ունի:

1814 թ. սկզբներին թուրք-իրանական հարաբերությունները շարունակում են մնալ ծայրանեղ լարված վիճակում: Ռուսական նույնական ուղղոված իր 1814 թ. գիտրվարի 17-ի հաջորդադրությունում Խոալինսկին կոստանդնուպոլիսից զբում է, որ թուրքական կառավարությունը նկատելի սառը վերաբերմումը է դիրքուրում Սամանյան կայսրությունում իրանական ներկայացուցիչներ Հոսեխն աղայի և Նասրուլլահ խանի նկատմամբ և որ թ. Դուռը Հանձնարարել է Հրազդակի գիշային, ինչպես նաև Իրանի հետ սահմանամերձ շրջանների մի շարք այլ զինվորական գործիչների զորահավաք կատարել և լինել ծայրանեղ զգուշ: Ռուսական զիսպանորդը այսուհետև շարունակում է, որ թ. Դուռը իրանա-թուրքական հարաբերությունների սրման գործում մեղադրում է Ռուսաստանին, դա վերագրելով նրա սաղբանցներին⁵⁵:

Ի դեպ, այդ նույն անսակեսին էր նաև բիտունական դիվանագիտությունը: Ռուս-իրանական առաջին պատերազմի հերք լուրջ հարգած էր Անգլիայի աղբեսիվ ծրագրերին, որը ձգտում էր իրեն ենթարկել Իրա-

⁵² Внешняя политика России, серия II, т. VII, стр. 596—597.

⁵³ Խոյն տեղում, էլ 588:

⁵⁴ Խոյն տեղում, էլ 589:

⁵⁵ Խոյն տեղում, էլ 595—597.

նը և սահմանել իր ռազմական հսկողությունը Կասպից ծովի ավազանի մքա: Վախենալով, որ Ռուսաստանի ազդեցության մեծացումն Իրանում առաջայում կարող է խանգարել այդ երկիրը որպես անգիտական քաղաքականության գործիք օգտագործելուն, անգիտացները բանակցություններ սկսեցին շահի Հետ նոր պայմանագիր կնքելու վերաբերյալ: Անգույնական այդ նոր պայմանագիրը ստորագրվեց Թհ՛րանում 1814 թ. նոյեմբերի 25-ին: Այս առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ և նպատակ ուներ հրանու ուստի պատերազմ: Այս պայմանագիրը մեծապես նպաստեց շահական արքունիքի ռեանչեստական առամաղթությունների արդիքցմանը, նպատակ ունենալով ըստեղենի այս երկու պետությունների դաշինք՝ ընդդեմ Ռուսաստանի⁷⁷, կամ առևտազն միավորել Նյանց Մերձավոր և Միջին արևելյանց իր ախոյանին միաժամանակյա հարգած հասցեներու համար: Այս վերջին զաղափարը անցկացիներին թվում էր միանգամայն ռեալ, որովհետև նույնիսկ Թուրք-իրանական հարաբերությունների ծայրաշեղ լարվածության վիճակում շատ հաճախ երկու պետությունները, շահերի ընդհանրության հիմքի վրա, Ռուսաստանի դեմ հանգեն էին գալիս համատեղ զիվանագիտական ելութերով: Այսպիս, 1816 թ. հունվարի 20-ին շահական դեսպան միրզա Արու Հասան խանը Ռուսաստանի արտարին գործերի մինիստր Ա. Վ. Նեստելլուդինին հղում է մի նոտա, որտեղ նա պնդում է լրիվ վերանայել Գյուլիստանի պայմանագիրը⁷⁸: Այդ նոտան շահական դժուպանը ուղարկեց սուլթանության կառավարության նոտայի հետ համարյա միաժամանակ, որտեղ Թուրքերը պահանջում էին վերանայել Բախսարքստի պայմանագրի կետերը: Իսկ մարտի 23-ին Պետրովությունը բրիտանական դժուպանառումը իր հերթին նոտա է ներկայացնում ռուսական կառավարությանը, որտեղ նա պաշտպանում է իրանի պահանջները:

⁷⁷ М. С. Иванов, Очерк истории Ирана, М., 1952, стр. 135—136.

⁷⁸ Б. П. Балаки, Международные отношения Ирана в 1813—1826 гг., Ереван, 1967, стр. 37.

⁷⁹ А. П. Щербатов, Генерал-фельдмаршал князь Паскевич, т. II, СПб., (890, прилож., стр. 3—4).

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ անզիշական, իրաևական և թուրքական դիվանագետները Ռուսաստանի դեմ ձեռնարկում էին համատեղ դիվանագիտական դեմարք³⁰:

Պատահական չէ, որ այս շրջանում Ռուսաստանի քաղաքականության հոլիցիում կայանում էր նրանում, որ նոր ռուս-թուրքական պատերազմի բռնկման դեպքում Իրանը պահպանի շեղություն, կամ բացառվի թուրք-իրանական դաշինքի կնքումը: Այս օգով Ա. Գ. Օրմոլովը Գետերուրգից ստացել էր համապատասխան հրահանգ, որը նու աշխատում էր կենսագործել 1817 թ. Իրանում իր գետանության ժամանակը հեղաթյուրիով այս փաստը, իրանական պատմաբաններ Մողթագար Ղոլամ Հոսեինը³¹ և Ալի Աքբար Թինանը³² պեղում են, որ, ընդհակառակը, Ռուսաստանը առաջարկում էր շահական կառավարությանը ռուս-թուրքական պատերազմի դեպքում ռազմական դաշինք կնքել Ռուսաստանի հետ, փախարնեց խոստանալով որոշ աերիտորիալ պերամենք կատարել Իրանին: Այդ նույն տեսակետը առաջ է մղվում նաև անզիշական պատմաբան Ռ. Վաթոսոնի կողմից³³:

Օրմոլովի հետ բանակցությունները համոզեցին շահին, որ Ռուսաստանի համար ամենից անցանկալին թուրք-իրանական դաշինքի հաստատումն է, մի հանգամանք, որը մեծացրեց իրանական կառավարող շրջանների շահագրգումածությունը անհապաղ կնքելու նման դաշինքը նախաճենակությունը վերցնելով իր ձեռքը, շահը, գենու մինչև Օրմոլովի գետանության վերադարձ Կովկաս, 1817 թ. սեպտեմբերին Սավա Քաղաքի նահանգապետ Մոհեր Ալի խանին դադանի հանձնարարությամբ ուղարկեց Կոստանդնուպոլիսի³⁴, Վերջինս 1818 թ. հունվարի 30-ին ընդունվում է սուլթան Մահմետ II-ի կողմից³⁵, մանրամասն աեղեկություններ հաղորդում նրան Օրմոլովի գետանության ձախողման վերաբերյալ և ազելացնում, որ Ռուսաստանը ոչ միայն անվտանգության և աերիտորիալ անձեռնմխելիության պատճառից է հանդիսանում Իրանի համար, այլև եղբայրակից մահմեղական երկրի՝ Թուրքիայի համար:

³⁰ Л. С. Саманов, Россия и международные отношения на Среднем Востоке в 20-ые годы XIX в., ЛГУ, 1963, стр. 33.

³¹ غلام حسين مقتدر، تاريخ خطامی ایران، طهران ۱۳۱۷، ص ۲۴۰.

³² علی اکبر دینا، ۱۳۱۴، ۲۷ جمادی ۱۴۱، 1818.

³³ محمود محمود، تاريخ روابط سياسية ايران و انگليس در قرون ۱۸-۱۹، توزعهم ميلادي، جلد اول تهران ۱۳۲۸، ص ۴۷۷.

³⁴ Խոյի անշահ, 4. 1, է 1822:

³⁵ «Северная пчела», № 21, 13 марта 1818.

Այնունեան Մոհեր Ալի խանը հայտարարում է, որ նկատի ունենալով սուսական անակնեալ Հարձակման գտանքի առկայությունը, ինքը շահից հանձնարարություն ունի սուլթանին առաջարկել կնքելու թուրք-իրանական Հարձակողական-պաշտպանողական մի դաշինք, որպեսզի երկու Հարեւան մահմեդական պետությունները ի պիտակի լինեն համատեղ կերպով Հակա՛ռարված տալու նույսառանքնեն²²: Այլ կերպ ասած առաջարկվում էր վերականգնել 1810 թ. ռազմական դաշինքի վերաբերյալ պայմանագիրը:

Ի գեալ, անգլիացիները գարճյալ մասնակցություն էին ցուցաբերում այս բանակցություններին: Թեև Կռւստանը զնուազում անգլիական գիւղանորդը ուստական գնուազան Սարոգանովի հետ զրույցի ժամանակ աշխատում է ժիստել այդ հանգամանքը, Հայտարարելով, որ Անգլիան իր ռոշ մի մասնակցություն լի ունեցնէ Ռուսաստանի համար այդքան տհաճ առաջարկությանը, աակայն ուսւաների սրամադրության տակ եղած փաստերը անառարկելուրեն հաստատում էին, որ բրիտանական դիվանադիտությունն այդ բանակցություններում ևս խաղում էր բավականին ակտիվ դեր²³: Այդ հանգամանքը հաստատվում է նաև կողմեակի տվյալներով: Զննելով անգլիական դիվանագետների վարքագիծ և գործողությունները Սրբազն դաշինքի Աախենի կոնգրեսում (1818 թ. Հռկատմբեր-նոյնմբեր), ուստական քաղաքագիտները պարզորոշ կերպով ենել էին այն համոզման, որ Անգլիան մատադրություն ունի բարեհաջարդություն... Ռուսաստանի հարաբերություններին Պարօկաստանի և Թուրքիայի նկատմամբ²⁴:

Անգլիական միջնորդությունը և իրանի նույնում ջանքերը, աակայն, այս անկամ և ավարտվեցին ապարդյուն: Բ. Դուլք մերժեց շահական կառավարության առաջարկը, Հայտարարելով, որ իր հարաբերությունները իրանի հետ առանց այն էլ բնիմնված են իսլամի սրբազն դավանակցության հիմքի մըաւ և որ ոչինչ չի կարող ընոր և ազելի մեծ ուժ հաղորդել իրենց սերտ և բարեկամական դաշինքին²⁵:

Թուրքական կառավարության կողմից այս մերժումը նայն պետք է բացատրել նրանով, որ տվյալ իրադրության պայմաններում, իր իրա-

²² ملى اکبر دینا. نزدی. ուշ., հ. 1, էջ 189, ունո նուն V. Потто, Кавказская война, т. 3, СПб., 1887, стр. 6.

²³ АКАК, т. VI, ч. 2, стр. 189—190.

²⁴ С. М. Соловьев, Император Александр I. Политика-дипломатия, СПб., 1877, стр. 470.

²⁵ АКАК, т. VI, ч. 2, стр. 189—190.

նը այլնս պատերազմական վիճակի մեջ չէր գտնվում Ռուսաստանի հետ, թուրք-իրանական դաշինքը ոչինչ չէր կարող տալ Սամանյան կայսրությանը: Թացի այդ իրանա-թուրքական հարաբերությունները գեն գրտերգում էին լարված վիճակում և Բ. Դուռը կասկածություն էր զերարձրվում շահնական կտուազարության անկեղծությանը:

Թուրքիայի հետ պաշինք կնքելու այս փորձի անհաջողությունը ուժեղացրեց զաշարների¹² Անդլիայի հետ մերձեցման և նրանից ռազմական և ֆինանսական օգնություն ստանալու հանապարհով Անդրկովկասում կորցրած տերիտորիաները ետ նվաճելու մտայնությունը: Այդ նպատակով 1818 թ. զերշին Լոնդոն ուղարկվեց գիշանազիւսական մի առաքելություն միրզա Արոլ Հասան խան Շիրազի զիսավորությամբ: Անդիական մարտարազաք մեկնելու հանապարհին շահնական գիսպանության զեկազարը Կոստանդնուպոլիսում մի փորձ ևս կատարեց դաշինքի զերաբերյալ Թուրքիայի հետ պայմանավորվելու ուղղությամբ: Կոստանդնուպոլիսում նա մշտապես արժանանում էր ովկեդիրի, առվթանի և ստարերկորաց: Հատկապես անդիական, դիսպանների ամենայնությանը՝ Ասրոգաննովին այցելելու ժամանակ Արոլ Հասան խանը նրան է հանձնում միրզա Թոգորոզի նամակը, որտեղ զերամբարձ արտահայտություններով խոսվում էր Ռուսաստանի և Իրանի միջն սւերտ զաշինքի մասին: Ոչ մի չշմարիտ խոսք շատելով իր Լոնդոն մեկնելու նպատակների մասին, Արոլ Հասան խանը հայտարարում է, որ ինքը ուղարկված է միայն շահի թարեկամական նամակները հանձնելու թուրքական առվթանինք, ազւորիական կայսրին և ֆրանսիական թագավորինք¹³:

Կոստանդնուպոլիսում իրանական առաքելության զեկազարի առաջարկներին Բ. Դուռը պատասխանեց քար անտարքներությամբ¹⁴, Դա էլ ավելի սրբց թուրք-իրանական առանց այն էլ լարված հարաբերությունները: Սահմանամերձ շրջաններում երկու պետությունների միջև ծայր առան ռազմական ընդհարումներ¹⁵: Կոնֆլիկտի անմիջական պատճառ հանդիսացած այն, որ ուստ-իրանական պատերազմի շրջանում, օգտվելով Իրանի դժվարին կացությունից, Թուրքիան գրավել էր իրանական սահմանամերձ մի շարք տերիտորիաներ: Թացի այդ, սկսել

¹² Տե՛ս Սուրենանցի 1818 թ. գիտեմքերի 2-ի նամակը երմությին ԱԿԱՀ, Դ. VI, պ. 2, ստր. 414—415.

¹³ Լ. Ս. Սամոս, նշվ. ուշ., էլ 51.

¹⁴ Նոյն անկում, էլ 73:

էր Թուրքականակ քրդերին ակտիվորեն հրանի գեմ¹⁰², ծրկու երկրների միջև միջպետական հարաբերությունների բարդացման պատճառ էր Հանդիսացիկ նաև Թուրքական իշխանությունների կողմից շիրիների սրբազն վայրեր՝ Թարբալու և Նաջաֆ, ուստափեացության մեկնող պարսիկներից գանձվող մաքսատուգրերի բարձրացումը:

Իրաքի օսմանյան վարչությունը պահանջում էր նաև պարսիկ հանգուցյաներին նաջաֆ տեղափոխելու և այնուեղ թաղելու համար վճարել բավականին բարձր առվեր, որից խուսափելու համար Հանգուցյաների հարազաները դիմում էին սահմանը անցնելու անլեզաւ միջոցին¹⁰³, որն, անշուշտ, բարդությունների տեղից էր տալիս Առկա էին նաև կոնֆլիկտի սրման այլ պատճառներու Ալապն, Սոլեյմանինի քուրդ նոր կառավարիչ Մահմետ փաշան բացահայտ կերպով լէր ցանկանում ենթարկվել Թաղդաղի Դավուդ փաշային և հայտարարում էր, որ ինըը միայն իրանական շահնին է համարում իր սյուզերենը, Թրդական անհնագնության առաջնորդին պատժելու համար Դավուդ փաշան զորքեր է շարժում դեպի Թրդատան, որին իրանը պատասխանել էր Սոլեյմանինի շրջանում խոշոր բանակի կենտրոնացմամբ¹⁰⁴:

Թերմանշահի շրջանում նահանգի կառավարիչ Մահմետ Ալի միրզան, իսկ հյուսիսում Երևանի խանության սարդար Հոսեյն խան Ղաջարը իրենց գործակալության միջոցով ակտիվորեն սկսեցին գործել Թաղդաղի, Վանի, Բայրազետի և Մուշի շրջաններում, Սուր վեճի առարկա էր դարձել նաև Շաբթ ու Արար գետի մի քանի կղզիների պատկանելիության հարցը, որոնց նկատմամբ երկուունեք ներկայացվում էին հավակնություններ:

Թուրքական և իրանական զորքերի միջև ռազմական բախումները ծայր առան սկզբում Փյանջնանի և Զօհարի լեռնային շրջաններում և հարավում՝ Խոսկեստանի նահանգում, իսկ այնուհետև տարածվեցին նաև այլ շրջաններում: Փաստուն Թուրք-իրանական սահմանը վերածվել էր ճակատային մի գժի:

Իրանա-թուրքական հարաբերությունների լարվածությունը ուղղեցվում է իրանա-անդիխական հարաբերությունների վատթարացմամբ: Ի

102 ناصر تجمی، عباس میرزا یار مشید تردن و میهن پرست ترین فرزند خاندان قاجار و چنگهای ایران با روسیه تواری، تهران ۱۹۷۷، ص ۱-۴.

103 Khalid al-Issi, The Shatt al-Arab dispute. State University of Göttingen, 1971, p. 16-17.

104 A. Adams, Հայ. աշխ., էջ 615.

Հայտ հեկան շահական արքունիքի և Մեծ Բրիտանիայի միջև Հակասությունների սրման բազմաթիվ պատճառները նախ լոնդոնում ձախողման մատնվեց միրզա Արու Հասան խան Շիրազիի առաքելությունը: Այսուհետեւ, Պարսից ժողով և Իրաքում տեղի ունեցած իրադարձությունները էլ ավելի բարգացրին Անդիխայի և Իրանի հարաբերությունները: Այն բանից հետո, երբ 1819 թ. Սպիտառով տիրակալ Մոհամմադ Ալին խոչոր հաղթանակ տարագ Արարական թերակղզու վահարիթների պետության նկատմամբ, որն իր հսկողության տակ էր պահում նաև Պարսից ժողի առաջինա քաղաքները, արգելք հանդիսանալով անդիխական առևտին, Սատ-Հնդկական ընկերությունը որոշեց օգտվել պատեհ առիթից և նավատորմ ուղարկելով Պարսից ժող, շախշախնեց անդական շեյխներին և նավահանգստային քաղաքները հեթարկեց իր ազդեցությանը: Թիշ ավելի ուշ, 1820 թ. հունվարին, անդիխացիները Յմանի շեյխներին ստիպեցին կնքել մի պայմանագիր, որի շնորհիվ ծովահենության և առակավաճառության դեմ պայքարի պատրվակի տակ Անդիխան Շարավորություն էր ստանում շետք ու կանոն պահպանել Պարսից ժողի շրերում: Այդ պայմանագրին ստիպված էր միանալ նաև Թահրենի շեյխը: Դա նշանակում էր Անդիխայի բացահայտ կռնչիքնար Իրանի հետ, որովհետև վերջինս Թահրենը զիտում էր որպես իր տիրությը և բացի այդ այնտեղից ստանում էր խռով եկամուտներ (բահրենան կղզիներից մարզարտի հանույթը շահական գանձերաբանին քերում էր առանձին միլիոն ռուբլուց ավելի եկամուտ):¹²⁰ Մյուս կողմէից, Թաղդադի փաշությունը (Արարական Իրաքում), անդիխական վաճառականների մրցակցությունը մեծ վնասներ էր հացնում իրանական առևտիններին, որը նույնպես հանդիսանում էր անգլ-իրանական հարաբերությունների սրման պատճառներից մեկը:¹²¹ Եահական կառավարության գծորությունն անդիխացիներից էլ ավելի մեծացավ, երբ բրիտանական ուսզմական հրահանգիւններ իննզգելը և Մակինզուշը և Խորհրդականներ Արմատրոններ և Վիլլամունը հեռացան Իրանից:¹²²

Այս պարագաներում, յնայած Կովկասում և Միջին Ասիայում բարական կռուավարության վարած քաղաքականության նկատմամբ ունե-

¹²⁰ Н. Благрамберг, Статистическое обозрение Персии, СПб., 1857, стр. 27; Ф. Ф. Бартоломей, Посольство Мешникова в Персию в 1825 г. (Из дневника), СПб., 1904, стр. 34.

¹²¹ Տ. V. Fontanier, Voyage dans l'Inde et dans le Golfe Persique. т. I, Paris, 1844.

¹²² R. Lyall, Travels in Russia, vol. II, London, 1825, p.p. 65—66.

ցած մեծ դժգության, շահական արքունիքը որոշեց մերձնեալ Ռուսաստանին: Վերջինս իր հերթին ընդուաց զնաց իրանական կառավարության այդ տրամադրությաններին: Նախ 1819 թ. Ալեքսանդր I-ը Արքաս միրզային ճանաչեց որպես իրանական գահաժառանգ¹²⁸: Ի պատասխան դրան, Արքաս միրզան իր նվիրվածությունը հայտնեց ուսանական կայսրին¹²⁹ և համաձայնվեց ուսաներին վերադարձնել իրանում զանվոր իրենց ռազմակերպության մի մասը:

Այնուհետեւ, 1820 թ. գիւղանագիտական հանձնարարությամբ Ա. Պ. Օրմուզի կողմից իրան ուղարկվեց ուսանական սպա Ն. Ա. Կախովսկին, իսկ Արքաս միրզան իր հերթին հանձնարարեց Թիֆլիս մեկնել միրզա Մասուլին, որպեսզի վերցինս ուսանական իշխանություններին հայտնի գահաժառանգի սանկեղծ բարեկամության և բարի կամեցողության համաստիքները¹³⁰:

XIX դ. 20-ական թթ. սկզբին սկսվեց արևելյան ճգնաժամի նոր սրում: Օսմանյան կայսրությունը ցնցվում էր ննշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներից: Հատկապես ուժգին թափ ստացավ Հույն ժողովրդի ազատագրական պայքարը: Հունական ապրուտամբերը ազատագրեցին Խալաֆատան, Միսալյունդին, Էրզարիմի: Դարդանելում հույն նավաստիները չախչախեցին սուլթանի նավատորմը: Բալկանյան թերակղզու կենտրոնում և հարավում ազստամբությունը տարածվում էր ավելի մեծ ուժով: Համարյա ողջ հույն ժողովուրդը արձագանքում էր ազստամբ-զետերիստների կողին: Բացի այդ, 1820 թ. գարնանից սուլթանական բանակի մեծ մասը զբազված էր ազստամբած էպիրի փաշայի դիմ պայքարով: Օսմանյան կայսրության համար լուրջ դժվարություններ էին ստեղծվել նաև Մոլդավիայում և Վալախիայում: Սուլթան Մահմետ II-ը և նրա կառավարությունը ուղղակի գտնվում էին խումագի մեջ: Սուլթանը հարկադրված էր անստոլիական զորամասերը տեղափոխել Բալկաններ, որի հետևանքով իրանի հետ թուրքական սահմանները ըստ էության մնացիլ էին անպաշտպան վիճակում:

Եահական կառավարությունը և մասնավորապես Արքաս միրզան սրոշներին օգտվել ստեղծված հարմար առիթից՝ զենքի ուժով լուծելու

128 АКАК, т. VI, ч. 2, стр. 213—214.

129 Путевые заметки Грибоедова, 28 июля 1819 г. (Султаны). А. С. Грибоедов, Соч., т. III, стр. 85.

130 А. З. Иоаннициами, Кавказ во внешней политике России в начале XIX в. Ученые записки Московского пед. института им. В. И. Ленина, т. XXXVII, 1946, стр. 123.

Թուրքիայի հետ ունեցած բաղաւմ զենքը Արքաս միրգան, հատկապես, սրոշել էր Օսմանյան կայորությունից տերիտորիայ նվաճումների հաշվին փոխառառություն այն կորուստները, որ Իրանն ունեցել էր Անդրկովկասում։ Պատերազմում հաղթանակ ձեռք բերելու դժուգում գահաժառանգը հույս ուներ նաև վերականգնել իր խարիզմած զիրքերը։ Արքա իրանական բանակի գլխավոր հրամանատար նա անձամբ ինքն էր կրում Ռուսաստանի հետ պատերազմում պարտությունների և Դյուլիստանի պայմանագրի կնքման պատասխանատվությունը։ Վերջապես, հաղթանակի դեպքում Արքան միրգան կարող էր ամրապնդել գահաժառանգի իր զիրքերը, բանի որ Նրա բազմաթիվ եղբայրները շարունակում էին գահի նկատմամբ ունենալ հավակնություններ։ Ըստ որում մոտալուս ուսւաթուրքական պատերազմի հավանականությունը հույս էր ներշնչում իրանական կառավարող շրջաններին, որ Թուրքիայի հետ առաջիկա ռազմական բախման ընթացքում իրենք ոչ միայն կօգտվեն Ռուսաստանի աջակցությունից, այլև հանձին Նրա կունենան ռազմական հուսալի դաշնակից։ Այդ հույսերը ձեռք բերեցին շոշափելի կերպարանք հատկապես այն բանից հետո, երբ 1821 թ. հունիսի 28-ին Ալեքսանդր I-ը Կոստանդնուպոլիսում իր գեսան Սարոգանովի միջոցով սուլթանին հղեց մի վերջնագիր¹¹¹, որի բովանդակությունը ոչ մի կասկած չէր թողնում, որ Ալեքսանդր I-ը պատրաստվում է պատերազմ սկսել Մահմետ II-ի դեմ։ Թուրքական դիվանի կարուկ առարկությունների պատճեռվ Սարոգանով հեռացավ Կոստանդնուպոլիսից և 1821 թ. սպասուսի 8-ին Բ. Դուռն և Ռուսաստանի միջև դիվանագիտական հարաբերություններն արդեն խզված էին։ Ալեքսանդր I-ը Ռուսական կայության հարավային սահմաններում ձեռնամուսի նղազ զորահավաքի։ Սակայն ցանկանալով իր գործողությունները համաձայնեցնել մեծ պետությունների հետ, ուստական կայուրը չէր շատապում ռազմական գործողություններ սկսել Թուրքիայի դեմ։ Եռատով պարզվեց, որ Ավրոպայի առաջնակարգ երկու պետությունները՝ Անգլիան և Ավստրիան միավորվել են խանգարելու համար Գետերուրոյի ծրագրերի իրագործմանը։ Այդ ճրկու պետությունները նույնիսկ անթույլատրելի էին համարում քննեարկել Օսմանյան կալսորության լինել կամ լինելու հարցը և ամեն կերպ ձգտում էին կանխել ռուս-թուրքական բախումը։ Այդ նպատակով Ավստրիայի և Անգլիայի արտաքին գործերի մինիստրեներ Մետաքնիսը և Կենտրոլին կերպով միմյանց սերտորեն կապող մի համաձայնագիր։

¹¹¹ Տե՛ս Ա. Դենիսյուր, Дипломатическая история Европы, т. I, М., 1947, стр. 194.

ըստ որի իրնեց միապետները պետք է բոլոր չափերը գործադրեին խաղաղությունը Ռուսաստանի և Թուրքիայի միջև պահպանելու համար¹¹²:

Բնական է, որ ավտորո-անգլիական այս համաձայնադիրը սառցենելու էր ցարի ռազմաշունչ արամադրությունները, մասնավանդ որ նրա մտադրությունները աշակցություն չդատան նաև թեոլինում և Փարմուում:

Իրանական արքունիքը, որը ուշի-ուշով հետևում էր այս իրազարձությաններին, անշուշտ պետք է համազվեր, որ Թուրքիայի դեմ նախապատրաստվելիք պատճրազմում Ռուսաստանին որպես գաշնակից ուժենալը լոկ բաղադայի երազանք է: Եահական կառավարությունը առիթներ ուներ նաև նեթադրելու, որ պատճրազմը Թուրքիայի դեմ ոչ միայն աշակցություն չի ստանալու Անգլիայի կողմից, այլև հանգիստելու է նրա հակազդեցությանը: Այդ նեթադրությանը հանգելու համար հիմքեր էին տալիս հետևյալ հանգամանքները: Իրանա-թուրքական պատճրազմը անխուսափելիորնեն պետք է հանգեցներ Ռուսաստանի պատենցիալ հակառակորդների բանակների թուլացմանը, որը, անտարակույս, ձեռնառ չէր Անգլիային: Այսուհետեւ, հակառակ անգլիացիների ցանկությունների, Արքան միրզան պետք է Անգլիայից ստացած զենքը սպառողութեր թուրքերի դեմ, մինչդեռ այն հատկացվում էր Ռուսաստանի դեմ պատճրազմի համար: Ոչ կարևոր նշանակություն ուներ և այն, որ իրանա-թուրքական պատճրազմը պերջնականապես ի վիճ կդարձներ Թուրքիայի և Իրանի միջև հակառաւական դաշինք ստեղծելու պլանը, որի վրա անգլիացիները ժախսել էին բարում միջոցներ և հսկայական մամանակ: Անտարակույս, այդ պատճրազմը խոշոր հարգված հճանաչներ նաև Մերձավոր ու Միջին արևելյան անգլիական առևտունությունների պատճրազմի շրջանում իսպառ կիակիզեին Սոմանյան կայսրության վրայով անցնող անգլիական առևտուն գլխավոր տուինները¹¹³: Լոնդոնի կարինետը չէր բացառում նաև, որ Թուրք-իրանական պատճրազմի ընթացքում շահների միասնության հիմքի վրա կարող է ստեղծվել ուսիրանական ռազմական դաշինք, որը կունենա անասելի ժանր հետևանքում Մեծ Բրիտանիայի ռազմական, անտեսական և քահարական շահների համար ոչ միայն Մերձավոր արևելյան, այլև Բալկաններում, միջերկրածովյան ովազանում և հատկապես սևծովյան նեղուցների շրջանում: Վերոհիշյալ նկատառումները սահմանմ էին բրիտանական դիվա-

¹¹² Ա. Ջօնածըր, Եղմ. աշխ., էջ 154—155.

¹¹³ Յ. Պ. Յանակ, Եղմ. աշխ., էջ 72.

Նազիտությանը ձեռնարկել բոլոր միջոցները կանխելու իրանա-թուրքական պատերազմը։ Սակայն ի վերջո այդ չանբերը լուսվեցին ոչ մի գրական արդյունք։

Հասունացող իրանա-թուրքական պատերազմը անտարակույս հանդիսանալու էր Պետրովուրգի կարինետի սնեռում ուշազրության առարկան։ Ռուսաստանին հետաքրքրում էր ոչ միայն այդ պատերազմը, այլև նրա հագանական հետևանքները։ Այդ իսկ պատճեռով 1821 թ. օգոստոսի 23-ին Երմոլովը գրում է Իրանում ռուսական դիմանադիտական ներկայացուցիլ Ս. Ի. Մազարովիլին, որ յագ կլիներ, եթե Շարավար լիներ բախանցել Պարսկաստանի Հարաբերությունների մեջ Բ. Դուան նկատմամբ և պարզել նաև ռկարող է արդյոք պատերազմը (Հունաստանում—Ն. Բ.) միավորնել Իրանին և Թուրքիային՝ ընդգծել Ռուսաստանին։ Երմոլովը շեշտառմ էր նման ռհճապատճեցանց կերպությունը, հույս հայտնելով, որ Իրանում ռուսական միսիսայի խորաթափանցությունը կանխի Ռուսաստանի համար անցանկայի հօտենանքները¹¹⁴։

Սակայն իրեն տրված հանձնարարությունը Մազարովիլը կատարում է վերին աստիճանի ապաշնորչ կերպով։ Այդ առթիվ Ն. Ն. Մուրավյովի գրառումներում կարգում ենք. «Եթե Պետրովուրգից ստացվեցին համապատասխան թղթերը, որոնցում հայտնվում էր պարակական արքունիքին, որ թուրքերը իրենց վարդագետով իրենց վրա են բարդում կայսրի զայրույթը և իրենց են մեզ դրդում պատերազմի, անհրաժեշտ էր բացատրել Արքաս միրզային, որ կայսրը ցանկանում է, որ բոլոր ժողովուրդները իմանան, որ զամթումների կերքը չէ, որ ստիպում է նրան վարդել այդ կերպ, այլ բացատապես թուրքերի ոչ նիշտ արարժեքը իր նկատմամբ Դրիբոյեդովը զնացել էր Արքաս միրզայի մոտ և բացատրել այդ հանգամանքը, ասելով, որ կայսրը լի պահանջում զաշնակիցներ, այլ միայն ցանկանում է, որ գահաժառանդը տեղյակ լինի այդ բոլորին։ Արքաս միրզան ուրախանարար, այս առիթով խոսուացավ հանել 50 հազար զորք և շարժվել թուրքերի վրա, որը և նա արեց Հայորդ որը Մազարովիլը հանդիպելով նրան (Արքաս միրզային—Ն. Բ.) արգում, սկսեց նրան այդենուին բանը ասել, Մակայն փոխանակ զգուշություն պահպանելու, նա սկսեց խնդրել Արքաս միրզային լինելու մեր դաշնակիցը և երբ նա տվեց իր համաձայնությունը, ի նշան երախտագիտության նա հագշտակեց նրա ձեռքը և համբուրեց այն։ Ահա մի արարք,

¹¹⁴ АКАД. т. VI, к. 2, стр. 242; № 4 նու Տ. В. Шостаковս. Дипломатическая деятельность Грабоедова, М., 1960, стр. 60.

սրը սազական է մեր ժառայության մեջ գտնվող պատերկրյա վարձ-
կանիս—գերշում բացականչում էր Ն. Մուրավյովը¹¹³.

Այս զբուլցներից Արքաս միրզան, անշուշտ, կուսնելու էր, որ Թուր-
քիայի հետ ասացիկա պատերազմում Ռուսաստանը, եթե հանդես չգա
դաշնակցի գերում, համեմայն զիսպ համակրանքով կզերաբերմի նրա-
նին: Ի դեպ, այդ տեսակետի համոզված կողմնակից էր նաև նրանովով,
որը Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Նեստորովին գրած
համակում շեշտում էր, որ իրանա-Թուրքական պատերազմը ունի հա-
մար շափազանց ձեռնառու է, քանի որ Թուրքերի հետ մեր խզման գեպ-
պում թեն մենք լուսներ պարափիների օգնության կարիքը, սակայն
նրանց փոխադարձ թշնամանքը անօգուտ չէ մեջ համարը¹¹⁴: Այդ նույն
տեսակներին էին նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության զե-
կավարներից մենք՝ ի. Կապոդիֆառիան և գլխավոր շտաբի պետ ի. Բ.
Դիբիլը, որոնք գտնում էին, որ անհրաժեշտ է անհապաղ պազմական
գաշինք կնքել Իրանի հետ, որինել պարափիներին, ի շահ հասումացող
պատերազմի Թուրքիայի գեն¹¹⁵:

Սակայն նման տեսակները բնակ չեին բաժանվում Ալեքսանդր
I-ի և նրա արտաքին գործերի մինիստրի կողմից: Թյարիմացություն-
ները կանխելու համար Նեստորովին հանձնարարեց Իրանում ռուսական
ներկայացուցիչներ Գրիբոյեդովին և Մազարովին այցելել Արքաս
միրզային և պաշտոնապես հայտարարել նրան, որ Ռուսաստանը ձեռն-
պահ է մեռում իրանի հետ Թուրքիայի գեն համատեղ ելույթ ունենալուց¹¹⁶:

Բանե այն է, որ ցարական կառավարութ ցրաները Իրանի հետ
դաշնակցելու կամ նրան աշակցելու հարցը անխղելի կերպով կապում
էին այն գեպքի հետ, եթե Ռուսաստանը պատերազմի մեջ մտներ Թուր-
քիայի հետ: Մակայն, քանի որ 1821 թ. Պետերբուրգում գել համարում
էին, որ Հռոմեաստանը կանգնել է հեղափոխության կորժանարար արտ-
հեան վրա, որովհեց պատերազմի հարցը Թուրքիայի հետ միառժամա-
նակ հետաձգել¹¹⁷:

¹¹³ «Русский архив», 1888, № 5, стр. 105; См. запись Н. Н. Мурзяева от
января 1822 г.

¹¹⁴ АКАК, т. VI, ч. 2, стр. 253.

¹¹⁵ Н. Каподистрия. Записка о служебной деятельности (1826). Сборник
«Российского императорского общества», т. 3, стр. 272; «Сообщения баро-
на Дабича о действиях против Турции» (июль, 1821).

¹¹⁶ ЦГИАЛ, ф. 1018, оп. 2, д. 90, л. 11.

¹¹⁷ Л. С. Соколов, 174- աշխ., էջ 72:

1821 ب. امروان վերջին թուրք-իրանական Հարաբերությունները հասան ծայրանման սրության։ Սահմանի առանձին հատվածներում ակրս-վեցին զինված կառաղի բախումները Կողմերը սկսեցին լայնորեն օգտագործել սահմանամերք շրջանների իրենց հպատակ քրդական ցեղերին, նրանց հրահրելով անցնել սահմանը և առպատակ սփռել հակառակորդի կողմում։

Թայազետի կառավարիլ Սելիմ փաշային հաջողվեց համոզել իրանակառատակ քրդական Հայդերանլու և Վիսիրկի ցեղերին անցնել թուրքիա և այստեղից Հարձակումները տրթել իրանական տերիտորիայի վրա։ Ըստ որում թուրքական իշխանությունները Արքան Միրզային պաշտոնական հայտնեցին, որ իրենց համակնություններ ունեն այն տերիտորիաների նկատմամբ (Սալմաստի շրջակալրում), որոնք հանգիսանում էին Հայդերանլու ցեղի բնակավայրերը¹²⁰։ Արքան միրզան ստիպված էր էրդրումի փաշայի մոտ ուղարկել իր ներկայացուցիչ Հաջի Ալի բնիկին Հիջալ խնդրի շուրջը բանակցելու համար, սակայն փաշան ձերբակալեց նրան և բանտ նետեց¹²¹։

Թուրքական իշխանությունները ամենուրեք սկսեցին հալաժանք-ների ճնշարկել Սամանյան կայսրությունում բնակվող իրանակառատակ պարտիկներին։ Հատկապես Թաղդաղում և Էրզրումում ծայր առաջ Հակաշիիթական ուժդին քարոզվություն։ Իրաքի տեղապահ Դավուդ փաշան հրամայեց բռնագրավել Թաղդաղում բնակվող բոլոր հարուստ պարտիկների գույքը և հարստությունները, իսկ իրենց ձերբակալել Այդ Նույն կերպ նա վարվեց նաև Թարբալայում և Նաջաֆում։ Երիթական այս սրբազն քաղաքների բռլոր հարստությունները տեղափախվեցին Բաղդադ և վերածվեցին թուրքական ոսկեղբամբի¹²²։ Ուժեղացրին Հալաժանքները նաև իրացում շիհթների սրբազն վայրեր մնենող իրանական ուխտավորների նկատմամբ¹²³։ Բանը նույնիսկ հասավ նրան, որ էրդրումի զորամասի պետք գնդակահարեց իրանական դեսպանորդ Սադեղ բեկին¹²⁴։ Դրությունը է՛ւ ազելի շիկացավ, երբ էրդրումի վրայով

¹²⁰ تأصیر تجويی ۲۱۴، ۷۲۴، ۷۲۵، էջ ۱۰۴.

¹²¹ Խոյն անզամ:

¹²² C. J. Rich, ۲۱۴- ۷۲۴, էջ ۲۲۰.

«پیامبر اقبال»، تاریخ مفصل ایران از استینلی مقول گا انقراف قاجاریده

تهران ۱۳۶۲، ص ۳۷۹

¹²⁴ ميد الله رازى، تاریخ ایران، تهران ۱۳۳۵، ج ۷، ۷۶- ۷۷

նիստավացության մեկնող նախ Ալի շահի հարեմը և նիմարկվեց այդ նահանգի սերակեր Ալի փաշայի հարձակմանը և կողոպտափել¹²³,

Իրանական ֆեռազական ազնվականությունը, բարձրաստիճան հազորականությունը. և զինվորականությունը, ինչպես նուև շահական արքունիքի մեծ մասը դանում էր, որ շահը պետք է անհապաղ պատերազմ հայտարարի Ռամանյան կայսրությանը: Ալդ խնդրում հատկապես մեծ շահագրավածություն էր դրսուրում գահաժառանգ Արքաս միրզան, որի կարենքով, Թուրքիայի ներքին և միջազգային բարդությունները յանդարձների հուզումները, պատերազմը Հունաստանում, ապստամություններ Վալախիայում (և այլն) հիանալի հետավորություններ և առանձում Թուրքիայի դեմ հաղթական պատերազմ մզելու համար Արքաս միրզան հատկապես տենչում էր նակատամարտի դաշտում փորձել իր բանակի ուղղմական վերակառուցումների արդյունքները, մանավանդ որ միանգամացն ակնհայտ էր, որ 1814 թ. մինչև 1821 թ. ընկած շըրջանում իրանի զինված ուժերի վերակառուցման գործը ձեռք էր բերել շօշափելի հարցություններ:

Թայ գիտակցելով, որ պատերազմը թուրքերի դեմ կարող է առաջ բերել միջազգային քննութիւ բարդություններ, գահաժառանգը ուղղմական գործողություններ սկսելու նախօրյակին սկսեց ձեռնարկել որոշակի դիմանադիտական նախապատրաստություններ: Նրան հատկապես մտահոգում էր պատերազմի ընթացքում նույնառությունների գիրցորոշման հարցը:

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով Արքաս միրզան նախ մի նամակ հղեց Նրմուզին, որտեղ գրում էր, որ իր թուրքական կռապարության կողմից հույն բրիստոնյաների նկատմամբ գործադրությունները իր մեջ առաջ են բերում զայրութիւ բուռն դպացում և պարտազրում են իրեն պատերազմի դուրս գալ Թուրքիայի դեմ¹²⁴, Անշուշտ, այս հայտարարությունը նպատակ ուներ նախ շահել Արևաստանի համակրանքը և ապա Թուրքերի դեմ պատերազմը սքողել հանուն արդարության մզգող պայքարի լուսապահով:

Թանի որ Արքաս միրզան մտադիր էր իր բանակը շարժել երկու ուղղությամբ՝ Միջազգատքի և Արևմտյան Հայաստանի, նա եռանդում աշխատանքներ էր տանում պատերազմի ընթացքում այդ շրջանների քննակլության արակցությունը ստանալու համար: Արևմտյան Հայաստանում նա իր հույսերը կապում էր հայ բնակչության հետ, նկատի ունե-

123 ۱۷۴۰ء آنیت، امیر کبیر و ایران، تهران، ۱۳۳۴، ص ۲۷۶

124 B. Pottro, Եղիկ, աղջ., է 3.

նալով, որ սովանյան ծանր լուծը աղջակ կհանդիսանա հայերի հակաբուժքական ելույթների համար։ Իր այս նպատակին հասնելու համար Արքաս միրզան մեծ շքախմբով մեծնեց էջմիածին, որպեսզի կաթողիկոսն իր սուրբ օրների քրիստոնեական խորանում¹²⁷, Դրանով ևա ըստ երևույթին հույս ուներ նաև շահել Արքելյան Հայաստանի հայ քնակլության համակրանքը։

Իսկ Միջագետում Արքաս միրզան իր հույսերը դրձլ էր այստեղ գտնվող պարսկական խոշոր համայնքի և շիհովով դաշտանող արարական ցեղերի վրա, որոնց շրջանում Իրանը բազմաթիվ կողմնակիցներ ուներ իրաքի հյուսիսում իրանական պրոպագանդան մզվում էր Թերմանշահից, իսկ հարավում իրանական ազգեցության ուղեկցողն էր Հռվելյան քաղաքը, որի չափը գետում XVIII դ. սկզբից բնակվում էր Բենի Լյամի արարական ցեղը (20.000 մարդ), ինչպես նաև Մումբեֆիկի ցեղը, որոնք ունեին իրանական կողմնորոշում¹²⁸, Գիտակցելով, որ Միջագետքի արարական մի շարք ցեղերի պրո-իրանական տրամադրությունները մեծագույն վտանգ են հանդիսանում փաշալիքի համար, Դավուց փաշան պատերազմի հենց նախօրյակին եռանդում կերպով ձեռնամուխ եղավ Նորանց հնազանդեցմանց և սաղմում խեղդեց այդ ցեղերի ապստամբության հոգուան Իրանի¹²⁹։

Խոսհեզմ Իրանի և Թուրքիայի միջև հասունացած պատերազմի մասին, 1821 թ. հոկտեմբերին նեսսալյուոդին գրում էր Օրմոլովին. «...Պարկակաստանը ունի ընդարձակ մտապրաւթյուններ և քրազիքրու...» Եանը, որ այդ գործում օգտվում է իր ծրիու որդիների միահամուռ աշակեռությունից, մատադիր է իր պետության ուղ ռազմական ուժերը ուղղել զնո՞ի թուրքական կայսրության արքելյան նահանգները¹³⁰։

Խել զերաբերում է Թուրքիային, ապա հաշվի առնելով կայսրությունում ստեղծված ծայր աստիճան բարդ իրազրությունը, կառավարությունը աշխատում էր դործը շհասցել միելն պատերազմի։ Այդ առթիվ Կռաստանգնուպոլիսում ուստական գետպանը նկատում է. «... Կարծում եմ, որ Բ. Դուտը, զգալով իր վիճակը, սիրով կզերադասի խազազ միջները և հակված չէ այժմ դիմելու Պարսկաստանի դմմ թշնամական գործողություններից¹³¹։

¹²⁷ R. G. Watson, A history of Persia, London, 1880, p. 139.

¹²⁸ Տե՛ս A. Adams, Երևան, էլ 418—419,

¹²⁹ Տե՛ս V. Fontenier, Voyage dans l'Inde et dans le Golfe Persique, Paris, 1844, տ. I, պ. 364.

¹³⁰ ԱԿԱԿ, տ. VI, ս. 2, տր. 250.

¹³¹ Խոյն տեղում, էլ 418,

Սակայն պատերազմը կանխելու ուղղությամբ թ. Դռան ձեռնարկած միջոցները արդեն ուշացած էին: 1821 թ. Հոկտեմբերին սկսվեց իրանա-թուրքական պատերազմ: Թագավական գործողությունները ժամանակակից Միջագետքում, Թրութանում և Արևմտյան Հայաստանի տարածքում:

Չաղըանի մոտ թուրքական գործերին առաջին պարտությունը հասցըրեց Նրանի սարդար Հասան խանը²²³: Այնուհետև երկամսյա պաշարումից հետո Արքաս միրզան գրավեց Բայազետը և զերի վերցրեց Բայազետի Բալլուկ փաշային²²⁴: 1822 թ. գարնանը թուրքական գործերը շախախվեցին պաշարված Թոփրակ Կալայի մոտ, որից հետո իրանական բանակը գրավեց Նան Ակ Սերալը²²⁵:

Թուրքիան որոշեց կենտրոնացնել խոշոր ուժեր և անցնել Հակա-Հարձակման: Օսմանյան մի խոշոր բանակ շրջանցելով Բայազետը և Թոփրակ Կալան, ներխուժեց Իրանական Ալտրպատական, Խոպատակ ու Նենալով զրավել Թավրիզը: Սակայն Հանդիպելով Արքաս միրզայի բանակին, շախչախիչ պարտություն կրեց²²⁶: Այս հաղթանակից հետո Արևմբարյան Հայաստանի տարածքում Արքաս միրզան գրավեց ևս մի շարք նոր տերիտորիաներ: Դիադինը, Մալազկերտը, Բաղեշը, Մուշը, Ախլաթը, Ազիլցևազը, Խանդուշը և այլն²²⁷:

Արքաս միրզայի այս խոշոր հաջողությունները գիտավորապես պետք է բացատրել նրանով, որ ուղարկան այս կամպանիայի ժամանակ նրան աշակեցում էին ոչ միայն իրանահպատակ թրդեցը, այլև Թուրքիայի ցրդական ցեղերը²²⁸:

Թուրքական կառավարությունը սրոշեց Հակապոտն կաղմակերպեց այս անգամ Միջագետի ուղղությամբ: Բաղդադի Դավուդ փաշային հրամայից Շահներութիւնը կողմից ներխուժել Թերմանշահի նահանգը, Սակայն այս փորձը ևս մատնվեց անհաջողության, սրովհետև թուրքական գործերը վճռական պարտություն կրեցին Թերմանշահի վայլ՝ Մոհամմադ Ալի միրզայի կողմից, որը ևս շպրտելով հակառակորդին, հետապնդեց նրան մինչև Բաղդադից ոչ հեռու գտնվող Բենի Մալիկ կոշ-

²²³ تاریخ ناصر نجفی، ۳۲۴، աշխ., էջ 104:

²²⁴ П. Н. Асарянов, ۳۲۴، աշխ., էջ 81:

²²⁵ R. G. Watson, ۳۲۴، աշխ., էջ 197—198:

پکونگیان میرحسین، گوشاهی از تاریخ نظامی ایران، تهران، ۱۳۳۷، ص ۶۸

²²⁶ R. G. Watson, ۳۲۴، աշխ., էջ 187:

²²⁷ A. Adams, ۳۲۴، աշխ., էջ 419:

ված վայրը, այսուհեղ նախապատրաստվելով զբանավ վերցնելու Բաղդադում¹²⁴, Միջագետքում զարգացնելով իրենց հաշողությունները, իրանական զորքերը զրագեցին նաև Թիրքութք և Սոսուլը:

Բաղդադը զրագելու նախապատրաստությունների ճռում պահին իրանական բանակի հրամանատար Մոհամեմադ Ալի միրզան անակնկալ հիմանդրանում է խոլերայով և մահանում: Բանակը հրաման է ստանում ժամանակավորապես նահանջել Թերմանշահ: Ագրվելով զրանից, Բաղդադի Դավուդ փաշան անցնում է հականարձակման, սուկայն իրանական սահմանի մոտ նու կրկին պարտություն է կրում այս անդամ մահացած Մոհամեմադ Ալի միրզայի որդու՝ Մոհամեմադ Հոսեիսի կողմից¹²⁵:

Խելպիսի¹²⁶ դիրք գրավեցին Մերձավոր և Միջին արևելքի հարցերով շահագրգուկած եվրոպական երկու խոշոր պետությունները՝ Ռուսաստանը և Անգլիան, իրանա-թուրքական այս պատերազմի նկատմամբ:

Պատերազմը սկսվելու նախօրյակին և պատերազմի առաջին օրերից Գետերուրուրը ուշի-ուշավ հետևում էր նրա ընթացքին, որովհետև թուրքական և իրանական խոշոր զորամիավորումների կենտրոնացումները Հայաստանի և Աստրավականի տերիտորիայում Ռուսաստանի կողմից զիտվում էր որպես իր շահների համար անցանկայի ու վտանգավոր երևույթ: Սակայն միննույն ժամանակ պատերազմը ժամանակավորապես շեղում էր Իրանի և Թուրքիայի ուշաղցությունը ուստահան սահմաններից: Այդ առթիվ Նեսանելրուն 1821 թ. նոյեմբերի 9-ին գրում է Երմոլովին: «...Նրանց փոխադարձ թշնամութք անօգւտ չէ: Եթե մի պահ ենթադրենք, որ նրանք համաձայնվեն միավորվել մեր դիմ... որա հետեւանքով ինչպիսի օգուտներից մենք կղզկղնք»¹²⁷:

Գետերուրուրի կարինետին առաջին հերթին մտահոգում էր այն, որ բրիտանական կոռուպարությունը լմեղագրի իրեն այդ պատերազմը հրանուելու մեջ, որը կարող էր, ցարական կառավարող շրջանների կարծիքով, տեղիք տալ անցանկայի բարդությունների Անգլիայի հետ: Այս ուղղվ 1821 թ. գետերուրի 17-ին Նեսանելրուն հրահանգ ուղարկեց Երմոլովին, որտեղ ցուցում էր տրվում ոխուսափել այն ամենից, ինչը կարող է տեղիք տալ Մեծ Բրիտանիայի գործակալներին մտածելու, որ մենք ցանկանում ենք զինել ոպարսիկներին ընդդեմ թուրքերից¹²⁸: Իսկ

¹²⁴ G. Keppel, Personal narrative of travels in Babylonia, Assyria, Media and Scythia, London, 1827, vol. I, pp. 265—268.

¹²⁵ R. G. Watson, Երև. այն., էջ 297—298.

¹²⁶ ԱԿԱՀ, 7. VI, ռ. 2, սր. 253.

¹²⁷ ՏՎՀ Ա. Յ. Խօնմասուն, Եղվ. Հոգիստը, էջ 171.

Ա. Ա. Գրիգորյենովին և Ս. Ի. Մազարովիչին կարգադրեց այդ մասին անհապաղ տեղեկացնել Արքաս միրգային¹⁴²:

Առաջնորդվելով վերոհիշյալ սկզբունքներով, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը մերժեց արքայազնուն Մոհամմադ Ալի միրգայի կողմից Պետքրությունական կեֆալի միօխայի առաջարկները, որոնց էտիմոլոգիա կայանում էր նրանում, որ օգտվելով Թուրքիայի հետ պատերազմից, արքայազնը ցանկանում էր ամրապնդել իր հավակնությունները իրանական գանձի նկատմամբ և այդ նպատակով ինքրում էր Ալեքսանդր I-ի աշակցությունը: Պետքրության իր մերժումը պատճառաբանեց նրանով, որ ինքը հագաւորիմ է մնում Գյուլիստանի պայմանագրին, որը նախատեսում է աշակցություն ցուց տալ միայն իրանի որինական զանաժառանգին՝ Արքաս միրգային¹⁴³:

Վերոհիշյալ նկատառությունը ստիպում էր նեսոնը լրացնել իր հնաբականերից պահանջել հանդասաւթյունը պահպանել և շմիջամտել կոնֆլիկտին:

Անշուշտ, Ռուսաստանի կողմից իրանին աշակեցելու դեպքում ռուսները հնարավորություն կունենային շահի կողմից մեռք բնելու որոշակի դիրքությունը Անդրկօղկասի հարցերում: Սակայն հակառակ այս արամարանությանը, ուստական արտաքին գործերի մինիստրը տացին էր միանգամայն այլ հրանեսկներ, միաժամանակ անհրաժեշտ գոնելով ոթ. Դանը հնարավորություն տալ նրա այս գժվարին վիճակում հաշտվելու Պարսկաստանի հետ¹⁴⁴: Ո՞րն էր առաջին հայոցից այդ տարօրինակ և անհանկանալի քաղաքականության պատճեռը: Բանն այն է, որ հանդիսանալով Ռուբրազան գաշինքից գաղափարների համոզված կողմնակից, նեսոնը լրողն փաստորեն հնազանդությամբ կատարում էր անզիփական և ավտար-գերմանական գիվանագիտության կամքը, հանգիս գալով որպես հվրուպական պետությունների հետ համաձայնեցված գործողությունների կողմնակից, հակառակ նույնիսկ այն բանին, որ այդ քաղաքականությունը ովլյալ պարին հակասում էր Ռուսաստանի պետական շահերին:

Նեսոնը շանում էր բացառել ամեն մի կասկած այն մասին, որ իրանի հակաթուրքական քաղաքականությունը և Մերձավոր ու Մի-

¹⁴² Записки Н. Н. Муравьевса, «Русский архив», 1858, кн. 2, стр. 105; А. С. Грибоедов, Сочинения, т. III, стр. 241.

¹⁴³ ЗН А. П. Щербатов, Երվ. ազն., շ. 2, Հազերված, էլ 20—23, ЦГАДА, ф. Ермоловых 1046, оп. 1, չ. 332; ЦГИА, ф. 1018, оп. 2, ձ. 89, չ. 31 об.

¹⁴⁴ ЗН А. З. Ноакишиани, Երվ. Հազված, էլ 170.

չին արևելքում ժամակվող իրադարձությունները կապ ունեն Մոլդավիայի և Վալախիայի ղեղպերի հետ: Նա աշխատում էր առիթ շտալ ենթադրելու, որ այդ գործողությունները ղեկավարելու ներքին զսպանակները գտնվում են Ռուսաստանի ծեռքերում և նա է, որ կազմակերպել է միաժամանակյա Հարցած Թուրքիայի դեմ ինչպես նվրոպայում (Մոլդավիա, Վալախիա, Հռոմաստան), այնպես էլ Մերձավոր արևելքում: «...Կարո՞ղ ճեք մենք արջոյոք հրահրել նրանց (պարսիկներին—Վ. Ա.) թուրքիայի դեմ թշնամական գործողություններին. այս հարցադրմանը Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը պատասխանում է հետևալ կերպ. «Մենք դրանով կասասենք մեր խաղաղ Հարաբերությունների հիմքերը Դռան հետ, որոնք հազիվ ճեք մենք կարողացել վերականգնելլ Ասիայում և պատճելով պատճրագմին, մենք իրավունք ունենք արդյոք մեր դաշնակիցներին ասելու, որ նվրոպայում ցանկանում ենք պահպանվի հանգստությունը»¹⁴⁵.

Այսպիսով, միանգամայն անհեծն է թուրքական պատմագրության այն տեսակետը, որ Իրանը պատերազմի մեջ մտավ Թուրքիայի դեմ և միայն այն պատճառով, որ հանգիստանում էր Ռուսաստանի գաշնակիցը¹⁴⁶, իսկ իրանական պատմագրությունը, զանվելով անզիստական տեսակետի ազգեցության տակ, առաջ է քաշում ամ զրույթը, որ օգտագործելով թուրք-իրանական հակամարտությունը, Ռուսաստանն այդ երկու պետությունների միջև հրահրեց պատերազմ¹⁴⁷, Բացառություն է կազմում թերևս Մահմուդ Ֆարհադ Մոխամեդի այն տեսակետը, որ թուրք-իրանական հարաբերությունները միտումնավոր կերպով որվամ էին անզիստիցների կողմից, որոնք հետապնդելով Աֆղանստանում հիմնավորվելու և իրանի արևելյան շրջանները (մասնավորապես իրանական Բալուչնատանը) իրենց ազգեցությանը ենթարկելու նպատակները, աշխատում էին թուրք-իրանական հարաբերությունների արագույթ շնորհի իրանական կառավարության ուշադրությունը երկրի արևելյան շրջաններից և այն անհոնի բացառապես արևմտաքի (Թուրքիայի) և Հյուսիսի (Ռուսաստանի) կողմը¹⁴⁸:

¹⁴⁵ Խայք անդամ, էջ 173.

¹⁴⁶ 133-1328: أحمد راسم، هشانلى تاریخ، جلد ۴، قسطنطینیه،

147-148 ع

جمیل قولانلو، تاریخ نظامی ایران، تهران ۱۳۷۵، ص ۸۷-۸۸: «

محمود فرهادی صعتمد، تاریخ روایت سیاسی ایران و هشانی یا سپاهسالار

148 اعظم، جلد دوم، تهران ۱۳۵۷، ص ۲۰:

Ընդհանուր առմամբ ցարական կառավարության դիրքորոշումը 1821—1823 թթ. իրանա-թուրքական պատերազմի նկատմամբ կարելի է գնահատել որպես լեզուրության դիրքորոշում, սակայն Իրանի նկատմամբ բարյացակամ լեզուրության ակնհայտ նշաններով։ Պետքը բարդ կարինեածի այս գիծը ենթադրում էր շշափելի օգտաները բերել նույառատանին թեկուղէ նրանով, որ Իրանի կառավարող շրջանների ռևանչիստական արամադրությունները և տարածքային ձեռքբերումներ կատարելու ձգումները թեկուղէ ժամանակավորապես շեղվում էին նույառատանից և ուղղվում օսմանյան կայսրության կողմը։ Այնուհետև համոզված լինելով, որ պատերազմի ընթացքում անզիացիները աշակցելու են Թուրքիային, Ռուսաստանը հույս ուներ, որ դա անխուսափելիութեան սկզբ կիրքի անզիա-իրանական հարաբերությունների մեջ, որի հետանքով էլ ամելի կիսումնա Պարսից ծոցի շրջանում ժայռ առաջ անգլո-իրանական կոնֆլիկտը և վերջին հաշվով Իրանում անզիական ազգացությանը կհասցվի շշափելի հարված։ Տարական դիմանագիտության կարծիքով, այդ բոլորին անխուսափելիութեան կհետևեր զեպի Իրան ուստական ժիազագ ներթափանցմանը քաղաքականությունը¹²,

Վերշապես, շպետք է մուսանալ, որ և Իրանը, և Ռուսիան հանդիսանում էին նույառատանի պատճենցիալ ախոյանները Մերձավոր և Մրցին արմենիում և նրանց փոխագարձ թուլացումը հոգ կնախապատրաստեր արդ շրջաններում ուստական քաղաքականության հետագա ակտիվացման համար։

Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիայի դիրքորոշմանը իրանա-թուրքական պատերազմի նկատմամբ, ապա այն կարելի է բաժանել երկու էտապի։ Ակզրեական շրջանում Անգլիան ոչ միայն փորձեր շեր անում կանխելու այդ բախումը, այլև հույսներ ուներ օգտագործելու այն Պարսից ծոցում իր ազդեցության հետագա տարածման համար¹³, Սակայն 1822 թ. Բազգաղի մոտ իրանական բանակի հաջողությունները փոխեցին անզիական դիրքորոշումը։ Վախենալով ռուս-իրանական մերձեցումից¹⁴, Անգլիան սկսեց շանքեր դորձադրել իրանա-թուրքական պատերազմը դադարեցնելու և կողմերի միջն կոնֆլիկտը խաղաղ նախապարհով լուծելու ուղղությամբ։ 1822 թ. Պետքը բարդ կարինեածի ուղղությամբ իրանական առաջին մինիստրի նախապարհով ձեռք բերված իրանական պառաջին մինիստրի նամակը, ուղղված Կռառանդուպալուսում անզիական զեսպա-

¹² Հ. Ս. Շահոս, Եղի. աշխ., էջ 73.

¹³ АКАД. т. VI, ч. 2, стр. 255.

¹⁴ ՏՎԿ. К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, стр. 12—13.

նին, Երմոլովը Նեսսկյողնի ուշացրությունը «Անհռում էր այս բանի վրա, թե ուսուցած հեռու է գնում անդիխական կառավարության հոգատարությունը Պարսկաստանի և Շուան միջն ժագած թշնամական գործողությունների գագարիցման ուղղությամբ»¹²².

Իրանա-թուրքական պատերազմը շոշափելի հարված էր հասցնում նաև Անգլիայի առնարատնեասական շահերին: Բուշեհրում և Բասրայում առնմանված բարձր մարտառութերը հանգեցրին անգլիական առևտության շեշտամակի կրնատմանը Պարսից ժողի ավագանի երկրներում, իսկ պատերազմի հետևանքով Տրապիդոն—Թավրիդ և Բաղրադ—Թերմալշահ առնուրական ճանապարհի փակումը դադարեցրեց անգլիական ապրանքների մուտքը դեպի Իրան Փոքր Ասիայի վրայով: Իրանում անգլիական առևտությի կրնատմանը անխուսափելիորեն հետևելու էր Մեծ Բրիտանիայի քաղաքական ազդեցության անկումը:

Վերոհիշյալ նկատառութեարը Լուսդոնի կարինեանին ստիպեցին վճռականորեն վերանայել իր քաղաքականությունը իրանա-թուրքական հարաբերությունների նկատմամբ: Թաղաքական այս նոր դիմք կենսագործելու էր արտաքին գործերի պետական քարտուղար Զորշ Կանենինզը, որը փոխարինել էր ինքնապանությունը գործած Կեսուրիին: Նրա մշակած քաղաքականությունը վերին աստիճանի հստակ էր՝ անհապաղ գաղարծենել իրանա-թուրքական պատերազմը և ստեղծել այդ երկու երկրների բոլոր նուաստանի գեմ պատերազմ մզելու համար»¹²³:

Լուսդոնի հանձնարարությամբ Իրանում անգլիական գործերի համատարմատար Հ. Ուկլուքը և բրիտանական միսիայի առաջին քարտուղար Ջ. Մաքնելը (որը փոխարինել էր Զ. Կեմպրելլին) շահական կառավարությունից պահանջնեցին անհապաղ դադարեցնել ուղմական գործողությունները թուրքիայի դեմ¹²⁴: Այդ փաստը ստիպված էր խռոտվանել Միջին արևելքում անգլիական հետախուզներից մեջ՝ Ֆրեյլերը¹²⁵: Սակայն դիվանապիտական այս առաջադրությունը հաջողության շունեցավ: Որոշվեց շահի մոտ ուղարկել մայոր Հարրիտուխն¹²⁶: Իր հերթին Օստ-Հնդկական ընկերությունը համարյա միաժամանակ իրան ուղարկեց մի հատուկ միսիա՝ Զակսի և Ֆրեյլերի մասնակցությամբ, որոնց հանձնարարված էր անհապաղ հարթել Պարսից ժողի Թեղմ կղզու

¹²² АКАК, т. VI, ч. 2, стр. 267.

¹²³ Б. П. Балаки, 124. այլ., էջ 79—80:

¹²⁴ АКАК, т. VI, ч. 2, стр. 434.

¹²⁵ ՏՎ- J. Fraser, Travels and adventures in the Persia and provinces on the Southern banks of the Caspian Sea, London, 1825, p. 303.

¹²⁶ АКАК, т. VI, ч. 2, стр. 263.

Համար ժագակ անզլո-իրանական վեհը (որը 1821 թ. գրավվել էր անգլիացինների կողմից) և դրանով իսկ հող նախապատրաստել Հայրիութիւն աված Հանձնառարտությունը գլուխ բերելու համար:

Մակայն քանի որ այս փորձը ևս ավարտվեց անհաջողությամբ, Անգլիան որոշեց դիմել ավելի կտրուկ միջոցների: Բրիտանական կոռպավարության որոշ գործիշներ նույնիսկ պահանջում էին Իրանի դեմ օգսագործել Պարսից ծոցում գտնվող անգլիական ուսազմական նավատորմը, սակայն մտավախություն ունենալով, որ դա կարող է ածովիք տալ ռուս-իրանական դաշինքի կնքման, հրաժարվեցին այդ գազափարից¹³⁷:

Անգլիական դրույթի հավատարմատար Հենրի Ուիլլորը արգելեց անգլիական ապաներ կիսգրեյին, Մակինզուշին, Արմստրոնգին և Վիլյամսին մասնակցել իրանա-թուրքական պատերազմին: Արպես պատասխան Արքաս միրգան պահանջեց, որ հիշյալ սպաները հնառան Իրանից¹³⁸: Այս գիպվածը է՛լ ավելի լարեց անգլո-իրանական հարարեսությունները, որոնցից անմիշապես օգտվեցին ֆրանսիական սպաները: Մարդարար Բրյունի նախկին համհարզ Ալլարը դարձավ իրանական հեծելազորի հրամանատար, իսկ կապիտան թ. էթյեն նշանակվեց նախիչեանի և Մարանջի գումարտակների հրահանգիլ Նրանց հետ միասին ֆրանսիական մի շարք սպաներ՝ Վենտուրան, Կուրը, Զիրելլին և այլն, սկսեցին մասնակցել իրանա-թուրքական պատերազմին¹³⁹:

Վկայակոչելով 1814 թ. անգլո-իրանական դաշնակցային պայմանագիրը, 1822 թ. Յաթէ Ալի շահը դիմեց Անգլիային, ինդրելով Ֆինանսական օգնություն: Մակայն մերժում ստացավ: Միանգամայն ակնհայտ է, որ բրիտանական կառավարությունը լեռ ցանկանում ֆինանսավորել պատերազմը Թուրքիայի դեմ: Մերժում ստանալուց հետո շահը, անգլիական Էլիսարի արտաշարտությամբ, «հետևելով Նրանց վատ խորհուրդներին, ովքեր մղում էին Նրան Անգլիայի նկատմամբ թշնամական և վիրավորական գործողությունների» (իմա՞ Ռուսաստանը—Վ. թ.) անգլիական գործերի հավատարմատարին հղեց բողոքի պաշտոնական նոտա¹⁴⁰:

137 Ա. Ս. Սևեռոս, Եղբ. այլն., էջ 73.

138 Խայթ ակամ, էջ 74, Մակրաման տե՛ս Ch. Bélanger, *Voyage aux Indes Orientales et la Perse pendant les années 1825 à 1829*, vol. II, Paris, 1838.

139 Ե. Ա. Տառան, Եղբ. այլն., էջ 81, Ա. Ս. Սևեռոս, Եղբ. այլն., էջ 52—54, J. Frazer, *Travels and adventures...*, pp. 303—304, 369.

140 ԱԿԱԿ, թ. VI, ո. 2, տր. 254.

1822 р. аպրիլին Թէհրանում անգլիական միսիայի ղեկավար Հ. Ուփլուքը, առաջին քարտուղար Զ. Մաքնելլը հեռացան Իրանից և Անգլիայի ու Իրանի միջն դիվանադիտական հարաբերությունները փաստորնեն խզեցին: Այս պարագայում Արքա միրզան դիմեց ցարական կառավարությամբ, խնդրելով Իրանին արամազդել կարճաժմկետ փոխառություն մոտ 100.000 ռուբլու չափով, փոխանցելով այն Լոնդոն Իրանի կողմից զնված անգլիական զենքի արժեքը զնարելու համար: 1822 թ. բանակցողականները ուսում-իրանական լինիառության վերաբերյալ և դրան նախորդած Ն. Ն. Մուրավյավի միսիայի ակտիվ գործունեությունը Իրանում (1821 թ.) առաջ բերեցին բրիտանական կառավարության բազուքը, որը Պետերբուրգի կարինետին հաղորդվեց Անգլիայում ուսուական դեսպան Խ. Ա. Լիլենի միջոցով²¹:

Սակայն չնայած Անգլիայի դիմագրությանը, 1821—1822 թթ. իրանա-թուրքական պատերազմի շրջանում ուսում-իրանական քաղաքական և առաջինապես տնտեսական հարաբերությունները նշանակալիորեն ակտիվացան: Նախ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունը կովկասյան իշխանություններին կարգադրեց խստիվ և անշեղորեն պահանձ Գյուլիստանի պայմանագրի կետերը²²: Այնունեան օգավելով իրանա-թուրքական պատերազմից և Պարսից ծոցում անգլո-իրանական հարաբերությունների սրումից, որի հետնանըով ըստ էսթյան դաշտեց Իրանի առանուրը ինչպես ժողի երկրների, այնպես էլ Թուրքիայի Հետ²³, Ռուսաստանը ձեռնարկեց մի շարք գործուն միջոցառումներ Իրանի հնա առնտուրը աշխուժացնելու համար: Նախ Իրանի ասհմաններում նա վերացրեց մաքսային արգելքները և Անդրկովկասում սահմանեց արտոնյալ մաքսային ուժիմ, որի հետևանքով ուսում-իրանական առնտուրը նշանակալիորեն աշխուժացավ: Այնունեան, 1822 թ. ֆինանսների մինիստր Դ. Գուրզը կարգադրեց մաքսատներում իրանական ապրանքներից զանձնել Գյուլիստանի պայմանագրով նախատեսված 5%-ի չափով մաքսատուրը²⁴:

Բացի այդ, 1822 թ. հունիսի 1-ին ուժի մեջ մտավ Ալեքսանդր I-ի հրամանագրը Ռուսաստանի տերիտորիալով զեզի Իրան արևմտակվրոպական ապրանքների տարանցիկ առևտուրի արտոնյալ մաքսատուրը

²¹ Հ. Ս. Սամոհ, 124. աշ., էջ 74.

²² Տե՛ս Յանի Ա. Կուրազև, «Русский архив», 1888, չ. I, стр. 77.

²³ V. Fontanier, Voyages en Orient, entrepris par ordre du gouvernement français, de l'année 1821 à l'année 1829, т. II, Paris, 1829, p. 76.

²⁴ ԱԿԱԿ, տ. VI, գ. 2, стр. 218.

սահմանելու մասին, որի նպատակն էր իրանական շուկայում ռուս-ֆրանսիական դրու կաղմակերպելու Անգլիայի դիրքերի դեմ²⁷: Վերահիշյալ միջոցառումների հետևանքով իրանական զանառականների քառագանները էրզրումից և Բաղդադից իրենց ճանապարհը շեղեցին դեպի Թիֆլիս:

Հաճական կառավարությունն իր հերթին շահագրգովածություն էր դրսելում Ռուսաստանի հետ առևտորի ընդդայնման և առհասարակ Ռուսաստանի օգնությամբ իր ներքին տնտեսական դժվարությունները հաղթահարելու մեջ, որոնք առաջ էին եկել ներքին ցնցումների (1818—1819 թթ. ապստամբությունները Թրգոստանում և Գիլանում), հարկան պետությունների հետ ուազմական ընդհարումների (1814—1818 թթ. Հերաթի խնդրով Աֆղանաստանի հետ, 1818 թվականից Թուրքիայի հետ) և վերջապես 1818—1819 թթ. ժանր երաշախ հետևանքով: Այդ հանգամանքը ստիպում էր շահին մասնակիորեն կատարել Գյուլիստանի պարձաւությունը կետերը:

Սակայն շահական կառավարությունը բնավ մտադիր չէր երկարատև ժամանակաշրջանի համար բարելավել իր առևտրանութեսական հարաբերությունները Ռուսաստանի հետ, որովհետև վերջինս իրանի համար շարունակում էր մեռլ որպես համար առաջին քաղաքական ախոյան: Պատահական չէ, որ սուս-իրանական տնտեսական կապերի աշխատացմանը շնչետնեցին քաղաքական հարաբերությունների ակտիվացումը և սուս-իրանական համագործակցությունը բնավ գուրս չէր դալիս երկրորդական նշանակություն ունեցող հարցերի շրջանակներից:

1821—1823 թթ. իրանա-թուրքական պատերազմի շրջանում իրանական դիվանագիտության գծի մանրազնին ուսումնասիրությունն անվերապահորները քերում է այն համոզման, որ Ռուսաստանի հետ քաղաքական հարաբերություններում շահը աշխատում էր վարել սքովզած թշնամանքի քաղաքականությունն, մինչդեռ անգլիացիների մոտ աշխատում էր ստեղծել Ռուսաստանի հետ մերձեցման ստպավորությունն: Այս երկդիմի քաղաքականության նպատակն էր անգլիացիներից ստանալ օգնություն Ռուսաստանի դեմ նոր պատերազմի նախապատրաստվելու համար:

Ի վերջո այս նկատառումները ստիպեցին շահական կառավարությանը նորմալացնելու իր լարված հարաբերություններն Անգլիայի հետ: 1823 թ. կեսերին, երբ իրանա-թուրքական պատերազմը դեռ բռնկ թափով շարումակվում էր, Զաքի Ալի շահը Եիրազի կառավարչի անու-

նով հրապարակում է մի ֆարմաս, որով վերտանին հաստատվում էին Անգլիայի առևտրական արտնությունները Իրանում։ Դրան անմիջապես հետևում է անգլ-իրանական մի առևտրական համաձայնագրի ստորագրում, որով վերջ էին տրվում Պարսից ժողի շրջանում անգլ-իրանական վեճին և լարված հարաբերություններին¹⁰¹։

Համարյա միաժամանակ բրիտանական կառավարությանը հարցվում է Լոնդոնում գտնվող իրանական զեսպանության զեկավար միրզա Մալհնի համոզել, որպեսզի Իրանը հրաժարվի ուստական փոխառությունից։ Լոնդոնը նույնիսկ պատրաստակամություն է հայտնում անվարձահատուց ձևով Իրանին հատկացնել զենք և զինամթերք, պայմանով, որ դա կիրեք միայն իրանա-թուրքական պատերազմի դադարեցումից և այն բանից հետո, եթե շահը կմերձնեա սուլթանին, որպեսզի երկու երկրները համատեղ կերպով նույնի ուստատանի դիմ։

Հատկանշական է, որ այս բանակցությունների ժամանակ Լոնդոնում էր գտնվում նաև Թուրքական դեսպանը¹⁰²։

Իրանում ուստական դեսպանուրդի հաղորդման համաձայն, 1823 թ. Հունիսի 15-ին Լոնդոնում կնքվում է Անգլիական վերաբերող բաղադրական մի համաձայնագիր Իրանի հետ¹⁰³, որով նախատեսվում էր անհապաղ դադարեցնել պատերազմը Թուրքիայի դեմ և այնունեան Սամանդան կայսրության հետ համատեղ Անգլիական վեճի դալ ընդդեմ Թուրքաստանի։ Համաձայնագիրը ստորագրելուց հետո իրանական դեսպանը Լոնդոնից անմիջապես մեկնում է Հայքենից¹⁰⁴։

Լոնդոնի համաձայնագիրը կնքվելուց հետո Իրանի և Թուրքիայի միջն սկսվում են նախական բանակցություններ հաշտության պայմանագիր կերպու վերաբերյալ։ Թուրքիան մեծագույն շահագրավություն էր դրսենորում արագ ավարտելու այդ բանակցությունները և շուտափույթ կերպով կերպու հաշտություն, որպեսզի Շատրագորությունն ստանա իր բոլոր ուժերը նետելու Հունաստան այնտեղ ապատամ թությունը մնչելու համար։

Այսպիսով և անցյալում¹⁰⁵, և Ներկայումն¹⁰⁶ գրականության մեջ

¹⁰¹ See C. U. Aitchison, A collection of treaties, engagements, and sanads relating to India and neighbouring Countries, Calcutta, 1892, vol. XIII, p. 54.

¹⁰² Б. П. Балан, Եղ. աշխ., էջ 22.

¹⁰³ АКАА, տ. VI, գ. 2, ստ. 293.

¹⁰⁴ АВПР, գ. Кашелքոյ, ձ. 6920, լլ. 500—503 օ. օ.

¹⁰⁵ See A. Adams, Եղ. աշխ., էջ 418.

¹⁰⁶ Н. А. Халфим, Борьба за Курдистан. (Курдский вопрос в международных отношениях XIX в.), М., 1963, стр. 36. فردوون أسدیت ۲۷۴. աշխ., հ. 2, էջ 31.

տարածում գտած այն տեսակետը, որ իր Արքան միրզայի բանակում սկսված խոլերայի համանարակը ստիպեց նրան համաձայնվելու դորքերը եռ բաշել պրաված տերիտորիաներից և սկսել հաշտության բանակցություններ, չի համապատասխանում իրականությանը:

Բացի վերոհիշյալ հանգամանքներից ի՞նչը ստիպեց իրանական կառավարությանը հրաժարվել Թուրքիայի դեմ բարեհաջող պատերազմում իր հաղթանակի պառազները բաղնուու հնարավորությունից:

Նախ, շահական կառավարությունը, որը գեռն չէր հրաժարվել Անդրկովկասում իր արքապետությունը վերականգնելու մատորությունից և արդեն վերցրել էր Ռուսաստանի դեմ նոր պատերազմի նախապատրաստման կուրս, ձգում էր առաջիկա այդ պատերազմի ընթացքում կամ հանգես գալ Թուրքիայի հետ համատեղ և կամ ծայրանեղ դեպքում թուրքական սահմանի կողմից ապահովել իր թիկունքը: Դրա անհրաժեշտությունը թելադրվում էր նաև նրանով, որ Թուրքիայի հետ հաշտության կնքումը անզվիացիների կողմից զիտվում էր որպես պարտադիր պայման նրանին ռազմական և ֆինանսական օգնություն ցույց տալու հարցում: Իսկ առանց այդ օգնության բացառվում էր նոր պատերազմը Ռուսաստանի դեմ:

Մյուս կողմից, նրանում շարունակվող ներքին ցնցումները (չսմայլիլիթների ապստամբությունը ծաղղում, միրզա Խալիլ Սլյայի շարժումը Թերմանշահուում, Թուփջմենների ապստամբությունը Խորասանում²²² և այլն) ստիպում էին իրանական կառավարող վերնախավին անհապաղ գաղարեցնել պատերազմը Թուրքիայի հետ և լրջորեն զրադվել այդ ապստամբությունների մեջման և երկրի ներքին կյանքը ինչ-որ չափով կայտացնելու հարցերով, որը կինուական անհրաժեշտություն էր Ռուսաստանի դեմ նախապատրաստվող ժանր պատերազմի նախօրյակին:

Բացի այդ, 1821—1823 թթ. պատերազմի շրջանում նրանը որոշակիորեն կորցրեց իր ազգեցությունը ոչ միայն Թուրքիայի, այլև նրանի թրդերի շրջանում, որոնց հետ կառավարող շրջանները մեծ հուլսեր էին կապում Ռուսաստանի դեմ առաջիկա պատերազմում օգտագործելու խնդրում: Արքան միրզայի բռնի միջոցառումները քրդական զանգվածներին ընդունելու իր բանակի շարքերը ուժգին գժգությունների աեղիք ավեցին ցեղերի շրջանում: Հետևանքը հանդիսացավ այն, որ, օրինակ, Բալազետի պաշարման ժամանել Հայքերանլու ցեղի քրդերը գրիսովին ճանալեցին թ. Դռան իշխանությունը, իսկ Ռուսաստանին սահ-

²²² میرحسین میرخیان تکریتی، نویسنده، از جمله 13—44—42:

մանակից մի շարք քրդական ցեղեր դիմեցին Կովկասի ռուսական իշխանության մեջ էրին, խնդրելով թուլ տալ իրենց անդապոխվելու Անդրկառագառում նոր նվաճված ռուսական տիրապետությունները և ընդունելու ռուսական հպատակությունը¹⁷³:

Իրանա-Թուրքական նախնական բանակցությունները ավարտվեցին Հայոցությամբ և 1823 թ. Հուլիսին Շառիֆ փաշան սամանյան կառավարության կողմից և միրզա Մոհամմադ Ալի Աշթիանին Իրանի կողմից ժամանեցին էրզրում հաշոտության պայմանագրով կնքելու համար¹⁷⁴:

Էրզրումի դաշնագիրը ստորագրվեց 1823 թ. Հուլիսի 28-ին (1238 թ. Զիլդադի 19-ին)¹⁷⁵: Այն սուլթանի կողմից հաստատվեց նույն թվականի գեկտեմբերին, իսկ շահը ռատիֆիկացիայի նեթարկեց 1824 թ. Հունվարին¹⁷⁶:

Պայմանագրի ներածական բաժնում նշվում էր, որ վերականգնվում են երկու պետությունների սահմանների պատերազմից առաջ եղած վիճակը, այսինքն՝ տերիտորիալ սահատուածվուն, կողմերը պարտավորվում են վերադարձնել ռազմագերիներին և այլն:

Իրանը պարտավորվում էր պայմանագիրը կնքելուց հետո 60 օրվա ընթացքում Թուրքիային վերադարձնել այն բոլոր Հոլերը, քաղաքները և գյուղերը, որոնք գրավել էր պատերազմի ընթացքում:

Պայմանագրի առաջին հոդվածում նշվում էր, որ կողմերը իրենց վրա պարտավորություն են վերցնում շմիջամանի միմյանց ներքին գործերին ընդհանրապես և Բաղդադի փաշալիքում և Թրքմանում մասնավորապես: Նկատի ունենալով սահմանամերձ շրջաններում քրդական ցեղերի անընդհատ տեղաշարժերը մի երկրորդ մյուտք և դրա հետևանքով երկու պետությունների միջև առաջացող անընդհատ զնները, նախատեսվում էր պայմանագրով վածություն ձեռք բերել որոշելու համար նրանց կողմից արտավայրերից օգտվելու հարկերի շափշը:

¹⁷³ П. И. Аверинов, Եղ. աշխ., էջ 31.

¹⁷⁴ مدون آدمیت آندرے Ֆریدریش 174. աշխ., էջ 27.

¹⁷⁵ Այս պարագաների լրիվ մաքուր մեջ «Материалы для географии Азгатской Турции и Персии. Путевый журнал Е. И. Чекинова, русского комиссара-посредника по турецко-персидскому разграничению, 1849—1852», СПб., 1875, стр. 638—648. Պայմանագրի պարագաների բնույթը մեջուց մեջուց մուհամեդական գործադրությունների մեջ է առաջացող անընդհատ զնները, նախատեսվում էր պայմանագրով վածություն ձեռք բերել որոշելու համար նրանց կողմից արտավայրերից օգտվելու հարկերի շափշը:

¹⁷⁶ O. Schlechta-Wissekra, Եղ. աշխ., էջ 112.

Նրկորդ Հոգվածում թուրքական կառավարությունը իր վրա պարտավորություն էր վերցնում Սամանյան կայսրության տերիտորիայում գտնվող մահմեդական որբավայրեր Մաքքե և Մազկին, ինչպես նաև շիհթական սրբավայրեր Քարրալա և Նաջաֆ ուխտագնացության մճկեռդ պարսկականակիրի նկատմամբ վերաբերվել բարյացակամորներ և նրանցից այլն չգտնենք այնպիսի մաքսատուրքեր, ինչպիսիք են ողորմանք, «բաշը» և այլն։ Նախատեսվում էր նաև Սոմանյան կայսրությունում առնոտուր անող իրանական վաճառականներից գանձել 4%-ի մաքսատուրք, այսինքն այնքան, որքան գանձվում էր թուրքահպատակ վաճառականներից։ Պայմանագրի այս կետը նպատակ ուներ խրախուսել իրանական ապրանքների ներմուծումը Սոմանյան կայսրություն և վերականգնել պատերազմի հետանքով ընդհատված իրանա-թուրքական առնոտուրք։ Ընդ որում քանի որ Դյուլիստանի պայմանագրով նախատեսված էր Ռուսաստանում իրանական վաճառականներից գանձել 5%-ի մաքսատուրք, Թուրքիան միտումնավոր կերպով այն իշեցնուած էր, դարձնելով 4%, որպեսզի իրանական առնոտուրք Ռուսաստանից շեղվի գեպի Թուրքիա։ Այս քաղաքականության արդյունքները լատիպեցին երկար սպասեցնել տալ իրնենց։ Տրապիզոն—Էրզրում—Թավրիզ առնոտրական ճանապարհով Թուրքիայի և Անգլիայի հետ Իրանի առնոտուրք կրկին աշխուժացավ և ընդհակառակը՝ Ռուսաստանի հետ կտրուկ նվազեց¹⁷⁵։

Թիշ ազելի ուշ անգլիացիները Տրապիզոնում և Էրզրումում բայց արին անգլիական առնոտրական ընկերությունների մշտական ներկայացուցչություններ, որոնք աննախընթաց շափով աշխատացրին առնոտուրք ոչ միայն Իրանի, այլև նրա վրայով նաև Ասիայի ներքին շրջանների հետ¹⁷⁶։

Պայմանագրի երրորդ հոգվածը ամբողջապես նվիրված էր քրդական հարցին։ Նրա հությունը կայանում էր նրանում, որ արգելվեն եր ստեղծելին քրդերի մեկ երկրից մյուսը կամայական տեղափոխությունների առջև և որոշեին այս կամ այն ցեղի հպատակության հարցը։

Չորրորդ հոգվածը, որը հանգիստանում էր երրորդի օրգանական շարունակությունը, նախատեսում էր տանհահարելց քրդերին և նրանց պահել իրենց հսկողության ներքո։ Մասնավորապես նշվում էր, որ մեկ

¹⁷⁵ Տե՛ս Ю. Гагенմայстер, О европейской торговле в Турции и Персии, СПб., 1838, стр. 94.

¹⁷⁶ Տե՛ս Burgess, A brief notice respecting the trade of the North provinces of Persia, „The Portfolio“, London, 1836, vol. X, p. 357—359; „Royal Central Asian Journal“, London, 1944, vol. LXXX, p. p. III—IV.

երկրից մյուսը փախվելու դեպքում տեղի իշխանությունները քրդերին լզեառ է տրամադրեն հպատակություն կամ վերցնեն հոգածավորության տակ:

Հինգերորդ հոգվածով կարգավորվում էր պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության տերիտորիայում եղած պարտիկ վաճառականներից բոևագրավված ապրանքների հարցը: Վեցերորդ հոգվածը վերաբերում էր ժառանգության հարցերին և վերշապես յոթերորդ հոգվածում նշվում էր, որ տերկու պետականների միջև բարեկամությունն ամրապնդելու նպատակով յուրաքանչյուր երեք տարին մեկ կողմերը պետք է միմյանց մոտ ուղարկեն իրենց ներկայացուցիչներին՝ վիճելի հարցերի վերաբերյալ բանակցելու նպատակով:

Երկու երկրների միջև սահմանները նշտելու հարցում էր զրոյումի պայմանագիրը համարյա կրկնում էր 1839 թ. Զոհարի պայմանագրի համապատասխան բաժինը: Բացառությունն էր կազմում Զոհարի շրջանի պատերաներության վերաբերյալ հարցը, որը 1839 թ. պայմանագրով անցնում էր Բնուրբիային, մինչդեռ 1823 թ. էր զրոյումի դաշնագիրը կնքելու պահին այն դրամվել էր Իրանի կողմից և վերջինս (ինչպես նաև Ախուրիքի շրջանը) ոչ մի գնով շհամաձայնվեց հանձնել Օսմանյան կայազությանը¹⁷⁰:

Էրզրումի պայմանագիրը ստորագրելուց անմիջապես հետո Իրանը Օսմանյան կայսրությանը վերադարձրեց պատերազմի ընթացքում պրացած բոլոր բաղադրները, այդ թվում նաև Արմենի, Մալազկերտը, Հայաբը, Թաղեշը, Վանը, Բայազետը, Սոլիյմանին, Թիրքուրը, Մոսուլը և այլն¹⁷¹:

Ռուսները կասկածեն ունենալու հաստ գաղտնի մի հոգված, որով նախատեսվում է թուրքիայի օգնությունը Իրանին՝ ընդդեմ Ռուսաստանի: Այդ մասին Թամբովյաց նրմուռվիքն ուղղված 1823 թ. օգոստոսի 5-ի նամակում գրում է Ալբուդգիրը¹⁷²: Հիշյալ տեղեկությունը հաստատվում է նրանով, որ էրզրումի պայմանագիրը ստորագրվելուց անմիջապես հետո հասուն հանձնարարությամբ Կռուտանձնուալիին է ուղարկվում շահի գնուպան միրզա Ֆարզ Սլան, որը խնդրում է սուլթանի աշակցությունը Ռուսաստանի դեմ հնթաղրվող պատերազմում: Ի պատասխան դրա, սուլթանը ոկրու թերությամբ

¹⁷⁰ В. Ф. Минорский. Турецко-персидское разграничение, Пг., 1916, стр. 2—3.

¹⁷¹ مـ ۵۷. تـ ۲۲۳. عـ ۱۰۰. عـ ۱۰۰. عـ ۱۰۰.

¹⁷² «Кавказский сборник», т. XXIV, стр. 1.

Համաձայնվել է շահի առաջարկի հետ և խոստացել է նրան սամանյան Դուս կողմից ամեն տեսակի օգնությունը²²⁰.

Ռուս-իրանական պատերազմի նախօրյակին (1825 թ. Հոկտեմբերին) դեռապանի լիազորություններով օժոված Դամբիթ բնկ Սատուրյան մելիք Եանազարյանցը շահի կողմից ստարկվում է Կոստանդնուպոլիսի, որպեսզի շնորհը Բ. Դուսը միավորվելու Պարսկաստանի հետ ընդդեմ Ռուսաստանի²²¹, կամ այլ կերպ առած հիշեցնել տա սուլթանին իր վրա վերցրած դաշնակցային պարտավորությունները, իրանական պատմարան Զամբի Ղուզանդուն ևս հաստատում է Էրզրումի պայմանագրում գաղտնի Հոգվածի առկայությունը, ցավելով, որ այդ Հոգվածը երկրորդ ռուս-իրանական պատերազմի շրջանում չգործադրվեց, նա այդ պայմանագիրը գնահատում է որպես բիուստանության համաձայնագիրը²²²:

Այսպիսով, ինչպես իրավացիորեն նշում է սովետական պատմարան Լ. Ս. Անդրյոնովը, «Թէնհրանի, Ստամբուլի և Լոնդոնի դաշինքը համարյա վերականգնվեց»²²³, Քիսավորապես հանում արդ դաշինքի Իրանը հրաժարվեց տերիտորիալ այն ձեռքբերումներից, որ նա ունեցել էր Արևմտյան Հայաստանում և Միջագետքում։ Հետեւար, նախահեղափոխական շրջանի ուստ պատմագրության (Վ. Պոտոտ, Ա. Շերբատով, Ն. Պուրրովին²²⁴ և այլն) այն տեսակները, որ նրանց հրաժարվեց իր նվաճած տերիտորիաներից, վախճենալով, որ Թուրքիան Հռևմաստանից զորքեր կտեղափոխի ասիական ճակատ Իրանի դամ նետելու համար, անընդունելի է և հեռու է իրականությունից։

1821—1823 թթ. իրան-Թուրքական պատերազմի դազմբեցումը ունեցավ մի շարք լուրջ հետևանքներ Մերձավոր և Միջին արևելյան քաղաքական իրադրության վրա։ Նախ Անգլիան վերստին վերականգնեց իր սասանված զիրքերը Իրանում և մասնավորապես Պարսից ծոցի շրջանում։ 1823 թվականից նկատվում է Իրանում անգլիական գործակալության գործունեության աննախընթաց ակտիվացում։ Թրիտոնական դեսպանուրդ Զևս Մակրոնալդը դանուում է Զամբի շահի առաջին խորհրդականը։ Իրանական քաջամթիկ բարձր պատիճանակորներ փաստորեն վերածվում են անգլիական միսիայի վարձու գործակալության։ Այսպես,

²²⁰ Խաջոյ-Վելյամիսօց, 6 ապրիլ 1826, АКАД, տ. VI, գ. 2, стр. 343.

²²¹ Տե՛ս «The Asiatic Journal», vol. 22, 1826, p. 734.

²²² Ջմիլ Շահանլու, تاریخ نظامی ایران، جلد دوم، تهران ۱۳۱۰، ص ۸۷.

²²³ Л. С. Сакенов, Եղ. աշխ., էջ 84.

²²⁴ В. Потто, Եղ. աշխ., և Հ. Ա. Շերբատօս, Եղ. աշխ., Ի. Փ. Դյոբր. և այլ. Եղ. աշխ.։

արտաքին գործերի ղեկավար Արու Հասան խանը դադունի կերպով անդ-լիացիներից սկսում է ստանալ տարեկան 3000 թուման¹⁷⁷: Նույն կերպ վճարվում էն նաև շահի առաջին մինիստր Ալլայար խանը և շիրիթական Հոգևորականության ազգեցիկ ղեկավար մոշթանձդ Մելքոն Մոհամեդաղը:

Ռուսների ազգեցությունը, ընդհակառակը, կրկին գնում է դժողի անկում: Իրանը Խոր եռանդով սկսում է նախապատրաստվել պատերազմի Ռուսաստանի դեմ՝ գործյալ ապավինելով Անգլիայի օգնությանը:

Միաժամանակ ռուսական կառավարության դիվլանագիտական անհաջողությունները¹⁷⁸ հույն-թուրքական կոնֆլիկտին պետությունների կոլեկտիվ միջամտություն կազմակերպելու գործում, Թուրքիայում ընկալվեցին որպես միջազգային առպարհեցում Ռուսաստանի քաղաքական մեկուսացման հաստանելու Դրա Հետեւանքով Սամանյան կայսրության կառավարող շրջանների մոտ ուսանշիստական տրամադրությունները կրկին ուժեղացան, որոնք իրենց արտահայտությունը գտան Ռուսաստանի համար կնքված նախկին պարմանագրերը վերանայելու ձգտման մեջ ոչ միայն ներդուցների ուժիքի և դանուրյան իշխանությունների ստատուսի, այլև կովկասյան սահմանների հարցում¹⁷⁹:

Թուրքական արդ քաղաքականության դրամորումներից մեկը հանգիստացավ նաև այն, որ Բ. Գուրը կոնդունի հետ համատեղ աշխատում էր Հավասարիացնել շահին, որ առաջիկա ռուս-իրանական պատերազմի գեղքում Թուրքիան անվերապահորեն հանդես կփառ Իրանի դաշնակցի գերում: ԵՄահմատ Ա-ը, — գրում է Ա. Դերիգուրը, — Խախապես հաշվի էր առնում այն օգուտները, որոնք Թուրքիային կարող էր տալ արդ պահին հասումացող կոնֆլիկտը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև և խորհությունը տալով Թեհրանի արքունիքին, անկառակած, անում էր Հետրավոր ամեն ինչ, որպեսզի այդ բախումը գառնա անխուսափելիքը¹⁸⁰:

Իսկ Անգլիան հրահրելով ռուս-իրանական պատերազմ, ձգտում էր Ռուսաստանին շեղել մերժավորաբելյան պրոբլեմներից և բացի այդ կանխել նրա ռազմական երւութի հնարավորությունը Թուրքիայի դեմ: Անգլիական զիվանագիտության մասմբ հայողվեց հասնել այդ նպատակին, քանի որ ռուս-իրանական պատերազմը նշանակալիորեն արդիակեց զիվանագիտական այն զրոհի զարգացումը, որ Նիկոլայ Ի-ը ձեռնարկել էր Սամանյան կայորության դեմ:

¹⁷⁷ АКАД. т. VI, ч. 2, № 573.Վարձնելով 1825 թ. Հունիսի 11-ի քենացադրը:

¹⁷⁸ А. В. Фадеев, Россия и восточный кризис 20-х годов XIX в., Москва, 1958, стр. 97.

¹⁷⁹ А. Дебадур, Երև. աշխ., գ. 1, էջ 259.

Թուաստանի դաշը ստանձնելուց ցնդամենց երկու ամիս անց, 1826 թ. մարտի 17-ին Նիկոլայ I-ը հրամայեց սուլթանին հանձնել զերշնաղիր (Մինչակի նոտան), որը վկարում էր այն մասին, որ Ռուսաստանը մտադիր է Օսմանյան կայսրության հետ իր բազում վեճերը լուծել պատերազմի միջոցով։ Անտարակույս, այս վերջնաղիրը էլ ավելի էր մեխացնելու Մահմուդ II-ի շահագրգուվածությունը ռուս-իրանական պատերազմի շուտափությունից բռնկման ուղղությամբ, որը կատապէր Ռուսաստանին ավելի պիշող լինել Մերձավոր արևելքի հարցերում և ապա այդ պատերազմը հնարավորություն կտար կայսրությունում վերջնականացնելու յնիւթիւնների զորամիավորումները և ավարտել նոր, եվրոպական տիպի կանոնավոր բանակի ստեղծումը։ Բնականաբար, սուլթանը շահագրգուված էր նաև Ռուսաստանի դեմ առաջիկա պատերազմում համապորտակցել շահի հետ։ Պատահական չէ, որ ռուս-իրանական պատերազմի նախօրյակին, Մահմուդ II-ը հետեղականորեն սկսում է համոզել Զաքի Ալի շահին, որ ինքը պատրաստվում է շուտով պատերազմնելու Ռուսաստանի դեմ, դրանով իսկ աշխատելով հնարավորին լավ արագացնել իրանի ելույթը։

Այսպիսով, Օսմանյան կայսրության և Մեծ Բրիտանիայի դիվանագիտական շանգերի շնորհից ռուս-իրանական նոր պատերազմի բռնկումը նշանակալիորեն արագացնել։

1826 թ. հունիսի 23-ին անգլիացիների կողմից հրահրվող իրանական բարձր հոգնորականությունը հրապարակց ֆեթվա Ռուսաստանի դեմ տարրազան պատերազմին մասին, իսկ նույն թվականի հուլիսին իրանական բանակը անակնկալ հարձակում գործեց ռուսական զորքերի վրա։

Ռուս-իրանական այս նոր պատերազմը նշանակալիորեն ընդլաւնեց արևելյան ճգնաժամի շրջանակները, տարածվելով նույն Միջին արևելքի վրա և նպաստեց այդ ճգնաժամի էլ ավելի սրմանը։

Պատերազմի հենց սկզբում իրանական կառավարող շրջանները բացահայտ կերպով սկսեցին զրոնորել իրենց համերաշխությունը թուրքիայի հետ։ Այսպես, Երևանի սարդար Հոսույն խանը իր բանակի տակ-լությունը Ռուսաստանի դեմ բորբոքելու նպատակով հայտարարում է, որ ռուսները խրախուսում են հույներին ոչնչացնելու թուրքերի իշխանությունը և վերականգնելու հումական թագավորությունը¹⁷։ Միանգամայն ակնհայտ է սարդարի ձգտումը Ռուսաստանի դեմ պատերազմին հաջորդելու իսլամի պաշտպանության համար տարրազան պատերազմին ընույթ։

17 A. B. Փանոս, Խմ. այլ., էջ 145.

Թուքը-իրանական մահմեդական համերաշխության և համատեղ շահագրից հարցը լրջորեն մտառոգում է ուստական իշխանությանն երին։ Պատահական չէ, որ Ա. Պ. Նըմուղովը ցարին ուզզված իր հազորքագրություններից մեկում գրում է. «Չարսիկների կողմից մեր դեմ սկսված պատերազմը կարող է օտառամանյան Դուանը ևս մզել նույնափակ քայլի։ Կամսվեն դաշնակիցները (իմա՝ անգլիացիները—Ն. Բ.), որոնք կենրշնչեն նրան (առվլթանին—Վ. Բ.), որ անհրաժեշտ է օգտվել ատեղծված իրադրությունից, որ պարակական պատերազմը կշեցի մեր զորքերի մի մասին և դրանով իսկ կհեշտացնի թուքքական բանակների գործողությունները մեր դեմ»¹⁰¹։ Այդ տիպի ներշնչումները ցայտում ձևով դրսնորմեցին Ակկերման քաղաքում 1826 թ. հուլիսի 1-ին սկսված ուսութուրքական բանակցությունների ժամանակ, որտեղ թուքքական պատգամառությունը զիմում էր բանակցությունների ծգձգման կամ ուստական առաջարկությունները սարստածի ենթարկելու տակտիկային, համոզված լինելով, որ պատերազմը իրանի հետ կհաշկանդի ուստաներին և նարակորություն չի տա նրանց թուքքիալի նկատմամբ կենսագործելու վճռական զիժ։ Այդ անսակետը լրիվ բաժանվում էր անգլիացիների կողմից։ 1826 թ. սեպտեմբերին Ա. Վելլինգտոնը Ջ. Մակոլիմին ուղղված իր գաղտնի համակում գրում է, որ պարասիկների հարձակումը հազանար նույնաստանին կդարձնի ուսկիլի շափակոր Ակկերմանում վարած բանակցությունների ժամանակը¹⁰²։

Այսպիսով, և՛ թուքքիան, և՛ Անգլիան իրանի հաշվին աշխատում էին կարգավորել սեփական գործերը։ Մինչդեռ նրանք իր համար միանգամայն անբարենպաստ պայմաններում մտավ այդ վառանգամոր պատերազմի մեջ, մեծ հույսուն կազմելով թուքքիալի միաժամանակյա ելույթի և Անգլիայի ուղղմական ու ֆինանսական օգնություն հետ¹⁰³։

1826 թ. սեպտեմբերին Շամխորի և Ելիսավետպոլի (Գյանջա) տակ Արքաս միքայլի բանակի կրօն պարտությունը ստիպեց թուքքիալին արագացնել Ակկերմանի կունվենցիալի ստորագրումը (1826 թ. սեպտեմբերի 25-ին)։

Այսպիսով, հակառակ իրենց բոլոր խոստամներին, թուքքիան և Անգլիան լքեցին իրանին, նրան մեն-մենակ թողնելով ահարկու հակառակորդի զիմ։

¹⁰¹ Խոյք տեղամ։

¹⁰² W. Kaye, The life and correspondence of J. Malcolm, vol. II, London—Bombay, 1856, p. 450.

¹⁰³ Л. С. Семенов, Եզ. աղջ., էջ 103.

Այն բանից հետո, երբ Թուրքիան մերժեց պետությունների պահանջը Հունաստանին ինքնավարություն տրամադրելու վերաբերյալ, նրա և եղանակ դաշինքի միջն հարաբերությունները խիստ սրվեցին։ 1827 թ. Շոկումբարի 20-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միացյալ նավատորմը նավարինի ժողովուրծում շախշախից թուրքական պահանջը Այդ պարտությունը էլ ազելի մեծացրեց սուլթան Մահմետ II-ի շահագրգովածությունը ռուս-իրանական պատերազմի շարունակման մեջ, հետաձգելու համար Ռուսաստանի հարգած Թուրքիային։ Պատահական չէ, որ երբ 1827 թ. ռազմական կամպանիայի ընթացքում իր կրած խոշոր անհաջողությունների հետևանքով Իրանը ստիպված եղավ ռուսների հետ բանակցություններ վարել հաշտության պարմանագիր կնքելու համար, սուլթանը համոզված էր շահըն շղիմել այդ բայլին և շարունակել պատերազմը²⁴⁶, Այդ մասին տվյալներ բերելով, Ալի Ազրար Թինան գրում է. «Երբ հաշտության պայմանագրի նախագծի բավանդակությունը հազորդվեց Թեհրան, շահը գրանցվում էր օսմանյան կառավարության ազգեցության ներքո և հավանություն շտվեց արդ նախագծին»²⁴⁷, Նշված գիտուց հաստատվում է նաև այլ տվյալներով. Հիմնվելով Կոստանդնուպոլիսում ավատրիական դիսպան Ստանիսլավի հաղորդագրության վրա, ավատրիական դիվանագիտ Ֆ. Գննացը նշում է. «Թուրքիայում մեծ հույսեր են կապում Պարսկաստանի հետ Ռուսաստանի զինադադարի խզման կապակցությամբ, որովհետև շահը լի հաստատել իր լիազորների կողմից ստորագրած հաշտության նախանական պարմանները»²⁴⁸,

Իսկ ռուս դիվանագիտ Մ. Մինչակին գրում է. «Բ. Դուոր շատ է ցանկանում, որ Թեհրանգանում բանակցությունները խզվեն»²⁴⁹,

1827 թ. դեկտեմբերի 20-ին Թուրքիան լեզյալ հայտարարեց Ակկերմանի համաձայնադիրը։ Սուլթանը հրապարակեց դիմում, ուղղված Խանգների կառավարիչներին, որտեղ նա կռ էր անում բոլոր մահմեդականներին ուղիղ կանգնել իսլամը և կայսրությունը պաշտպանելու համար։ Ռուսաստանը այդ քայլը գնահատեց որպես իր դեմ ուղղված թշնամական միջոցառում և 1828 թ. ապրիլի 26-ին պատերազմ հայտարարեց Թուրքիային։

²⁴⁶ Ա. Դենդյր, Խճ. աշխ., հ. 1, էջ 272—274.

²⁴⁷ ملیس اکبر بیتا.

²⁴⁸ ԱՅՈՐ, Փ. Կառավարք, 1828, դ. 854, լ. 89.

²⁴⁹ ԱՅՈՐ, Փ. Կառավարք, 1828, դ. 859, լ. 47.

Ռուս-թուրքական այս պատերազմը մեծ տագնապ առաջ բերեց Անդիմայի և Ֆրանսիայի կառավարությունների մեջ, որովհետև նրանք կասկածներ չունենին Ռուսաստանի Հաղթանակի մեջ և վախճենում էին, որ նա միանմանյա կերպով կլուսի հունական Հարցը:

Ռուսաստանի դժմ գիմադրությունը կորովի դարձնելու Խպատակով Անդիման կրկին ձեռնամուխ է լինում նրանի և Թուրքիայի ռազմական շահնշանի միավորմանը: Նախ նա աշխատում է հասնել նրան, որ ռուսական դրբերը դուրս բերվեն իրանական Աստրապատականից, որպեսով ապահովվեն թուրքական բանակի թնձոր Արևմտյան Հայաստանում և Թրոստանում և պայմաններ ստեղծվեն իրանական և թուրքական բանակների միավորման համար: Այսուհետև, Թեհրանում անցյական դժման Մակրոնալոր և Արքաս միրզան սկսում են կանոնավոր կապեր պահպանել Թուրքիայի հետ, որն իր հերթին վանի, էրզրումի և Կարսի շրջաններում սկսում է զօրքեր կենարունացնել և առաջարկում է դրանք միավորել իրանական բանակի հետ¹⁰⁸.

Ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին և ընթացքում Բ. Դուան կողմից իրականացված գիշանագիտական քայլերը դաշտում են հաստատելու այն ժամանքը, որ նա մեծ հույսուր էր կապում ոչ միայն Անդիմայի ու Ազգարքիայի, այլև Իրանի օգնության հետ: Եզդ դա հակառակ այն բանի, որ Սամանյան կայսրության ֆելդալա-պահպանողական շրջանների որոշ ներկայացուցիչներ, ինչպես, օրինակ, Մարգքի և Մազքինեի պահպարդ, բարձրաստիճան հոգևորական Թեղիշիզադե Խզզեթ մոլլան և այլն, լինելով ավելի զգույշ ու հեռատես և զգաստորեն գնահատելով կալվարության ներքին վիճակը, խորհուրդ էին տալիս սուլթանին առաջն հերթին հենքել երկրի սեփական ուժերի վրա և մեծ հույսուր շկապել պետությունների օգնության հետ, որոնք, նրանց կարծիքով, կա՛մ զրադաշտ էին իրենց սեփական պրորլեմներով, ինչպես իրանը, և կա՛մ իրենք էին պատրաստ առիթի դեպքում զամթելու օսմանյան տիրությունը, ինչպես Անդիման և Ֆրանսիան¹⁰⁹:

Սակայն նման տեսակետները չեին բաժանվում թուրքական կառավարող շրջանների մեծամասնության կողմից: Պատահական չէ, որ Ռուսաստանի և Իրանի միջն 1828 թ. փետրվարի 10-ին, Թուրքմենչալի հաշտության պայմանագրի կնքման լուրը սմեցավ շղախացնող ներգործություն և մեծ տագնապ առաջ բերեց Կոստանդնուպոլիսում: 1828 թ.

¹⁰⁸ Բ. Պ. Բալան, Էջմ. աշխ., էջ 216:

¹⁰⁹ Բ. Ի. Շերեմետ, Տուրք և Ադրևոզոլսկий մոր 1829, Մոսկվա, 1975, стр. 42.

մարտին թուրքական մայրաքաղաքից ոռուսական զիվանեպետները հաղորդում էին, որ ուսման վախճենում են, որ ոռուսները գեսանու կհանեն Անատոլիայի տիեզրը և Պասկենիչի բանակը կներխուժի թուրքական տերիուրիակամբ²⁸⁰:

Նույնիսկ Թուրքմենշայի պայմանագրի կնքումից հետո Բ. Դուռը իր Հումբերը շեր կարում նրանից, որ Իրանը կշարումնակի պայքարը նուսաստանի դեմ՝ Արդ մասին է զիկայում հետեւյալ փաստը. 1828 թ. ապրիլին Ռուսաստանի հետ կնքած հաջորդիչումը շնորհավորելու պատըրվակով Թեհրան է մեկնում գեսապանությունից լիազորություններով օժաված թուրքական մի դիվանագետ, որին իրականում հանձնարարված էր շահին առաջարկել դաշինք՝ Ռուսաստանի դեմ: Նրա խնդիրն էր նաև նաւազավորության սահմաններում շեզրքացնել Արքաս միրզայի հակաթորքական տրամադրությունները²⁸¹: Այդ բանակցություններին անմիջական մասնակցությունը էր ցուցաբերում նաև անգլիական դեսպան Զ. Մակֆանալդը²⁸²: Մաքենզիի հազորդատ տեղեկությունների համաձայն շահը, սակայն, անվստահությունը է հայտնում թուրքական առաջարկերի նկատմամբ, կարականապես մերժելով ռազմական դաշինքի վերաբերյալ առաջարկը²⁸³: Իր այդ գիծը նա պատճառաբանում է նրանով, որ հակառակ բազմաթիվ խոստումների, Իրանի համար ճգնաժամային պահերին իր պետությունը Թուրքիայից ոչ մի անգամ չի սահցել ոհալ օգնություն: Իրականում շահական արքունիքին զբաստացնում էր Թուրքմենշայի պայմանագրի խախտման ժամանակ հետեւյանքների հեռանկարը և ոռուսական զենքի հաղթանակի նկատմամբ կասկածներ չունենալու: Բացի այդ, մի շարք անուղղակի փաստեր վկայում են այն մասին, որ Արքաս միրզայի և նրա շրջապատի մարդկանց մաս հասունանում էր այն միտքը, որ Թուրքիայի ժամեր մինակը հիանալի հնարավորություններ է ստեղծում Իրանի համար տարածքային փոխհատուցում որոնելու Սամանյան կայսրության հաշվին: Հսու երևույթին տեղյակ լինելով Արքաս միրզայի այդ մատուցմներին, Թարրալալի զլաւագոր մոշթահեղը և Իրաքի մի շարք արարական շելիսներ դիմում են գահաժառանգին, հայտնելով, որ իրենք ցննկանում են ապստամբել թուրքերի դեմ և անջատվել սուլթանից, պարմանով սակայն, որ Արքաս միրզան թեկուզն մի ոչ մեծ բանակ ուղարկի Բաղդադի փաշայիք: Նույնպիսի ա-

²⁸⁰ ԱՐԲԱ, Փ. ԵՎԱ, Խ. 996, Կ. 1, Ա. 4.

²⁸¹ Նույն տեղում, թ. 40: ԱՐԲԱ, Փ. 1018, օչ. 2, Ա. 315, Ա. 2.

²⁸² ԱԿԼԱ, Ե. VII, ստ. 633.

²⁸³ Նույն տեղում, էջ 635:

առաջարկով Արբաս միրզային դիմում էր Սուլեյմանին Մոհամմադ (Մահմադ) փաշան, խոստանալով նույնիսկ ֆինանսավորել այդ արշագանքը երկու քուրուր գումարով: Դեպքերին քաշատճայակ Գրիբոյեդովը գրում է, որ Արբաս միրզան պարզապես զորքեր չունի, հակառակ դեպքում նա չէր հապաղի և ընդառաջ կդնար այդ առաջարկներին²²: Որոշակի ավյալներ կան նաև այն մասին, որ Արբաս միրզան ծրագրել էր այդ հարցի կապակցությամբ կապերի մեջ մտնել Ռուսաստանի հետ Մասնավորապես նա մտադիր էր անձամբ մեկնել Պետերբուրգ և ուստի առավարությանը առաջարկել ռազմական գալիքներ Թուրքիայի դեմքին:

¹² Գիրմանաց անվանիքով Քէնթեր, «Pantischatantra» վերագրավ Ծրբակոն պատմվածքների ու առանձինի հայուն ճաղաղաւոր վերմաներնեն թարգմանության իր ժամանակակիցներին մեջ (Հայ. I) ուր առթիկ հնանյալն է գրաւ. Շնունդներ, «Ծրբամիների և պատմվածքների թարգալուում կատարած հնապատճեններն ինձ համոզեցին», որ շատ տառներ և մեծ թիւն Ծրբամիներ ու պատմվածքներ Շնունդականից տարածվել են Համարյա ամրուց աշխարհու: Մինչև I դ. Արեւելքից ծիս պատմուական գրավանության համեմը գալիքներն ունեցաւում է և զարգած փայնացուց գոյարձեաւ և բանազրին: Շնունդականում կազմված պատմվածքների զանուան ծովուածեաւեր նայում են զանուան իրանցիներին (շնունդումը մեր է—Լ. Մ.), արարեցին (օրենց համար թարգմանությունը կատարել է իրակցի էրն Մոզաթֆան—Լ. Մ.), լայնուն արածվաւ և Հունականուն Արեւելքու, իսկ Մուսումաներից՝ Բյազինացին, Խայխայի և Խորսիայի միջազգ բախացուն նվազաւու:

Տե՛ս գերմ. աշխարհը՝ «Pantischatantra». Leipzig. 1859, 1-ինիցուց. XXII. Խակ Ա. Ղանալյան, ժաղավարական բանահյուսության մի շահի հարցեր, Երևան, 1956, է 87—88:

ствии при переводе с персидского на арабский персидский экземпляр был утерян. В работе подробно говорится о различных переводах «Каллы и Димы», сделанных в Иране в разные периоды.

На основании ряда достоверных источников делается попытка доказать, что в VI в. персами действительно были добавлены две главы к рукописи. Впервые рассматривается заслуживающий внимания факт, что вышеупомянутые главы являются персидскими вариантами двух армянских притч «Конец зла» и «Собрание мышей».

Մ. Մ. ԴԱՅԱՐԻԱ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՐՎԱՍՏԱՐԱՐ

XX գարը որոշակիորեն փոխեց դարավոր ավանդներ ունեցող պարսկական արվեստի զարգացման ուղիները Տեխնիկական նորագույն հնարքների օգտագործումն առաջ քաշեց ժամանակակից կառուցների առեղծումը (Հ. Սեբաստիան, Մ. Ֆորսվլի, Հ. Գիան, Ա. Գոգար), որոնք նոր երանք ազեցին արևմլյան հնատիպ քաղաքների գեղարվեստական կերպարին: Օգտագործելով աքեմենյան ու սասանյան շրջանների քանդակագործական ավանդները, ստեղծեցին առաջին հուշարձանները (Հասան Ալի Վազիրի, Արու Հասան Մադեղի), զարդարակ գրքի նկարազարդյան արվեստը, պլակատը, հաստոցային գրաֆիկան (Հուչանք Փեղեցք Նիյա): Զգալի տեղաշարժ ապրեց նաև գեղանկարչությունը: Խվրոպական գեղարվեստական բարձրագույն հաստատություններում շնորհայի երիտասարդների ստացած կրթությունը հնարավոր գարձեց համաշխարհային ժամանակակից արվեստի ուժեղ ազդեցությունների ներմուծումն ազգային մշակույթի ոլորտները: Սակայն ազգային գեղագիտական ընկալումները նկարիների առաջ գրեցին նոր հրատապ ինդիրներ: Ուժեղ դարդարակ սկսեցին ապրել դիմանկարները, բնանկարը, թեմատիկ պատկերը, որոնց հիմքում դրված էր ժողովրդի կյանքում և մտածողության մեջ կատարվող վերափոխումները (Մոհամեդ Մողաղամ, Մանուշեհը Շեյքանի, Ա. Փեթքար, Արդուլահ Ամերի, Ռեզա Մեսափի և ուրիշներ): Որոշ նկարիների աշխատանքում զգալի է ժամանակակից համաշխարհային գեղարվեստական հոսանքների ուժեղ ազդեցությունը, որը ստանուած է արևմելյան բնույթ (Անուշ Ռահնավարդ, Ա. Թահավալի և ուրիշներ): Միաժամանակ, լայն տարածում ունի նոր արվեստի այն ուղղությունը, որը ձգտում է պահպանել, նոր ժամանակների գեղարվեստական հաշակին ու պահանջներին հարմարեցնել պարսկական արվեստի ամենաինքնառիպ ճյուղերից՝ մեկը՝ մանրանկարչությունը:

Այս ուղղության հիմնագիրն ու զարգացնողը արդի նրանի կերպար-
վեստի խոշորագույն դեմքերից մեկն էր Հոսեյն Բեհջազը:

* * *

Հոսեյն Բեհջազը հասել էր ստեղծագործական փառքի բարձրամեծ-
ներին. առաջին մարդն էր պարսկական արվեստում, որի նկարները
բազմաթիվ բարձր պարզաբնիք էին արժանացնել Փարիզում, Միլանում,
Տոկիում, Պրադայում, Դելիում, Նյու Յորքում (1958 թ., արժանի
մեջալ), Բրյուսելում (1957 թ., ասկէ մեջալ), Թե՛րանում (Ավրիլնեալի
մեջալ): Միաժամանակ, փառքը նրան ստիլիզել էր առավել բժախևդից
լինել իր արվեստի նկատմամբ, հոշակը՝ զինվել կյանքի իմաստությամբ
ու շատ ափելի մոտենալ մարդկանց, պարզ, աշխատավոր մարդկանց,
որոնց ժեռնողն էր նաև ինքը:

Սենդավայրը Սպահանն է, որի արհեստագործների ձեռքի ու մարքի
վարպետության հոշակը հասել էր աշխարհի տարբեր ժայրերը: Բարձրա-
բերձ մզկիթների ու պալատների կողքին ժգործած արվեստանոց-խա-
նութերում առավոտից մինչև ոչ երեկո աշխատում են ափեագործներն
ու ոսկերիչները, խոթամի ու շնրեքեի¹, խնցեգործության ու դաշագոր-
ծության հմուտ վարպետները: Սպահանի արդ փոքր արվեստանոցներից
մեծում, անցյալ գարի վերջին տասնամյակներում աշխատում էր նաև
միրզա Ֆազլուլլահ Էսֆեհանին, որը հայտնի մանրանկարիչ էր, զարամ-
դան (լազե տուփեր) սարբող, ներկեր պատրաստում Ահա, այս վար-
պետի ընտանիքում, 1894 թ. ծնվեց Հոսեյնը: Նա հինգ տարեկան հա-
սակում արդեն վրձին է բռնում: Հորից սովորում է նկարել: Հայրը զգում
և զնահատում է որդու ունակությունները և, նրա գեղարվեստական գիտե-
լիքները խորացնելու նպատակով, հանձնարարում է սովորել օստագ
մոլլա Ալիի մոտ, որը պարասկզբի Սպահանի նշանագոր մանրանկա-
րիչներից էր:

Հոր և մոլլա Ալիի մահից հետո Բեհջազը աշակերտում է նոր ման-
րանկարիչ վարպետների, որոնցից ամենանշանավորը միրզա Հասան

¹ Խաթամ՝ ուղարի սուսրեների գումարը և զնյին մասաւոր բարձր լարերի
զուգարզումից սուսրվող առաջինների բարակ շնրանի ամրացվում են սովորիչ, սկս-
ունդեների, նկարների շրջանավեճերի արաւոքին հառմանը և Սպահանի արքեատի
այս շատը զարգացուց հասկուղու հուզված է Սպահանի զնուրավետակն մշակութիւնու-
թու: Ներեքե՞ Հոյեցու կամ փայտի երկրաշատական հատվածներու ձևավորվում է
հասանական նկարչ, որը անհարց: Այսու հշանակություն է ունեցել հայկական XVII դ.
հաւանի նորուացագլուխական հառուցների ներօք Հարգարանից զնուրավետակն ձև-
վածածն մէջ:

Փելքարն է: 17 տարեկան հասակում թե՛զադը մեկնում է Թե՛րան, Սարգիս մելքան կուղող հրապարակում մի փոքրիկ արվեստանոց է բացում: Փղոսկրյա փոքրաշափ իրերի վրա կատարած մանրանկարների թարմու հմայիլ այստեղներով նա չօտառվ իր վրա է հրավիրում արվեստասերների ուշադրությունը:

1935 թ., լուսավորության նախարարության Հանձնարարությամբ, թե՛զադը մեկնում է Ֆրանսիա՝ կատարելագործմելու նա լինում է նաև Խալիֆայում և Ամերիկայում: Ճանապարհորդությունների ընթացքում թե՛զադն ուսումնասիրում է և՛ գասական, և՛ ժամանակակից արվեստը, վերցնում այն, ինչը հարազատ է իր հոգու ու ստեղծագործական մտածողությանը, երբեք շգավաճանելով իր հավատամքին՝ պարսկական մանրանկարչությանը:

Թե՛զադի անոնը հատկապես լայն ճանաշում է ստանում Ամիսինայի ժննդյան 1000-ամյակին նվիրված տոնակատարության օրերին, երբ Թե՛րանի աղջային արգեստի թանգարանում (Մուլեյ Շունարհայի մելլի) բացվում է միջնադարյան Արևելյան խոշորագույն գիտնականին նվիրված նրա նկարների ցուցահանդեսը:

Հոսեյն թե՛զադի ստեղծագործությունների թիվն անցնում է 400-ից: Նոր նրան հարց են տվել, թե ճեր աշխատանքներից ո՞րն եք համարում ամենալավը, նա բազմախորհուրդ պատասխանել է. «Հայրն իր բալոր երեխաններին միանման է սիրուա: Խնչակե՞ս կարելի է մեկը մյուսից գերադասելու Ամեն մի գործ իմ հոգու արգասիքն է, որը ես ստեղծել եմ իմ կյանքի տարրեր շրջաններում»:

Իրոք, գտվար է թե՛զադի ստեղծագործությունների մեջ առանձնացնելու որևէ գործ, լինի դա Յմար Խայամի կամ Ֆիրդուսու ստեղծագործությունների հիման վրա արված աշխատանք, պատմական թեմայով պատկեր կամ առօրյա կյանքից վերցված նկար, կարևորը նկարի մատշելիությունն է, ստեղծագործության մարդասիրական ու փիլիսոփայական իմաստավորումը, որը մարդկանց հոգուն խոսք է տառամ միայն ու միայն արտահայտչականության, ազգային արվեստի ավանդների վրա խարսխված ձեռի ու բովանդակության միասնության միջոցով: Սա է թե՛զադ-արվեստագետի հավատամքը:

Հոսեյն թե՛զադը պատկանում է այն արվեստագետների թվին, որոնք, ինչպես ինքն է բնորոշում, առաջնությունը տալիս են տիմաստին, բովանդակությանը, որը նկարվի երնակայության արդյունքն է: Այն այն-

٢٤٠ - مارس ١٩٦٨ - شماره ١٧ - دارالفنون

բան է մնում արվեստագիտի հիշողության մեջ, մինչև ստանում է համապատասխան ձևը³:

Թեզադր առաջնությունը տալիս է բնությանը, որը, բայ նրա, նկարչության մայրեն է (արևելյան արխտառական թեկադրված արվեստի հիմքավորում, որը դրված էր նաև XVI—XVII դդ. Իրանում լայն տարածում հատցած արվեստի տրակտատների հիմքում): Սակայն Բեհղադը գտնում է, որ նկարիլը բնության կույր վերաբարտադրողը շպետ է լինի, այլ բնության ու արվեստի միջնորդը:

Թեզադրատելով ժամանակակից իրանի գեղանկարչության մեջ տեղ գտած որոշակի մոգնական ազդեցությունները, Բեհղադը դատապարտում է դրանց հետնորդներին, քանի որ նրանք ունենք ինքնուրի քանուկ կարծում են նկարչության են ստեղծումը: Նա այդ ասում է ցավով, ազգային արվեստի գալիքի մատականությամբ: Սակայն Բեհղադի մտածողությանը խորթ է միակողմանիությունը: Ժամանակակից գեղարվեստական հոսանքների նկատմամբ նկարիչն ունի օբյեկտիվ վերաբերմունք: «Ձեմ բաժանում այն մարդկանց տեսակետը, որոնք գտնում են, որ այս բառուը (գեղարվեստական խմբումները—Մ. Դ.) թունավոր մըթնոլորտ է ստեղծել: Այնուամենայնիվ, այն օգտակար է: Մի օր... մեր նկարիշները կպանեն իրենց ճիշտ ուղին, այս ամենը փորձի նշանակություն կունենա և դա կնպաստի, որ մեր արվեստը նոր վերելք ապրիւ—ասում է Բեհղադը⁴:

Բեհղադը դեմ է կյանքից հեռացող, կտրված արվեստին, բայց ու արվեստագիտների որոնումներին, ինքնատիպությանը: Նա դեմ է անբովանդակությանը, բայց ոչ ոնի անհատականությանը և ինքն էլ իր ողջ կյանքը ակտու է իմաստավորված ու ինքնատիպ երանգ ունեցող արվեստի ստեղծման:

Ետքն ու հետաքրքիր են Հոսեյն Բեհղադի արվեստի արժանակությունը: Դրանք հիմնականում խարսխված են երկու կարևոր երկույթների վրա: Առաջինը Սպահանի մանրանկարչության դպրոցն է: Մանրանկարչության արվեստի այս ուղղությունը XVI դ. նկազ շարունակելու Շիրազի դպրոցին, որի ստեղծագործությունները հայտնի են իրենց բարդ հորինվածքով և գոմային գեկորատիվ լուծումներով: Դրան դուդակցվեց նաև

³ Խոյե տեղում:

⁴ Կազ-Ահմեդ, Տրակտատ օ կալլիգրաֆի և հոդականի, Մ.—Լ, 1947, Համաց-եց Ասար, Տրակտատ օ յանուկու, Բաքու, 1963.

⁵ استاد حسين جهزاد، خبروصرد، ۱۹۷۰، ۷۰ ص، شماره ۱۹۷۸.

⁶ Խոյե տեղում:

Թավրիզի մանրանկարչական ուղղությունը՝ իր քնարական հիմքով, XVII դ. Սպահանի մանրանկարիչները, ձեռագրերի ձևագրումներից զատ, ստեղծում են նաև առանձին թերթեր, որոնցում զգալի տեղ է տըր-զում դիմանկարությանը։ Դիմանկարչական ժանրի զարգացումն իր հետ բնորում է տիպականացման ու հոգերանկան արտահայտչականության խնդիրները։ Դույնը կորցնում է իր վաղեմի շքեղությունը և զրան փոխարինելու է զալիս գիծը՝ ամսոր, հատակ գծանկարը։ Մանրանկարները հիմնականում ստեղծվում են գծի երրագեղության և թիթե գումազարդման միջոցով։ Զգալի դեր է ընձեռում եվրոպական նկարչության ազդեցությունը (Հնանկար, ձեռքի մոդելավորում, լուսառատվեր և այլն)։ Պատահական չէ, որ ժամանակի նշանավոր մանրանկարիչներից մեկը՝ Մուհամմադ Զամանը, մեկնում է Իտալիա կատարելագործվելու Ապահանի մանրանկարչության բնագավառում առաջնահերթ է դառնում ուսալիստական մտածելակերպը։ Այդ գաղափարների տեսական արտահայտության վկայությունն է ժամանակի արվեստի նշանաշխոր տրակտատներից մեկի Հեղինակ Ղազի Ալմազի այն միտքը, որ էկինոդանի զալամի շնորհիվ լինական և եվրոպական կախարդները՝ դիտության հրաշագործները, բազմել են տաղանդի երկրի գաճին և գարձել նակատագրի արվեստանոցի վարպետները¹։

Սպահանի մանրանկարչական դպրոցի ժաղկումը կապված է նշանավոր մանրանկարիչ Ռեզա Աբասու անվան Հետ (1575—1625), որը ստեղծեց նաև առանձմնաւառուկ տիպամներ։ Ալացիկ Ֆիգուրներ, երկարչուն դիմքեր, ընդդեմած հունքեր, նուրբ մոդելավորված ձեւերի անցումներ, տիպամներ, որոնք երկար ժամանակ իշխուզ են մեռմագարսկական արվեստում։ Ստեղծվում են նաև զեթաներ՝ հատուկ դրելաձևով, շքեղ զարդանախճերով ձևավորված թերթեր, որտեղ կենտրոնական մասը դրավում են Ղուրանից ընտրված ասույթները (զրանք պատրաստվում էին նվիրատվության համար)։

Հոսեիլ Բեհջադի արվեստի երկրորդ կարևոր հիմքը² XVII դ. կիրառական արվեստուն է. շքեղ, գունագեղ գրդանք, լաք և փայտե փորագրված իրեր, լաքե առարկաներ, նրբանաշակ ոսկերչական ստեղծագործություններ, որտեղ դույնը զգալի դեր է խաղում նրանց ընդհանուր գեղարվեստական կերպարի կազմավորման գործում։

Սրանց գուգակցման գրա է խարսխված Հոսեիլ Բեհջադի արվեստը։ Սակայն նա չի ընդօրինակում երկու դար առաջ ստեղծվածքը, նույնինքն է առում, ստեղծագործական առաջին իսկ քայլերից ձգտել է զրա-

¹ ՀԱՅԱ-ԱՀԱԽՈՅ, Ֆ. աշխ., էջ 278.

Նել իր ոճը, որն ինքնանպատակ լի եղել: Նա լի ուզում հնուանալ նախ-
նիներից, բայց և լի ուզում նրանց կրկնել: Բեհզադը ձգտում է նոր ժա-
մանակների ազգային արվեստի ուրույն ուն ստեղծելում, որը կզուգակցի
ավանդականը նորին և կօքրաժնի պարսկական մանրանկարչությունը:

Հոսեյն Բեհզադի ստեղծագործական ժառանգությունը բնորոշող
ոռուեմնահատկություն է թնամաների բազմազանությունը: Ինչպես և բո-
լոր պարսիկ մանրանկարիչներին, նրան նույնպես հուզել ձև Արնայրի
գրականության մեջերը. Ֆիրդուսի, Սմար Խայամ, Իրն—Սինա (Ավիցե-
նա), Նիզամի:

Միշնադարսում բազմիցս շքնդ ձևավորված և նկարագարդված Ֆիր-
դուսու Շահ-Նամինա գեղարվեստական նոր արժեքավորում է ուսանում
Հոսեյն Բեհզադի մոտ: Նա պոեմից ընտրում է առանձին դրվագներ,
որոնց գեղարվեստական կերպարավորումը շատ ավելի հոգեհարազատ է
ինչպես իր ստեղծագործական հնատարրություններին, նույնպես և նրա-
նի արդի արվեստի գեղագիտական սկզբումքներին: Նույն մոտեցումը
կա նրա մոտ նաև Իրն—Սինայի նկատմամբ, որի կյանքից վերցված
առանձին դրվագները նկարիչի կողմից մեկնարանվուա ճն այսօրվա ար-
վեստագետի տեսանկյունից, դուրս գալիս մանրանկարչության ավան-
դական մեկնարանումներից և դառնում փոքրալափ հաստոցալին կտավ-
ներ:

Հատկապես Նշանակալից են Սմար Խայամի ուրբայիների թեմանե-
րով կատարված հիսուն նկարները, որոնք նկարվել երկար տարիների
որոնումների արդյունքն են:

Ստեղծելով Խայամի բանաստեղծական աշխարհին հոգեհարազատ
այստեղային թերթեր, նկարիչն առանձնակի տեղ է հատկացնում բնա-
նկարին, կենցաղային իրերին, տարազներին: Այստեղային նկարների
առանձին կերպարները բավականին ռեալ ճն, կենսահաստատ, սակայն
ամենը դրված է որոշակի իդեալականացման հճաքի վրա, որը թելա-
զրված է Խայամի քայլակների փիլիսոփայական հությունից: Նկարի-
ւը կտավի փոխարքն շատ հաճախ սպագործում է թամբշը, որի վրա

* Իրանում լայն տարեու ունեն զբանացրելիների հետաքրքրությունների համար,
պատրաստված մակրանկարչական գրքերը, որուց մի ընդունակութեան էն, յատ հա-
ճախ՝ ցանքրուած և արժեքած հետո:

* The Rubaiyat of Omar Khayyam. Fitzgerald's English Version; Etessan Zadeh's French Version; 50 Plates in Color by Iran's Celebrated Artist Hossein Behzad Miniatur. Edited by Brigadier-General Dr. Hossein Ali Nouri Esfahany, Tokyo, Japan, 1970—1972.

զգի օգնությամբ պատկերում է տեսարանը: Որքան ուշալ ու կճնառաւասաւասաւ են կերպարները, նույլնքան բանաստեղծական են ու ռումանախիկ խոհ Հանախի հերիտաժային է շրջապատող միքավայրը:

Տեսարանները հարստացվում են նարտարապետական համալիրների ներմուծումով (պատմական մայրաքաղաքների հիշարժան կառուցյաներից ընտրված առանձին հատվածներ), բնության տեսարաններով (շրջեղ պարտեզներ, սարեր, թափանցիկ գետակներ, պայմանական երկինք և այլն): Նկարիչը ձգտում է զեղնա-կարմրագույն, բաց վարդագույն հատվածներով մարմնավորել աշխարհի, կյանքի անընդհատ շարժումը: Երրեմն ներմուծում է հաստարուն շագանակագույն ժառեր, խիտ կանաչ թփեր, վարդագույն կամ կապույտ-ծաղիկների պատճեններ, որոնք պատկերված են շինական նույնատիպ նկարները հիշեցնող գեղանկարչական նկարներով¹¹: Նկարների զգալիքասի կողորիտը զեղնա-շագանակագույնի, մանիշակագույնի, կանաչի ու կարմրի երանգների համապատասխան վրա է ստեղծված, իսկ երրեմն ֆոնը հարթ սև է կամ հնչեղ ոսկեգույն: Նկարազարդումների կարևորառանձնահատկություններից է գունային կառուցվածքը, որը առաջնահերթ նշանակություն ունի Բենզագի համար: Դա շրեղ, պարհառ ու արամագրություն ստեղծող գումարին հենքն է: Բենզագի վարպետությունը հանդես է գալիս նաև տարազների, նրանց դիմորդատիվ հարդարանքի, կենցաղային իրերի վերարտապեման ժամանակ:

Այս ամենի ֆոնի վրա առաջնայինը մարդիկ են, ուսալ իրականությունից վերցված կերպարներ՝ արհնաստավորներ, գեղուցվածներ, կյանքի իմաստն ու հազերիւթյան գաղտնիքը որոնող զերպիչներ, որոնք ապրում են նկարչի երևակայությամբ ստեղծված կարելու նկարների մեջ, իսկ նկարիչն էլ ապրում է նրանց աշխարհում:

Սպակայն այս նկարագարգումներն ինքնանգամատակ չեն: Աշխարհնեանցնական գոփիոխվում է, ապրում է տարածության ու ժամանակին մեջ, որպես նյութի անընդհատ ու անվերջ պատւած: Հող գարձած մարդը փոխակերպվում է սպասորի, ժաղկի և այլն: Ի՞ր է աստծո կատարածի տրամաբանությունը, տալիս է լարքաշ կյանք, ապա՝ մահ: Ըստ Խայտի, տրամաբանությունն է իմաստ շկա սրա մեջ: Սա էլ թելապրում է գոյություն ունեցածից կարելուն շափ օգտվելու սկզբունքը: Ռմայու-

11 Բենզագի շեր ընթանառ ժամանակակից նկարչական ամենիկական նկարները նկարում էր արևմատ ճյա վարպետների նման: Գտնին ժալապատիկ նստած, կամքը կամ թաւողը տար պատճենակի վրա գրված: Հիմնականում նկարում էր գուշաց, շրաներից կամ տեմպերայով, նապատակի պայի մաշերից պատճենակած վրձիններով, գրձինց ու ափի մեջ ուղիղ պահած:

թյան սփոփանքը վայելիքն է, սերը, խրախնձանքը: Խայամական այս մտածողությունն է դրված Հռուելն Թեհզաղի նկարագարդումների հիմքում: Նկարիչն ինքն էլ էր դպում, որ խայամական պոեզիայի ընկալումները ստհմանափակ կլինենքն, եթե միայն այս առանձնելումնից մոտենար երանց գեղարվեստական մարմելագործմանը: Խայամի պոեզիայի ողջ հոթյունը գրված է որոշակի գունազւաստիկական կերպարավորման մեջ: Կյանքի հաստատում և ժխտում, նրա երևույթների փիլիսոփայական մեկնաբանումներ, ումայնություն, սեր, մահ, հիասթափություններ... Թգում է թե Բեհզադն իր ստեղծագործական աշխատանքի ընթացքում առաջնորդվել է ուստի նշանավոր իրանագետ Վ. Ժուկովսկու այն դիպուկը ընութագրմանը, թե Օմար Խայամը աղատամիտ է և հավատի կործանել, որ նա անառաված է ու մատերիալիստ, ուղղաճավատ մահմեղական է և ճշգրիտ փիլիսոփա, սուր դիտղականությամբ օժակած գիտնական, որ նա պարսկական Արռւ-Լալա-Մահարին է, Վոլտերը, Հայնեն:

Կյանքի բարդությունների, հակասությունների, ժխտման և երկրպագության գեղարվեստական լայն ընդուրկումներ է ցուցադրում նաև Հռուելն Թեհզաղը: Դա պատճենական չէ, քանի որ ինքը՝ Բեհզադը նաև փիլիսոփա նկարիչ է: Նրա խորհրդաժությունները կտրված չեն կյանքից, իրականությունից: Նրա պատկերած բրուտագործներն ու հողի մշակները հեռու են գեղեցկացման ձգումից: պարզ, հասարակ մարդիկ՝ որոշակի հոգիբանական գործողությունների մեջ դրված: Նրանց հողեղին են, ուսալ, իրականության շրջանակներում զործող: Նրա գերվիշները ընդհանրացված տարրեր տարիքի կերպարներ են, որոնք ապրում են իրենց խորիմասու, ինքնամփոփ կյանքով:

Ե՞նիրվիշները նկարում Բեհզադը ցուցադրում է անսահմանության մեջ գործող բազմաթիվ կերպարներ: Սեր ու երիտասարդ դերվիշների խառը, քառային կուտակումը այն սպավորությունն է թողնում, որ նրանց գունդում են կյանքից ու իրականությունից դուրս և իրենց խորհրդաժությունների մեջ ձգուում են հասկանալ կյանքի խորհուրդը: Այլարանական մտածողությունը շատ հաճախ Բեհզադի մոտ ստանում է սիմվոլիկ կերպարավորում: Նուրբ ալիքածն շրջագծերը բնիրդուառ դիմանկարին շուրջը, մերկ կանանց (հուդիների) կերպարանք ստացած ոպիները, որոնք նկարվին սխեղում են հուշերի ծանրությամբ ոինքնանկարում և այնու:

Այլարանության հետաքրքիր օրինակ է Օմար Խայամի սուբայիների նկարագարդումներից այն թերթը, որտեղ ամեն ինչ ծովզել է իրար, որտեղ տիեզերականն ու սեալը միահյուսվել, շաղկապվել են ու դարձել

Համերժության մարմնավորում։ Հող, որից կուժ է ստեղծվում, բարձադույն, բազմաձև, բազմախոս, սլաշիկ, գողավոր, նրբագեղ կուժ։ Եղ նույն այդ կուժն անհռոմի մեջ շշրջելուց հետո փշրվում, մանրվում, հալվում, բյուրեղանում, հող է զառնում և նոր չունչ, նոր ոգի առած, նոր կերպարանը ստացած վնասը է զեսպի նույն տիեզերքը, որպեսզի նոր կյանքով վերակենական թեհզաղի ստեղծագործական կերպարների մեջ։ Հմացիլ է հաստկապես նկարի ռիթմը։ ամենն իր մեջ առանց պատճենող, տիեզերական շարժման մեջ զնող ռիթմը։

Թեհզաղի համար կարևոր նշանակություն ունի զիեց (հիշենք, որ Սպահանի մասրանկաշական դպրոցի կարևոր առողջենահատկություններից էր ուրիշագիտեց), որի յուրաքանչյուր հատվածը նա կարողանում է հասցնել կատարելության։ Այդպիսիք են նրա տնեսողիշերացին երազը, Շիրախտն ու դժոխքը, Պարուճին, Ալվիցենայի դիմանկարը, Շահնշաղի զիմանկարը և այլ գործեր։ Միքան ուզում է մեծ վարպետ լինի, եթե գտանկար լուսի, ապա նու նկարիլ լի։ Առ մի ճշմարտությունն, որ ես աշխատել եմ ապացուցել իմ նկարներով, — ասում է Թեհզաղը¹¹, նա կարողանում է արտահայտիլ գտանկարը զուգակցել գույնի զեկորակիվ հստակությանը, որը և նրա աշխատանքը բարձրացնում է դասական մանրանկարչության մակարդակի։ Թեհզաղը հաճախ ժլատ է գույնի օգտագործման հարցում։ Միրում է աշխատել ուրիշագծով։ Այդպիսիք են նրա տեսահամեմեթ թեմաներով գործերը, Պարուճին, Կիսդիշերացին երազը, Շիրախտն ու դժոխքը, Ալվիցենայի դիմանկարը, Շահնշաղի զիմանկարը, Շիրովիշը, Շևովենի գեղեցիկը և այլն։ Նախընթրում է ուն մուգ կամ մուգ շագանակագույն թամբաֆոնը, որի վրա սպիտակով ուրվագետում է աշխատանքի հիմնական կոնտուրները, իսկ ձևերի մոգելավորման համար օգտագործում է տվյալնունի գույնի տարրերակները։ Այսօրինակ նկարելանի կատարելությունը նկարչին իրենց մեջ համարում, նկարելան, որով արվեստագետը տարրերվում է մանրանկարչության արվեստով զբաղվող իր ժամանակակիցներից (Մահմետադ Ալի Համայիլ Համբեկն, Ալթաֆին), Պատահական չե, որ այդ նկարելանը իրանի գեղարվեստական շրջաններում հայտնի է որպես միեհզաղի ոճաւ։

Թեհզաղի աշխատանքներն իրենց լափերով շատ ավելի մեծ են, քան ընդունված է մանրանկարչության մեջ, բայց իրենց գեղարվեստական մատածողության հենցով որանց մանրանկարներ են, որոնք թեմա-

ների մեկնարանումները ձգտում են հաստոցային նկարչության յոտեցման նկարիչը գտնում է, որ ինքը կարողացնի է ազատվել առանձին մանրութերի մանրանկարչական վերաբառադրումից։ Այդ, որոշ վերապահումով, կարելի է տարածել միայն ուշ շրջանի նրա գործերի վրա։

Բեհջաղի մեծությունը միայն զրական երկերից թելադրված ստեղծագրությունների մեջ չէ։ Արվեստագիտի կերպարի ամրոցացմանը նպաստում են նրա մշուս ատեղծագործությունները ևս։

Ստեղծագործական առաջին իսկ քայլերից Հոսեին Բեհջաղին հուզել են սոցիալական հարցերը, որոնք 1940-ական թվականներից դարձել են հրատապ թեմաներ իրանի մշակույթի զանազան բնագավառներում։ Տարիների ընթացքում ստեղծվել են այնպիսի նկարներ, ինչպիսիք են ուն ոսկու տերերը, ունետուն բանվորը, Շոսվը, Այն հարցին, թե նա ինչպիս է գնահատում մանրանկարչության գիրը արվեստի համակարգում, Բեհջաղը պատասխանել է. «Մանրանկարչությունը նկարչության բանաստեղծությունն է...»¹², Դա նշանակո՞ւմ է արդյոք, որ մանրանկարչությունը գործ չի կարող սննդնալ կյանքի տգեղ կողմերի հետ։ Մանրանկարչությունը գեղարվեստական արտահայտման ձև է։ Բեհջաղը բերում է իր մանրանկարչական մեկ աշխատանքը՝ «Սովոր», որպես կյանքի սարսափելի մզմավանջն արտահայտող գեղանկարչական օրինակ։ Այն վերաբերում է 1930-ական թվականների նրանի հայտնի սովոր։ Հատկապես մանրանկարների այս շարքում նա կարողանում է հասնել դրամատիկական բարձր հնչեղության։

Հոսեին Բեհջաղը պարսկական մանրանկարչությունը հարստացրեց նոր թեժաներով, նրա բանաստեղծական էության մեջ ներմուծեց ժամանակակից սոցիալական թեմաներ, մանրանկարչության զարագորավանդները ներմուծենով գաղափարագնարվեստական նոր ուղղություն։

Հոսեին Բեհջաղի ստեղծագործությունների առանձնահատկությունը բանաստեղծական շունչն է նվ պատահական չէ, որ ժամանակակից ֆրանսիացի անվանի արվեստաբան Ժան Կոկտան գրել է. «Բեհջաղը երկրի վրա մարդարն է ու երևակայության աստված։ Այդ կարևահասակ ու նիշար մարդը այնքան ուժ ունի, որ կարողանում է երևակայության շնորհիվ այդքան մեծ արվեստ ստեղծել... Եթե Արևելը միշտ հմայել է մարդկանց հաղար ու մի գիշերների գեղեցիկ հերիաթների հնամենի պալատներով, ապա այժմ կախարդական գուրիներով կախարդական աշխարհ է բացել մեր առաջ ալեհեր, թափանցիկ աշքերով մեծ մանրանկա-

¹² Խոյն տեղամաս

րիլը: ...Մանրանկարչության բնագավառում մեկ վարպետ կա և դա էլ թե՛զագն է»¹³:

1968 թ. Հոսեին Բեհզադին ջնորհվեց Իրանի մշակույթի բնագավառում արվագ ամենապատվավոր ու ամենաբարձր կոչումը՝ Օստադ (վարպետ):

Հոսեին Բեհզադը մահացավ 1968 թ., 74 տարեկան հասակում:

Նրա արվեստը պարսկական մանրանկարչության նօր առկայժումն էր, նրա վերածնման գեղեցիկ փորձը, որի իրականացմանը իր ողջ կյանքը նվիրեց արվեստագետը: Դա մեխանիկորեն կատարվող վերականգնում չէր: Նոր ժամանակներում ազգային արվեստի ավանդների վերականգնուման խիզախի փորձ էր նրա ստեղծագործությունները, պատվավոր մի խնդիր, որը հաղթահարեց արվեստագետը, հենվելով երեք աղբյուրների՝ ժողովրդական բանահյուսության, արևելյան գրականության և շրջապատող իրականության վրա: Հոսեին Բեհզադը ժամանակակից պարսկական արվեստը հարստացրեց այդ երեք աղբյուրների վրա խարսխված գեղարվեստական ստեղծագործություններով և իր անոնց շաղկապեց ազգային արվեստի պատմության հետ:

М. КАЗАРЯН

ИСКУССТВО ХОСЕИНА БЕХЗАДА

Резюме

Крупнейший художник современного Ирана Хосеин Бехзад (1894—1968), опираясь на искусство миниатюристов исфаганской школы XVII в.—эпохи расцвета, в своих творческих поисках достиг совершенства линии, изящества форм. Он создал свой художественный мир восприятия образов, опираясь на традиции народного прикладного искусства и восточной классической литературы (иллюстрации к рубаи Омара Хайама и др.). Одновременно, Хосеин Бехзад обогатил современное персидское искусство социальной тематикой, создавая произведения больших драматических обобщений («Голод», «Бездомный рабочий» и др.).

سازنها و کارهای حسین بهزاد. مخواهشان، ۱۹۷۸، شماره ۵۷.

ՍԱՐԻԿ ԽԱԶԱՏՐՉԱՆԻ ՊԱՐՄԿԱԿԱՆ ՈՐՄԱՆԱԿԱՐՆԵՐԻ
ԸՆԴՈՐԻՆԱԿՈՒՄՆԵՐԸ

XVII—XVIII դդ. հայ կերպարվեստի կարևորագույն հատվածներից է իրանահայ և, հատկապես, նոր Հուղարքի կերպարվեստը:

Նոր Հուղան հիմնադրմբեց *XVII* դ. առաջին տասնամյակում, Սպահանի մոտ, Ջայանդառուդ գետի ձախ ափին, Շեորհիզ քաղաքաշինության ու արվեստի որոշակի մակարդակի, զարդացած արհեստավորության ու առևտրական դասի ակտիվ գործանելության, կարճ ժամանակամիջոցով նոր Հուղան քաղաքատիպ տեսք ստացավ: Նրա առևտրական կապերը հասնում էին Ռուսաստան, Հոլանդիա, Մարսել, Վենետիկ՝ Ճանապարհորդները ուղարկավ տեղեկություններ են հաղորդում նոր Հուղարքի քահանաթյան բարձր ապրելակերպի մասին¹: Եվրոպայից բերված զանազան իրերի հետ, Սպահանի հայ առևտրականների խանութենքում վաճառվում էին նաև Վենետիկից ու Նյույորքից բերված գեղանկարչական ու փորագրական աշխատանքներ²: Զարդացող ոսկերչությունը, խեցեգործությունը, գորգագործությունը, դաշտարվեստը, ակնագործությունը գտնի գեր էին խաղասմ նոր Հուղարքի կենցաղում և գեղարվեստական կյանքում: Հիշենք նշանավոր Ալմաստե գահը (1659 թ., Մոսկվա, Կրեմլ, Զինապալատ): Որը հայկական կերպառական արվեստի առբեր մասնագետների ստեղծագործական մաքի փայլում օրինակենքից է: Հատուկ ուշադրություն է դարձվում նաև ապարանքների ու եկեղեցների ներքին ձևավորմանը, որտեղ որմնանկարների հետ տեսնում ենք նաև հաստոցային ստեղծագործություններ:

Նոր Հուղարքի գեղանկարչությանը բնորոշ է աշխարհիկ թեմաների

¹ В. А. Бадбургян, Армянская колония позой Джудзюни в XVII веке. Ереван, 1969.

² John Carswell, New Jaffa. Oxford, 1968.

³ Ш. Я. Амирханашвили, Иранская станковая живопись. Тбилиси, 1940, стр. 25.

ձգտում, ժամբերի սահմանազառում (գիմանկար, նաևյուրմորտ, թեմատիկ պատկեր), Գեղանկարչության այսօրինակ դարդացումը առաջ էր քաջում նաև տեղի նկարիչների առաջացման խնդիրը: Անհայտ նկարիչների գործերի կողքին պահպանվել են մի շարք բարձրարժեք ստեղծագործություններ, որոնց հեղինակները նկարիչներ Մինաս ու Հովհաննես Մրբուզն են:

Մինասի (XVII դ. II կես) նկարներից բնկորներ են պահպանվել Նոր Ջուղայի ապարանքներում և Ամենափրկիլ վանքի թանգարանում: Նրա աշխատանքները ժամանակակիցներին հիացրել են իրենց ուսումնական ու կճանահատատա մեկնարաններում: Ստեղծագործական բազմազան կարողությունների և հետաքրքրությունների վկայություններ են Նոր Ջուղայի Ամենափրկիլ վանքի Հովսենի Հարեմաթացու եկեղեցում պահպանված որմեան կարները, որոնց գտայի մասի հեղինակը Հովհաննես Մրբուզն է (?—1715): Նոր Ջուղայի կերպարվեստի, Նրա ակտիվ գեղարվեստական կյանքի փայլուն վկայություններից է նաև Թոգդան Սալթանովի (?—1703) բազմակողմանի գործունեությունը Մոսկվայում, որտեղ նա դարձավ Հինապալատի առաջնակարգ արվեստագետներից⁴:

Նոր Ջուղայի կերպարվեստի այսպիսի զարդացումն ու ակտիվացումը բխում է նորջուղայեցիների ապրելակերպից, Եվրոպայից թափանցող աղղեցություններից, ինչպես նաև այն տեղաշարժից, որ նկատվում է այդ ժամանակաշրջանի պարսկական արվեստում:

XVII դ. վերջում հիմնադրված սեֆեյանների մայրաքաղաք Սպահանի պալատներն ու ապարանքները սկսում են նկարազարդվել, որ նորություն էր պարսկական արվեստում: Հատկապես նշանկալից են Սպահանի պալատների նկարագարդումները, որոնց բացառիկ տեղ են գրավում իրանի կերպարվեստում: Մասրանկարչության բարձր կուլտուրա ունեցող պարսկական արվեստում առաջին անգամ հանդիպում ենք աշխարհիկ թեմաներով որմեան կարների, որտեղ զգայի տեղ են գրավում գիմանկարները, սիրո, խնջույքի և որսի տեսարանները: Պատկերված ֆիզուրների մի գործը երկարավում, սլացիկ արտահայտչականությունը, գործը շափերի մեջ ոլուժեների վարպետ ժամկանումը, բաց գեղինի, կանաչի, շագանակագույնի ու կապույտի գույնային նույրը համագրավությունները, բնանկարի աղաւ տեղադրումը ընդհանուր կառուցվածքի մեջ, ստեղծում են բարձրականին ուրույն ոճ: Այս աշխատանքներում,

⁴ Առկա Ղազարյան, Հայ հեղագործության XIX—XXIII դդ. Գեղանկար Երևան, 1874:

⁵ Ա. Սալես, Գեղանկարի Բագրամ (Խմեն) Սալբանչը Մոսկվայում, «Պատմահայրական» հանգեց, Երևան, 1874, թ 1, էջ 29—52:

կատարվել են մի քանի վարպետների կողմից, Հատկապես նշանակալի է ժամանակի պարսկական արվեստի անվանի գեմքերից մեկի՝ մանրանկարիչ ու պարատական ձեռագրատան ղեկավար Ռեզա Արաւու (1575—1625) արվեստի ազդեցությունը⁸: Նա այն ինքնատիպ նկարիչներից էր, որ կարողացավ ժամանակի արևելյանը միանուլի և վրոպականին ու առեղծել նոր ոճ: Այն կարծիքը գոյություն ունի, որ Զենել Սոթուն պալատը կառուցելուց հետո, Ռեզա Արաւուն օգնականներ է հավաքել նկարազարդելու նպատակով: Մեկ այլ կարծիքով՝ ինքն արդին մահացած էր և նրա աշակերտներն են ազարտել վարպետի սկսածքը Հայունի է, ասկայն, որ Ռեզա Արաւուն որպես օգնական է ունեցել նկարիչ Մուհամմադ Ջամանին⁹ և Մուհամմադ Ղասել Մոսավարին¹⁰: Նույն արվեստաբանների կարծիքով, Սպահանի պալատական որմեանկարներում առկա է նաև նկարիչներ Մոինի և Մուհամմադ Յուսուզի Մոսավարի նկարները, որոնց իրարից կարելի է տարբերել միայն ֆոնի բնակարի միջոցով¹¹: Ով իրոք Ռմանը սարերն ու ամպերը նկարում են XVI դ. մանրանկարներում հանդիպող ոճավորված պատկերամեների

* Տաճ Արա Ե-ի ժամանակվա առաջնախոր նկարիչը: Հատկապես գեանձարի վարպետ էր: Առեղծում էր առանձին թերթիք մրա դիմոնիար-մանրանկարներ («Գառանին», ունու զիմանակարայ կամ հենցազային տեսարաններ յօնքը որոշները, միջանարենք): Նրա գործերն ընթաց են ֆիզուրների երկարությ և զննեցնի օգալ կառուցմանենքը: — Հայաստան 1927 թվականի ու Նոր:

¹² Մուհամմադ Ջամանը մենք է Բայրիզում, հաստրելագործման հուլիսում՝ Հայաստան, ինչ 1565—1575 թթ. առեղծացործն է Հաջիասահում: Նա առաջն էր, որ պարսկական մանրանկարչության մեջ ներմուծեց շուշուռավելքի, հնանկարի, ճագայի հասկացությանենքը: Նրա կատարած մանրանկարներից որպատճենի ան Ֆիրզաւաւ Եշա-նամենա (Պատամ-Թիայ պատճեն), նիզամու համաժում (Թիրտանեկան թանգարան): Ընցութեանի է Բուրքնի և մի բանի ու մի բանակացիքների նկարներից փառագործությունները: Տե՛ս „Առաջ Ասմանի և պերսկա պահպատությունները“ XVII—XVIII տո.*, Խ. 1962.

* Համան Մոսավարի նկարչությունն մեծ նմանություն ունի Ռեզա Արաւու արվեստի: Առանձին մանրանկարչություն թերթերում կամ սիրանար զույգի պատկերու անսարքաներում նույն հռմանվեցան է, զննեցնի ու ֆիզուրների նույն գործությունն ու մաքւազուումը: Տե՛ս

احمد قاسم مصوّر-احمد سهیلی خوانساری. هنر و مردم: تهران 1977 թվական 100 ս. 10*

¹³ Մոին Մոսավար (1615—1700-ից հաւա) Արաւու պատկրան էր նրա գործերից հայտնի են մենաւ Արաւու զիմանիարը, Ֆիրզուս Եշա-նամենա նկարագործմանը, միւրուց և այլն:

محمد قاسم مصوّر-احمد سهیلی خوانساری. هنر و مردم: تهران 1977 թվական 100 ս. 10*

ևման, իսկ ոմանք՝ XVII դ. Պարսկաստան մուտք գործած եպրոպական փորագրություններին նմանվող հատվածներով:

Պարսկական արվեստի խոշոր գիտակ Ա. Ռ. Փոփը բերում է Հայքանդար Մոնղիի «Սեֆյանների պատմությունից» մի հատված՝ նկարի Մովլանա Մողաֆար Այի նկարչի մասին, որը շշատ գեղեցիկ մողեկեր է ռաեղեկի: ...Բոլոր Հայտնի նկարիներն ու վարպետ արվեստագետները խռոտովանում են Մովլանա Մողաֆար Ալիի գերազանցությունը և նրա՝ իր արվեստակիցների մեջ միակը լինելու Կայսերական պալատի (նկատի ունի Ալի Ղափում—Ա. Ա.) և Զենել Սոթունի ընդունելության դաշլիքն նկարներն ու պատկերները սույն Մովլանա Մողաֆար Ալիի ձեռքով է նկարված, եռլումինի ոսկենիկարներն էլ նու է նկարձի: Նա մեռագ կայաեր մահմանից հետո¹¹: Նշանակում է, եղիլ է նաև մեկ այլ շնորհալի նկարի՝ Մողաֆար Ալին, որը մահացել է 1828 թ. հետո և աշակերտել է Թեղա Արասուն: Նկարիների նման խմբագրումը հետաքաղաքությունում է պարզունակ եղբակացնել, որ Սպահանի պալատական որմեանկարները կատարվել են XVII դ. առաջին կեսում և տարբեր նկարիների կողմբց:

Երեք արյուրամյա նկարչության մասումքները XX դ. սկզբներին արդին կորցրել էին իրենց վաղեմի փայլն ու շքնորությունը: Միայն բնկորներ էին պահպանվել, որոնք վկայում էին անցյալի ստեղծագործողների գեղարվեստական բարձր ճաշակի ու վարպետության մասին: Պահպանվածքը փրկելու, վերականգնելու և արվեստի աշխարհին նրանց ծանոթացնելու նպատակով 1929 թ. Սպահան մեկնեց հայ նկարի Մարգիս Խաչարյանը (1886, Մալաթիա—1947, Փարիզ):

Մարգիս Խաչարյանը նախնական կրթությունը ստացել է Երզրումի Սանտարյան վարժարանում: 1908—1911 թթ. սովորել է Հռոմի գեղարվեստի ակադեմիայում, իսկ 1914 թ. ոսկե մեդալով պարունական Փարիզի զարդարվեստի դպրոցը: Ծվրոպահան նկարչական դպրոցները ուժեղ ազդեցություն ունեցան պատանի նկարչի գեղագիտական ընկալումների վրա: Նա իր առեղծագրժական կյանքը սկսեց ժողովրդի կյանքի ու կննցաղի նկարմամբ ունեցած հետաքրքրություններով:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայաստանում նու նկարում է բնանիկարներ ու կենցաղային տեսարաններ. Շնանի վանքը, Շիրագած, Շայկական մողովդական պարը, Շաղիկները, ինչպես նաև՝ դաշտականներին նվիրված Շայ պատղացին, Շուսահատվածները, Շմասումբի կանայք, Շորերը ճաշի պատման ժամին:

¹¹ Էջման Գոփ, Պարսկական նկարչությունը, ՎԱՀԵ օրաթերթ, Թէրան, 1932:

արև՝ մոտ 500 նկար և էտյուդ: Ա. Խաչատրյանի ստեղծած նկարների լավագույնները տեղ դրան 1924 թ. Վիճեննայում հրատարակված շքեղ ալբոմում¹²: Այդ նկարների զիմանշոր թեման Հայաստանն էր: Թնտվան ընդհանրացված վերարտագրման հետ, նկարիլը կարողացավ ստեղծել գեղարվեստական կերպարներ, որոնք ուշագրավ են նաև որպես ազգագրական նյութ¹³: Այդ նկարներում կարենոր հանդամանք էր նաև գույնի ակարիկ դերը, շրաներիկ թափանցիկ տօնայնությունը, որը նկարչի մեծ վարպետության վկայությունն է:

Սարգիս Խաչատրյանի մտածողությունը Արևելքի նկարչի մտածողություն է (որի դրսնորումը իր ողջ փայլով հանդես եկավ կովկասյան նկարաշարում), և միանգամայն ընական էր, որ նա իր ստեղծագործական որոնումների համար մծինեց Շարսկաստան: Այդ միտքը նրան տվեց Ենքապիրի նշանագոր թարգմանիչ, դիմանագետ Հովհաննես խան Մասհերյանը (ուշագրավ է նաև, որ Սարգիս Խաչատրյանի հայրը՝ Կարապետը թամբիցի էր), 1929 թ. Սարգիս Խաչատրյանը մծինում է Պարսկաստան: Պարսկական որմեանկարլության ակումբները խորը հասկանալու համար, նկարիլը ժամութանում է պարսկական պյողիային, արցելում է Յմար հայամի դամբարանը Նիշանուրում, ապա նոր միայն ձեռնարկում իր հիմնական գործը: Նա ընտրում է Ալի Ղաֆուն (XVII դարաշին տասնեամյակ), Զեհել Սոթունը (1547), Աշրաֆ պալատը (1612—1627), Ալահվերդի խանի կամուրջի հանգստի սենյակները (1602), թագավորական կենտրոնական շուկայի մուտքը (1619)¹⁴:

Այն, ինչ տեսավ Ս. Խաչատրյանը հիշեցնում էր անցյալի շքեղությունը, որմեանկարների գույնները խամրել էին, սրուժեաւային նկարների հատվածները թափվել: Սպահանից Ա. Զոպանյանին հասցեացրված իր շատ արժեքավոր նամակում Ս. Խաչատրյանը ցավոզ գրում է, որ նկարների գգայի մասը երկար ժամանակ կազի ծեփի տակ է մնացել, իսկ որոշ հատվածներ կեղառուվել են¹⁵:

¹² Sarkis Khatchadourian, Armenian, Viesno, 1924. Առջարտները դրէ էն անգամ հայագետներ Ն. Ալիքեանը, Հ. Մորմիկյանին և Յ. Մոհկերը,

¹³ Գ. Հակոբյան, Նկարի Սարգիս Խաչատրյան, «Հայ», Անթիմառ-կրան, 1947, Ա 4, էջ 98:

¹⁴ Հետարքը է, որ 1321 թ. Զեհել Սոթունի որմեանկարները շնչարինակամ է վրաց նկարչունի Մկրտչելիյ-Տերհության Պահպանվում է Վրաց. ՍՍՀ արքունիքի թանգարանում:

¹⁵ Օ. Զարձեցի անձան գրականության և արքունի թանգարան, Ա. Զողոեյանի ֆուլ № 2857 (Լ. Տ. աղբիկ, 1921, Սպահան): Հրապարակվում է առաջին ակած:

Սարգիս հաշատրյանը ձեռնարկեց այդ որմեանկարների վերականգնման ու վերաբաղբան գործը, տարիների երկարատև մի աշխատանք, որը պահանջում էր ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի գեղագիտական ըմբռեւումների ու տեխնիկական հետարների մաերազնին ուսումնաբիրություն, այլև բարձր կուլտուրա և գեղանկարչության հաջակ:

Այլ Պափու պալատի վեց հարկերի բուրու սննդյաները, դահլիճները ու միջանցքները դեկորատիվ վառ զարդանկարներ ունեին. ծաղիկներ, տերևներ, կծնդանիներ ու թուլաններ: Հատկապն շքեղ ձևավորումներ ունեին առաստաղները՝ թնականին մոտեցող գումագեղ թշումների պատկերմամբ: Դաշնիների պատերը հետագայում ժածկվել էին ոսկեզօծ և հայելապատ շերտերով, որոնց մաքրելուց հետո միայն հանդիսավոր գեղանկարչությունը: Չե՛սել Սոթումի ընդունելության սրահներում պատերը զարդարված են շրջանակների մեջ առնելիությամբ: Խրախնանքի տեսարաններով, որտեղ իշխողը գեղնակարմրագույն կոլորիտն է: Ուշադրություն են գրավում նվազուական դժուանների նկարները. նույն ոճով նկարված, միայն տարագների տարրերությամբ: Դրանք տեղավորված են պատերի ցածի մասում: Պատերի վերնի հիմնական տարածությունները գրավում են պատմական նկարները. Շեահ Արաւ I-ի խրախնանքը ի պատիվ Թուրքեստանի արքա Վալի Մոհամմադ խանից (այսուղից էլ՝ լայն տարածում ստացած Շահ Արասի դիմանկարը), Շեահ Արաւ Մեծի պատ Թահմանպ I-ի կողմից տրված խրախնանքը Հեղիստանի թագավոր Հոմայումինը: Նախորդներից ետ շնչ մնացել Շահ Արաւ II-ը, Խաջիր շահը, որոնք նույնապես իրենց արշավանքների թիմաներով մեծակտավ գործեր են տեղադրել այս դահլիճում:

Թալարի Աշրաֆ պալատը (ընդունելությունների համար էր) Շահ Արասի սիրած Հանգատավայրերից էր (այժմ՝ Սպահանի լուսավորության բաժնի շնչեց): Պալատի ընդհանուր շքեղ ձևավորման մեջ առանձնակի տեղ է գրավում գմբեթաթածկ մեծ սրահի պատերի դեկորատիվ բուսական զարդանախշը: Ծանկյունաձև շրջանակների մեջ տեղավորված ծաղիկների կամ տերևների հատվածները շթաթարի գեղանկարչության տարրերակի պատրանք են ստեղծում: Անդրադասնալով Աշրաֆ պալատի Ա. հաշատրյանի ընդունելուակմանը, Եսթեր Վան Լու գտնում է, որ գրանք ստեղծվել են սեմինը, քանի որ լգիտես Օմար Խայամի գիրիստական տողերի հենքի վրա, ի հակագրություն Չե՛սել Սոթումի

նկարների, որոնց հիմքը նույնագիս մեծ նելչաբուքու, բայց «ևմի՞ր, քանի որ ապրում ես զաղափարն է»:

Մերդան Շահի նարտարապետական ամբողջությունը եղրափակող, նրա հյուսիսային մասում գտնվող Բազարի շահը շատ ավելի հայտնի է իր նշանագոր մուտքով՝ Անյարիի յավի Մուտքի և գործառափ վյայի նկարազարդումներում կա Շահ Արտա Ի-ի պատերազմներից մի տեսարան։ Դրան վերևում տեղավորված է շքեղ խճանկար, կենդանակերպ Աղձնիավորը (ըստ պարսիկ բանաստեղծների սրբ Հովհաննավորության տակ է գտնվում Ապահանը)։ Ծառողով կես-մարդ և կես-վազր Աղձնիավորը հանգիս է գտնիս նույն տեղում ագուցված խնցեգործական դիկորի մեջ։

Հաշթ Բեհեշթ պալատը շատ ավելի ուշ շրջանի կառույց է (1869), իսկ Ալաշգերդի խանի կամուրջի երկու փոքրիկ սենյակների մասին Ս. Խաչատրյանը գրում է Հայկ Անհերտյանին. «Ալաշգերդի կամուրջի երկու փոքրիկ սենյակներում գտնել եմ երեսունն ավելի հեղտանքի և սիրո որմնանկարներ, որոնք տարբերվում են մշտական պալատներից և նոր լույս պիտի սփռեն պարսկական որմնանկարներից վրա»³⁰։

Վերջին Սեֆնյանների պալատների կամարների բարդ նախշազարդարքները բառական էլեմենտների ներդաշնակ միաձուլումը, պատերի ցածի մասի ու աստիճանների գունագեղ խցեգործական սալիկները (սիրահար դուրզեր, ժաղիկներով սափորներ) մի առանձնակի շքեղություն էին տալիս պալատներին։ Արևելյան արվեստին բնուրոշ գունային շքեղությունը ամբողջացնում էր շենքերի ներսի առանձին հատվածների նկարազարդումը, նրանց տալով հերիաթալին «Ճայբ»։

Նկարչական թնառուր տաղանդը, ուսումնառության տարիներին ձեռք բերած ստեղծագործական հմտությունը, սերը զեղի Արեհելը ու հատկապես դեպի նրա արվեստը, այն նախազրյալները զարձան, որոնք Ա. Խաչատրյանին անհրաժեշտ էին որմնանկարների ընդորինակումներն ու զերականգնումը նախաճեռնելիս։ Աշխատելով մոտ շորս տարի (նախկինում ծրագրել էր ութ ամիս, բայց աշխատեց երկու և երկու անգամ այցելեց Պարսկաստան), նկարին արեց այն, ինչը հնատագալում հայտնություն պետք է լիներ ոչ միայն նվրուպայի ու Ամերիկայի արվեստասեր հասարակության, այլև իրենց՝ պարսիկների համար։ Ընդորինակումները կատարեց գուաշով, յուղաներկով, շրաներկով, որոնք հետ-

³⁰ Եսրեւ Վահ. Խոհ. Խոհաննի որմնանկարներ, Եվրատննակա, Թիւրք, 1925, 25 մակումբարի։

³¹ Հայի Անձնյան, Հայ նկարիչը և տոփածի արվեստը, Ալիքը պատերի, Թիւրք, 1932, 21 մարտի։



Ապահով ֆիզիկանի միջ լավու պայման
Ո. հաշոսոցյանի բնդորբնակումներից:



Ազգական թիմի Արքան: Հայուսացի:
1777 դ. Ա. Խոշտորյանի բեդրինեական էլերից:

բավորություն տվեցին նկարչին պահպանելու գույների թափանցիկ հանդասությունը։ Մոտ 150 ընդօրինակություններում XVII դ. նկարները մի և որ կլանք ստացան։

Սարդիս Խաչատրյանն Ա. Չոպանյանին հասցեագրած վերոհիշյալ նամակում գրում է, որ 1930 թ. վերջերին երկու ֆրանսիացիներ հրապարակել են Սպահանի երկու պալատներին նպիրված աշխատություն, որտեղ տեղադրված վերատպությունները քիչ տպավորություն են թողնում¹⁵։ Խոսքը վերաբերում է Սանկեմպ-Միջոյի և Դարդանի մենազրական ուսումնասիրություններին, որոնք հիրավի առաջինն էին այդ բնագավառում, բայց միագույն վերատպությունների պատճեռով նկարները կորցրել էին իրենց գեղանկարչական արտահայտչականությունը¹⁶։

Պահպանելով սեփական շրջանի վարպետների նկարելեածեց, նրանց ուր, գումային մտածողությունը, վրձնահարվածների նմանությունը և ժամանակաշրջանի արվեստի ողին ու շունչը, նկարիլ-ստեղծագործողը Սպահանի XVII դ. որմնանկարները արվեստասիրներին մատուցեց այնպես, ինչպես երեք դար առաջ նրանք փայլել էին իրենց շքեղությամբ, գույների գրավլությամբ։ Ավելին, Ա. Խաչատրյանն առաջին անգամ անգանումներ ավելց այդ նկարներին։ Շնորհած սրաերշ, ոՍպիտակագիտա կինը (Ալի Ղափու պալատ), ո՞ու և եաւ, ո՞մի՞ր, քանի ապրում եաւ, ոՍադիկների մեջ, ո՞մայք (Զեհել Սոթու պալատ), ո՞մի՞ր, քանի լգիտես, ո՞ովերգական սերս (Աշրաֆի պալատ) և այլն։

Այդ աշխատանքներին դուզանես, Սարդիս Խաչատրյանը ընդօրինակեց նոր ձուղացի խորա Ավետիքի ու խոչա Պետրոսի ապարանքների որմնանկարները, որորդական տեսարաններ, կանայք կերակուր մատուցելիս, պարող ու նվագող ազդիկներ, Հյուրասիրության տեսարաններ։ Նոր Ձուղացի XVII դ. գեղանկարչության մասին աշխարհն առաջին անգամ իմացավ Ա. Խաչատրյանի ընդօրինակումների շնորհիվ։ Միաժամանակ, Ա. Չոպանյանին հասցեագրված նույն նամակում Ա. Խաչատրյանը ցավում էր, որ հայկական որմնանկարների մեջ չնույն ժամանակվան հայ վարպետների ոչ մի հետք լցուա, բոլոր արձանագրությունները՝ կարգացի, ոչ մի հիշատակություն Մինաս վարպետի մասին։ ...զաների եկեղեցում գտա երկու արձանագրություն մեզ անծանոթ նկա-

¹⁵ Յ. Զարձեցի անձան գրահունություն և արձեսոյ թոնքարտն, Ա. Չոպանյանի թուղ, Ա. 2957/II, 5 ապրիլ, 1931, Սպահան։

¹⁶ Յեւ. S. Stepling—Michaud et J. Dardan, La peinture séfèvite d'Ispahan Als Gapy. Paris, 1930. Խույն հեղինակները ողագործեցին նաև „La peinture séfèvite

ըիների... բավականին լավ նկարված, գույների մեջ վարպետություն... իմ ուսումնասիրություններս հարազատ կերպով կմոռնեան իրենց գույների ու զիծերի ճշությամբ՝ որիգինալներին և նո վատահ կերպով կարող եմ ասել, որ ահազին ռդմորություն առաջ պիտի թերեն գեղարգիստական աշխարհում, այսպիսի՝ ուօքտուր ըմբռություն առաջ պիտի թերեն գեղարգիստական աշխարհում, այսպիսի՝ ուօքտուր ըմբռություն նկարներ կան... Միաժամանակ, նա ցավ է հայտնում, որ ոչ մի վարպետի անում չի պահպանվել ոչ միայն հայկական տներում, այլև պարսկական որմնանկարներում: Որմնանկարների որոշակի խումբ նա վերադրում է նեկան ըրասում, իսկ մյուաների գեղանկարչական-կերպարային առանձնահատկությունները նրան հիշեցնում են հոլանդացի, գերմանացի, ֆրանսիացի արվեստագիտների XVII դ. նկարիչանոնց: Անջուղա, Ս. Խաչատրյանը լիր սիրալվում: Հիշենք, որ նույն այդ ժամանակ Սպահանի պալատում ապրում էին մի շաբթ կմրոպացի նկարիչներ, իսկ անվանի պարսիկ նկարիչ Մոհամմադ Ջամանը հրապտրված էր եղբորպահան նկարչությամբ:

Պարսկաստանում կատարած որմնանկարների ընդօրինակումները Ս. Խաչատրյանը ցուցադրեց Լոնդոնում, Կոպենհագենում, Սուրյում, Ստոկհոլմում, Նյու-Յորքում, Կանիրենում, Փարիզում և այլուր²⁶, Այդ առթիվ գրվեցին մի քանի տասնյակ հոգվածներ, որոնց թվում Ա. Բոնարը, Կ. Մակերը, Ա. Չոպանյանը²⁷, անվանի արվեստաբան Արմենակ Սագորյանը²⁸ և շատ ուրիշներ նրանի պատմական թանգարանի հետական բաժնի վարիչ, անվանի արվեստաբան Ա. Գողարը զբեց-սեալատրյանի ընդօրինակած սովորաթղթի վրա ոչինչ ավելի չկա, քան պատի վրա: Բայց ոչինչ էլ պահան չկա: Մրանից ավելի գեղեցիկ գովեստ չեմ կարող ասել նրա հասցեինք²⁹: Հողմաժապիրներից մեկը գրում է. «Ճարմանալին այն է, որ բոլոր այս որմնանկարները արդիական, հա-

de au Tchêhel Soutoun à Isphahan* «զայած» .Revue des arts Asiatiques*, Paris et Bruxelles, 1931, t. VII, p. 255-258.

²⁶ See «Persian Frescoes. American Institute for Persian art and archeology, New-York, 1932; Exposition Isphahan et ses Roses, par Sarkis Keitchadourian, Paris, 1933 & այլն».

²⁷ [Ա. Զ.] Մորդիկ Խաչատրյանի պարփական որմնանկարները, Գամլի Մակեն, Պարսկական հրաշալիքները, Արևի Թնօս, Պարսկաստանի մեջ ունակութանք, Փարիզ, 1935, Ա 1—3, էջ 55—59.

²⁸ Արմենի Սագորյան, Մեթյան նկարչությունը ցուցանկների մը տոթից: «Ընդունակ տարեցութ պահանջ հիմնարանցի», Կ. Գալիս, 1934:

²⁹ Անդրե Գուգու, Դումենի և վահառակացի առջնի նկարիչ Խաչատրյանի հասցեին ուղարկեանք, Թէ՛րան, 1933, 28 ապրիլ:

պատերազմիան շեշտ մը ումին: Կիներու մի քանի դիմանկարները Մարդի կորանուներ են. սա լողացող կինը Մոտելիանի մըն է: Եվ, շարժմակելով սա խաղը, կարելի պիտի ըլլայ մինչև իսկ թիքասոներ գանձի Ալի Դափուին մեջ³¹: Այս գնահատականում անշուշտ մի փոքր ոգնորություն կա, բայց Հոգմածագիրը հիշատակում է մի գեղքի մասին: Անրի Մատիսը, ուշ իմպրեսիոնիզմի և կուրիզմի հետեւող ֆրանսիացի նշանավոր նկարիչը, տեսնելով Ս. Խաչատրյանի պարսկական որմնանկարների ցուցահանդեսը, բացականչել է: «Բա՛վո, Խաչատրյան: Դուք ավել մեղի այն, ինչ որ կը փնտրեինք»³²:

1931 թ. ապրիլի 23-ին Թեհրանում բացվեց Սարգիս Խաչատրյանի պարսկական որմնանկարների ընդորինակումների ցուցահանդեսը: Դա առաջին գեղարվեստական ցուցահանդեսն էր Իրանի մայսաքաղաքում: Այն կրկնվեց 1933 թ. (բացվեց մայիսի 11-ին): Սարգիս Խաչատրյանն արժանացավ ուշրթական առաջին կարգի շքանշանիչ³³:

Ուշագրավ է, որ 1930 թ. Ս. Խաչատրյանը Նոր Ջուզայում բացեց նկարչական ստուգիա, որտեղ կրթություն ստացան հետազարում հայտնի նկարիչներ Ս. Կուրեղյանը, Յ. Նահապետյանը և այլք: Միաժամանակ, Նոր Ջուզայի Ամենագիրկիշ վանքին կից հիմնադրեց թանգարան՝ Շենքիատական, աղքադրական, գեղանկարչական ու կիրառական արվեստի նմաւշների ցուցադրումով: Թանգարանի համար ինքը պատրաստեց նորշուզայեցիների պատմական տարագներով մանեկեններ, Զեհել Սոթունի թեմատիկ պատկերից արտանկարեց շահ Արաս I-ի դիմանկարը, վերականգնեց ու թանգարանին նվիրարերեց ռշադր դասաւ (XVII դ.) և Ռայինեխանեա (XVII դ.) պալատներում պահպանված որմնանկարների հատվածներ: Ռայինեխանեա պալատի (այժմ՝ ավերակ) պատի գաղին շերտի վրա պահպանված շքեղ ժաղկազարդերը, ոլորապտույտ ճյուղերն ու տերևները, տարրեր տեսակի գումագեղ թուլունների պատկերումները առավել շքեղ տեսք են ստանում ջուրդին ամրացված հայելիների փոքրաշափ կտորների հարնանությունից: Ս. Խաչատրյանը Նոր Ջուզայի թանգարանին նվիրարերեց նաև Ռեմբրանդի ռշայր Արրահամա օֆորտը, Ամենագիրկիշ վանքի Հովսեփ Հարեմաթացի եկեղեցու

³¹ «Շախատունի կողմակա», Նյու Յորք, 1955, 26 մարտի, Տե՛ս նույն՝ M. Vassilian, Modernism from Persia, «New York Amerikası», 1932:

³² «Շախատունի կողմակա», Նյու Յորք, 1955, 26 մարտի:

³³ Ս. Խաչատրյանի պարսկական որմնանկարների ցանկը մասը պահպանվում է Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում: Մնկ աշխատանք՝ «Միջազգային» (կտավ, յուղաներկ, 86.5×71.5) Հայատանի պետական պատկերասարանում է, Սաացիկի է 1972 թ. Ժ. Հայսկիանից (ԱՄՆ):

Հյուսիսային ոյտներին փակցնելու նպատակով նկարեց հկեղեցին նկարագրով ավոզ խոշա Ազետիքի և Բեթղեհեմի հկեղեցին կառուցող խոր Պետրոսի դիմանկարները:

Հետագայում, Ս. Խաչատրյանը մեկնում է Հնդկաստան ու Ճելլոն, որտեղ նույնպես ընդուրինակում է Շնագույն որմնանկարները: Հնդկաստանում մեռնամուխ է լինուալ Ազանաւայի ժայռափոր բուդդայական վանքի (V—VII դդ.) առաջին արաների ընդուրինակումներին: Այն ավարտելուց հետո սկսում է Յելլունի դարձյալ բուդդայական ժայռափոր Միկիրիա տաճարի որմնանկարների պատճենավորումը (V—VI դդ.): Հինավորոց արնելյան արվեստի այդ հիասքանչ օրինակներն իրենց հարուստ գեղանկարչական տարածքով, ֆիգուրների ժագալացին ամրությամբ, պատկերված իրերի շքեղությամբ լայն շրջանների ժանոթության առարկա դարձան Սարգիս Խաչատրյանի ընդուրինակումների շնորհիլ:

Պարսկական և հնդկական որմնանկարների ընդուրինակումների առաջին ցուցահանդիսը բացվեց 1942 թ. (Հունգար-ֆետրվար), Նյու-Յորքում: Կատալոգի առաջարանը դրեց պարսկական արվեստի խոշոր գիտակ Ա. Ռ. Փոփը, իսկ առանձին հոդվածով՝ Հանգես եկավ արևելագետ-արվեստաբան Ֆ. Աքիրմանը²¹: Այսուամենայնիվ, Սարգիս Խաչատրյանի հրապուրանքը Հնդկաստանով ժամանակակից ժամանակակից առաջին մեծ աշխատանքը, որ նա կատարեց ձեռավորելով Օմար Խայամի քառյակները²² ռուրայինները:

Սարգիս Խաչատրյանի նկարագրումների հիմքը Սպահանի արվեստն էր, սեֆյանների շրջանի աշխարհիկ արվեստի առաջին նմուշները:

XVII դ. պարսկական նկարելամենի պատկերակորությունը, ֆիգուրների ուրվագծերի նրբությունը, նրանց շարժման արտահայտականությունը, գույնի հանգիստ երանգների անցումները դարձան այն հիմքը, որի վրա խարսխվեց Ս. Խաչատրյանի արևելյան մտածելաձն ու նկարչական ոճը: Դա էլ հանգես եկավ Օմար Խայամի քայլակների նկարագրումներում²³, նկարիչն իր աշխատանքները (յուղաներկ, շրաներկ,

²¹ Presents An Exhibition of Mural Painting from the Cave Temples of Lopis in Replicas by Sarojs Kaptscha dzidz, New York, 1942.

Հնդկական և չեղունքան որմնանկարների ընդուրինակումների մի յար պահպանում է Հայաստանի պետական պատկերաբանութեան:

²² Rubaiyat of Omar Khayyam, Rendered into English Verse by Edward Fitzgerald, Grosset, Dunslop Publishers, New York, MCMXLVI [1946]. Գրքում ոկազգական էր նաև Օմար Խայամի բանառագեռաթյունների առաջին անդիքներին բարդանչի ծ. Ֆելլիքալի աշխատանքը:

սազարաթուղթ՝ 45×30) և ախօրոց լուրջ վերլուծության էր ենթարկում Օմար Խայամի Հայ թարգմանիչ և նրա պոեզիայի գիտակ Մ. Թիգրաբլանի հետ:

